9(393)
F

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

ՈՐ Է ՍԵԱՒ ԾՈՎ

ՍՏՈՐԱԳՐԵԱԼ ՏԵԱՌՆ Հ. ՄԻՆԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԲԺՇԿԵԱՆ ՏՐԱՊԻԶՈՆՑԻՈՅ
Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆՆԷ

Ի ՎԼԻՆԼԻՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1819. ԹՎԿԸ.

ՀԱՅ ԳՐԱԴՐԱՆ
ՀԱԿՈՒԱՅՏՅԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Գիտուններն հեռացոյց գործիքի նմանցուցին պատմութիւնն, որ ոչ միայն հեռու եղած մանր բաները մեծ կը տեսնէ, այլև չտեսված և չերևցած բաներն ալ առաջ բերելով յայտնի կերևցնէ։

Այս գործիքը չեղած՝ հին աստղաբաշխները միայն եօթն մոլորակ տեսան աչքով, և հազար քսանութ կու աստղ որոշեցին. բայց հետզհետէ որչափ աւելի կատարելագործեցաւ այս գործիքն, այնչափ աւելի մարդիկ համարձակեցան վնտել երկնային մարմիններն. իբր թէ աչքով պտրտելով կամարներուն մէջ բիւրաւոր աստղեր տեսան որոշեցին։ Ուստի հիմա տասն մոլորակէն աւելի, և միլիոնաւոր աստղեր կը համրեն։ Տես Ճեմ. 345։

Այսպէս պատմութեան գրեանքն և աշխարհագրութիւններն ելլելով՝ հեռու ժամանակի մէջ եղած բաներն և անծանօթ աշխարհներն ու ազգերն՝ հեռացուցի նման մօտ բերելով յայտնեցին. անանկ որ չտեսված աշխարհները, և չերևցած կորած տեղերն ու ազգերն՝ երևան ելան։

ՀՍՍՌ ԳՐԱԴԱՐԱՆ

Այս պատճառաւ Եւրոպացիք իրենց մանկանց խելք սորվեցնելու համար՝ միշտ կը ջանան կարդացնել ընտիր պատմութիւն և ճիշդ աշխարհագրութիւն։ Այս խորհրդով մենք ալ Հմտութեան գիրքն յօրինեցինք։ Տես հտ. Ե. և Զ։ Որոնք նաև շատ անգամ մարդ կը ղրկեն զանազան աշխարհներ. որպէս զի՝ ճիշդ քննութեամբ նոր ծանօթութիւն և նոր տեղեկութիւն ստանան։

Եթէ ասենք միայն հին խելքով մնային և հին քաներով երթային՝ շատ հաստ և տգէտ կը մնային. որովհետև մարդուս աչքը միայն մօտ եղած բանը կը տեսնէ, և ականջն լսածը միայն գիտէ. ուրեմն պէտք է հնարել զանազան պատմութիւններ և աշխարհագրութիւններ, որպէս զի՝ անցածը պատմեն և հեռու եղածներն իմացնեն։ Հին ժամանակը քանի՞ երևելի քաղաքներ, և քանի՞ մեծ մեծ կղզիներ կային ազգերով լեցուն. որ հիմա չի կան, և անոնց տեղը ծով եղած է։ Եւ շատ տեղեր ջուր էր ծովու նման, հիմա ցամաք է, և մարդիկ կը բնակին։ Տես ՃԵՄ. 266։

Եւ որովհետև այս աշխարհ մարդու բնակարան է, մարդկութեան կը վայլէ՝ որ իր բնակարանին մէջ ինչ որ կայ գիտնայ, և չտեսածը տեսնէ, միշտ աշխարհագրական պատմութիւններ կարդայ, և նոր նոր տեղեկութիւններ սորվի գիտնայ, թէ ինչ տեղեր և ինչ ազգեր կան եղեր. կամ թէ այս աշխարհ ինչ փոփոխութիւններ տեսեր է։ Այսպիսի ծանօթութիւն հարկաւոր ճանչնալով գիտուններն՝ հին ատենէն 'ի վեր գրեցին և պատմեցին իրենց քաղած տեղերը և տեսած բաները։

Ռսէնոփոն երկու հազար երկու հարիւր յիսուն տարի առաջ գրեց իր ըրած Աև ծովու Ճամբորդութիւնը, և Պոնտոսի վրան սակաւ ինչ տեղեկութիւն տվաւ։ Իսկ հետաքննին Ադրիանոս երևելի փիլիսոփան հազար եօթնհարիւր տարի առաջ Աև ծովուն չորս բոլորը պտըտեցաւ, և Ադրիանոս կայսեր թուղթ գրելով համառօտ տեղեկութիւն մի տվաւ Պոնտոսի երևելի տեղերուն վրա. որ կըսվի Շրջագրութիւն։ Տես տախ. Դ։

Մէկէտ եւրոպացոցմէ ևս գրօղներ եղան Պոնտոսի մանաւանդ տեղերուն վրայով, սակայն շատ բան կարծիքով գրեր են, ըստ որում անձամբ փորձեցինք. որովհետև այս կողմերը չունին համարձակութիւն եւրոպացիք. վտանգաւոր է իրենց, և կը վախնան քննելու. ինչպէս կը խոստովանի Դուռնըֆոր։

Ադ՝ մենք շրջելով ընդ ոլորտս Պոնտոսի Ադաքելական պաշտօնիս՝ ահա մեր երկամեայ Ճամբորդութեան մէջ կամեցանք գրել՝ի Պոնտոս նոր քննութեամբ այս մեր աշխարհագրական պատմութիւնը Պոնտոսի կամ Աև ծովու Ճիշդ, շատ տեղ անձամբ դիտելով, չափելով, և հին գրերը կարդալով. նաև հին յիշատակարաններն եպիսկոպոսարաններուն և եկեղեցիներուն որոնելով՝ ըստ կարի Ճշմարտեցինք և ստորագրեցինք համառօտիւ՝ հանդերձ աշխարհացոյց պատկերով, յօգուտ ուսումնասիրաց ազգիս։

Որոնք ոչ միայն պէտք է հմուտ ըլլան այժմեան օգտակար բաներուն և աշխարհագրական տեղեկութեանց, այլև հնութեանց և անծանօթ աշխարհաց և ազգաց. որպէս զի՝ վառվին նոր սիրով ուսումնականութեան, և գովելի գործքով ազգասիրութեան։

Լաւ նկատելով սուտ աշխարհիս յարափոփոխ և անցողական բաներն՝ կատարելութեան և առաքինութեան հետևին, որ կը մնայ միշտ և անփոփոխ։ Ըստ այնմ.

* Ժամանակեայ կեանքս անցաւոր,
Կարծել չտայ քեզ փառաւոր.
Օվ թէ 'ի կառս ես թագաւոր,
Նա կամ իշխան յոյժ զօրաւոր,
Հողոյ ծնունդ ես հիւթաւոր,
Յոր դառնալոց յոչ կամաւոր ։

„Ոչ 'Ի ԿԱՐԾ ԸՆԴՈՍՏՈՒՅՆԱԼ ԵՒ ՈՉ 'Ի ԼՈՒՐ ՁԱՐԹՈՒՅՆԱԼ՝ ԱՅԼ ԵՍ ԻՆՔՆԻՆ ԱՆՁԱՄԲ ԱՆԴԻՆ 'Ի ՏԵՂԻՈՋՆ ՊԱՏԱՀԵՑԻ»։

Եղիշ. Բ։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

Ա. ԱՆՈՒՆ։

1. ԱԽՆԻՒ Պոնտոս անուանեցին սև ծովը. զի անունս պոնտոս հելլենացոց լեզուով ծով կը նշանակէ. որ ոչ միայն այս ծովուն է սեփական, այլև սև ծովուն հարաւային աշխարհներն ալ Պոնտոս ըսվեցան և բնակիչները Պոնտացիք։ Ինչպէս կը հաստատէ Յոհաննէս կաթողիկոս պատմելով Մօրիկ կայսեր համար, թէ * Օ՝պոնտոս. յորում մայրաքաղաքն է տրապիզոն կոչի վնա մեծ մասն հայոց ||։ Բէր նախ Յաբեթի ցեղէն եկան բնակութիւն շինեցին. որպէս աւանդութեամբ կը պատմեն (105)։ Շարտին աշխարհագիրը կըսէ թէ սև ծով առաջ Յաբեթի թոռանը անւամբ Աշխանաղ կըսվեր. վերջը յոյնք փոխեցին Լ՛ուքսինոս ըսին. որ կը նշանակէ լաւ հիւրընկալ։ Թուի թէ արգոնաւորդք հեգնութեամբ այս անունը տվին. որովհետև սև ծով միշտ խռովութեամբ և ալեկոծութեամբ հանդարտութիւն չունի։ Բստ ոմանց սև ծովն առաջ կըսվեր Լ՛ուքսինոս այսինքն անհիւրընկալ՝ բնակիչներուն աւազակութեանը համար. բայց երբոր յոյնք բնակեցան, մարդասէր ըլլալով ծովն ալ հիւրընկալ կոչվեցաւ։

Սակայն հասարակ անւամբ Սև ծով կըսվի գրեթէ

ամէն լեզուի մէջ ոչ միայն սեւագոյն եղերաց համար, որ շատ տեղ սև աւազով լեցուն էն, այլև ահեղ աւլիքներուն և հովին բռնութեան պատճառաւ. որ ամպով կը պատեն ծովն, ու ջուրը սև կերևցնեն. որովհետև սև ծովուն միջոցը նեղ ըլլալով, և չորս դիէն լեռներով պատած ըլլալով, հիւսիսային և արևմտեան հովն երաժին պէս, մէկէն ամպով կը մթնէ, և ալիքներով կը խռովի։

Ամենք կը պատմեն թէ հին ժամանակը Կիմերեան անուամբ ազգ մի կայ եղեր Պոնտոս. որոնք սև գոյնը շատ սիրելով՝ ուրախութեան նշան դրեր էին. անոր համար կոչեցաւ Սև ծով. ըստ արաբ. Պահրի էուէբ. Պահրի պունդս. և ըստ ռուսաց Չ՚ՐՆԷ ՄՐՕՒԷ։

2. Հին քանաստեղծներէն ըսող եղաւ թէ սև ծովը սեւութիւն չունի և ալիքները շատ չէն տարածիր։ Մելեքիս և Կ՚օրլիոս նաւապետները տարին մինչև Կողքիսոն, Մնկուելիստան, և Բ՚պաղա հասուցին զՀասոն և զՀերքիւլէս (36)։ Բայց սակայն ասոնք ալեկոծութիւն չէն տեսած. վասն զի յայտնի է թէ միշտ եղերքէն երթալով ներսի ալիքներուն չէն պատահած։

Իսկ ես անձամբ փորձեցի յանդունդս Պոնտոսի ահագին ալեկոծութեամբ, երբոր ալիքները լեռներու նման կը տարածէին արևմտեան հովին բռնութենէն, նաև անյայտ կըլլար ալիքներուն մէջ։ Ուրեմն ձերմակ ծոփն ալ և ադրիական ծոփն ալ դիտեցինք, որ ալիքները կըղզիներուն վազուկ ջրերէն խորտակելով, չէին այնչափ տարածեր այն խորունկ ծովերուն մէջ։ Կ՚ասէ օդը շատ անգամ պարզ ըլլալով երկնագոյն կերևնան այն ծովերը. իսկ սև ծոփն յաճախ ամպով պատած ըլլալով և ալեկոծելով սեւագոյն կերևնայ, ինչպէս կը հաստատէ Ովիդիոս քանաստեղծ, որ աքսորեցաւ Պոնտոս (250)։

* Մի՛ ինչ խռովեսջիր երկիր պոնտոսի,
Սակայն թէ անխռով լինել քեզ մարթի,
Օ՜ որ ի սրաթբուիչ գունդ երիվարի,
Մ՚ինչ սմբակակոխ առնէ թշնամի.

Մի՛ ինչ խռովեսջիր եթէ ասացից,
Զոմ աքսորանացս 'ի ցաւս աղէտից,
Զոր ծանրատաղտուկ 'ի վերայ բարդիս,
Եւ ծանրաբեռնես ըզվիշտ վըտանգիս ։
ՌՎԷՊ. պոնտ. Է. 1։

Բ. ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ։

3. Սև ծովն ամէն ժամանակ միակերպ չէ եղած. երբեմն շատաջուր էր, և հիմա սակաւաջուր. ժամանակ ալ կըլլայ որ անջուր պիտի ըլլայ, ինչպէս աշխարհագրական կարգը կերևցնէ (7)։

Բ.ըրիանոս կը հաստատէ թէ Պոնտոս Ձերմակ ծովին անուշ է, և անասնոց օգտակար, մեծամեծ գետեր հոն վազելուն համար. Ֆարշի կողմը տեսանք կըսէ, որ կովերը ծովուն ջուրը կը խմէին։ Բ.հա անկէ 'ի վեր 1700 տարի անցնելով հիմա աւելի բարեխառն է։

4. Բ.նոր համար հին պատմիչները կըսեն թէ սև ծովն առաջ շատ խորունկ ըլլալով անդունդ կըսուէր. բայց գետերը շարունակ աւազ, տիղմ, և քար թափելով շատ տեղ ծանծաղ եղաւ։

Բ.մենք որ ծովուն ջուրը վեր ելլելով էն սղմեցաւ եզերաց մէջ, պատուեց Պատմիոլու բերանը բացաւ. և այսպէս սև ծովը ցածնալով իջաւ. ու մարմառայի ծովուն կողմը շատ տեղ ծածկեց։

Հերոդոտոս հին պատմիչ, որ էր 2285 տարի առաջ, կըսէ թէ Տրոյիայի գաւառը, և բոլոր Միւսիա ծովուն տակն էր. որովհետև այս տեղերը բարձր էն, ինչպէս տեսանք։ Պտրաբոն կըսէ թէ Պարատոս հաստատեց թէ Լ.ւքսինոս սև ծով հին ատենը չուներ Պատմիոլու բերանը. այլ գետերն որ հոն կը վազեն բռնութեամբ բացին։ Բ.յսպէս կը հաստատէ նաև Դիոդորոս սիկիլիացին։

5. Բ.հա այս է պատճառն որ սև ծովուն մէջ տեղ տեղ շէնքեր կերևնան (258). և ծովէն շէնքի կտորներ կելլեն։ Տեղ տեղ ալ բարձր լեռներու վրա նաև կա-

պէլու տեղեր կան, յուանկ մաշած քարեր և օղակ-
ներ. ինչպէս ստուգեցինք Տրապիզոն և Մնէպօլու
քաղաքը. ուր իրեք ժամ վերը նաև կապելու տեղե-
րը կերևնան. քաղաքացիք ալ նոյն աւանդութիւնն
ունին (63):

6. Այսպէս նախնիք կը պատմեն թէ Աղախու
ծովն առաջ անցք չուներ սև ծովուն հետ. Տօնաւիս
գետին բերած տղմով և աւազով այնչափ բարձրա-
ցաւ, մինչև պատռեց Թրամանու բերանը բացաւ:
Այսպէս սև ծով աւելի առատանալով մեծցաւ անա-
տենը. և բացվելով Ստամպօլու բերանը նորէն պըզ-
տիկցաւ:

Այն ժամանակը Ճերմակ ծովն ալ առատանալով կո-
խեց Պօտոս կղզին բոլորովին ծածկեց ժամանակ մի.
յետոյ քաշվեցաւ. և մինչև հիմա լեռներուն վրա
քարացեալ ժամունքներ կերևնան: Փիլոն կը գրե
թէ հիմա ծովը նուազեցաւ. որպէս կը վկայեն Պօ-
տոս և Պէլոս կղզիներն որ ջրին տակն էին, և յե-
տոյ քիչ քիչ երևեցան: Այս ուրեմն աղախ ծովն
ալ միշտ միակերպ չէ եղած. որուն՝ հիմա արևելեան
կողմն աւազով լեցուն ըլլալով նաւերը պարտեալով
հիւսիսի կողմէն կանցնին. զի Տօնաւիս գետին ըն-
թացքը այն կողմն աւելի լեցուցեր է (188):

7. Սկիզբ հետևցուցին փիլիսոփաները, թէ երկար
ժամանակ անցնելէն ետև՝ սև ծով բոլորովին պիտի
լեցվի. վասն զի տասիրեք մեծամեծ գետեր և յի-
սուն միջակ գետեր հանապազ քար և աւազ բերե-
լով շատ տեղ ցածցուցեր են. ինչպէս տեսանք:

Դարձեալ շատ տեղ դիտեցինք Պոնտոսի ծովեզերքն,
որ գետերուն բերած մաշած քարերով լեցուն են.
գրե թէ շատ տներուն յատակը նոյն քարերով շինած
է. որ անպակաս կը բերեն գետերը. մանաւանդ եր-
բոր կառատանան:

Աբրիանոս միայն լազիստան տասնըչորս գետ կը
համրէ. որ իրեք գետին մէջ նաև կը քալեր: Պոլի-
բիոս կըսէ թէ Պոնտոս՝ որ հիմա կը լեցվի այնչափ
նիւթով՝ վերջապէս պիտի լեցվի. և այն ատենը
ծովը լիա՛ պիտի դառնայ:

Սակայն այս դիպուածն երկար ժամանակի կը կաղրօտի, վասն զանազան պատճառաց։ Պատմիչներուն նայելով ջրոս հազար տարիի մօտ է քանի որ Պատմ պօղու բերանը բացված է։

Հինները կըսեն թէ Յինեռին առջին հրաբուխներ կային. ըստ որում արդնաւորդք Մրակիայի թագաւորին ըսեցին, թէ գիանեան ժայռերէն հուր կելլեր (269)։ Ասոր դիւրին բացվեցաւ սև ծովուն բերանը։

Գ. ԽՈՐՈՒԹԻՒՆ։

8. Դիոդորոս հին պատմիչ կը հաստատէ թէ անգունդ խորութիւն սև ծովուն՝ գետերուն բերած նիւթով լեցված ըլլալով առջի խորութիւնը չունի։

Ասոր համար գետերուն վազած կողմը աւելի ցածնալով շատ տեղ աւազակոյտ եղած է. ինչպէս Դունային և Ցնեբեր գետերուն կողմն այնչափ ծանծաղ տեղեր կան, որ շատ անգամ նաւերը վտանգի մէջ կիյնին. մնաւանդ երբոր ջրին ընթացքն ալ այն կողմը կըլլայ։

9. Ահա այս պատճառաւ Լօլիւ տէնիզին լեցվեցաւ նիւթով, ուր մնած նաւը չի կրնար ելլել (228)։ Կաւ աղախու ծովուն արևելեան կողմն շատ ծանծաղ է նոյն պատճառին համար։

Ասսաի սև ծովուն հարաւային կողմը, ուր որ մեծ գետեր չկան՝ աւելի խոր է։ Այնպէս հիւսիսային կողմը սարերուն առջին առաւել խոր է։ Շատ տեղ, մանաւանդ հարաւային կողմը ծովուն տակն ապառաժ քարոտ է։

Սակայն սև ծովուն աւելի խոր տեղն է Ինապու և Խրիմի միջոցը. ուր երկու կողմէն ծովը սրխմված է։ Ընդհանրապէս բարձր տեղերուն և սարերուն առջին ծովը խորունկ կըլլայ. իսկ ցած տեղերուն առջևի ծովն ալ ծանծաղ կըլլայ։ Պաթումի կողմը տեղ մի կայ այնչափ խորունկ որ տակը չի կայ կըսեն. կը կարծվի թէ ասկից հաղորդութիւն ունի

սև ծով Կասպից ծովուն հետ, որ է անհին։

10. Իսկ հիւսիսային եւրոպայի կողմն աւազով և տղմով լեցուն ըլլալով այնչափ ապառաժ չի կայ. այլ շատ տեղ ցամաք լեզուներ և ծածուկ կղզիներ կան, որ կրսվին Մանրաբար (230)։

11. Բրևեղեան դին ֆարշի կողմն՝ դիմացին ալ աւազ գալով հետ զհետե կը ցածնայ ջուրը. ուստի գետին բերանը լայնալով վեր կերթայ. անոր համար շինքերը քանի կերթայ վեր կը շինեն. ինչպէս ստուգեցինք (154)։

Պլինիոն բնաբանը այսպէս կը հաստատէ, թէ գետերը միշտ աւազ և հող բերելով սև ծով, գետերուն ջուրն ալ կը նուազի. զի լեռները լիցնելով կը ցածնան, ուսկից որ այն ջրերը կուգան. ասա երկար ժամանակով սև ծովը կը ցածնայ, լեռներն ալ վար կիջնին։

Այս պատճառաւ սև ծովուն մէջ մեծամեծ ձկներ չի կան. թէպէտ շատ տեսակ ձկներ կելլեն. ինչպէս Պահանաձուկն, Արէոթէկ, Պարակէօզ, Դելֆին, Դոն, Արէֆալ, Խակիւմբի, Մէղնա, Խամսի առատ, Թիրսի, և այլն։

Դ. ԳԻՐՔ ԵՒ ՁԵՒ։

12. Այսպիսի պատճառներէն կը հետևի թէ այս ծովուն գիրքն ու ձևը միշտ միակերպ չէ եղած. վասն զի հին ատենը աւելի լեցուն և մեծ էր սև ծով. ձևն ալ հիմակուան պէս չէր. ինչպէս Ղնիկու լեռներէն կիմացվի, որ ջրով ծածկած էին։

Հիները լարած աղեղի նմանցուցին սև ծովը. կարելի է թէ հին ատենն այն ձևն էր, հիմա տարբեր է. զի Ինձէ սարը խրիմի Այա սարին դէմն ըլլալով ձևը կաւրէ. ուր երկու կողմէն կիսով չափ նեղցած է ծովը։

13. Ուստի հիմակուան ձևն աւելի վիշապի նմանութիւն ունի. գլուխը մեծ, որ է միջոց Այմաստրայի՝ Դունայի, և Ֆիոռոզի. Ստամպոլու նեղուցն է բերան

վեշապին. իսկ Պուռղազի ծոցը քթի նման երկայն կը վերջանայ։ Այս մեռած ծովն է՝ ականջ ձեւացած։ Մէջը նեղցած՝ է միջոց Ինձէ և Բ.յա սարերուն։ Իսկ վարի մասը Սինապէն կերկընայ մինչև Ֆարշ. Ուիօն գետն ալ բարակ պոչ ձեւացած է (154)։

Այնպէս ազախու ծովը մաշկաթելի նման բացված է վիշապին վրա, մինչև Յօնաւիս գետը կը վերջանայ (188)։

Ե. ՁԱՓ։

14. Սև ծովուն ճիշդ չափը մինչև հիմա չի կրցան որոշելու ոչ միայն գետերուն և ծոցերուն պատճառաւ, այլև շատ տեղ կայ որ ոչ նաւերը կրնան մտնել, և ոչ նաւավարները կրնան երթալ, ինչպէս Բ.պազայի կողմն է։ Ուստի ոչ սակաւ դժուարութիւն այսչափ կրցանք որոշելու։ Բայց որովհետև դիրքը արևմուտքէն դէպ 'ի արևելք պառկած է շիտակ, անանկ որ եթէ գիծ մի ձգենք Պուռղազէն դէպ 'ի արևելք՝ շիտակ Ֆարշ կը հասնի. և այս շիտակ գրծով երկայնութիւնը իբր 1200 տաճկական մղոն կըլլայ. և գլխուն լայնութիւնը Պապա պուռնիէն մինչև Օղու իբր 600 մղոն։ Իսկ մէջքին լայնութիւնը Սինապէն մինչև Խրիմ. կամ Ճիշդ նայելով Բերեմ քէէն մինչև Բ.յա՝ 220 մղոն։ Այս պոչին միջական լայնութիւնը Կէօնեէէն մինչև դիմաց Իլօրի 110 մղոն, որ դէպ 'ի արևելք երթալով կը նեղնայ, ու Ֆարշին գետը կը վերջանայ։

15. Սակայն շրջապատը ճիշդ չափել դժուար է վասն ելումուտ տեղերուն. շատ գոգեր կան դիմացի կողմն որ նաւ չի կրնար մտնել, ինչպէս ըսինք. և շատ ծոցեր ալ կան որ նաւի ճամբայ չեն։ Բ.պա նաւավարներուն ճամբային չափով Ստամպօլէն մինչև Տրապիզոն 909 տաճկական մղոն է. անկէ մինչև Թադլեթ պօղազի 716. անկէ մինչև Դունա 720. անկէ ալ մինչև Ստամպօլ 516։ Այս այսպէս բովանդակ սև ծովուն շրջապատը կըլլայ 2861 մղոն տաճկական

(273)։ Իսկ ազախու ծովուն շրջապատը տես իր տեղը (188)։

Պոնտոսի աշխարհագրական լայնութիւնն կըսկըսի իբր 40°. 20′ աստիճանէն, և կը հասնի մօտ 47°. իսկ երկայնութիւնն կըսկըսի 24°. 30′ աստիճանէն, կը հասնի մինչև 39°. 50′։

Զ. ԸՆԹԱՑՔ ՀՈՒՐՑ։

16. Սև ծովուն անհաւասար խորութիւնէն, մեծամեծ սարերէն, և գետերէն կը հետևի որ ջրին ընթացքը ամէն տեղ միակերպ չըլլայ. երբեմն ներս, երբեմն դուրս կը վազէ. տեղ կայ դէպ 'ի արևելք, տեղ ալ կայ դէպ 'ի արևմուտք կը վազէ. զորօրինակ Լօռօզ սարին առաջ դէպ 'ի արևելք. բացը՝ դէպ 'ի հիւսիս կը վազէ։ Իսկ Ազախու ծովուն բերանը շատ անգամ դէպ 'ի հարաւ կը վազէ. և ինչպէս որ հովը փոխվի՝ ջուրն ալ կը փոխվի. որպէս ստուգեցինք (188)։

Մանաւանդ ծովուն տակը լեռներ ձորեր ըլլալով, և ծովուն գոգերն ու սարերը պէսպէս ըլլալով, ջրերը տեղ տեղ կը վազեն, տեղ տեղ ալ անշարժ են։

17. Ասկեց կը պատճառի յորձանք (Ագընտի) սև ծովուն. որ տեղ տեղ գետի նման սաստիկ կը վազէ մանաւանդ երբ երկու կողմի ցամաքը մօտ են իրարու։ Շատ անգամ Մնձէին քով դէպ 'ի արևելք կը վազէ. իսկ Լասօն սարին առաջ ընդհակառակն կըլլայ, ինչպէս փորձեցինք։

Սակայն ընդհանրապէս հարաւային կողմի ջուրը դէպ 'ի արևելք կը վազէ. և հիւսիսային ջուրը դէպ 'ի արևմուտք։ Ուստի կանոն չունի. հովին բռնութիւնէն և գետերուն առատութիւնէն կը փոփոխի։ Ինորդ համար արևելեան կողմն եկող նաւերը ցամաքի մօտ կանցնին. իսկ արևմուտք գնացողները քացէն կերթան։

18. Որովհետև Պատմպօլու բերանը դէպ 'ի հիւսիս բացված է, միշտ սև ծով ներս կը վազէ բա-

նութիւն. որ ոչ միայն գետերուն ջրերին կը պատճառուի, այլև անհաւասարութենէ միջերկրական ծովուն ըստ աշխարհագրեայ. ուր տեղ տեղ աւելի ցած ըլլալով սև ծովուն յորձանքը պատճառած է։ Այսպէս աշխարհագրական կարծիքը կը հաստատէ թէ սև ծովի ձերմակ ծովէն բարձր է։ Այլ որովհետև օդն որ պարզի՝ արևելեան և հիւսիսային հովերը փչելով ջուրը ազատ կը մղեն նեղուցէն ներս, ուստի սաստիկ յորձանք կըլլայ Պոսֆոր։ Այլ գետերն ալ առատանալով աւելի կը բարձրանայ ծովն ու կը սաստկացնէ յորձանքը. անոր համար Լօռոզ սարին առաջ՝ երբոր գետերը կառատանան՝ ջուրը փոխվելով դէպ 'ի արևմուտք կը վազէ։

Սակայն յայտնի է թէ սև ծովու գետերուն ջուրը մէկ տեղ բերելով՝ այնչափ շատ կըլլայ որ չորս նեղուց ըլլար հազիւ կը բաւէր պարպելու, թէ որ արեգակին տաքութեամբ գոլորշի ըլլալով վեր չելլեր. Տես Ձեմար. 202։

19. Իսկ կրկնայորձանքը կը պատճառի ծովուն տակի լեռներն և նեղ տեղերն. երբ ծովուն երեսի ջուրը դէպ 'ի արևմուտք կը վազէ, տակի ջուրն ընդհակառակն կըլլայ՝ դէպ 'ի արևելք կը վազէ։ Ուստի շատ տեղ այս երկու յորձանքով կը վազէ ջուրը նման նեղուցին Պոսֆոր։

20. Այս պատճառաւ՝ շատ տեղ ալ ծովուն մէջ գծեր և շաւիղներ կան, որ Պանալ կըսվին. ուր ջուրը կերպ կերպ կը քալէ. երբեմն առաջ ետև կերթայ. երբեմն դուրս ներս կըվազէ. տեղ տեղ ալ անշարժ կայ։

Այս այս շարժումն անկանոն ըլլալով՝ ամէն ամիս միակերպ չի կրնար ըլլալ. և ամէն տեղ մի և նոյն կարգ չի մնար։ Անաւանդ երբոր ալեկոծութեամբ սարսափելի ալիքները խառվելով ամէն բան տակնուվրա կրնեն՝ ինչպէս անձամբ փորձեցինք։ Սակայն սև ծովուն մէջ երևելի մակընթացութիւն չի տեսանք։

Է. ԳԵՏՔ։

21 Ինչպէս ըսինք՝ Պոնտոսի մէջ յիսուն միջակ գետ և տասներեք երևելի մեծ գետեր կը վազէն. չորսը հարաւային կողմէն չորսը արևելեան կողմէն. չորսը հիւսիսային, մէկն ալ արևմտեան կողմէն։

Հարաւային կողմէն սկսեալ ֆէնէդէն՝ գետն է Սագարէա մեծ. որ Դաղատիայի լեռներէն կելլէ, և խոտորնակի պտըտելով Փռիւգիայի կողմէն կուգայ Դէֆիկէնի ծովը կը վազէ. որուն մէջ նաւ կը մտնէ (46)։ Գայ գետին մօտ մեծ քարաշէն կամուրջ կայ. կերևնայ թէ գետը Ամբան փոխելով ցամաք մնացեր է. որ կըսվի Դաբրա Էօփրիւսի։

Ը. Պարէնի գետ. որուն բերանն է նաւահանգիստ, և տասը մղոն ներս նաւ կերթայ (52)։

Թ. Դիշլի ըրմագ կամ Գլիս գետ հռչակաւոր, որ կելլէ փոքր Հայաստանէն և Սեբաստիոյ կողմէն անցնելով Ճէնիկու ծովը կը թափի (78)։

Ի. Ղարշանպա պէրէսի, կամ Ոիս գետ լայն, որ կելլէ Հայաստանէն, և Գամասիայի մէջէն անցնելով կերթայ Լինսաղոնտոս. բերանն է իբր նաւահանգիստ, բայց ծանծաղ (81)։

Ե. Ղորոկ կամ Փիսոն՝ կարնոյ կողմէն կուգայ՝ դէպ 'ի Բաբերդ խոտորելով արևելք կը դառնայ և Կէօնեէի մօտ լազիստանու ծովը կըվազէ (149)։

Ի. Ոէծն գետ՝ եգերացոց աշխարհէն կելլէ, և շրջելով վրաստան կուգայ Ֆարշին առաջը նաւահանգիստ կընէ ծովը կը վազէ (154)։

Է. Ղօֆսուն բռմաղէ՝ երևելի գետ որ Գապայի լեռներէն կուգայ, և ապազայի ծովը կը վազէ (176)։

Ը. Կոռպան՝ երևելի մեծ գետ՝ Ղէրքէզի կողմէն Լէպուռուս լեռնէն կելլէ կովկասէն անցնելով Գէրբերդին քով երկուս կը բաժնըվի, Գնափայի մօտ ծոց ձևացնելով, Դրզըղաշ կը վազէ (185)։

Թ. Տէն կամ Տէնաբէ՝ գետ մեծ՝ Մոսկովստանէն կելլէ շատ տեղ պտըտելով և վեց գետի հետ խառնըվելով Գազիսու ծովը կերթայ (197)

Ա. Տնէբէր. տմ. Օղը կամ Աբրէ սուրբ՝ Սաքսոնիայէն կելլէ կերթայ Օղուին առջևն չորս մղոն լայնութեամբ ի իման ծովակը կը ձևացնէ, և Օղուի քերնէն ծովը կը վազէ. ուր մեծամեծ նաւեր կը մտնեն (233)։

Ժա. Պոռ կամ Աֆոռ ըստ հն. Լեքանէն, որ նեռնէն կուգայ կըվազէ օղուի ի իման ծովակը (234)։

Ժբ. Տնէսաբէր կամ Պոռոլա գետ մեծ՝ լեհաստանէն կելլէ Աֆքիրմանու ծոցը կը վազէ (239)։

Ժգ. Պոռնա կամ Պանոռբ ահագին մեծ գետ՝ Օվլեցցերիոյ լեռներէն կելլէ և շատ պտըտելով կուգայ Սավա գետին հետ կը խառնըվի, և Վիեննայի առջևէն անցնելով կերթայ Պուլղարիա, և Պուռնագ թաղթար հինգ քերանով սև ծով կէ վազէ (242)։

Ը. ՍԱՐ ԵՒ ՔԻԹ։

22. Թէպէտ սև ծովուն սարը կամ քիթը պակաս չէ ամէն կողմ, սակայն ապահով ծոցը քիչ է. վասն զի շատը շիտակ ծովը մտած ըլլալով, ապահով նաւահանգիստ չունին։ Կան որ մէկ կողմը ծռած ըլլալով՝ մէկ հովը կը կարեն. ուրիշ հով անպակաս ալէկոծութիւն կը հանէ. մանաւանդ արևմտեան հովը։

Սար, կամ ըստ պարսից Աէր, այսինքն գլուխ ասելով կիմանանք մեծամեծ լեռներն որ ծովը մտած են և ոմանք գոգ ունին. ինչպէս է Լօռօշ սար Տրապիզոնի, և Վրէրէմբէ սար։ Իսկ քիթն՝ որ ըստ յն. կըսվի Աֆոռ, է լեռան ծայը, որ նոյնպէս ծովը կը վերջանայ ծուռ կամ շիտակ։

23. Աբդ՝ ֆէնեռէն ելլելով՝ ա. քիթն արևելեան կողմն է Պարպարոռոն, որ դէպ 'ի արևելք է ծռած։ բ. Վրէքիէն սար դէպ 'ի արևմուտք։ գ. Պապա պոռոնի արևմուտք ծռած։ դ. Վրէլմէ սար հիւսիս դարձած։ ե. Բմասարա գլուխ դէպ 'ի արևելք։ զ. Վրէրէմբէ սար շիտակ։ է. Իսրէքիան պոռոնի շիտակ։ ը. Ինձէ պոռոնն դէպ 'ի հիւսիս։ թ. Սինոպէ սար

դէպ 'ի արևելք։ Ժ. Զարշանպա պուռանի դէպ 'ի արևելք։ ԺԱ. Լանեէ պուռանի շրջակայ։ ԺԲ. Լասօն սար դէպ 'ի արևելք. որուն մնան է Պ ծոա պուռանի։ ԺԳ. Գարապուռանն շրջակայ։ ԺԴ. Լօռօղ սար դէպ 'ի հիւսիս արևելք։ ԺԵ. Պէրմէնի պուռանի դէպ 'ի հիւսիս։ ԺԶ. Պաղուռի քիւթ դէպ 'ի հիւսիս։ ԺԷ. Կօղոր պուռանի դէպ 'ի հարաւ։ ԺԸ. Սօղուռճաք պուռանի դէպ 'ի հարաւ։ ԺԹ. Թաֆլէլի պուռանի դէպ 'ի հարաւ։ Ի. Ղէռավէնա և Կէրկիանլասաի դէպ 'ի հարաւ. որ կը ձևացնեն Վէֆիի ծոցն իրարու դէմ ըլլալով։ ԻԱ. Մէկենոռ քիւթ Սուտաղն դէպ 'ի հարաւ։ ԻԲ. Ղյա սար դէպ 'ի արևելք։ ԻԳ. Ցիէլէնկ պուռանի դէպ 'ի արևմուտք։ ԻԴ. Օէյլուռն պուռանի դէպ 'ի հարաւ։ ԻԵ. Ցիօռօղ կամ Լանէի պօղ պուռանի դէպ 'ի արևմուտք։ ԻԶ. Գէլ պուռանի դէպ 'ի արևմուտք։ ԻԷ. Պալապան պուռանի դէպ 'ի հարաւ։ ԻԸ. Լսորէլէկ պուռանի դէպ 'ի հարաւ։ ԻԹ. Հարձիճ պուռանի դէպ 'ի հարաւ։ Լ. Շ ապլա պուռանի դէպ 'ի արևելք։ ԼԱ. Կելէղբէ սար դէպ 'ի հարաւ։ ԼԲ. Կօրիօք, և Պ ալանա պուռանի վառնայի։ ԼԳ. Լանէի պուռանի դէպ 'ի արևելք։ ԼԴ. Սայլանա պուռանի դէպ 'ի արևելք։ ԼԵ. Լնապա պուռանի դէպ 'ի հարաւ։ ԼԶ. Մալաթրա պուռանի դէպ 'ի հիւսիս։ ԼԷ. Գարապուռանն դէպ 'ի հիւսիս. որ է դիմացն ասիայի կողմի գարապուռանին (42)։

Թ. ՆԱԻԱՀԱՆԳԻՍՏ։

24. Սև ծովուն մէջ շատ տեղ կայ, որ նաւահանգիստ կամ լիման կըսվի. բայց ամենէն տեղը քիչ է. զի Ֆէնեռէն սկսեալ մինչև Լրեկլի չի կայ լաւ նաւահանգիստ։ Լմանտարայի նաւահանգիստն լաւ է, բայց այնչափ ապահով չէ։

Լղլիմանին նաւահանգիստն ելբ բնական դուռ ունենալով Լնձէ սարը, ամենէն ապահով է. թէպէտ շատ ընդարձակ չէ։ Իսկ Սինապին նաւահանգիստն ընդարձակ և պատուական ըլլալով հին ատենէն 'ի

վեր անեանի է և նաև շինելու տեղ ունի հռոմայեցոցմէն հիացած (73)։

Մանաւանդ Աֆրիկեան նաւահանգիստը մեծ գոգ ունենալով իրեք տեղ ապահովապէս նաւ կրնէնայ. նոյնպէս Փլեգանայինն և Միւրմանեէին նաւահանգիստները մեծ գոգ ունենալով շատ ապահով են։ Հին ատենը Տրապիզոնին նաւահանգիստը երբոր շինած էր, աւելի ապահով էր. բայց հիմա աւրած է (105)։

Արևելեան կողմն սև ծովուն նաւահանգիստը պակաս չըլլալով, նաև ծաղկած քաղաքներ կային հին ատենը. ինչպէս Պաթում, Ֆարշ, և այլն. թէպէտ հիմա Ֆարշի գետին բերանը ծանծաղ ըլլալով նաւներս չի կրնայ մտնել։ Այսպէս և այլ կողմերը. ուր թէպէտ նաւ կենալու տեղը շատ է, բայց ապահով չեն։ Այդպայի կողմը Սօխումի, Պուճունայի, և Կէլենճիկի նաւահանգիստներն շատ աղէկ են։ Հիւսիսային կողմը Պոնտոսի ապահով նաւահանգիստ աւելի կայ Եալումուա տեղերուն համար. ինչպէս Պալըգլաւա, Սեւաստաբօլ. և այլն։ Մեռած ծովն անցնելէն ետև Օզուի և Աղքիրմանի նաւահանգիստները, նաև հիմա Օտեսայի նաւահանգիստ՝ աւելի ապահով են։

Դունայի բերանը վտանգաւոր և ծանծաղ տեղերը պակաս չեն. բայց գետին ներս լաւ նաւահանգիստներ են։ Իսկ Պալապանէն անդին, Կէլէզրէ՝ Պալըջըգ՝ Վառնա և Պուրգազ՝ շատ ապահով են։ Այնմինչև Սատամբօլ նաև կենալու տեղեր կան, որ ընդամենայն քառասուն նաւահանգիստ կըլլան. ինչպէս իւրաքանչիւրն իր տեղը կը պատմենք։

Ժ. ՀՈՂՄՈՒՆՔ։

25. Դէլեաւոր տիրող հովերը պոնտոսի՝ են արևելեան և արևմտեան. առջինը այնչափ փնաս չի բերէ. բայց եթէ չափազանց ըլլալով սաստիկ խառվէ ծովը։ Իսկ արևմտեան հովը շատ վտանգաւոր է, և աւելի խառվելով մեծ ալէկոծութիւն կը հանէ։

Երբեմն երբեմն հիւսիսային հողմն ալ ալեկոծութիւն կը հանէ. մանաւանդ երբ է արևմտեան հիւսիս (Պարաեէլ)։ Այնպէս հարաւային հովը. մանաւանդ ձմեռուան մեծ յանկարծ խռովելով ծովը մեծ ալեկոծութիւն կը հանէ, թէպէտ շատ չի տևէ։ Եւ որովհետև ձմեռն աւելի արևմտեան և հիւսիսային հովը կը տիրէ՝ սև ծով կըլլայ անհաւարկելի. և երբեմն հարիւրաւոր մղոն կը սառի. ինչպէս եղաւ Մեհրդատին և Կոպրոնիմոս թագաւորին ատենը. և շատ անգամ ալ պատահած է. մանաւանդ հիւսիսի կողմն. որուն վրա ասանկ կըսէ Ովիդիոս քանաստեղծ.

* Ծովով սառնամած ձուլեալ պաղի,
Ձուկն 'ի յանդունդ քանտեալ գերի,
Յարկածածուկ 'ի ջուր լուղի ॥։
Պոնտ. Գ. 1.

26. Ուստի այս ծովն ունի պարբերական հովեր. որ մեծ ալեկոծութիւններ կը հանեն, գրեթէ ամէն տարի միակերպ։ Օրորվինակ՝ ա. Հիւսիսն Քուրբուռնասի 'ի 25 փետ. որ է պառվուցուրտ։ բ. Պարպ. գոգոչի որ է գարնանամուտ։ գ. Ձայնի Քուրբուռնասի 'ի 15 ապր. որ է անկասատեղ։ դ. Խարբէնէ 'ի 23 ապր։ ե. Ձարչ պէօնիւմի 'ի 9 յունիսի, որ է արևադարձ։ զ. Դրէնանէ գարասի 'ի 10 սեպտ. որ է աշնանամուտ։ է. Պաղ պօղոմի 'ի 23 սեպտ։ ը. Պուշ էնէմի 'ի վերջ սեպտ։ թ. Պալչգ Քուրբուռնասի 'ի 2 հոկ։ ժ. Պօղ գարնի 'ի 18 հոկ։ ժա. Պասրմ 'ի 26 հոկ։ ժբ. Իշէլ պուլուտի, երբ Դազումք համաստեղութիւնն կերևի 'ի 18 նոյ։ ժգ. Այգրգ պէօյնի ըմբռնաղ 'ի 23 նոյ։ ժդ Կիւնէօնի 'ի 9 դեկ. որ է արևադարձ (Պարագրը)։

Բնանք են հաստատ հովերն, որ նոյն ատենին պատահելով ալեկոծութիւն կը հանեն. թէպէտ ռամիկները այսպիսի բնական բաներով որոշեր են հովերուն ժամանակը. որպէս զի զգուշանալով ծով չելլեն նաւերը։ Իսկ նաւավարները հովին ելլելը ամպերէն կիմանան, որ բեռնաւորած և պղտոր կերևնան նոյն

եվերքին վրա։ Այնպէս երբոր թռչուն կիջնի նաւ-
ուն մէջ նշան է թէ օդը պիտի աւրի, որ կենդա-
նին ապահով տեղ կը փընտրէ. անոր համար նաւա-
վարներն աղէկ չեն սեպեր։

ԺԱ. ՏԷՐՈՒԹԻՒՆ։

27. Պոնտոսի թագաւորութիւնը շատ հին է. առ-
ջի տիրող ազգը Աբքենաքիտ կըսվեր. որ կը նշա-
նակէ առաջին գլուխ։ Ըստ Դիոդորոսի ասունք սև
ծովուն բերանը կը տիրէին 2355 տարի առաջ. կերև-
նայ թէ անկէ առաջ կարգաւորեալ թագաւոր չիկար։
Այս տերութիւն քառասունուերկու տարի տևեց.
որուն յաջորդեց Սպարտաքոս. որ եղաւ ա թագաւոր
Պոնտոսի։ Այսոր տերութիւնն ութ հարիւր տարի
տևեց մինչև մեծն Կոստանդիանոս. ինչպէս այն ժա-
մանակուան կտրած սահկներուն գրերէն և թուերէն
կիմացվի։

28. Սակայն այս տերութիւն Միհրդատէն առաջ
աւրած ըլլալով 170. տարի անթագաւոր մնաց. իսկ
մեծն Միհրդատ, որ ըստ Պողիբիոսի, էր ընկէ պոն-
տացի կամ սինոպցի թագաւորական ցեղէ յաջորդու-
թեամբ եկած, եղաւ քեռայր Տիգրան թագաւորին
հայոց, և երկրորդ սրքային. նաև ինքնագլուխ թա-
գաւոր Պոնտոսի։

Յոյն պատմիչները կըսեն թէ երբոր թագաւոր է-
ղաւ տասուերկու տարեան էր։ յիսունըվեց տարի թա-
գաւորեց. քսանուերկու լեզու գիտէր. որ միշտ յաղ-
թօղ ըլլալով այնչափ մեծցուց և փառաւորեց Պոն-
տոսի տերութիւնն իր երևելի գործքերով, մինչև
Պօմբէոսին, կամ Պատամպօլու նեղուցին ալ տիրե-
լով խառնեց մեծ տերութիւն ըրաւ։ Զարմանալի
նաւեր և հանճարաւոր մեքենաներ հնարեր էր. նա-
ւերուն մէջէն մեքենայով աշտարակ և թռուցիկ կա-
մուրջ կը նետեր բերդերուն և պարիսպներուն վրա.
այն կամուրջներուն մէջէն զէնքով մարդիկ դուրս
կելլէին կը ծեծկըվէին։

Պոնտոսի տէրութեան տիրելու համար Հռոմայեցիք վարպետութեամբ և Միհրդատայ որդուն փաբնասայ մատնութեամբն պիտի բռնէին անպարտելի քաջը. ուստի ինքնիրեն թոյն առաւ. բայց թոյնը չի նեղգործելով, սրով մեռաւ. թէպէտ Խորենացին կըսէ թէ Պիղատոսի հայրն սպանեց զինքը, թերևս Միհրդատին կամքովը, յամի աշխարհի 3941։

Բ. ծալթ գրամին մէկ կողմը տպած է իր դէմքը փառաւոր կտրիճ անմօրուք. մէկալ կողմը եղնիկ (Կէրեկ). առաջը լուսին. ետին եռանկիւն գիրն Տէլա. թագաւոր Միհրդատ, գրած է յունարէն։

29. Բ. սոր որդին նստաւ իր տեղը Ամնոպ. գրամին մէկ կողմն է դէմքը. մէկալ կողմը Բ. պողոն ջաստուած՝ յոյն գրով իր անունը գրած։ Բ. պա Միհրդատի թոռն Աղբիպոնիոս առաւ տէրութիւնն, որ կը պարծէր թէ անոր ցեղէն եմ. բայց Պոնտացիք ջնդռունելով մեռուցին։ Տես տախտակ ա։

Թագաւորանիստ քաղաքը կըսվեր Կիմէրիս. որ Ատրաբոնի ատենը չի կար։ Ամնոք կը յիշեն Դուպատորիա քաղաք Միհրդատէն շինած, զի առաջ Միհրդատ Դուպատոր կըսվեր, որ հօրամոյն կամ դիւցազուն ըսել է. յոյները տվին այս անունը Միհրդատին, որոնք կայսերաց ալ այս մականունը կուտային. ուստի իր անունն այս քաղաքին դնելով ըրաւ թագաւորական քաղաք, և խառնեց Բ. միսոս քաղաքին հետ. որ պիտի ըլլայ Սամսոնի քով (80). թէպէտ ոմանք խրիմի կողմը կը դնեն. կարելի է թէ հոնալ շինեց Պաղէսէրային մէջ խրիմէն առած տուրքովն. ինչպէս կըսեն (218)։ Յետոյ այս տէրութիւն երկուս բաժնըվեցաւ, Դուրոպական և Բ. սիական։ Դուրոպական մայրաքաղաքն էր Փանտիգաբէ, թերևս խրիմի կողմն էր (186). և ասիականն էր Բանագօր, որ կերևնայ թէ հին Կիմէրիս քաղաքին տեղը շիներ էին։ Հնախօսները կըսեն թէ այս քաղաքին նիստն էր արևելից կողմանէ նեղուցին. բնակիչները Միհրդատէն ետև ազատ կուվեցան Պոմպէոսէն։

ԺԲ. ՆՇԱՆ։

30. Հին ատենը պոնտոսի Թագաւորները զանազան նշաններ ունէին. ինչպէս հին ստակներէն որոշեցինք։ Որոնք հասարակօրէն իրենց նշանին մէկ կողմը կուռքերու պատկերք կը դնէին, մէկալ կողմը ծովու նշաններ, նաւ, երկաթ, և այլն։ Օրօրինակ Լրէկլիայի տերութեան դրամին վրան էր Պոսիդոն չաստուած ծովու՝ ձեռքը դլխին ձուկն (49)։ Այսպէս Տրապիզոնի տերութեան ստրկին մէկ կողմն է Աստղոն չաստուածին դլուխը. մէկալ կողմը նաւի երկաթ (105)։ Սօրօմադ պոնտոսի Թագաւորին ոսկուն վրա պսակ կայ յոյն դրով. իսկ մեծին Միհրդատայ դրամին մէկ կողմն է իր դէմքը. մէկալ կողմը եղնիկ, լուսին։ Ասոր որդուն ստրկին մէկ կողմն է իր դէմքը. մէկալ կողմը Աստղոն չաստուած, ինչպէս ըսինք։

31. Իսկ կոմնենոս Թագաւորներուն նշանները և դրամները ուրիշ կերպ էին. վասնզի Աղեքսիոս կոմնենոսին նշանն էր բոլորակ մէջը լատինի դիր L. S. միջոցը խաչ կախված։ Յոհաննէս սքառլաթոսին՝ նոյնպէս բոլորակ՝ վրան Թագ փետրազարդ, մէջը կովու դլուխ՝ բերանին առաջը աշխարհ խոտաւէտ, դրլխուն վրա աստղ, և անոր վրան Թագ խաչով։ Իսկ Յոհաննէս ստեփաննոսին նշանն էր բոլորակ՝ վրան Թագ փետրազարդ, մէջը մէկ դլխով արծիւ աշխարհիս վրա կեցած. բերանը խաչ, մէկ դին արև, մէկալ դին լուսին։

ԺԳ. ԲԱԺԱՆՈՒՄՆ։

32. Հին ժամանակը երկուս կը բաժնրվէր Սև ծով. ասիական և եւրոպական. յետոյ Սկիւթացի Թաթարաց ատենը զանազան մասն եղաւ. Պոնտոս ուրիշ տերութիւն էր. Ասպաղա, Խրիմ, և Թրակիա

ՀՈՄԱ Դ.Ա
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿԱԶԵՆ

ուրիշ առանձին տերութիւն եղան։ Հիմա նաւավարները կերպ կերպ կը բաժնեն սև ծովը՝ երևելի տեղերին չափ դնելով։ Մինչը ալ սարերը կամ քիթերը սահման դնելով կորոշեն։ Բայց մենք որովհետև սև ծովուն ամէն քաղաքները՝ գոգերը, և սարերը պիտի նշանենք. նաև Ազախու ծովուն վրան ալ պիտի գրենք, պէտք եղաւ որ գլխաւոր սարերին և մեծ քաղաքներին սկսելով սահման դնենք, և բաժնենք այսպէս։

33. Առաջին մասն սև ծովու կրսկրսի Անատոլ գավաղին կամ Ֆիկնեռէն, և կը հասնի Սինոբ, կամ Սինապ։ Երկրորդ մասն է սինապին մինչև Յօռօզ, կամ Տրապիզոն։ Երրորդ մասն է տրապիզոնին մինչև Ֆարշ։ Չորրորդ մասն է Ֆարշին մինչև Թագլիթ պօղազի։ Հինգերորդ մասն է Թագլիթին մինչև Ռէֆէ՝ հանդերձ Ազախու ծովով։ Վեցերորդ մասն է քէֆէին մինչև Պուռնա։ Յօթներորդ մասն է գուռնային մինչև Ֆինէռ, կամ մինչև Ռումելի գավաղի։ Այս երևելի տեղերուն աշխարհագրական լայնութիւններն և երկայնութիւններն կը նշանենք նոր դրութեամբ։

Եւ այսպէս կարգաւ կրսկրսինք սև ծովուն պատմութիւնն կամ շրջագրութիւնն ամէն քաղաք հին և նոր, և ամէն նաւահանգիստ, գետ, և սարեր հանդերձ հին բերդերով, կըստորագրենք հիմակուան անուններովն՝ թէ այս աշխարհագրութեան մէջ, և թէ աշխարհացուցին վրա համառօտ՝ տաճկի անուններով, ինչպէս որ կը տեսնէք։ Բայց պէտք է գիտնալ, թէ աշխարհացուցին վրայի մղոններն են աշխարհագրական. զի ամէն մէկ աստիճան վաթսուն մղոն է. և աշխարհագրական մղոնը տաճկի մղոնէն մեծ է, ինչպէս կերևնայ. մենք տաճկական մղոնով կը բացատրենք տեղերուն հեռաւորութիւնը (14-15)։ Դաւ քիթերը և գետերը որոշ և յայտնի ըլլալու համար, համեմատութիւնը չենք պահեր քիչ մի մեծ կը քաշենք աշխարհացուցին վրա։

Բրդ՝նախ դնենք կարգաւ պոնտոսի թագաւորաց անուններն որ տախտակին վրա. որոնք առաջ կը

նստէին Եւրոպայի կողմն Պօսքորոսի. և ապա նստան ասիայի կողմն Սինասպ քաղաքը։ Երկրորդ դնեցին Պոմպեոս Թագաւորաց անուններն, որոնք կը նստէին Տրապիզոն։ Երրորդ դնեցին Աբրիանոսին բրած շրջագրութիւնն, որ պոնտոսի ամէն տեղերը նշաներ է. և սկսեալ Պատմպօլու նեղուցէն կը հասնի Տրապիզոն, անկէ Դիոսկուրիա քաղաքն ապազայի. անկէ Մագլեթի բերանը, և անկէ Պատմպոլ։ Սակայն շատ տեղեր կը յիշէ, որ հիմա նշանը չի կայ. շատ տեղերուն և ազգերուն անուններն ալ փոխվեր են. մենք որչափ որ գտանք որոշեցինք տեղերուն քովը՝ հանդերձ թուանշանով։ Տես ՁԷ տախտակ։

Ա. ՏԱԽՏԱԿ.

Թագաւորք Պոնտոսի և Այսբերոսի։

Սպարտաքոս Ա. յամի հռովմայ իբր 309 թագաւորեց 7 տարի։
Եղեկիոս թագաւորեց 4 տարի։
Սպարտաքոս Բ թագաւորեց 20 տարի։
Սաթիրոս թագաւորեց 14 տարի։
Լեւքոն թագաւորեց 40 տարի։
Սպարտաքոս Գ թագաւորեց 5 տարի։
Պերիզատ Ա, որուն ոսկին կայ, թագաւորեց 38 տարի։
Լուսիղոս թագաւորեց 5 տարի։
Սպարտաքոս Դ թագաւորեց 20 տարի։
Ոսկեց եռաւ 170 տարի առանց թագաւորի մնաց։

Յետոյ

Պերիզատ Բ թագաւորութիւնը տվաւ Միհրդատին։
Մեծն Միհրդատ թագաւոր եղաւ Այսբերոսի յամի հռովմայ 639 յառաջ քան զքրիստոս 115 տարի, թագաւորեց 52 տարի։ Տեսանք ոսկի և արծաթ դրամները։
Փարնաս որդին Միհրդատայ՝ 63 տարի քեռ առաջ՝ թագաւորեց 15 տարի։
Զանդր՝ 48 տարի քեռ առաջ թագաւորեց 33 տարի. կայ ոսկին։
Գրիպոնիոս 14 տարի քեռ առաջ թագաւորեց։
Պոլեմոն Ա 12 տարի քեռ առաջ թագաւորեց. կայ ոսկին. և յունարէն գովեստ մի գտան ասոր վրա։
Սերամադ Ա. կայ ոսկին յոյն գրով և վրան պսակ։
Ակսբերիս Ա. կայ ոսկին։
Պոլեմոն Բ յամի Տեն 38 թագաւորեց 26 տարի. կայ դրամն։
Միհրդատ Բ յամի Տեն 42 որ է առաջինին ցեղէն, որ մեռուցին։

Յոդիս Ա. յամի տեառն 49. կայ ոսկին։
Թէոբոբորիս Բ. յամի 83. կայ ոսկին իր դէմքովը։
Սօրսմադ Բ. կայ ոսկին կտրած յամի հռ. 870։
Յոդիս Բ. կայ ոսկին կտրած յամի հռ. 884։
Թէմէտաչէս յամի ՌՆ 132։
Լուպատոր. կայ ոսկին կտրած յամի հռ. 910։
Սօրսմադ Դ. կայ ոսկին կտրած յամի հռ. 934։
Թէոբոբորիս Դ. կայ ոսկին կտրած յամի հռ. 968։
Յոդիս Դ. կայ արծաթը կտրած յամի հռ. 986։
Ինինդիմէվոս. կայ արծաթ դրամը կտրած յամի հռ. 988։
Թէոբոբորիս Դ. կայ դրամը կտրած յամի հռ. 995։
Դէիրանէս. կայ դրամը կտրած յամի հռ. 1029։
Յոդոբոսէս. կայ դրամը կտրած յամի հռ. 1050։
Սօրսմադ Զ։
Սօրսմադ Է։
Թէոբոբորիս Է. կայ դրամը կտրած յամի հռ. 1073։
Սօրսմադ Ը. կայ դրամը։

Այս Թագաւորին ժամանակը մեծն Կոստանդիա նոս Եկաւ Ստամբոլ շինեց, զօրացուց, և աթոռը հոն փոխադրելով Թագաւորական քաղաք ըրաւ։ Ուստի անկէտև Պոսբորոսեան պոնտոսի Թագաւորութիւնը վերցաւ, և Սօրսմադ Եղաւ վերջինը. միայն Ստամբոլ նստող կայսերը կը տիրէին. ամէն տեղաց պոնտոսի մինչև Կոմնենոսներուն ժամանակը. զի յամի ՌՆ 1063. Խսահակ Կոմնենոս Թագաւոր Եղաւ Տրապիզոնի. իսկ Յոհաննէս Պէրփէռուժենին ստեղը Երբոր Կոնծաւ տրապիզոնցին Թագաւոր Եղաւ Լազիստանու՝ անկէտև ինքնագլուխ Եղան. և Աղեքսիոսին օրը կայսր ըսվեցան պոնտոսի Կոմնենոս Թագաւորներն (109)։

Բ. ՏԱԽՏԱԿ.

Կոմնէնոս Խաչաւորք Տրապէզոնի.

Յամ քն

1063. Իսահակ Կոմնէնոս, և Իմմանուէլ.
1119. Իսահակ, Յոհաննէս, և Ալէքսիոս.
1144. Յոհաննէս, և Իսահակ կայսր.
1182. Իմմանուէլ Պերփերուժէն.
1183. Ալէքսիոս.
1186. Անդրոնիկոս, և Անիկոբորոս.
1195. Իսահակ Անկելոս.
1204. Ալէքսիոս, և Իմմանուէլ.
1205. Մինաս, և Ալէքսիոս.
1240. Ալէքսիոս մեղաս Կոմնէնոս.
1247. Յոհաննէս.
1257. Անիկոդայոս.
1280. Անդրեանոս, և Միքայէլ.
1295. Յոհաննէս, և Միքայէլ Վասիլէոս.
1321. Ալէքսիոս.
1335. Վասիլէոս.
1339. Միքայէլ.
1385. Ալէքսիոս.
1395. Իմմանուէլ, և Վասիլ.
1407. Անդրոնիկոս.
1436. Ալէքսիոս.
1456. Յոհաննէս.
1460. Դաւիթ վերջին Թագաւոր. որ բռնեց Սուլ. Մահմէտ և մեռցուց (111).

Գ. ՏԱԽՏԱԿ։

Շրջագրություն Աբրիանոսի՝ սկսեալ ’ի Նեղուոցէն Պոլսոյ մինչև ’ի Տրապիզոն։

Տաճար գիսոսի բարեյաջողի. Լաոդրոս (38)։
Ռէյաս գետ. Ռիվա (41)։
Աղռա. Սաբ։
Մելենա. Պարապուռուն (42)։
Արգանէս գետ (43)։
Տաճար ափրոդիտեայ։
Խսիլիս գետ. Փոքր. Ռեբիս է Աղիա (43)։
Նաւահանգիստ գալբէս. Ռէրդէ (44)։
Հռոկ գեաւ։
Ապողոնիա կղզի. Ռէգիկէն (45)։
Ռէրէ։
Անգարիոս գետ. Սագարիա (46)։
Հիպպիոս գետ. Ռեբիս Աբպէ (48)։
Լիլեոն։
Լէոն։
Գալէս։
Լիգոս գայլ գետ (49)։
Հերակլիա. Լրէնէ (49)։
Մեգրօն։
Բոսիդեոն։
Տինդարեանք. ապգ։
Անմիէոն։
Ոքսինաս գետ. Օգլինէ (50)։
Սանդարակա Նահանգեաւ (51)։
Կրէնիտայք. հին ապգ։
Խսիլա։
Տիոս (53)։
Բիլեոս գետ (51)։
Պարդենիոս գետ. Պարրէն (52)։
Մասստրիս. Մասարբ (53)։
Լրիթացիք. Հին ժողովուրդ յոյն (56)։
Կրոմնա. Գնեղ սամարբայի (53)։
Կիտորոս. Ռէրբրոզ (58)։
Լոգիսցիք. Հին ժողովուրդ։
Թրիմնա (59)։
Կարամբիս. Ռէրէմբէ (60)։
Օլիբրիոն. Օսարպանա (61)։
Պարիսպք Աքոնի. Աղպանա (65)։
Լգինետիս (65)։
Կինոլիս. Կինոլ (66)։
Ստեփանէ. Սրէքան (68)։
Բոտա։
Բոտամի։
Լիբատ ագռա. Լուձէ (71)։

Բրմենք. Բաղեման (72):
Սինոբ. Սինապ (73):
Կարուսա. Կերզի (76):
Օագորա. Գոռոզոնվադ (77):
Ալիս գետ. Գոշեբել ըսմագ (78):
Նաւստաթմոս:
Կոնոպէոն:
Նուսինք:
Սմիսոս. Սամոն (80):
Նիկոն նաւահանգիստ. Գոռոմճոռզպ (79):
Իրիս գետ. Զաբզանպա (81):
Հերակլեան նաւահանգիստ. Թոերդ (83):
Թոերմոտոն, կամ Թոերդ գետ:
Ռերիս գետ:
Թոռարիս գետ:
Լոնք. Խոնեբ (84):
Փագամոս գետ (84):
Փատիսոսնա. Ապիճա գեր (85):
Պոլեմոնիոն. Պօլաման (84):
Յասոնի սար. Նասոն պոռոնք (86):
Կիլիկեցոց կղզի. Ցաշայի մոպ (85).
Ամոն. Ամնա (87):
Գոգիորա (88):
Մելանթիոս գետ. Գաբարբէբ (87):
Փարմատենոս գետ. Պոռճագ քէրբէսի (89):
Փարնագիա կամ Կերասոս. Գրէբեսոռն (92):
Բրենտիաս կղզի Գրէբեսոռնի (92):
Օէփիւռիոն. Օէքբէ (94):
Տրիպոլիս. Թրբիպոլի (95):
Բրգիբրիա. Բրճամնահան (95):
Փիլոկալեա (95):
Գարալլա. Կեօրքեք (97):
Հերմոնասա (97):
Տրապիզա. Տրաբիզոն (105):

Գնդա՛ ի Տրապիզոնէ մինչև՝ ի Գնոսիրբիա կամ Սեբաստոպոլիս:

Իսոս. Բիչեբերա (134):
Օրիս. Օրք (138):
Բոսիքրոս. Սոլոբգոռ (141):
Գալոս. Գալաբօնամա (138):
Ինիզոս. Իրինք (139):
Սակուրոս. Աճաբօղ (139):
Թիկնոս. Բինա (142):
Օագատիս:
Բրիտանիս (145):
Բիքսիտէս:
Բրքաբիս. Բրնաբա (146):
Սպատրոս:
Կամբիսիս:
Բաքիս. Պաբռամ (150):
Կինասիս:
Խոս:
Պոգրոս:
Փասիս. Ֆարշ (154):

Դարիենս. Դեմետրիոս (155)։
Դոքոս. Դոքիթ (156)։
Անդամէս գետ։
Տարսուբաս գետ (159)։
Հիբրոս (159)։

Յորդանանայ նոյն կողմանց։

Տրապիզոնցիք (105)։
Կողքիսացիք (152)։
Դրիլաքաց կամ Սանիացիք։
Պսեքեղոնացիք։
Հենիոքացիք։
Օքիտրետացիք։
Լազեցիք (140)։
Պոսիլեցիք։
Պասկացիք. Ներքոս Գաղ-
ղացիք (162)։
Սանիքեցիք։

Ի Դիոսկուրիայէ մինչև ի Աջսբօրն կիմերեան։

Բիտիոս (160)։
Կիտիկա (158)։
Ոչխարը սկիւթացիք
(158)։
Հերակլեան սար (160)։
Մուսկիկա։
Գեկոս գետ։
Հերքիւլեան սար։
Հին Լազիկա։
Հին աքայիա։
Պասկոս գետ. Ներքոս
Զօքսուն (176)։
Բորգիս։
Կիմէս։
Բագրա նաւահանգիստ.
Պուճունդա (171)։
Հիերոս նաւահանգիստ.
Կելենձիկ (177)։
Սինդիկա. Սոչուճայ (178)։
Աջսբօրն կիմերեան.
Թամաքլիր (186)։
Բանտիգաբէոն (215)։
Տանայիս գետ. Տանաիս
(197)։
Մեօտիս լիճ. Ազով (188)։

Ի Կիմերեան Վոսբօրոնէ մինչև ի Վոսբօրն Թրակիոյ, կամ
ի Կոստանդինուպօլիս։

Կաղեդա (217)։
Թէոդոսիա. Քէֆէ (219)։
Տաւրոսասկիւթացւոց նա-
ւահանգիստ. Սուրաղ
(221)։
Ամիտիս (216)։
Լամպաս. Լամպաս (221)։
Պիմբոլի նաւահանգիստ.
Պալեքլաւա (222)։
Տաւրիկեան ցամաքակըղ-
զի. Խրիմ (218)։
Կերկինեատիս (224)։

Գալոսի նաւահանգիստ. Սառասպաբօլ (224)։
Տամիրակա (232)։
Լոնայք. հէն ծողովուրդ։
Բորիսթենէսի գետ. Տնեբէր (233)։
Ալբիա (233)։
Կղզի ինչ անանուն. Ռեբրաս Փէրբէնէն (236)։
Խստրիացւոց նաւահանգիստ. Ռերրաս Օլրա (235)։
Խսիացւոց Նաւահանգիստ. Ռերրաս Գէտէրման (239)։
Ռսիլոն, կամ բերան դանուպի. Տրէլէ (243)։
Կղզի ագիլէայ, կամ ընթացք ագիլէայ (231. և 243)։
Բերան դանուպի. Սէոնէ (245)։
Խստրիա։
Տոմէ. Դոմա (250)։
Գալատարա. Մանիալէա (251)։
Կարիացւոց նաւահանգիստ. Կէլէղրէ (253)։
Կարիա։
Տետրիսիաս (251)։
Բիսոս։
Դիոնիսիոպոլիս (256)։
Ոդէսոս. Ռերրաս Օդէսա (257)։
Լամս լեառն. Լանէ (257)։
Մեսեմբրիա. Մէսէմբրէ (257)։
Մնքիալոս. Մէհօլա (258)։
Պոդոնիա. Տրէղէշ ապասի (261)։
Տրերրոնէս (262)։
Պարիսպք աւլեայ. Մէրքոս (266)։
Մինիաս. Սաբ (267)։
Սալմիդեսոս։
Սուրթա թրակիայ։
Մրակացիք։
Փռիւգիա։
Գիանեանք. Բոռէ դաղի (269)։
Տաճար դիոսի յաջողութեան. Ֆէնէա (270)։
Բերան պոնտոսի. Պօղազ (270)։
Դաբնեայ նաւահանգիստ. Պէօյէ-ղէման (271)։
Բիւզանդիոն. Սպամպօլ (272)։

ՇՐՋԱԳՐՈՒԹԻՒՆ

ՊՈՆՏՈՍԻ

34. ՀՆԱԽՕՍՆԵՐՐ կը գրեն թէ Աղամանդեսի կինը Թէբայի թագուհին նախանձելով խորթ զաւակացը՝ կուռքէն պատգամ հանել տվաւ, որ ուխտերթան Պոնտոս կողքիսաց աշխարհը. ուր է Աստուա կամ Անկռէլ (152). որոնց թագաւորն էր Աֆեդաս. թէ որ չերթան՝ գետինը կը չորնայ, բան չի բուսնի կրսէր պատգամը։ Աստնք Եգիպտոսի կողմէն եկան 3055 տարի առաջ՝ հասան մարմառա ծովը. ուր Հելլէս անուամբ քոյրը ծովն ընկաւ խղդուելեցաւ, և ծովը Հելլէսպոնտոս կոչվեցաւ. այսինքն Հելլէսի ծով. որ է Կէլիսպօլուի բերանը։

35. Իսկ Փրիքսոս եղբայրը հասաւ ստամպօլու նեղուցը, և տասերկու կռոց տաճար մի շինեց ԼՕռօզ բերդին մէջ (38)։ Աստ Ֆէնէռէն եկաւ հասաւ անշնաս Կողքիս. և գնաց Հերմեսի կռատունը խոյ մի զոհ ըրաւ. որուն մազերը ոսկիով պատեց ու կախեց կռատանը մէջ, որ կոչվեցաւ Ոսկէգեղն (152)։

36. Այլ յունաստանի՝ Պելիաս թագաւորին եղբօրորդին Յասոն քաջ երիտասարդը տասնըմէկ տարին ետև ուզեց երթալ այն ոսկէգեղմն առնել Պելիասին խորհրդովը. ուստի Արգոն անուամբ ճարտարապետին անանկ մեծ և փառաւոր նաւ մի շինել տվաւ, որ չէր տեսված. և կոչեցաւ Արգոնաւ։ Շատ տեղէ կարիճներ հոն գնացին Յասոնի ընկեր ըլալու համար. յիսունըչորս հոգի միայն առաւ հետը սև ծով մտաւ. հասան Կողքիսոն. որոնց գլխաւորն

էր քաջն Հերակլէս։ Տես Ճեմ. 685։ Բրդ՝ հին նաւերուն ձեւին նայելով և ջրին ընթացքը դիտելով յայտնի կերևնայ թէ ասոնք, և առջի դնացողները Ֆինեդուին որ Ելան՝ ասիայի կողմին սկսան առաջ երթալ։ Բհա մենք ալ այս ընթացքով առաջ երթալով կրսկրսինք պատմել շրջապատը սև ծովուն։

Ուր այժմեան բնակիչներն են՝ ա Հոռոմ. բ Հայ. գ Տաճիկ. դ Խաղտիք, կամ Լազք. ե Մրցի. զ Մկռէլ, կամ Կողքիսացիք. է Պաղաս. ը Ճերքեզ. թ Չիսթի թաթար. ժ Կոզայի. ժա Խազախ. ժբ Մոսկով. ժգ Պուճաղ թաթար. ժդ Պուլղար. ժե Հրէայ։

Ա. ՄԱՍՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ։

37. Սեւ ծովուն առջի մասն ասիայի կողմն կրսկրսի, որուն ծայրն է Բնատոլ Ֆինեդուին. սակայն առջի բերդը կը սեպվի Դավագ հիսար, կամ Բնատոլ դավազի նեղուցին մէջ. ուր առաջ մեծամեծ բարտի (Դաւագ) ծառեր ըլլալով Դաւագ ըսվեցաւ. և է իբր սահմանագլուխ սև ծովուն, և Ռիւզանդիային. որ շինեց Սուլ. Միւրատ 1623 ին։

38. Լեռանը վրա կայ հին բերդ կռապաշտութենէ մնացած Լօրուս կամ Լօռոզ. որ հին ատենը կրսվեր Լէռոս. այսինքն սրբազան. ուր կար Դիոսի տաճարն, որ Որիոն և հայր հողմոց կրսեին։ Բայս կռատուն Փրիքսոս շինեց և տասներկու կռոց պաշտօնի տեղ ըրաւ. երբոր Բպաղայէն դարձաւ շնորհակալութեան զոհ ըրաւ հոն (35)։

Նդմպէս Բրգոնաւորդք հոն պաշտօն մատուցին թէ երթալը և թէ դառնալը։ Բնկէտեւ սովորութիւն եղաւ, որ սև ծովէն եկող դնացողները հոն զոհ կընեին. ինչպէս կը պատմեն Հերոդոտոս և Կիկերոն։ Բայս բերդին հնութիւնը դրքէն և շինքէն յայտնի է. տեղ տեղ հին քարեր տեսանք։ Պատին վրա խաչեր ալ կերևնան, որ կոստանդիանոսի ատենը դրած են։

Հին ժամանակը բիւզանդացիք այս տեղին մինչև դիմաց շղթայ (Օէնձիր) կապեցին, որ Թշնամիներուն նաւերը ներս չի մտնեն։ Այս լեռան մեծն է Լուշ պաղ. ուր կայ մեծ գերեզման հսկայի՝ ուխտատեղի տաճկաց։ Լսուի թէ հոս հին ատենը կռատուն կար. որ նաւերը սև ծովին տեսնելով երկրպագութիւն կընէին. ինչպէս գրեթէ սև ծովու ամէն բարձր լեռներուն վրա ուխտատեղիք տեսանք։ Այլեմ տաղին վրան ալ կերևնայ հին աւերակ. կարելի է, թէ Մալթեփէին վրան ալ ըլլար ուխտատեղի. վասն զի սև ծովին գալով նախ որոշեցինք Պանտռա տաղին, ապա Մալթեփէ, և Այլեմ տաղին. հուսկ յետոյ Լուշ տաղին։

39. Սև ծովուն բերանը շատ երևելի կռատուններ կային առաջ. զի Պոնտոսի դուռը Պոսիդոն չաստուածին ձեռքն է կըսէին, բալլիքները ինքը կըպատէ, և Այիզաս որդին այս քաղաքս շիներ է. փոխանակ ըսելու թէ Այիզասը իշխանը նախ և առաջ շինեց բիւզանդիա կամ Յատամպօլ. ուր կար տաճար Պոսիդոնի, իբր պահպանիչ ծովու. ինչպէս կը պատմէ Դիոդոսիոս։ Այնորհամար երբոր Մեհրդատ Եուպատորիայի վրան գնաց՝ նախ պաշտօն ըրաւ. և երկու ձերմակ ձի ծովը նետեց 'ի պատիւ Պոսիդոնի։ Տես Ձեմ. 631։

40. Այս քերդէն ետև կուգայ երկրորդ բերդ՝ Ֆիէլ պուռնէ Սուլ. Մուստաֆայէն շինած։ Յետոյ երրորդ բերդ՝ Փօյրաղլիմանի։ Այ երրը կուգայ չորրորդ բերդ՝ Անադօլ Քէնէռէ. որ է զօրաւոր բերդ նեղուցին ծայրը, կամ սև ծովուն բերանը։ Այնպէս եւրոպայի կողմն ալ կան այսպիսի բերդեր դիմացէ դիմաց (271)։

Այս նեղուց կըսվի Այ օսբօրոս. այսինքն անցք կովու. զի Ինաքայ աղջիկը կովու կերպարանք փոխվելով անցաւ ասկեց դիմացէ դիմաց 3400. կամ 3600 տարի առաջ ըստ Այուսեբիոսի։ Այսինքն հասարակօրէն այս նեղուցը կը կոչեն Այ օսբօրոս Բրաքէոյ. և Այ զախսու նեղուցը՝ Այ օսբօրոս Էվքէրէօն։

41. Այդ՝ ասիական ֆէնէռէն ելլելով իրեք մղոն

անդին կուգայ Ռէվ հինգերորդ բերդ. որ է վերջի բերդ նեղուցին հասատատ. ուր կան բնակութիւնք տաճկաց, և գետ Ռէվ անուամբ, որ կուգայ Սուլ. Սիւլէյմանն քեօշկիէն. որ է նեղուցին կողմը։

Գարաթէրէղ գետը մծատ է հոս. որուն բերանը փոքր նաւեր կրնան կենալ։ Բրրիանոս այս տեղս տասնըմէկ մղոն հեռու կը դնէ վերջի բերդէն։ Բրևեալքէն գալով հոս կերևնայ իբր բերան նեղուցին. ասկէց երբեմն նաւերը խաբվելով կիյնին Շիլէ։

42. Դարապուրուն. պոնտոսի ասիական մասին առջի քիթն է. որուն դիմացն եւրոպայի կողմն ալ կայ Դարապուրուն. ուսկից կըսկըսի աւազուտն։ Այս քիթ տասնըութ մղոն հեռու է ֆէնէդէն. որ չունի ծոց և նաւահանգիստ. ոմանք հոս Վէրման գայս կանչանէն. և ասկէց կըսկըսի Լրէպէ գոմշը ասիական աւազուտն, որ է դեղնագոյն աւազ ծովուն եղերքը՝ նման եւրոպայի կողմի դեղին աւազուտին. բայց անոր չափ լայն ընդարձակ չէ (267). որ եօթը մասն կորոշի երկայն, և կը հասնի մինչև Շիլէ. ինչպէս տեսանք։

43. Շիլէ. ըստ յն. Իսէլէ. այսինքն պրուկունք՝ տասնըութ մղոն աստին Տրապիզոնի կողմն է, որ է աւան՝ երսունըվեց մղոն հեռու ֆէնէդէն. ուր կան յոյն և տաճիկ։ Ունի նաւահանգիստ. շատ անգամ նաւերը մոլորելով կուգան հոս կիյնին կը խորտակին. ուր մծատ է Պողկաչա քիթ և բերդ։

Բէվ կամ Բէօվ գետն հոս մծատ է դէպ 'ի արևելք։ Բրրիանոս Դարապուրունէն վար կը յիշէ Բէրանէս գետն. ուր փոքր նաւեր կրնան կենալ կըսէ. որուն մծատն էր Բփրոդիտեայ տաճարը. ուր հին ատենը կըպաշտէին այս կուռքը։ Այս կողմի լեռները ցածըլլալով գեղեցիկ կերևնայ դիրքը. նոյնպէս ծովը ծանծաղ է. ուր երևելի բան չի տեսանք։

44. Վէրթէ. ըստ յն. Վարքէ. այսինքն փոքրիկ շիւղ. վաթսուն մղոն հեռու է Շիլէն. ունի խաւնութ, և գեղը վերն է։ Նաւահանգիստն անպաջող է ձմեռուան. թէպէտ ամառը նաւ կը կենայ։ Բրրիանոս հոս կըյիշէ Հուոյէ գետը։

45. ՎԷՖԿԷՆ. ըստ յն. ԳաՖԿԷՆՈՍ. այսինքն քարոտ. չորս մղոն ասգին ըլլալով հարիւր մղոն հեռու է Ֆէնէռէն. ունի սար, և ծոցն է նաւահանգիստ երկու մղոն լայն. բայց անյաջող է, և սարին առաջը քարեր կան. անոր համար ՎԷՖԿԷՆ ըսվեցաւ. գեղը մէկ ժամ վերն է։ ՎԷՖԿԷՆՈՒ վրան կէյնի Գանդոս երևելի լեռն՝ որ ունի իրեք գլուխ. և է նշան նաւավարաց. որով կիմանան նեղուցին մօտ ըլլալը։ Ծովեզերքին իրեք մղոն բացը փոքր կղզի մի կայ սեղանաձև. շրջապատն է իրեք մղոն մանը ծառերով լեցուն։ Ուր կայ հին բերդ և եկեղեցի. նաև ինոսսունիինը ջրհոր, ըստ որում պատմեցին. ասկէց կերևնայ թէ հոս առաջ շատ բնակութիւն կար. նաև հոս էր Աստղոն չաստուածին կռատունն՝ ըստ Աբր"։ Տես. տախ. Գ։

46. ՏԷՆԻԶ ՔԷՕՅԻ. երսուն մղոն հեռու է. ուր կայ բնակութիւն. բայց երկերը ցած ըլլալով երբեմն ջուր կը կոխէ։ Թուի թէ Տէնիզ Թագաւորն հոս պալատ կամ ամարանոց շիներ էր հին ատենը, և անոր անուամբը կը յիշվի (50)։

Սագառիա, կամ Սալարէ. և ըստ յն. Սախարէ. ԳԾ. (Թերևս 'ի ձայնէ Սախարէն, որ է սրընթաց կամ գրոհ տուօղ. Սալարէ՝), է գետ մեծ. որ կելլէ Գաղատիայի լեռներէն. և խոտորնակի պտըտելով ընդ Փռիւգիա, և ընդ Բիւթանիա կուգայ Տէնիզ քէօյին մօտ Պոնտոս կը թափի։ Հին ստակը կամ դրամը գտան. վրան գրած՝ ΣΑΓΑΡΙΣ. որ ըստ հնախօսից է անուն Սանկարիտ օրիորդին։ Այս գետին մէջ չափաւոր նաւեր կը մտնեն, ինչպէս կը վկայէ նաև Ստրաբոն. որուն քով հին ժամանակը տաճար կար Մօրն աստուածոց. և մեծ ուխտատեղի էր կռապաշտից։ Հոս աւրեց Միհրդատ հռոմայեցոց բանակը. ուր մօտ է Գարասու կամ Գարապալէն փոքր գետն. ըստ հն. Սէլէն։

Սագառիայի գետին մօտ վերը մեծ քարաշէն կամուրջ մի կայ. որ կըսվի Նաբէրտ ՀԷՕՓԷՐԻՍ (21)։ Այլազգները պատմեցին մեզ, թէ Տէրվիշ մի կամուրջին տերն անիծելով՝ գետը ձամբան փոխեր, ցամաք

մնացեր է կամուրջը. և այս ոտանաւորն ըսելով գետն է նեռվեր։

Ալեչի նոռիրա ※էօքէրի-սէնպէն գօ ապարաբն սու սէնի,
Էսրնա Ռիլչի ※էօլկէսինէ գօ սալան էէսին սէնի։

47. Մ. ԳԱՅԻԱՐ աւան, հեռու է Արֆիկէնն վաթսունը չորս մղոն, ուր կայ փոքր գետ, և բնակութիւն։ Մեռուի թէ առաջ երևելի շինքեր կային հոս. որով քաղաքն հեռուէն Ձերմակ կերևնար. անոր համար ըսվեցաւ Մ. ԳԱՅԻ ՇԷՀԷՐ։

48. Մ. ԱՊՊԱ. այսինքն Ծովագնաց, է չափաւոր գետ ութսունեւերկու մղոն հեռու Արֆիկէնն. չունի նաւահանգիստ. մօտը բնակութիւն և գեղեր կան։ Միհրդատ ալէկոծութեամբ եկաւ այս գետին բերանը պատսպարեցաւ։ Մ. ԲՐԻՍՈՍ Սագառիայէն ետև Հիբոս գետ կը դնէ. որ կուգայ Պրուսայի կողմէն. որ է Հիբոս լեռան տակը։

Պապասագաչ՝ ասդին ըլլալով՝ է պապա սարին մէկ թեւը. ուր ամառը նաւ կը կենայ. Թէպէտ վտանգաւոր է։

49. ԼՈՐԻԿԱ, կամ Լէղրի. և ըստ մեզ Մ. բաղէա, է անուանի քաղաք, և նաւահանգիստ սև ծովուն վրա շինած, որ հին ատենը կըսվեր Հերաքլիա պոնտոսի. և յունաց ատենը Ռանդէ-ոչ ըսվեցաւ. որ է աղաւաղութիւն Պոնտոս Հերաքլիայի. դրամին վրա գրած է ΗΡΑΚΛΕΙΑΣ ΕΝ ΠΟΝΤΩ. այ՝ ՀԵՐԱԿԼԻԱՅԻ Ի ՊՈՆՏՈՍ Մ. առաջ շատ երևելի մայրաքաղաք էր. որ հեռու է ալապլիկէն տասնըութ մղոն, և ֆինիկէն երկուհարիւր։ Լենի սար Պապա պուռնի, վրան ուխտատեղի տաճկաց. և մեծ ջրանցք գետնին տակը ըՀի նման. նաև հին բերդ մեծագործ։ Մ. այս բերդս հին քաղաքին մնացորդներն շինած է. որպէս յայտ է մեծամեծ քարերէն, որ քառակոսի աշտարակներով պարըսպած էր յունաց ժամանակը։ Պարսպին մէջ ամէն կողմը կերևնան սիւներ, քարէ շէնքեր հանդերձ մակագրութեամբ։ Ոմանի մի քով գրան վրա մէրմէռ քարեր կան այսպիսի գրով. P. B. A. TPAIAN ... ΤΟΚΡΑΤΩΡΙ. այ՝ ՀՌՈՄԱՅԵՑՒՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՕԳՈՍՏՈՍԻ ՏՐԱՅԻԱՆՈՍԻ ԻՆՔՆԱԿԱԼԻ. որ է մնացորդ հին շէնքի։

Յամանքին կողմը հին դուռ մի կայ մեծամեծ մեր-մէոնտերով շինած. ուր հին շինքեր ալ կան հին քաղաքին։ Այտրաքոն շատ կը գովէ այս նաւահանգիստը. սակայն Ֆինիկիացիներուն շինած ամբարտակը հիմա աւրած ըլլալով շատ ապահով չէ։

Այս ամբարտակ հին ամբարտակին հիմանը վրա շինած կերևնայ, որ էր հիւսիսային հովին դէմ. զի թերակղզին լայնաբաց ըլլալով նաւահանգիստն ապահով չի կրնար ըլլալ. բայց ամբարտակը հարիւր կանգունէն աւելի կերթայ ծովը։ Այս տերութեան դրամին մէկ կողմը գրած է Պոսիդոն չաստուած ծովու. աջ ձեռքը դլխին, և ձախը եռաժանին (Ֆեմ. 631). որով կերևնայ թէ Լրկիլեցիք ծովուն վրա շատ զօրաւոր էին. մինչ զի նաւեր զրկեցին յոգնութիւն Պաղեմիոսին, որ յաջորդեց մեծին Աղեքսանդրի. որոնց մէջ զարմանալի մեծ նաւ մի կար իրեք հազար նաւավարով. նաև քառասուն նաւ շինեցին բիւզանդացոց դէմ ելան։ Մինչդատ Արիոս կղզին բընակիչները հոս քշեց։

Կերևնայ թէ քաջն Հերակլէս շիներ է այս պեղեցիկ քաղաքն երեքհազար տարի առաջ, և իւր անունը գրեր է ասոր. ուր սոսկալի փապար մի կայ 250 քայլ խորունկ. բանաստեղծները կըսեն թէ Հերակլէս անկէ իջաւ դժոխքը. ինչպէս դրամներուն վրա կերևնայ պատկերքը. և հոն կը պաշտեին հերակլէսի արձանն՝ ըստ Դիուզանիոսի. ուստի երբոր Կոթթաս առաւ այս քաղաքը՝ դուռ Հերակլէսի արձանը զուտ ոսկիէ թափած։ Այս քաղաքին առատութիւնն իմացնելու համար՝ հին ատենը ստակ կըտրեցին՝ վրան առատութեան եղջիւր տպած (Ֆեմ. ծան. 617). նաև բժշկութեան չաստուածն ալ տպեցին. որովհետև բժշկական խոտեր շատ կան հոն։

50. Հերակլիա առաջ ինքնագլուխ հասարակապետութիւն էր. բայց Պղեարք հերակլացին Աթէնք գնացեր էր Պղատոնի փիլիսոփայութիւնը սորվելու. հասարակապետութիւնը զինքը ետ կանչեց՝ որ գայ ժողովուրդը խաղաղացնէ. որոնք նոր օրէնք կուզէին. որ եկաւ ժողովուրդին կամքը կատարելէն ետ

տև զօրացաւ՝ թագաւոր նստաւ. այլ երկոտասանե-
րորդ տարին զինքն սպաննեցին սպանդարամետական
տօնին. ասոր յաջորդեց որդին Տիմոթէ, և տասնը-
հինգ տարի թագաւորեց. իր տեղը նստաւ եղբայրը
Սաթիրոս. անկէ անցաւ տերութիւնն եղբօրորդւոյն.
որ աղէկութեանը համար Բարերար կոչվեցաւ. որուն
յաջորդեց Տէնիզ եղբայրն, որ երսուն տարի թա-
գաւորելով մեծցուց տերութիւնը. յետոյ Մասստրիս
կնիկը տիրեց. վերջը երկու որդիքն անգթութեամբ
մայրերնին սպաննեցին. Ռուսիմագոս ալ վրէժ խնդրե-
լով զանոնք սպաննեց, և Հերակլիա ազատ քաղաք
թողուց եօթանասունը հինգ տարի թագաւորութիւն
ըլլալէն ետև։

Յետոյ Միհրդատի պաշտպանութեան տակն է-
ղան, բայց հռոմայեցոց հետն ալ դաշինք ըրին, և այն
պէտնէ տախտակի վրա գրեցին կապիտոլեան Դիոսի
տաճարին մէջ։ Սակայն յետոյ Պուկուզոս զրկեց
Կոթթաս Հերակլիա. որ մատնութեամբ առաւ յա-
փշտակեց և չորաչար քանդեց այս երևելի քաղա-
քը. որոնք յետոյ հատուած մի զրկեցին հոն. կէսը
շինեցին, կէսն ալ դաշտ ըրին. ինչպէս որ կերևայ.
յետոյ յունաց անցաւ. վերջը Տրապիզոնի կայսերը
տիրեցին. անոնցմէ ալ Շինիվիզներն առին. և ապա
Սուլ. Մեհմէտ առաւ տիրեց։ Լեռները հին շէն-
քեր շատ կան. ժամանակ չեղաւ քննելու։

Արիստոնիկութիւն ժամանակն ալ շատ ծաղկած էր
Լրեկլիա. ուր գնաց և լուսաւորեց Անդրեաս առա-
քեալն. նաև Ձեռնադրեց Լուստաբէոս եպիսկոպոսն ու
զրկեց Ստամպօլ։ Ասկեց կանոն եղաւ. որ երբ Ստամ-
պօլու եպիսկոպոս պիտի ձեռնադրըվէր, նախ Լրեկ-
լիայի մետրապոլիտը կը դնէր ձեռքը վրան։ Այս
քաղաքէն էր Հերակղիտես Փիլիսոփան, որ աշա-
կերտեցաւ Արիստոտելի. նաև Թէոդորոս Ստրատե-
լատ փառաւոր իշխանն, որ նահատակեց Լիկիանոս։
Ուր կայ եկեղեցի յունաց և դպրոց։ Այս կողմէս
գետ կանցնի, որ կըսվի Գէյնէ։ Իսկ Լիդոս գե-
տին վրա շինած էր հին քաղաքը. և կուռգանէ դաշ-
տերն Լրեկլիայի կըսէ Պլինիոս։ Լրեկլիայի աշ-

խարհագրական լայնութիւնն է 41°. 5'.
Երկայնութիւնն է . . . . . 29°. 40':

51. ՎԻԼԻՄԼԻ սար, քսանըվինգ մղոն ասղին է. որ շիտակ ծոմն երկնցած ըլլալով չունի նաւահանգիստ. ուր մօտ է Ղինիզ պուռնի, և Կիւզելձէ հիսար. որ ունի հին բերդ և եկեղեցի: Ետ ոմանց այս տեղս առաջ Սելէոս կըսվեր. ուր կայ Ռիվէոս գետ: Հինեռն այս կողմն կը յիշեն Սանգարակա նաւահանգիստը:

52. ՊԱՌԹԻՆ քաղաք, կամ Բառռէնոս. այսինքն կոյս, տասնըուութ մղոն հեռու է. ուր կայ բնակութիւն յն. և տէ: Ունի մեծ գետ Պառռէն. որուն գոգն է խոր իբր նաւահանգիստ. ուսկից ներս կը մտնեն նաւերը, և տասը մղոն կերթան. որուն բերանը քար մի կայ: Վոսենոփոնին տասն հազար զօրքն այս գետէն վախցան անցնելու. որուն ջուրը ծաղկաւից գաշտին մէջէն կանցնի, որ Կոյս կըսվեր. զի Նահիտ չաստուածուհին հոն կը պաշտեին: Տես ՁԵմ. 654:

Այս գետին պատկերքը գրամին վրա տպած կայ. որ կը ձեւացնէ մանուկ մի պառկած արմունկին վրա. որ քարին կրթըներ է, ուսկից կը բղխի նոյն ջուրը, և աջ ձեռքն ունի ջրային եղէգն: Խորենացին Պառթենիոս կանուանէ այս գետն, և գաւառն Կնորիա. որուն մայրաքաղաքն էր Կղոդիուպոլիս. որ է Գաստամպոլի (62):

53. Այմաստրա, կամ ըստ հն. Բամբրիս քաղաք՝ տասնըուութ մղոն հեռու է Պառթինէն. ունի թեբակղզի, կամ սար. գլխու նման. երկու գոգը երկու նաւահանգիստ կան. արևմտեան կողմն երկու տեղ նաւ կրնայ կենալ. մօտէն կանցնի Սենթա գետ:

Այմաստրայի դիրքը շատ աղէկ է. սակայն երկիրը բարեբեր է. հին քաղաքին տեղը շինած է հին շէնքին մնացորդէն: Առաջ չորս գեղ էին Սեզամ՝ Զիթոր՝ Կրոմնա՝ և Տիոս. յետոյ Այմաստրիս անուամբ պարսիկ Թագուհի մի միացընելով քաղաք շինեց և ժողովրդով լեցուց: Բրիանոսի ատենը շատ երևելի քաղաք էր, և պատուական նաւահանգիստ. հիմա տեղ տեղ աւաղ լեցուն է գետերէն. իսկ մէկ նաւա-

հանգստին մէկալը վեց հարիւր ոտնաչափ է։

Աֆմոստրացոց կտրած սալկին մէկ կողմն է կուռք բաղդի. աջ ձեռքը նաւի ղեկ, և ձախը եղջիւր առատութեան (Ներմ. ծան. 661). նաև Պոսիդոն ծովու չաստուածն ալ տպած են։ Աֆմոստրացիք գրեթէ ամէն կուռքի անուամբ ստակ կտրած են. նաև Հոմերոսին պատկերն ալ կայ դրամոց վրա. ուր ծրնած էր։ Երկրին բարեբեր ըլլալն իմացընելու համար Բաքոս չաստուածը գինիի՝ սալկի վրա տպեցին (Ներմ. 643). և բժշկական խոտեր շատ ըլլալուն համար Հոն՝ Ասկղէպիոս կուռքն ալ տպեցին, քովը օձ։ Տես Ներմ. 667։

54. Աղեքսանդրէն ետև Ալինդրատ տիրեց. յետոյ Տրապիզոնի թագաւորները, և Ջենովիզները. որոնց մէջ առաւ Սուլ. Մէհէմմէտ. որ մեծ մասն ժողովուրդին տարաւ Ստամբول։ Բնակիչներն են բարեսիրտ և անուշլեզու. շատը ձախարագործ (Զըխրըխչի) են։ Աֆմոստրա շատ հին շինքի մնացորդներ կան. ծովէն վեր ծառէն տակը քարաշէն մեծ պատանդան կայ եօթն ոտնաչափ. մէկ կողմի գրած է լատին գրով ԹԱԳԱՒՈՐ ՎԻՊԻՈՍ ԳՕՉՉԻԱՆՈՍ ԲԱՐԵՍԷՐ ՎԻՐԱԿԱՅՈՒԻ։ Միւս կողմերը կան իրեք պսակ փորած և մէկ գրօշակ. տեղացիք կըսեն թէ ասոր վրա ձիաւոր արձան կար առաջ. քովը կայ եկեղեցնայ աւերակ։

55. Իսկ դաշտին մէջ մէրմէռ սիւներ վերնախաբրսխով կեցած կան. արևմտեան դին աղիւսակերա շէնք մի կայ Ջենովիզէն մնացած լայն՝ յիսունը չորս քայլ, և երկայն՝ հարիւր քառասունչորս։ Հիւսիսային դին մէրմէռէ սրահ մի կայ տասերուքթ ոտնաչափ բարձր. սիւներուն տեղերը կան, որ չորս կողմն աշխարհիս կը նայեր. առջևէն փոքր գետ կանցնի։ Դիւ մի հեռուն մեծ սիւն կայ քսանրմէկ ոտնաչափ երկայն, և իրեք ոտնաչափ հաստ կորնթեան ձևով. և ուրիշ սիւներ ալ կան։ Իսկ լեռան վրա մեծ քարված շէնք մի կայ չորս սիւն մնացեր է, և սրահը կայ. պատն է յիսունը հինգ ոտնաչափ բարձր. շէնքին երկայնութիւնը կայ վեթասուն ոտնաչափ։ Ուր պատնեշ

մի կայ հարիւր յիսուն ոտնաչափ երկայն. և սրահ մի ծառերով գոյված։ Եւ հարիւր քայլ անդին լեռան վրա մեծ աւերակ մի կայ, և մեծ գերեզման քսանը՝ չորս ոտն՝՝ բարձր, երսուն ոտն՝՝ երկայն, և տասնը՝ ութը լայն։ Մեծ դրան մի ձախ դին յունարէն գրած էր, և աջ դին լատինէրէն այսպէս.

O · NACIAN ·
O · HOV XXX ·
LEG · IONIS II ·
SA · LAC VETE · RANAE GALLI
U · SIBI FE · CIT
· · · · · ·

Այս բան կրնատ ըլլալով չթարգմանեցինք. նմանապէս յունարէն գիրն օրինակելու ժամանակ չունեցանք։ Ամբողջ թերակղզին բերանն է. ուր մինչև հիմա Ենիվիզին շինքերը կան. թէպէտ անշուք մնացեր են։ Այս քաղաքին աշխարհագրական լայնութիւն է . . . . . 41°. 26′. 3″։
Երկայնութիւն է 31°. 4′. 45″։

56. ՏԻԼԻԲԻԼԻ ՇԻԼԷ, ինը մղոն հեռու է ամաստրաչէն. ունի նաւահանգիստ սնյաջող, փոքրիկ գետ, նաև Ջաքրաս քիթ։ Աբրիանոս հոս կը յիշէ Երիթացի յոյն ժողովուրդ։

57. ԹՈՒՔՔԻ ԷՕՆԻ, ինը մղոն հեռու վերինէն. ծովուն մօտ է բնակութիւնը. բայց նաւահանգիստը փոքր է, և միայն ամառը նաւ կրկենայ։ Ուր մօտ է Տելիքլի թաշ. ուսկից կանցնի գետ։

58. ՎՐԹՐՕԶ, կամ Ալեքսանդրեան, տասնըութ մղոն հեռու է. ունի նաւահանգիստ բաւական. բերանը փոքր կղզի մի կայ. ուր նաւ կրշինեն, և շատ գերան տախտակ կելլէ։ Ծովուն քով երկու հին բերդ կայ. մէկն արևելեան կողմն է, մէկալը արևմտեան։ Եւ չորս մղոն հեռու է Այալ տերէսին. ուսկից կուգայ լաստափայտ։

59. ԳԱՐԱՂԱՃ, տասնըութ մղոն հեռու է. ուր կան խանութք և գետ. բայց գեղը վերն ըլլալով անշուք տեղ է։ Այս կողմն շատ ծառնոց կայ. և բո-

ը՝ լեռները կանանչ տեսանք։ Բ.ըրիանոս հոս կը դնէ Թ.ուիմնա քաղաք, և Լ.գիեացի հին ժողովուրդ։

60. ՎԷՐԷՄԲԷ, ըստ յն. Վ.արամվէս Բ.՝հոա, այսինքն Պար կարամբիոյ, երսուսնըվեց մղոն հեռու է վերինէն. որ է մեծ և բարձր սար դէպ 'ի հիւսիս երկնցած Խրիմի դէմ, և զանազան լեռներով կապված։ Շատ վտանգաւոր տեղ է նաւերուն՝ այս կողմն նաւահանգիստ չըլլալուն համար. ուր սարսափելի հով և ալէկոծութիւն կըլլայ։ Բ.այս սար քիթըօզէն կըսկըսի երկրննալ դէպ 'ի ծովը. և մինչև արևմտեան կողմը նաւ կրնայ կենալ դժուարութեամբ։

Հին ատենը աւան և բնակութիւն կար։ Պլինիոս կըսէ թէ կռունկները այս սարէն կանցնին դիմաց՝ աւելի մօտ ըլլալուն համար. և գրեթէ ամէն թըռչուն այս կողմերէն կանցնին Խրիմ, և շատ անգամ նաւերուն մէջ կիջնին։

61. Օ.ԱՌՊԱՆԱ, կամ Օ.Էրպանա, յն. Օ.Էքիոէծ. տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ բերան ըլլալով կրնայ նաւն երկաթ ձգել. և ունի փոքրիկ գետ. ուրիշ երևելի բան չի կայ։

62. ԻՍԷՊՕԼԻ, կամ Ա.Էօէօլէ. այսինքն նոր քաղաք. տասներկու մղոն հեռու է վերինէն. և է ծովեղերք Պասատամպօլուին. թէպէտ չունի նաւահանգիստ. բայց Վ.երեմիեի ծոցն ըլլալով՝ նաւ կրնայ կենալ ամառը. ուր մենք դժուարութիւն քաշեցինք աբևելեան հովէն։ Բ.այս քաղաք փոքր է. բայց բարեկարգ. յունաց թաղն է արևելեան կողմն. ունին երկու եկեղեցի. տեսանք նաև հին վանք լեռան վրա. օրն որ գայ՝ ուխտ կերթան, և պատարագ կընեն։ Իսկ արևելեան կողմն է աւերակ հին բերդին. ուր տեսանք քիթին վրա մնացորդ հին աղբիւրի և ջրանցք։

63. Բ.ուսմտեան կողմն կէս ժամ հեռուն է Պոյրան գէղն. ուր կայ բերդի մնացորդ, և տներուն տակը մեծ խոռոչներ և փոսեր. իսկ դուռն է ծովուն կողմը։

Տեղացիք պատմեցին թէ Պոյոր պէկ կը նստի էղեր հոն Ճինիվիզին ատենը. որուն անուամբ Պոյրան ըսվեցաւ այս գէղն։ Իրեք ժամ վերն է Պաշէոյ.

ուր կերևնան քարէ սիւներ, և ծակ քարեր նաև կա-
պելու համար։ Տեղացիք աւանդութեամբ պատմե-
ցին, թէ Պատմպօլու բերանը չի բացված՝ ծովը հոն
կը հասնէր. և նաւերը հոն կը կապեն եղեր (4)։
Մնէպօլիին մինչև Խթէֆան յիսուն մղոն է. հին ա-
տենը շատ գեղեցիկ տեղ կը պատմեն այս կողմերս։
Մնէպօլուի արևմտեան կողմէն փոքր գետ կանցնի։

64. Լ.ՎՐԷՆԵԷ, ինը մղոն հեռու է Մնէպօլիէն.
չունի նաւահանգիստ. միայն մէկ քանի տուն և խա-
նութ կան։ Ներուն վրան տափակ քարերով ծած-
կած են. երևելի բան չի տեսանք։

65. Լ.ՊԱՆԱ, կամ ըստ հն. Լ.պանա, ինը մղոն հեռու
է վերինէն. հին ատենը չափաւոր քաղաք էր. հիմա
անշուք տեղ է, որ կըսվեր Լ.պանայի
արևելեան կողմէն կանցնի Լ.գինեթիս գետ ըստ
Լ.ըր". և կոռոդանէ փոքրիկ քաղաքն Լ.գինեթիս։

66. ԱՒՆՕԼԻ, տասներկու մղոն ասդինէ. հին ատե-
նը կըսվեր Լ.ինոլէս. որուն հին աւերակները կերևնան.
ունի փոքր նաւահանգիստ։ Լ.ոյնպէս ինը մղոն
հեռու է Զանալ ղէյրէն. որ է անշուք տեղ։ Լ.աւերն
այս ծոցին մէջ՝ մինչև Լ.ղլման շատ վտանգ կը
քաշէն։

67. Լ.ՅԱՆՏՕՆ, ինը մղոն հեռու է վերինէն. ուր
կայ հին եկեղեցի յանուն սրբոյն Լ.նտոնի, և բնա-
կութիւնք. ամառը միայն նաև կը կենայ հոս։

68. ԻՍԹԷՓԱՆ, տասներկու մղոն հեռու է. ունի
սար կամ քիթ, որ դէպ 'ի հիւսիս ըլլալով նաւահան-
գիստն ապահով չէ. թէպէտ նաև կրնայ կենալ ա-
մառը։ Ուր տեսանք հին բերդ և եկեղեցի յունաց
մեծ։ Լ.յս բերդ կռապաշտութեան ատենն ալ Այբ-
քանէ կըսվեր, որ շինողին անունը պիտի ըլլայ։ Տես
տախ. Դ։

69. Լ.ՅԱՆՃԲԳ, ինը մղոն հեռու է. չունի նաւա-
հանգիստ. կան բնակութիւնք. և տներն անշուք շի-
նած են։ Խթէֆանին և Ինճէին մէջ Լ.օտամի գետ,
կամ տեղ կը յիշէ Լ.ըր"։

70. ԱԿԳԷԼԻԴ, ինը մղոն ասդին է. որ է բերան
փոքր գետի. կան բնակութիւնք յն. և տճ. երևելի

բան չի կայ. ուր երբեմն նաւ կը կենայ ամառը։

71. ԻՆՃԻ ՊՈՒՌՈՒՆ, ըստ յն. ԼԷՓԷՆ ՝ՓԿՈՍ. այս. ինքն բարակ քիթ. տասներկու մղոն հեռու՝ երկայն բարակ սար է. սարին վրա խոտալից և շատ գուարճալի է. ծովին շատ բարձր չըլլալով գեղեցիկ կերևայ. որ ծովուն մէջ երկննալով դէպ 'ի Ա.յա սարը՝ իբր թէ կը բաւէ իրիսի կղզին, որպէս մէջք ձևանալով սև ծովուն։ Ա.յս քիթը տասնըմէկ մղոն դառնալով դէպ 'ի արևելք, կուգայ Ա.ղլիմանին բերանը։

72. Ա.ԴԼԻՄԱՆ, ըստ յն. Ա.ԼԻՈՅՈՍ ԱԼԻՊՈՍ կամ ԼԷՊԷՆ. այսինքն աղի նաւահանգիստ, ինձի սարին գոգն է. բերնին լայնութիւնը քիչ ըլլալով ներսն է պատուական նաւահանգիստ ձմերելու. որ մինչև տասնըվեցնգ նաւ կառնէ. ուր չի կայ բնակութիւն։ Պոմ պոնիոս Մէլա առաջ քաղաք էր կըսէ. բայց Պլինիոսի ատենը չի կար. ուստի ուրիշները Սինապու գեղը կը համարին Ա.ղլիման։

Ա.ԲԴ՝ ԻՍԹԷՖԱՆԷՆ մինչև Սինապ է 50. մղոն, և ԻՍԷՊՕԼԻՆԷՆ 100. իսկ ՖԻԷՆԷՌԷՆ 480. որ հասարակօրէն 500 կը սեպէն։ Ա.հա ա՛ Սառն սև ծովու կատարեցինք, և հասանք սինապ. որ ըստ նախնեաց կըսվի Սինոբ, կամ Սինոպ։

73. Ինոբ, կամ Ինոպ, ինը մղոն հեռու է Աղլիմանէն. որ հին ատենէն 'ի վեր հռչակաւոր մայրաքաղաք է Պոնտոսի. որուն գաւառն առաջ կըսուէր Պամֆիլիագոնիա. ունի պատուական նաւահանգիստ աբեւելեան ծոցին մէջ. նաև գործարան նաւուց հռոմայեցոց ժամանակէն մնացած. ուր մեծամեծ նաւեր կը շինուին Օսմանեան տէրութեան։ Պոլիբիոս և Ստրաբոն կըսեն թէ Ինոբ երկու լաւ նաւահանգիստ կայ, և շատ անուանի քաղաք է. որ մէկը պիտի ըլլայ Աղլիմանի նաւահանգիստը։ Հին պատմիչներն ոմանք կըսեն թէ այս քաղաքը շինեց Ինոբի անուամբ աղջիկն, որ ըստ Պոլոմնիոսի էր դուստր Աղոքոսի, որ Յաւերժահարսն ձայնեցին. ինչպէս կը բերէ նաև Պլինիոս, թէ Յասոն կամ Աղգոնաւորդք երբոր հասան Արիէմիէ՝ տեսան Ինապու քաղաքն, որ շինած էր.

* Ա՛օտ քերէին առ բարձրաբերձ Կարամբեայ,
Օ՛ըփէր 'ի ծով ստուերը մեծին Ինոբայ։
Պ՛ալէր. էր Ե. 109.

Ասկէց կը հետևի թէ Ինապ շատ առաջ շինած էր. որուն շուքը ծովուն վրա կերևնար։ Իսկ ոմանք աւելի հաւանականութիւն կը հաստատեն թէ Աղգոնաւորդաց ընկերներէն Աւտոլիկոս շինեց այս քաղաքը. որուն արձանը կը պահեին Ինապցիք. ուստի երբոր հռոմայեցիք տիրեցին, ծովուն քով տեսան արձան մի գեղեցիկ երիտասարդի և հաստատեցին թէ էր Աւտոլիկոսի արձանը, վերուցին Հռոմ տարին ըստ Պլուտարքոսի։ Սակայն կերևնայ թէ նախ պըզտի քաղաք շինած էր. Աւտոլիկոս բերդը շինեց յետոյ նաց կերպով. և յետոյ Միլիզիացիք ձեռամակ ծովուն կողմէն հատուած եկան. տեսնելով տեղւոյն գեղեցկութիւնը և բնակչաց տկարութիւնը՝ իրենք բնակե-

ցան՝ քաղաքը շինեցին մեծցուցին, և քնակիչները կարգաւորեցին. որոնք այնչափ ծաղկեցան և բազմացան, որ հատուած ղրկեցին Տրիբէսուն և Տրապիզն (105)։ Ուստի Մելիզիացիք հիմնադիր համարեցան Անապու. որ Մեհրդատին վախուն շատ ամբոցուցին այս բերդն, որ պոնտոսի թագաւորութիւնը հաստատելով Անապ ըրաւ թագաւորական քաղաք. բայց յետոյ հռոմայեցոց անցաւ։ Մեհրոն և այլք կը հաստատեն, թէ Անոբ էր տեղի ծննդեան Մեհրդատայ և մայրաքաղաք թագաւորութեան նախնեաց նորա։ Հին ատենը սինապցիք շատ զօրաւոր ըլլալով մեծ պատերազմեր ըրեր են. իրենց գլխաւոր կուռքն էր Դիոսի արձանը. նոյն էր կրսեն Աերաթիս չաստուածին կուռքն, որ եգիպտացիք կը պաշտէին։

Անապցիք բերդին մէջ մեծ և փառաւոր կռատուն շիներ էին՝ որուն մէջ կը պաշտէին այս կուռքն, որ ըստ Տակիտոսի՝ Պտղոմէոս թագաւորն եգիպտոսի՝ Սիտրոգեմիս Անապու թագաւորին սիրտը շահելով՝ այս արձանը եգիպտոս տարաւ։ Այս բանին համար իրեք տարի ետեւէն եղաւ՝ շատ մեծ ընծաներ և դեսպաններ ղրկեց Անապ. մինչև ժողովուրդը խաբելով ձայն հանեցին, թէ կուռքն ինքնիրեն թռաւ տաճարին մէջէն գնաց նաւը, և իրեք օրուան մէջ հասաւ Եգիպտոս. որուն համար մեծաշէն տաճար շինեցաւ Եգիպտոս։ Այս կուռքը շատ անուանի ըլլալով քուրմերն ալ գիտնական մարդիկ էին։ Հերակլիտէս պոնտացի փիլիսոփան այս կուռքին մէկ պատգամը կը բերէ. որ Երրորդութեան վկայութիւն կը բերեն։ Πρῶτα Θεός, μετέπειτα λόγος, καὶ πνεῦμα σὺν αὐτοῖς ... Σύμφυτα δὴ τρία πάντα, καί εἰς ἓν ἔοντα. * Նախ աստուած, ապա բան, և Հոգի ընդ նոսին ... երեքեան ամենևին համաբունք և միասնականք ‖։

74. Անապ կտրած հին դրամին մէկ կողմը կայ բաց գլուխ. կերևնայ թէ Աւտոլիկոսինն է. մէկալ կողմն է եղջիւր առատութեան. որ երկրին բարեբեր ըլլալն իմացընելու համար տպած են այսպէս (Նեմ. ծան. 617)։ Ուրիշ հին ստակ գտնըվեցաւ. վրան կայ Պը-

42

զուտուն չաստուած Ձոխութեան. զի անատեղը շատ հարուստ է եղեր Վինապ, որ կողնքի վրա կնք ընկած կերևնայ (Ներմ. ծան. 636)։ Այլ ուրիշ դրամի վրա կայ ձուկն, որ նշան է թէ հոն ձկան առատութիւն է մինչև հիմա։

Հռոմայեցոց ժամանակը կտրած դրամներուն վրա կայ. C. J. AU. SINOPE. այսինքն ՀԱՏՈՒԱԾ ՅՈՒԼԻԱԿԱՆ, ՕԳՈՍՏԱԿԱՆ ՍԻՆՈԲ։ Ուրիշ դրամի վրա կայ. C. J. F. SINOPES. այսինքն ՀԱՏՈՒԱԾԻ ՅՈՒԼԻԱԿԱՆԻ ԵՐԶԱՆԿԻ ՍԻՆՈԲԱՑ։ Ասան զի Պայսերը հռոմայու իրենց հատուածը կը համարեին Վինապու բնակիչը։

Պտրաքոնի ժամանակը շատ գեղեցիկ էր բերդը. բայց հին բերդը քակվեր է, նորին շիներ են յունաց ժամանակը՝ հին բերդին քակվածներէն. ոմանք կըսեն թէ Ներվիզները շինեցին։ Ըստ Այսեբիոսի Վինապ շինվեցաւ Այրեմիա մարգարէին ժամանակը 625 տարի Յիսուսէն առաջ. կերևնայ թէ երկրորդ շինութիւնն է բերդին։ Ուստի շատ տեղ բերդին պատերուն վրա տեսանք քարերուն հետ հիւսած՝ մարդու արձան, կենդանեաց գլուխ, զարդեր, սիւներ. նաև այլազգաց գերեզմանատունը պատանդան, խաչքիսխ, և սեան կտորներ կան. որ են մնացորդ հին սրահին և ձեմարանին. որ կը պատմէ Պտրաքոն։ Այս մէրմէռ զարդերուն մէջ յունարէն գրվածներ ալ կան. բայց հնար չեղաւ օրինակելու։ Այշտարակի պատին մէջ շատ հին քաներ կան. ուր մէրմէռ կիսարձան մի կայ դէմքն աւրած. բայց վիշն ու մազերը կերևնան։ Ծովուն կողմը մէրմէռ արձան մի կայ կողնքի վրա ընկած, ձեռքը ման. ոտքին դին մերկ կին մի կայ նստած՝ ձեռքն ունի ման. հեռուն ալ տղայ մի փոսէն ջուր կը հանէ. նաև մնկանը քով կիսաքանդոր սեղան կայ եղնիկի իրեք ոտաց վրա կեցած։ Ընդին կայ աւերակ հին պատի. որ էր կռատուն։

Այս բերդին դիրքն է հիւսիսակողմն. ունի ներքնաբերդ հարաւային կողմն. մէկ դրան վրա յունարէն գիր կայ, և երկու առիւծ Ձինիվիզներէն մնացած. որ երկու պատնէշի վրա կեցած են ամբողջ. բերդին շրջապատն է երկու մղոնէն աւելի. և պարանոցին

վրա շինած ըլլալով մէկ կողմը կը հանի արևմտեան ծովեզերքը, և մէկալ կողմն է արևելեան ծովը. ուր է նաւահանգիստ և նաւատեղի մեծ։ Բերդն աւա զուտին վրա ըլլալով այլազգիները պատմեցին մեզ, թէ առաջ աւազով գոցված էր. ետքը կախարդութեամբ դիւանք բացին, ու աւազը Աղլիման տարին. որ է առասպել։

75. Պօղոսէէ, կըսվի Թերակղզին Անատոլու. ըստ հն. Կարաէէ. որ ելած է յունական բառէս Կարէ. այսինքն գլուխ կամ սար։ Այս սարին սկիզբն է նեղ պարանոց. որուն լայնք է ութհարիւր քայլ մէկ ծովէն մէկալ ծովը։ Տէս աշխարհացուցին վրա։ Ամանք կըսեն թէ այս պարանոց առաջ բաց ըլլալով ցամաքէն կամուրջ շինած էր բերդն անցնելու. ուստի փոքր նաւեր մէկ ծովէն մէկալը կանցնէին։ Այս Թերակղզիին շրջապատը տասնըութ մղոն կը դնեն. բայց բերդին ծայրէն առնելով այնչափ չի կայ։ Թերակղզիին վրա տեսանք երևելի ուխտատեղի, կամ վանատուն այլազգաց. ուր կայ գերեզման, և լաւ ջուր. որ կըսեն Աէէ պէլլ Թէէէէ։ Մօտը կայ երանելիանաձև աւերակ. մէկ անկիւնն է դէպ 'ի Աղլիման. մէկը դէպ 'ի բերդը. մէկալը դէպ 'ի նաւահանգիստը. կերևնայ թէ մնտուռ էր։ Հռոմայեցոց գերեզմաններն ամբողջ կեցած են. ուսկից շատ անգամ հին քարեր և ստակներ կելլեն. մեր օրը փորեցին՝ քանի մի ոսկին գտան Միհրդատին։ Հռոմայեցիք իրենց գանձը, և մեհենական գրեանքը բերդին մէջ կը պահէին։ Խորենացին կը պատմէ, թէ Աբրիկանոս յերրորդ դարուն Անատոլու կառատանը մեհենական գրքերէն հանեց հայոց թագաւորներուն պատմութիւնն, որ քուրմերը գրեր էին՝ երբոր Անատոլու կը տիրէին Միհրդատ և այլք։ Լաւ այն գրքանքը յետոյ Պանտոսէն Ռուհայ տարեր էին. որպէս տեսեր էր Խորենացին։

Ստրաբոն շատ կը գովէ Անատոլու լեռներն, ու պարտէզները. և մինչև հիմա ծառերով զարդարած տեսանք չորս դին. Ստամբոլ կերթան այս կողմէն մեծամեծ նաւերուն փայտերը։ Ուր կայ կարմիր ընդ

տիր կաւ, որ բարակ ամանները կը շինեն. ամանք կը-սեն թէ կանանչ կաւ ալ կայ Անապու լեռներն, որ Սիոթէլ բառը կանանչ մեկնելով ըսին թէ ասկից ելած է Անոբ անունս։ Այն նաև ձիթենիք. ուսկից ձէթ կը շինեն։ Ոսոլուն քովերը ափսինթի նման խոտեր բուսած են. որ հիները ափսինթ պտտոսի կանչանէին։ Այն ուրիշ բժշկական խոտեր Անապու լեռներուն վրա։ Դրիստոնեայք բերդին դուրս կը բնակին. և մինչև հիմա յոյները քաջ և խրոխտ են։ Հայերը շատ քիչ են, և ունին եկեղեցի։ Դրբոր եւրոպացիք Ստամբոլ առին, Անապ եղաւ գլխաւոր քաղաք Տրապիզոնի կայսերաց։ Յետոյ առին Օսմանցիք. բայց Խմայիլ պէկն ինքնագլուխ կը տիրեր Անապ 1461ին. իսկ Շաթիր պէկին Անապու տարեւ տարի տուրք կուտային Տրապիզոնի կայսերք. և անկէ մինչև ցայժմ Օսմանցին կը տիրէ։

Անապէն շատ երևելի մարդիկ ելած են. ուր ծնած էր Դիոգինէս փիլիսոփան 340. տարի Յիսուսէն առաջ. որ Շնական փիլիսոփաներուն աղանդին ըլլալով, որոնք աղքատ կապրէին, ինքն ալ շուն կամ շնական ըսվեցաւ. որ անուանի խմաստասիրաց մէկն է, թէպէտ կեանքն էր ողորմելի և կարասաբը-նակ։ Այս փիլիսոփային գերեզմանին քարը գտնը-վեցաւ. որ է հին մարմար. վերը նստեցուցեր են շուն մի, և տակը կայ յունարէն գիր այսպէս.

(Հ). ԽՕՍԵԱՑ ՈՒՐԵՄՆ ՇՈՒՆԴ ԶՈՅՐ ԳԵՐԵԶՄԱՆ ՊԱՀՊԱՆԵՍ ԱՅԴՉԱՓ ԶԳՈՒՇՈՒԹԵԱՄԲ.

(Պ). Ի ՇԵԱՆ.

(Հ). ԼՅԻ ՈՎ ԻՑԷ ԱՅՐԴ ԶՈՐ ԴՈՒ ՇՈՒՆ ԱՆՈՒԱՆԵՍ.

(Պ). ԴԻՈԳԻՆԷՍ.

(Հ)։ ՈՒՏՏ՝ ԷՐ ԱՐԴԵՕՔՆԱ։

(Պ)։ Դ՝ ՍԻՆՈԲԱՑ։ ԵՒ ՆԱ ԻՆՔՆ Է՝ ՈՐ ԵՐԲԵՄՆ ԲՆԱԿԷՐ Ի՝ ԿԱՐԱՍԻ՝ ԵՒ ԱՑԺՄ ԱՍՏԵՂՔ ԵՆ ՆՈՐԱ ԲՆԱԿԱՐԱՆ։

Այս քաղաքէն էր սուրբ Փոկաս հայրապետ սքանչելագործ, որ քարոզեց նաև Աստիա և Միսոն։ ուստի եղաւ եպիսկոպոս Անկիրայոյ, և հոն կատարեցաւ Տրայիանոսի օրը։ Յոյնք կըսեն թէ Անդրեաս առաքեալ Լիրկլիա, և բոլոր այս կողմերս քարոզելով լուսաւորեց։ սակայն Կաթողիկեաց թղթէն կերևնայ թէ Պետրոս առաքեալ Անտիոք նստելէն ետև եկաւ Գալատիա, և բոլոր Պոնտոսի քաղաքները լուսաւորեց։ որոնց յետոյ թուղթ գրեց՝ * Դ՝ սփիւռս պոնտացւոց ||։ Անկիրայոյ սարին առաջը մղոն մի հեռու փոքր կղզի կայ ապառաժ։ որ այլազգը կանչանէ Գաղէպէ։ որուն մէջէն նաւ կանցնի։ վրան բան չի տեսանք։ Անկիրայոյ աշխարհագրական լայնութիւնն է։ . . . . . 41°. 22′.

Երկայնութիւնն է 32°. 50′։

76։ ԿԵՐԶԷ, ըստ Աբր՝. Գարուպա, հին քաղաք տասնըութ մղոն հեռու է Անկիրայէն։ ունի լաւ նաւահանգիստ բաւական քսան նաւուց։ շատ առատ տեղ է։ ուր կայ հին բերդ, և գետ։

77։ ՉԱՑԱՂԶԻ, ինը մղոն ասպին է։ և մեծն է Կէօլ, կամ Ֆիշկէգ աղէ։ որ էն գետի բերանները։ ուր տեսանք քիթ Գոռոպուվաղ պոռոնի։ առջին նաև կըբնայ կենալ իբր նաւահանգիստ։ Հինեբէն այս տեղս կանչանեն Օ՝ աֆորա։

78։ ԳՈԶԸԼ ԸՐՄԱԴ, կամ ըստ հն։ Աէ՝ գետ հոչակաւոր հին ատենը։ ինը մղոն հեռու է վերինէն։ որ է կարմրադոյն և երագընթաց։ փոքր հայաստանէն կելլէ Սեբաստիոյ կողմէն կանցնի կուգայ Նիկսար։ և անկէ հիւսիս խոտորելով կը վազէ պոնտոս։ բերանը շատ լայն չէ։ զի երբեմն բուռն գալով աւազ կը լեցվի։ ուր երկայն ցամաք լեղու կայ գէպ ի՝ արևելք։ Խորենացին կըսէ թէ Աստղե-

կէս և Աղիս 'ի Սեբաստիոյ եղանեն, և ոլորեալ անկանին 'ի ծոցն պոնտոս։ Աղպիանոս կը պատմէ թէ Միհրդատ այս գետին քով պատերազմեցաւ, և մեծ յաղթութիւն ըրաւ Հռոմայեցոց դէմ. յետոյ հանդիսաւոր զոհ ըրաւ այս կերպով. բարձր լեռան վրա շատ փայտ շարեցին. և առջի փայտերը թագաւորն ու մեծամեծները բերին. անոր քով ուրիշ փայտակոյտմ՚ալ բարձրացուցին, որ վեր ելլելով կը նեղնար։ Առջի փայտակուտին վրա դրին մեղը, գինի, կաթն, եղ, և խունկ, որ ընծայեցին կուռքին։ Երկրորդին վրանալ շատ կերակուրներ լեցուցին, ու կրակ տվին այրեցին. որ հարիւր մղոն հեռուէն բոցը կերևնար. ահա այսպէս կատարեց հեթանոսական ուսնախմբութիւնն։ Այս գետին մօտ կը դնեն Աֆոս աւանն, որ հին քաղաքի աւերակին վրա շինած էր. նաև հոն էր աթենացոց հատուածը։ Լուսի թէ այս գետէն մինչև Սամոն կըսվեր Աֆիսոս. զի այս տեղս աւելի կը յարմարի Սամոնի (80)։ Խորենացին կը յիշէ նաև Գերմանուպոլիս հին մայրաքաղաք Աղիս գետին վրա շինած, որ հիմա տեղը չի կայ։

Այս գետէն անդին է Լանձիր պոռանի. ուսկից կըսկըսի երկայն ծառնոցն, որ Ղալթի կըսվի։ Սկիզբ մինչև Ղարշանպայի քիթն է ծոց Սամոնի, և մինչև Լանեի կըսվի Լինոպոնոս։

79. Գուիմաճուղաք, ինքնասուն մղոն հեռու է Սերզէէն, և է ընդարձակ նաւահանգիստ ապահով. թէպէտ տեղ տեղ ծանծաղ է. որ ըստ հն. կըսվեր Բրիոն նաւահանգիստ. ուր կայ հին քաղաքք և խանութ. չորս բոլորը ծառնոց է, ուրիշ բան չի տեսանք։ Սկիզբ վերն է Պաֆրա. ուսկից կըսկըսի Ղէնդի. ըստ մեզ Սէնդ. որ է ընդարձակ գաւառ և կը հասնի մինչև Պաթլամա բերդ (91)։

80. Սամսոն, ըստ հն. Աֆոն, տասնրուութ մղոն հեռու է վերինէն. որ է բարելից քաղաք, ունի հին բերդ և հին շէնքեր. նաւահանգիստն է ընդարձակ. ուր կայ քիթ, բայց առաջը բաց ըլլալով անյաջող է. երևելի վաճառականութեան տեղ ըլլալով ամէն ազգ պակաս չէ. կան նաև հայեր։ Աղեքսանդրի ժամա

նակը Ա.միսոն ազատ քաղաք էր. ինչպէս յայտնի է կտրած ստակներէն. յետոյ Միհրդատ տիրեց, և թագաւորական տեղ շինեց Ուխ գետին քով ըստ Յով. կաթողիկոսին։ Ա.պպիանոս կը պատմէ, թէ Միհրդատ շինեց Նիկատորիա Ա.միսոսի մօտ, և ըրաւ իրեն արքունիք. ուստի երևելի տեղ էր անտառնը։ Հոս բերին Պոմպէոսի՝ Միհրդատին մարմինը. բայց Պոմպէոս չուզեց տեսնել, որ ծաղը ըրած չըլլայ. այլ շուտով ղրկեց Ամնոր, որ մեծ պատուով թաղեն։

Իրեք մղոն ասդին է Տեվրէնտ լեռը. ուր գտան մեր օրը մեծ հոր արծաթի հանքի Ղինիվիզէն մնացած. հանքը տեսանք կարմրագոյն և ծանր. փորձեցին, որ ոսկի ալ կար մէջը։ Ութը մղոն ասդին է Նէռէէ լեռը բարձր. վրան կայ առողջարար ջուր. այս լեռն է նշան Խրիմէն եկող նաւերուն։

81. Ղարղանպա, գետ երևելի մեծ և զօրաւոր. ըստ հն. Ուխ կամ Ուխ. այսինքն կամար. և ըստ ոմանց Նէռէ. բերանը ծովուն խառնըվելով կը լայնայ իբր նաւահանգիստ. թէպէտ ծանծաղ է։ Այս գետ կելլէ Հայաստանէն, և Ա.մասիայի մէջէն անցնելով կը վազէ Հինոպոնտոս։ Գիթեն արևելեան կողմն. որ կըսվի Ղարշանպա, կամ Ղալեի պուռնի, նաև Ա.ղաճ պաշի. որովհետև այս գետէն կըսկըսի երկայն ծառնոցը, և երսուն մղոն երթալով կը հասնի Թէրմէի նաւահանգիստը։ Ա.յս գետին մէջէն կելլեն մեծամեծ ձկներ. որուն վրա շինած է վերը Ա.մասիա քաղաքն, որ էր անուանի մայրաքաղաք Հինոպոնտոս գաւառին։

Միհրդատ այս քաղաքն ընդարձակ պարըսպելով կոչեց Տիեզերասահման. շատ երևելի շինքեր շինեց արևելեան կողմն Ուխ գետին. իսկ թագաւորական պալատը հիւսիսային կողմը շինեց։ Հեռան վրա հին բերդ կայ. նաև տեղ տեղ քարէ փորած խուցեր կան. կերևնայ թէ քուրմերու տեղեր են. հիմա Տերվիշներ կը բնակին։ Քաղաքը ջուր բերելու համար իրեք մղոն տեղ ապառաժ լեռը կտրեր են սոսկալի աշխատանքով։ Ա.յս քաղաքին դրամը

գտան, որ գրած է ԱՄԱՍԻԱՅ ՄԻՏՐՈՊ. ՊՈՆՏ. ԱՄԱՍԵԱՅ ՄԻՏ. ՊՐՕՏ. ՊՈՆՏ. այսինքն Ամասիայի Մատրաքաղաքի Պոնտոսի. Ամասիայի Մատրաքաղ. Պոնտ։

Այս քաղաքէն էր Սարգիս անուանի հնախօսը. նաև սուրբ Վասիլէոսն Ամասիայի եպիսկոպոսն էր. որ նահատակեցաւ 319ին. նմանապէս անկէց էր սուրբ Թէոդորոս զօրավարն, որ այրեց Ուռա քաղաքը, որ կը պաշտէին ամասիացիք. անոր համար Պոպղիոս դատաւորն ողջ ողջ զինքն այրելով նահատակեց։

82. ՅԱՐՏԱՆՊԱ աւան, գետին բերնէն չորս ժամ վերն է. ուսկից կանցնի նոյն գետը. այս տեղ շատ գեղեցիկ է, դաշտերով, և պարտէզներով զարդարած. ուր շատ տուն կայ մեր ազգէն. ունին եկեղեցի։ Ալսեն թէ հոս առաջ լեռ էր. յետոյ գետը ձամբայ բանալով ծոմն է վազեր. ուստի ֆերմաններուն մէջ կը գրեն ՆԷՆԻԿ ԿԷՕԼ։ Այս աւան շատ ժամանակ չէ որ շինցաւ. և ամէն ազգաց շինքեր շինվեցան։

Խոռոշանէ աւան մօտ է Յարշանպայի. բնակիչներն են հայ Համիդնու եկած. և ամէնքը զինուորգրված են որդւոց որդի. և ունին զօրապետ հայ իշխան, որ զիրենք կը կառավարէ. մարդիկ ահ չունին. միայն Տիրեպէկին հետ պատերազմ կերթան. և զօրաւոր մարդիկ են (144)։

83. ԹՈՒՌՄԷ. ըստ յն. Թուրմէդ. այսինքն ինքնաբուղխ տաք ջուր. վաթսունչորս մղոն հեռու է Սամսունէն. ունի գետեր, և գլխաւորն է Թէրմոդոն անուանի գետ հին ատենը. ուր հիմա նաև չի մնար աւազով լեցուն ըլլալուն համար, ինչպէս փորձեցինք, թէպէտ լայն է. նաւահանգիստն է ընդարձակ և ապահով. քիթը կըսվի Նէվա պուռնի, որ արևմտեան հովը կը կտրէ։ Գեղը վերն ըլլալով ամէն շաբթու հոս վաճառ կըլլայ։ Բրրիանոս հոս Հերակլեան նաւահանգիստ կը կոչէ։

Թուրմէ հին ժամանակը շատ անուանի տեղ էր. իշխանն էր գիւղաղն, որ կըսվեր Սօլիմօս. որուն դրամը գտնըվեցաւ. մէկ կողմն էր իր անունը ΣΟΛΙΜΟΣ. մէկալ կողմը ΤΕΡΜΗΣΣΕΩΝ. ԹԷՐՄԻՍՍԷՕՆ։ Թէպէտ

մենք հոս երևելի բան չի տեսանք. սակայն հին ա-
տենը շատ անուանի էր Աստվուծի կանանց համար.
որոնց գլխաւոր քաղաքն էր Թերմի գետին քով. որ
կըսվէր Թերմիսգիր. և գետն էր Թերմոդոն. որ ո-
մանք Աստոն կանուանեն։

Աստուած հին պատերազմող քաջ կանայք. որ ըստ
հին պատմիչներուն՝ ինքնագլուխ տերութիւն եղան
Թերմի մօտ, և սև ծովուն եզերքին մինչև Ֆարշ
տիրեցին։ Աստոց սկիզբն էր Սկիւթացոցմէ. որոնց-
մէ երկու կտրիճ արքայորդիք Իղին և Սկոլոպիտ
աքսորվեցան մինչև Թերմի. ուր սպա բազմացան.
բայց անհանդարտ ազգ ըլլալով քովի ազգերը թշնամա-
ցան իրենց հետ, մեծ պատերազմ բացին, և շատը բռնե-
ցին գերի ըրին. մնացածները ժողվեցան բոլոր տերու-
թիւնը յանձնեցին կնիկներուն՝ իրենք թշնամեաց դէմ
պատերազմ գնացին. իսկ կնիկները մեծամտելով սկսան
անկիւտև անարգել երիկմարդիկ. և յետոյ թշնամա-
նալով կատղեցան ամենուն դէմ։ Երկու թագուհի
ունէին. մէկը զօրքը կընայէր, մէկալը կառավարու-
թիւնը. վերջի թագուհիներն եղան Անտիոք և Օ-
րիդիէ։

Այս կանայք բոլոր զօրական ըլլալով չունէին
երիկմարդ. երբոր ուզէին քովի ազգերէն օտար մարդ
կառնէին. և երբ մանչ կը ծնէին կամ կըսպանէ-
ին, և կամ անկար կընէին՝ որ չի կրնան պատե-
րազմել. և երբ աղջիկ կը ծնէին աջակողմի ծիծը կը
կտրէին, կամ կերէին. որպէս զի դիւրութեամբ ա-
ղեղը նետեն. և անոր զօրութիւնը թեւին երթալով
աջ ձեռքերնին շատ ուժով կըլլար. ահա այս պատճա-
ռաւ Աստուն ըսվեցան, որ միաստինք կամ անծիծ ըսել
է։ Օգեստնին մինչև ծունկն էր. ձախ թեւերնին և
կուրծքերնին բաց էր. աղջիկները կը սնուցանէին ձիու
կաթով և մանանայով. որ շատ ուժով կըլլային։ Հիւ-
բոկրատ կըսէ թէ, օրէնք ունէին, որ աղջիկները չէին
կրնար կարգըվիլ, մինչև որ իրենց թշնամիներէն ի-
րեք մարդ չըսպանէին։ Որոնք Տրոյայի պատերազմին
ատենը օգնութիւն գնացին Պրիամոս թագաւորին.
և վրէժխնդրութեան համար կողոպտեցին Աթենքը

2750. տարի առաջ ըստ Լուսեբիոսի. նաև կոխեցին Ասիա, և երեցին երևելի կռատունը. որոնց գլուխը կամ թագուհին կրսվէր Դիալեսդրիս։ Ալսեն թէ Լիփեսոս քաղաքը, և Արտեմեայ տաճարը ասունք շինեցին. նաև կուռքը զարդարած էր ստեամբք. որուն ընծայ կընէին կտրածները։ Հերոդոտոս կը պատմէ թէ յոյները յաղթելով Մազոնից գերի բռնեցին ու իրենց նաւերը լեցուցին, որ տանին. և շատ կը զարմանային անոնց քաջութեան և կրակոտութեանը վրա. բայց հովը տարաւ զանոնք Ասպազայի կողմը ձգեց. երբոր յոյները շփոթած էին հնիկները զամէնքն սպանեցին. և դուրս ելածնուն պէս՝ որչափ ձի գտան հեծան սկսան պատերազմիլ տեղացոց հետ. որոնք տեսան որ չըլլար, քիչ մի տեղ տվին իրենց ու այնպէս միսցան, և խաղաղեցան (182)։ Անկէտև սկսան երկան հետ նստիլ. և հասկըցան, որ տուն տեղ ըլլան աղէկ բան է։ Ըստ ոմանց եղան Մազունիք նաև Փրիկէի կողմը։ Տես Հմտ. Ա. Ջ. 284։

Դէպք ոմանք սուտ կը համարին այս պատմութիւնը. բայց շատերը կը հաստատեն. ինչպէս մենք ալ տեսանք այս կողմերս քաջ հնիկմարդիկ (95)։ Ովիդիոս այսպէս կը բերէ.

* Դու Դերմդոն իգաժողով խմբին ծանօթ.
Դու դու Փաթիս արանց երբեմն յունաց կարօտ։
Ովիդ. պոնտ. Ջ։

84. Լինեէ. ըստ յն. Լինէօ քաղաք տասնըութ մըղոն հեռու է Դերմէն. ծովեզերքն է լուսնաձև գեղեցիկ. հարաւային կողմը մեծ նաւեր կը շինեն. ութհարիւր տուն հոռոմ, և քառասուն տուն հայ կայ, ունին եկեղեցի. այլազգը շատ է. և երևելի շինք է փաշային պալատը։ Այս ժամ հեռու հարաւային կողմն է բարձր լեռն փոքրիկ և սուր. վրան կայ ա նառիկ բերդ չորս պարսպով շրջապատած. լեռան գլուխն է վերջի պատը. ամէն շրջապատ ունի դուռն. վերջի շրջապատն երկու դուռ ունի. մէջը կայ եօթը ջրհոր (Սառնիձ)։ Այս բերդն է Ճենիվիզէն մնա

ցած. որ ծառերը գոցելով աներևոյթ եղած էր. տեղացի Տերէպէկիները գտան նորոգեցին։ Բրևեբեան կողմն է գետն, որ Փաքամոս կըսէ Բրբիանոս։ Իսկ նաւահանգիստը անյաջող է ծանծաղ ըլլալուն համար։ Բրևմոեան քթին վրա տեսանք սուրբ Նիկողայոսի եկեղեցին յուշաց քարաշէն բոլորակ՝ հին ժամանակէն մնացած. որ ուխտատեղի է քրիստոնէից։ Բայց Գաւառ կըսվի Պոլէմոնական պոնտոս. որ հին ատենը երևելի նահանգ էր. և Պոլէմոն թագաւորին անուամբն այսպէս կոչվեցաւ. վասն զի ըստ Ստրաբոնի՝ Պոլէմոն և իր թագուհին Ռիտոգորիս այս կողմն կը տիրէին մինչև Տրապիզոն, և մինչև Կողքիս կամ Ֆարշ։

85. ՖԱՋԱ, տասնբուրթ մղոն հեռու է Իունեէկն. ունի լաւ նաւահանգիստ ձմերելու. որ է գետին բերանը. իրեք մղոն բացը փոքր կղզի կայ ասպառաժ. որ կըսվի Գոռշ ապասի։ Ֆաձային գետն է անուանի. որ հին ատենը Պանթա կըսվէր։ Ուր կը գնեն Պոլամոն գետ. և կայ հին քաղաք. այս գետ պղտի նաւեր կրնան մտնել. հոն մտած են ինքնաբուղխ տաք ջուր, բաղնիք, և հին եկեղեցի. որ կերևնայ թէ հին Ռոլէմոն քաղաքին մնացորդն են. որպէս կը յիշեն հիները, որ շինած էր գետին քով։ Պերջի ատենները Ֆաձային մտ փորեցին հին բերդ մի գըտան, և պատին մէջ խորանի նման շինքեր կան։ Իսկ ինը մղոն ասդին ցամաքէն հեռու ապառաժին վրա կայ հին բերդ, և մէջն եկեղեցի. որ կըսվի Բայգալեպ։ Այ նաև ուրիշ հին բերդ արևելեան դին։

86. ԴԱՍՕՆ, ըստ հն. Դասոն պոռոնի, տասնբուրթ մղոն հեռու է վերինէն. ունի նաև կենալու տեղ. թէպէտ առաջը քարոտ է։ Բայս անունը Յասոնէն առած է, որ Բրգոնաւորդներով հոս հանդիպեցաւ (36)։ Վրթին տակը տեսանք հին վանք, կամ մեծ եկեղեցի Բ. ստուածածնայ. նոյնպէս լեռան վրա հին բերդ Խսրէանն գալէպ։ Բայս կողմն շատ ըրամարգի կրլայ. զի Խրիմէն ասդին անցնելով կը հոգնին կիսնին. երբեմն ծոմն հանդարտ գտնելով զգուշութիւն կիջնին մէկ թեւով ծովուն վրա կը կրթընին հոգնու-

թիւն կառնուն. և նորէն կըսկըսին երթալ (60)։

87. Վ Օ Ն Ա , ինը մղոն է Լասսնէն. որ ունի աւ ռանձին քիթ, և լաւ նաւահանգիստ. ուր իրեք տեղ նաւ կը կենայ ապահով, և շատ նաւեր կրնան ձմեռ ել հոն. բայց գեղը վերն է. ունի իսանութեներ և աղբիւր։ Վ օ ն ա յ ի քթին տակը տեսանք հին բերդ Գալէձիգ. նաև Պ ո ռ ձ ա գ գալէ։ Լ ը ր ի ա ն ս ս ասդին կը գնենք Մ է լ ա ն ի է ս , այսինքն Գարատերէ։

88. Ի Ա Ի Ր Ա Ի Ն Պ Ի աւան նոյն գոգին մէջն է Վ ո ն ա յ է ն ասդին. ուր Լ ը ր ի ա ն ս ս կը յիշէ Գ ա ղ ի ս ր ա քաղաք. որ Վինասայիք հատուած ղրկելով շինցուցեր էին. հոն հանդիպեցաւ Տ ր ա ե ն ա փ ո ն , ուր կար նաւահանգիստ. որ պիտի ըլլայ Վ օ ն ա յ ի մօտ այս ծոցին մէջ։

89. Պ օ Զ Թ ի փ է , չորս մղոն ասդին է. ունի սար և լաւ նաւահանգիստ. լեռան վրա հին եկեղեցի կայ սուրբ Գ ա ր գ ա յ. քովէն կանցնի գետ Պ ո ռ ձ ա գ գէ. բէռ. ըստ Լ ը ր ի Ֆ ա ր մ ա գ է ն ս ս։

90. Օ Ր Տ Ո Ի , քսանըչորս մղոն հեռու է Վ օ ն ա յ է ն. չունի լաւ նաւահանգիստ. ծովուն քով կայ հին բերդ ապառաժին վրա անառիկ, որ կրսվի Պ օ ղ ո ս գ գալէ. որուն առաջը ծովուն մէջ մեծ թնդանօթի մի ձգեր են։ Լ ա ռ ա ջ հոս բնակութիւն չի կար. մեր օրը ձեռամբ Մ ա հ մ ե տ ի Լ ա ւ ե տ ի ք տրապիզոնցի իշխանին՝ բնակութիւն շինվեցաւ ամենայն աղգաց։ Օ ր տ ու ն ի ն լեռանը վրա հին բերդին աւերակը կերևնայ. ուր երկաթ գուռ կայ, որ շատ սանդուխով վար կիջնի մինչև գետը։

Օ ր տ ու ն է ն մինչև Պ օ լ ա ն ձ ը գ փազարի քսանըչորս մղոն է, ուր կան իսանութք։ Լ այ վասիլ քիթ մօտն է. որ ունի փոքր ծոց. ամառը կրնայ նաւ կենալ։

91. Պ Ա Թ Լ Ա Մ Ա բերդ հին, այվասիլէն ասդին է. տակէն բարակ ջուր կանցնի։ Լ ա ս կ է ց ասդին գէտ 'ի Տ ր ա պ ի զ ո ն սոխակ (Պիւլպիւլ) անցնիր։ Լ հա հոս է սահմանագլուխը Տ ր ա պ ի զ ո ն Նահանգին, որ կը հասնի մինչև Տ ր է մ ը (140)։ Լ ա ս կ է կըսկըսի Պ ո ն տ ոս կապադովկիոյ. ուր մինչև Փ ի լ ա դ ա ֆ ա ապահով նաւահանգիստ ջըլալով նաւերը շատ կը վտանգին արևմտեան հովէն. երբեմն մինչև Լ ա պ ա զ ա տանի կը

ձգէ. ինչպէս գմեզ տարաւ Լազիկիա ձգեց սաստիկ ալէկոծութեամբ։

92. ՎԻՐԷՍՈՒՆ քաղաք, քառասունըվեց մղոն հեռու է օրտուէն. ըստ հն. ՎՐԷՍՈՍ, այսինքն ՎԻՐԷՍ. որ ըստ Աբր՝. նախ Ամնասցիք շինեցին. որոնց տուրք կուտային քիրէսունցիք. յետոյ Փարնաս որդին Միհրդատայ բերդը շինեց, կամ նորոգեց՝ Փարնաքէաս կոչվեցաւ. որ շինած է ծովուն մօտ բլուրին վրա երկու ապառաժի միջոց։ Ապառաժին վրա հին բերդ կայ քակված. որ Տրապիզոնի Թագաւորները շիներ են։

Հին ատենը շատ վաճառականութիւն չի կար հոս, ինչպէս կերևնայ դրամէն. որուն վրա Այծէմարդ մի կայ կայնած. աջ ձեռքը ճրագ, ձախ ձեռքը հովիւի գաւազան. և միւս դին Մարկոսի Աբրելիոսի գլուխը. ուստի նշան է թէ փայտի, և ոչխարի առուտուր կընէին։ Վիրէզ պատուղն առաջ այս քաղաքը շատ ըլլալով ՎԻՐԷՍՈՆ կոչվեցաւ. որ ըստ Ամմիանոսի հռոմայեցիք տիրեցին ետև Պուկուղոս տարաւ Հռոմ. և անկէտև Եւրոպա շատցուցին քիրեզի ծառն. և հարիւր քսան տարին ետև Յանկիլեռա տարին։

ՎԻՐԷՍՈՒՆ երկու նաւահանգիստ ունի. մէկը արևելք Տէրիգաֆոս լիմանի. մէկալը արևմուտք Լաճա լիմանի. որ ամենն տպահով չեն։ Խակ տարին վրա կայ լաւ բերդ հին. մէջը եկեղեցիներ կան։ ՎԱՂՔԻՆ մէջ շատ տուն, և խանութ կան. բնակիչներն են յն. հյ. և տճ. ընդ ամենայն հազար տուն կելլեն. ուր առաջ եպիսկոպոս կը նստեր. խակ հայերը քառասուն տուն կան, ունին եկեղեցի ապառաժ քարէ փորած. և այս ապառաժին վրան է հին բերդը։

Այս եկեղեցին յունացմէ առին հարիւր տարի առաջ. և նուիրեցին սուրբ Սարգսին. որ առաջ էր Աստուածածնայ անւամբ. ծովուն քով կայ փոքր լիճ, ուսկից կելլէ Աղիգ կամ Հագըգ և Անիհուր քար. ունի շրջակայն լաւ պարտէզներ։

ՎԻՐԷՍՈՆ ապառի, փոքրիկ կղզի Տէմիր գափուէն իրեք մղոն բացն է, որուն շրջապատն է իրեք մղոն.

վրան կայ վանք և եկեղեցի։ Բ.ըրիանոս այս կըղզին կանուանէ Բ.ռէնՕՐԷԼԻՈ. այսինքն արուեդ։

93. ՊՕՂԱՃԸԴ, իրեք մղոն ասդին է Բ.Իրէսուն. որ է լաւ նաւահանգիստ, և ունի փոքր քիթ. նաւահանգիստն է իբր բերան, և իրեք նաւ կրնայ ճմերել ապահովապէս։ Ա՝օտ է հոն Բ.Էչիպուռնի, Բ.Էշապ, և Լ.օլաղզի փաղարի. որ փոքր աւաններ են. երևելի բան չի կայ։

94. Օ.ԷՓԻԲ, ըստ հն. Օ.ԷՓԷՌ, տասնըուԹ մղոն հեռու է Բ.Իրէսունէն. ունի նաւահանգիստ Բ.Էչիպուռնիին տակը. ուր հին բերդ կայ, և քուվէն ջուր կանցնի։ Լսկ Լ.ասլիէ աւանը չորս մղոն ասդին է. վերը ունի հին բերդ։ Բ.ասը վրան է Լ.ահանօզ մատեանին. ուսկից շատ պղինձ կելլէ։

95. ԹՈՐԻՊՕԼԻ, ըստ հն. Լ.ՈՒՔՕԼԻ, տասնըուԹ մղոն հեռու է Օ.ԷՓԲԻԷՆ. նաւահանգիստը փոքր ըլլալով քանի մի նաւ կրնայ ճմերել. բայց բերանը քարոտ՝ և դժուար է մուտը։ Բ.աղաքը ծովուն եզերքն ըլլալով գեղեցիկ երևցաւ մեզ. բնակիչներն են. յն. հյ. և տՀ։ Բ.աղաքին ծայրը Օ.ԷՓԲԻԷ դին տեսանք փոքր կղզի, որ կըսվի Ֆ.ԷՐ-ԷՆԴԱՇԼԷ. մէջ տեղէն նաւ կրնայ անցնել։ Բ.ԻՒԼԻՍԷ պուռնին մօտ է. վրան կայ հին ժամ։ Թ.ՐԻՊՕԼԻ իրեք քաղաք ըսել է. որ իրեք մասն կը բաժնըվի, և իրեք բերդ ունի հընուց մնացած. առջինը՝ Պ.ՈՒՐՈՒՃԷ գալէ. երկրորդ բերդն է սարին վրա ծովուն մէջ. իսկ երրորդ բերդը Պ.Է.ՊԵՐՈՄԱ՝ իրեք ժամ վերն է. որ է անառիկ ապառաժի վրա. որուն մէջ քաջ կին մի Տ.ԷՐԷԼԷ գէղէ՝ վեց ամիս պատերազմեցաւ մեր օրը փաշային հետ, և մնաց անյաղԹելի նման Բ.մազունեաց (83)։ Յետոյ դնաց փաշային հետ հաշտըվեցաւ քաջուԹեամբ։ Բ.այս ապառաժին վրա դուր է. հին ատենէն մնացած ջրհղղ (ՍառնիՃներ) կան։ Բ.յլաղզն առնելու ատենը հոռոմները հոս տարիներով մնացեր են. վաղուցան ալ կընեին վրան։ Լ.ու այնչափ հոգնեցուցեր են Բ.յլաղզն, որ Պ.ԷՐ-ՈՒՄ անուն դրեր են իրենց. որ եղեր է Պ.Է.ՊԵՐՈՄԱ։ Բ.ըրիանոսի ատենը իրեք մղոն ասդին կար Բ.ՈՒՄԲԱ, այսինքն արծաԹահանք. ուր

մինչև հիմա անպակաս հանք կը դտվի։ Բ.յս գաւառին կառավարիչն է Տերվիշ գրզի քաջ տիկինը։ Բ.ըրիանոս Բ.ոյիերային և Կէօրէլէին մէջը կը դնէ հին բերդը Ֆիլիգոլէա. որուն քովէն գետ կանցնէր։

96. ՀԱՅԱԿԱՎԱՆ ՓԱՋԱՐԻ, ինը մղոն ասդին է. ուսկից կանցնի Խարշուտ գետ. վեց մղոն ասդին է Լէլեղու աւանը. ուր կան բնակութիւնք և խանութք տաճկաց. իսկ ուրթ մղոն ասդին է Շաուլի, Ղաւուշլի, և տասը մղոն ասդին Տիկիկնէ փաղարի։

Գ.ալատիոնոն պոնտոսի, Թրիպոլիին աստին էր. կայն կերևնայ. բայց ծոց և նաւահանդիստ չունի. ուր ապառաժ տեղեր ըլլալով աւազակաց բնակարան է. բան չի տեսանք։

97. ԿԷՕՐԷԼԷ, ըստ Բ.ը՝. Գ.օրալա բերդ, վեց մղոն ասդին է հին ատենէն մնացած. ուր Խէլիւնճողլի Բ.հմէտ փաշան քաղաք շիներ էր. վերջը քանդեցին. ունի քիթ Կէօրէլէ պոռոնի չորս մղոն ասդին. ուր հինները կը դնեն Հերմոսա. որ երկու քաղաք էր ըստ Ստրաբոնի։ Բ.ոկեց կըսկըսի Լ.օռոզի սարն երկնալ դէպ 'ի ծովը։

Բ.ան դուքեամբ կը պատմեն, թէ այս կողմի ժողովուրդն էր Ազբա սէօնպէրէն. որ կըսվին Ազէքի. որոնք կռապաշտութենէ մնացած զարմանալի քաներ ունէին. տարին անգամ մի մեծ ուրախութեամբ արք և կանայք միատեղ խաղալով, և գիշերն ամէն լոյսը մարելով գարշելի բաներով կանցընէին, և հին կռապաշտներուն պէս առանց իրար ճանչնալու և առանց ազգակից և քոյր որոշելու կը խառնակէին գազանի նման։ Բ.յս բանը հիմա վերցած է իրենց մէջէն. սակայն շատը նամազ չկրտեն. և արքեցութիւնն իբր օրինաւոր գործք համարելով շատ կարբենան։ Դ.ուեաթիպ չելէպին կը պատմէ թէ՝ * Բ.ազ թուրքաց լազերուն հետ խառն կը բնակին, և լեզուն է թուրքերէն և պարսկերէն. որոնք են ըստ աղանդոյ պարսից ‖։ Բ.նոր համար թէ լեզունին տարբեր, և թէ սովորութիւններին շատ արտարոց տեսանք այս կողմի բնակիչներուն. որոնց սովորաբար մօրուքը կարճ, և ոտվընին բարակ է։

98. ՊԻՕՅԻՒՔ ԼԻՄԱՆ, վեց մղոն ասդին է. ունի դետ և գեղեր. նաև հին բերդ Գ՝ԼԷՊ գալէպ, որ ըստ յն. քանալի ըսել է։ Ա՞օտ է հոն Ղամիրզ և Ֆիոլ աղջի փաղարին. նաև Խաքէֆիկ փաղարի. որ ունի դետ և խանութ։ Ա՝սոնք փոքր տեղեր ըլլալով վաճառ կըլլայ. կերթան վաճառականներ այս կողմերէն։ Ուր տեսանք քիթ Ղէյթուն պուռնի. ասոր վրան է հին բերդը։

99. ԼՕՌՕՋ ՊՈՒՌՆԻ, տասնըութ մղոն ասդին է Կէօրէլէն. և է մեծ սար Տրապիզոնի դէպ 'ի հիւսիս ծովը մտած Ա՝պազայի դէմ. որ հին ատենը Հիէ-բոն կամ Լէ՝ՕՕ օՕՕ կըսվէր, այսինքն Սրբազան լեռնուր կար մեծ կռատուն Ա՝թենասայ, և գեղեցիկ պարտէզ։ Ա՝յս քիթ ապահով կընե Ա՝ղձիգալէի և Փլադանայի նաւահանգիստներն արևմտեան հովէն, որ շատ վանգաւոր է այս կողմերս. ծոցին մէջ այն երկու ապահով նաւահանգիստները կան. և փոքրիկ ինձիր լիմանի՝ քթին մօտ։ Ա՝ՐՐԻԱՆՈՍ Ա՝Ռ՝ՕՕՊԷԼԷ նաւահանգիստ կը յիշէ այս կողմն։

100. Ա՝ՂՃԻ ԳԱԼԷ, ինը մղոն ասդին է. ունի նաւահանգիստ ապահով արևմտեան հովէն, և հին բերդ. որուն վրա արեան նշաններ կերևնան. զի առնըված ատենը շատ մարդ ջարդվեր է, անոնց արիւնն է կըսեն։ Ա՝յս բերդ ծովուն մօտ բլուրին վրա շինած ըլլալով՝ հեռուէն պատերը ձերմակ երևնալուն համար Ա՝գՃԷ գալէ ըսվեցաւ։ Կը պատմեն թէ Տրապիզոն առնըվելէն ետև այս բերդին բնակիչները եօթը տարի պատերազմեցան Օսմանցոց հետ, ետքը տվին բերդը. որուն քով տեսանք հին կարասներ հողէն ելած. ուր առաջ բնակութիւն և այգիներ են եղած, հիմա արտ են. ուսկից կելլէ լաւ թիւթիւն։

101. ՓԼԱԴԱՆԱ աւան, վեց մղոն ասդին է ԼՕՕզի ծոցին մէջ. որ կը նշանակէ բարտի (Գաւազ) ծառ. հին ատենը հոն կը պաշտէին այս ծառը. ոմանք Փօլապանա կըսեն, այսինքն գործարան երկաթոյ։

Ա՝յս անւանի նաւահանգիստն ապահով և ընդարձակ ըլլալով՝ Փլադանա հին ատենէն 'ի վեր վաճառատեղի է, դիրքը զուարճալի, երկիրը լաւ և պա-

բարտ. ուր շատ ձիթենի կայ, և ձեթն ընտիր է. ունի չորս հարիւր տուն, և վաթսունըչորս գեղ. ին. Հյ. տՀ։ Ուր բաց 'ի քաքսյած եկեղեցիներէն ուրիշ հնութիւն չի տեսանք։ Հոս կիրակի օրերը վաճառ (Բանայիր) կըլլայ. և մեծ առուտուր կըլլայ ամէն տեսակ ապրանաց։ Վերջի պատերազմիս առենը մոկոմիները նաւերով եկան փլադանա շատ զօրք հանեցին, որ առնուն Տրապիզոն. բայց պոնտացիք մեծ քաջութեամբ պաշարեցին, և բոլորը ջարդեցին։ Փլադանայէն ասդին են Գալանիմա, Սերէշ, և ուրիշ փոքր գետերը։

Բ. Այս կողմերս շատ թիւթիւնի արտեր տեսանք, և ընտիր թիւթիւն կելլէ. որ կը տանին Ստամպոլ և Մոսկով։ Փլադանայէն վերն է Մաղբա, որ հարիւր յիսուն գեղեր են. ուր շատ մնտուռներ կան ասդին անդին. այլազգները հոռմերէն կը խօսին, և յոյներն են պղնձագործ. որոնք Սուլ. Մահմուտին օրը Կիւմիշխանայի տակը մտան. բայց Տերէպէկին ինքնագլուխ է, և ամէն դատաստան ինքը կը տեսնէ. ուսկից կելլէ ընտիր եղ, և պանիր. նաև քթան, և այլն։

102. Տիվրէնց, իրեք մղոն ասդին ընդարձակ ծոց է, այլ չէ ապահով. ուր բարձր լեռան վրա տեսանք երկու ձերմակ սիւներ տնկած վրան չուանի նշան։ Բ. ամենդութեամբ կը պատմեն թէ ծովը մինչև հոն ըլլալով առաջ նաւերը հոն կը կապէն եղեր. որ և կոչվեցաւ Տերէնդ, այսինքն դռնափակ կամ կապան (5)։

103. Բ. ՅԱ ՍՕՖԻԱ, իրեք մղոն ասդին զուարճալի բլուր է ծովուն քով, և բոլորտիքն են այլազգի տներ. որ կըսվի Բ. յա սօֆիա մահալլէսի։ Բ. Այս բլուրին չորս դին պարսպի մէջ առած է. թէպէտ հիմա շատ տեղը քակված է։ Երկայնութիւնը հարիւր քսան քայլ չափեցինք։ Խոկ մէջ տեղն սեւելի դուռ ըլլալու համար բոլորտիքը մանր կամարներ շիներ են հաստատ քարաշէն, և վրան շինակրցուցեր են։

Բ. Հա այս շնտակ տեղն իբր կեդրոնի վրա կանգնած է Բ. յա սօֆիա եկեղեցին յունաց, մեծաշէն և պայծառ. որ Բ. Լեքսիոս կոմնենոս նորոգեց. բայց բուն Յուստինիանոս կայսր շինեց կըսեն յանուն իմաս-

տուԹեսնն աստուծոյ. ինչպէս զանգակատան խորանին կամարին մէջ ԻմաստուԹիւնն աստուծոյ որդին միածին նստած կերևնայ։

Բ. Այս եկեղեցին այնչափ մեծագործ և ամուր շէնք է, որ տեղէ մի քար չէ ընկած, Թէպէտ հոգ տանող չի կայ. ընդհանուր շէնքն է քառակուսի. իրեք կողմէն ալ կամարաւոր դաւիԹներ ունի երկերկու մերմէռ սիւներու վրա կայնած։ Բայց արևմտեանն է կրկին դաւիԹ. ուր է մեծ դուռն։ Իսկ հարաւային դրան Ճակատն ամենէն մեծագործ, և գեղեցիկ է. վրան զանազան քանդակներ կան՝ հրեշտակի, մարդու, և խաչի. նաև առիւծի գլուխներ. և վերն է կայսերական նշանն արծիւ։ Եկեղեցին է յոնիական կարգով շինած՝ գրեԹէ քառակուսի. խորանին տեղն ընդարձակ, գմբէԹը բարձր և գեղեցիկ՝ չորս երևելի սեանց վրա կեցած։ Բ. Այս մերմէռ սիւները տասներկու կանգուններն աւելի են՝ Ճերմակ, և տեղտեղ գունաւոր գեղեցիկ, չորսն ալ միակերպ։ Յատակն ալ մերմէռ քարերով զանազան ձևեր ձևացուցած է. Թէպէտ տեղտեղ աւրած է. և ուրիշ բան չի կայ մէջը. միայն Լամպի տեղ կայ հարաւային կողմն, որ առնրված ատենը Ճամի ըրեր են։

Հիւսիսային կողմը եկեղեցիին քիչ հեռու՝ կայ քառակուսի մատուռ հաստատ քարաշէն և պատկերազարդ. մէջը քառակուսի բաժնած է քառակուսի սիւներով և դրներով։ Ասոնցմէ հարաւային կողմը բլուրին ծայրը քառակուսի շէնք մի կայ քարաշէն. կերևնայ Թէ պահապանի կամ ժամկոցի տեղ է։

104. Արևմտեան ծայրը բլուրին՝ քառակուսի զանգակատունը ամբողջ կեցած է բարձր և գեղեցիկ. որ երկու յարկ բաժնած է. առջի յարկն ելանք քարաշէն սանդուխով, որ է փոքր մատուռ սեղանով. իրեք քայլ կայ մէջտեղը. ամէն կողմը պատկերազարդ։

Զանգակատան բակին քով քայքայած տեղը ըլլալով՝ կերևնայ Թէ հոն էր ուսումնարանը տրապիզոնցի Տիւքիկոս փիլիսոփային, որ Բ. Հանիկա շրջակայուն ատենը շատ ծաղկած էր յամի տեառն 661. Թէպէտ Շիրակացին որ եկաւ՝ Տիւքիկոս Լուգի

նէոսի վկայարանն էր. Թուի թէ յետոյ դնաց Աւյա սոֆիա վասն զուարճալի տեղւոյն։ Ուր ուրթը տարի կարդաց և փիլիսոփայ անուանեցաւ Անանիա շիրա-կացին. ինչպէս որ ինքը կը պատմէ. * Գնացի 'ի կոս-տանդինուպոլիս.. ասացին ինձ էր յանձն առեր այն-քան ճանապարհ աշխատիլ. և տիւքիկոս վարդա-պետն բիւզանդիոյ հուպ է առ մեզ 'ի ծովեզրն պոն-տոսի, որ կոչի տրապիզոն լի խմաստութեամբ... տե-սաք բազում ճանապարհորդս եկեալ առ նա վասն հզաւր գիտութեան նորա։ Աւյլև այժմ նաւակից եղև մեզ փիլոգր սարկաւագն հայրապետին կոստան-դինուպոլսի և բազում մանկունս ածէր առ նա աշա-կերտութիւն... Լսէ երթեալ իմ գտի զնա 'ի վկայա-րան սրբոյն Եգինեայ և պատմեցի... Սիրեաց զիս որպէս զորդի իւր. և պարապեաց 'ի յիս զամենայն խորհուրդս իւր... և կեցի առ նմա զամն ութ, և ուսեալ հմուտ եղէ գրոց բազմաց, որք ոչ էին թարգ-մանեալ 'ի մեր լեզուս.. քանզի չէք ինչ գիրք որ առ նմա ոչ գտանէր։ Աւսաց թէ ես 'ի տրապիզոն քաղա-քէ մանկութեամբ կացեալ 'ի դուռն յոհաննու զաւ-բաւարին.. և գտեալ զվարդապետ աթենայ իմաս-տասիրաց.. կացի առ նա յուսման ամն ոչ սակաւ և կատարեալ իմաստութեամբ դարձայ 'ի տեղիս ||։

Աբևելեան կողմն կրսկիսի ընդարձակ հրապա-բակին ծայրը, որ կրսվի Գոպագ Դյոան. շատ զուար-ճալի տեղ է. քանի մի գմբեթաւոր հին շինքեր կան տեղ տեղ մնտուռի նման. որ թէպէտ հաստատ շինք են, բայց որոշ բանի չի կրցանք նմանցնելու։ Երկու կողմն պարտէզ ընելով հազար քայլ տեղ՝ քիչ մի նեղցած է. իսկ բուն հրապարակին երկայ-նութիւնը չորս հարիւր քայլ կայ. ուսկից ծովը կե-բևնայ։ Ուր կայ թաղ տաճկաց և գապագ մէյտանի Ղամին. որ Սիւլէյման պէկը շիներ է կրսեն։

Աբդ՝ փլաղանայէն մինչև Տրապիզոն է 9. մղոն. Անտալէն 453. իսկ Ֆէնեռէն 933. որ մինչև սահ-մանագլուխը Թրէմէր, կըլլայ հազար մղոն ստամպօ-լէն (140)։ Սակայն մենք նաւավարի չափմամբ գը-բինք Ֆէնեռէն մինչև Տրապիզոն 909. մղոն։

Գ. ՄԱՍ ՍԵՒ ԾՈՎՈՒ

105. ՏՐԱՊԻԶՈՆ, է հին երևելի մայրաքաղաք փոքր Ասիայի, և Կապադովկիոյ սև ծովուն վրա շինած. որ Փլադանայէն ինը մղոն հեռու է։ Հին ժամանակը մեծ և բաղմամարդ ըլլալով, ամէն տեղ հռչակաւոր էր, և վաճառականութեամբ ծաղկած. նաև կռատուէն էր ուխտատեղի հեթանոսաց (112)։ Դիոդոսիոս և այլք կը հաստատեն թէ նախ Միհնապացոյմ հատուած եկան այս քաղաքը շինեցին 2536. տարի առաջ՝ Ազեկիա թագաւորին ատենը. ինչպէս կը պատմէ նաև Քսենոփոն. որ գնաց Տրապիզոն։ Սակայն Լուսեբիոս երսուն տարի առաջ շինվեցաւ կըսէ, Յովաթամ թագաւորին օրը. Հռոմայի շինութենէն հինգ տարի առաջ։

Բերդը շինած է բլուրի վրա երկայնաձև քառանկիւնի, որ ծովէն սկսեալ մինչև Պօղթեփէ լեռը կը հասնի հիւսիսէն դէպ 'ի հարաւ։ Բերդի հին բերդը սեղանի ձև ըլլալով ΤΡΑΠΕΖΑ ԹՌԱՔԷԶԱ, կամ ԹՌԱՔԷԶՈՆ կոչեցին։ Կաև ΟΙΔΙΝΟΥՍ կըսէին. իսկ բնակիչները պոնտացիք էին։

Տրապիզոն կտրած հին ստակներուն մէկ կողմը կայ Ապողոնին գլուխը. մէկալ կողմը նաև գըլուխ և երկաթ այս խօսքով. ΤΡΑΠΕΖΟΥΝΤΙΩΝ, այսինքն ՏՐԱՊԻԶՈՆՑՈՑ։ Ասկեց յայտ է նախ՝ թէ անատեղը տրապիզոնցոյց գլխաւոր կուռքն էր Ապողոն չաստուած. երկրորդ՝ հին ատեղը շատ վաճառականութիւն և շատ երթևեկութիւն կար նաւերու։

Ուանդութիւն է բնակչաց՝ թէ Յաբեթի ցեղէն Յաբեթ անուամբ մէկն եկեր առջի բերդը շիներ է. կարելի է թէ հայոց նահապետներէն, կամ Հայկայ որդիքներէն ըլլայ։ Մեր Խորենացին կը պատմէ թէ Վաղարշակ կարգի դրաւ Պոնտոս. և յետոյ երբոր Պոնտացիք գլուխ քաշեցին՝ Արշակ հայոց թագաւորը գնաց նորէն տիրեց, և սև Ծովուն քով աբ-

ձան կանգնեց յամի աշխարհի 3875։ Օր մի արձա-
նին քովէն անցնելով նիզակը զարկաւ անանկ ուժով,
որ նոյն քարին մէջ դամեց, որ յետոյ պոնտացիք կը
պաշտէին՝ իբր գործ աստուածոց. բայց ժամանակէն
ետև նորէն ապստամբեցան, և նոյն քարը ծովը
ձգեցին։

Հին ժամանակը զանազան տերութեանց տակն էր
Տրապիզոն. յետոյ Միհրդատին ձեռքն որ անցաւ՝
թագաւոր ըլլալով կրկին Պոնտոսի՝ շատ ծաղկեցուց.
անկէետև հռոմայեցոց անցաւ։ Երբոր Աւերիանոս
կայսր յաղթեց պարսից՝ Տրապիզոնին ալ տիրեց։
Ուստի Միհրդատէն ետև պոնտոսի թագաւորներն
այնչափ չէին կրնար իշխեր Տրապիզոնի. որովհետև
հռոմայեցիք տարածվեր էին այս կողմերս։

Օսիմոս կը պատմէ թէ Մաղերիանոսի ատենը
յամի տեառն 255. թաթարներն եկան պաշարեցին
Տրապիզոն. որ բաց 'ի պահապանները տասը հա-
զար զօրք օգնութիւն եկան. բայց իրենք անհոգ կե-
նալով՝ թշնամիները գիշերանց բերդը մտան շատ
մարդ ջարդեցին։ և մեծագործ կռատու

ը լեցուն
գանձով կողոպտեցին։ Մաքսիմիանոսի ատենն, որ
տիրեց Կապադովկիոյ և Տրապիզոնի, շատ նահատակ-
ներ եղան այս կողմերը։ Լուսիաս դատաւորին ձե-
ռամբն. որ քանեց Եւգինեոս երեւելին իր ընկերնե-
րովը շատ տանջելէն ետև գլխատեց Տրապիզոնի
մէջ (121)։ Ադրիանոս կայսր շատ բան շինեց Տրա-
պիզոնի մէջ (120)։ Ադրիանոս տեսաւ հոն Ադրիա-
նոսի արձանը. ինքն ալ ձերմակ քարէ արձան շինել
տվաւ թագաւորին համար հանդերձ մակագրութիւն։
Փլաբիոս Յուլիոս Կոստանդին՝ թագաւոր կոչվեցաւ
պոնտոսի, և Տրապիզոնի մէջ կուսանաց վանք շինել
տվաւ, որ Ոսկեգլուխ կը կոչվեր. հիմա ձամի է։

107. Իսկ Մաղենտիանոսի ատենը՝ Տրապիզոնի իշ-
խանները անցան պարսից տերութեան տակն, և շա-
տը պարսիկ եղան։ ա Յուստինիանոսի ատենը՝ Ռշա-
դիոս պէկը Տրապիզոնի՝ գնաց Կոստանդնուպոլիս քրիստոնեայ
եղաւ, պատրիարգին թոռը կին առաւ, և թագա-
ւոր պսակվեցաւ լազիստանու։

108. Այս կայսր Յուստինիանոս շատ բան շինեց, նորոգելով Տրապիզոնի պարիսպը, ջրանցք շինեց, բերդին մէջ ջուր բերել տվաւ Դուլքէպոյին կողմէն, և Դապախանայի դրնէն դուրս հանեց ջուրը։

109. Ի Յոհաննէս կոմնենոս Պերփիրուժէն կայսեր ատենը Կապրաս ապստամբելով յամի տեառն 1120 Տրապիզոն ոտնակոխ եղաւ. մինչև որ Կոնծաւ Տրապիզոնցին Թագաւոր եղաւ Լազիստանու։ Անկեւտև Տրապիզոն ինքնագլուխ Թագաւոր կը նստէր։

110. Անէքսիոս կոմնենոս յամի տեառն 1204. Յովանկներն Պոմպոլ առնելէն ետև կայսր կոչվեցաւ Տրապիզոնի։ Եղաւ որ վիշապ մի զարկաւ կը սեն իր ձեռքով յիշատակը մնալու համար պղնձէ վիշապ շինել տվաւ Օրթահիսարի աղբիւրին վրա դրաւ, որ մինչև հիմա կայ և տեսանք։ Իսկ 1260 ին Միքայէլ Բալեոլոկ կայսր՝ երբոր միացաւ լատինացոց հետ՝ Յոհաննէս կոմնենոս գլուխ քաշելով ինքնակալ կայսր կոչեց զինքն Տրապիզոնի։

Այսմանք որդոց որդի նստան մինչև Յոհաննէս կայսր։ Այսոր օրը Մինապու Շաթիր պէկը Տրապիզոնի վրան ելաւ. յետոյ հաշտութիւն ըրին՝ տարեւ տարի երկու հազար ոսկի տուրք տալով Օսմանցոց. զի անանտենը ստամպոլ առնրված էր։ Այս Թագաւոր մեռաւ 1456ին։

111. Դաւիթ պզտի եղբայրը տեղը նստաւ չորս տարի։ Բայց Սուլդան Մէհմէտ 1461ին եկաւ երսունւերկու օր պաշարեց առաւ Տրապիզոն. և բռնեց Դաւիթ Թագաւորն իր ընտանեօքն Ստամպոլ տարաւ. յետոյ դուրս ղրկեց մեռցուց. և այսպէս վերցաւ Կոմնենոսներուն Թագաւորութիւնը 257 տարի տևեւելին ետև։ Այսոց ատենը շատ երևելի քաղաք էր երևելի մարդիկներով. անկեւտև քանի գնաց անշքացաւ ամենայն կողմանց, և հին ազնուութիւնը վերցաւ։

112. Հին ատենը տասն հազար զօրքով Տրապիզոն գնաց Խոսեռոփոն, և ամիս մի կեցաւ Բիքսիդիս գետին քով զոհ ընելու համար Դիոսի և Հերակլեսի. ուր խաղեր ալ կը խաղային յամի աշխարհի 3615։

Աբրիանոս հոն տեսեր էր Քսենոփոնին արձանը, և տաճարը կուռոց (134)։

Հին բերդը կրկնապարիսպ էր, ինչպէս կը պատմէ Օսմոն. հիմակուան բերդն անոր տեղը շիներ են, ըստ որում քարերէն և սիւներէն յայտնի է։ Աչքի զօրաւոր էր որ մերձակայ ազգերը իրենց հարստութիւնը հոն կը պահէին։ Շատ տեղ ապառաժի վրա շինած է պարիսպը, և խրամները տեղ տեղ լայն և խոր են։ Բերդին շրջապատը մէկ ժամն աւելի կը քշէ։

Երեք կը բաժնուի բերդը. Աշաղէ հիսար, Օրդուհիսար, Գոռլէ. ուր կը պահեն զէնքերը. առաջ հոն էր կայսերաց գահը. ետքը միջնաբերդը փոխեցին. ինչպէս տեսանք գահին տեղը։

113. Գոռլէ կամ Լիբոնաբերդ, է վերի գլուխը և ծայր բերդին, որ աւելի բարձր ըլլալով կրսվի Լեռգաբէ հիսար. և Պօղթէփէ լեռան արևմտեան կողմէն կրսկրսի կը հասնի մինչև Մինջաբերդը. առաջն է ընդարձակ դաշտ, որ կրսվի Գոռլէպոյէ։ Հոս բերդին ծայրը նեղ կը վերջանայ. պատերը լայն են. և զարմանալի բազմապատոյտ ճամբաներով իրարու մէջ պարիսպներ են. և միջոցները խրամներ կան, ընդարձակ տեղ. ուր պարիսպներէն 'ի զատ ուրիշ քնակարան չի կայ. կերևնայ թէ ամրութեան համար այսպէս շիներ են։

Այս բազմապատոյտ խրամներուն մէջ փորած տեսանք. զի եւրոպացիք տերութեան հրամանաւ գանձ գտնելու համար փորեր են. բայց պարապ ելեր են։ Անկէտև կրսկրսի բնակութիւնը գուլլեին. բայց վարը նեբքնատան պէս զարհուրելի քարաշէն տեղեր կան, ինչպէս տեսանք. որով կերևնայ այս բերդին հնութիւնը. տեղ տեղ ալ պարապին մէջ խորանի նման բաներ կան. գրեթէ ամէն տան մէջ հին ատենէն մնացած շինքեր, և պահարանի պէս տեղեր կան. որը սուրած, որը դեռ կան։ Վերի ծայրն աւելի բարձր ըլլալով կրկին սանդուխով վեր ելանք. ուր է մեծ աշտարակ քառանկիւնի. ուսկից կը նետեն թշնդանօթ. և առջևէն կանցնի Զուզղուն տերկ։ Ա՝ա-

հապատնեերը նեբքնատանց մէջ կը խղդեն. և գլուխ-նին բերդին դրան առաջը կը դնեն. ուր որ տեղ կայ շինած։

Այս բերդին մէջ քիչ բնակութիւն կայ. և շատը պահապան են բերդին, որ կըսվին Պէշլէ-ղի Սուլ-Մէհեմմէտին ժամանակէն դրված են, և օրն հինգ-ստակ կառնուն. անոր համար ըսվեցան Պէշլի. որոնք Իսրէլէզին մինչև Իսասըմ ամէն գիշեր պա-ըիսպներուն վրա պտըտելով կը կանչեն Անկ պոռ ալ-լահ. այսինքն Աստուած մէկ է։ Անոնք առաջ շատ ազատութիւն ունէին և շատվոր էին. հիմա այնչափ չեն։ Ներերը կը պատմեն թէ առաջ Ապազայի կողմէն գիշերանց աւազակներ կուգան կը կոխեն ե-ղեր քաղաքը՝ խածապա նաւերով. Պէշլիներն իմա-ցում տալով քաղաքացիք բերդը կը փախչին կազա-տէին (139)։ Հոն է Պոռլէ համամ, նաև Իմաքէն հա-մամ իմարէթին կողմը. որ է շատ երևելի հին շինք ընդարձակ՝ զանազան խուցերով զատված, և մեծա-մեծ սիւներով և քարերով շինած՝ հանդերձ մեծ գմբէթով. կը կարծըվի թէ յունաց ատենէն մնա-ցած է, և այլազգը ձևը փոխեր բաղնիք շիներ է։ Այս բերդին դրսի դուռն է հարաւային կողմն, որ կիջնի Պ ուզզուն տերէն (118)։

114. Օրդահիսար, այսինքն միջնաբերդ, որ անմի-ջապէս Ներքնաբերդէն կըսկըսի. ուսկից պարսպով և դրնով զատ է. երկու բերդին մէջ տեղն ըլլալով դիրքը դուր է, և կը հասնի մինչև վարի բերդը. բայց կրկին պարսպով, և երկաթ դրներով զատ է. իսկ արևմտեան կողմն է Օղանոս գաբուսի. և ա-րևելեան կողմը՝ Դասպախանա գաբուսի։ Միջնա-բերդին մէջ կան բաղնիքներ, երևելի պալատներ, և շատ տներ խանութներ, նաև Ճամիներ. կան որ քաղաքն առած ատենը շիներ են. կան ալ որ եկե-ղեցի էին առաջ. ինչպէս է Օրդահիսար Ճամին, Կեավուր Համամին և այլն։ Արևելեան կողմն է հին պալատը Փաշային. որ է ընդարձակ և բարեդիր, չորս կողմն են խուցերը. սակայն հնութիւն չի կայ։ Իսկ հիմակուան պալատն է մեծաշէն՝ միջնաբերդին

դիմացը կկնի Իմարէթի դրանը մօտ՝ վարի բերդին ծայրը. որ էր պալատ բերդակալ իշխանին։

Օրդոնիսաբ ճամբէ, մէջ տեղն է բերդին փառաւոր և մեծագործ շինք. որ էր յունաց եկեղեցի. և կըսվի ΧΡΥΣΟΧΕΦΑΛΟΣ ΠΑΝΑΓΙΑ այսինքն ՈՍԿԵԳԼՈՒԽ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ. կերևնայ թէ Յուստինիանոսի ատենը շինած է, և Ալեքսիոս նորոգեր է. թէպէտ յիշատակարանը չի գտանք։ Տաճարին ընդհանուր ձևն է ահաւոր և մեծաշէն. աւագ խորանին տեղն է ընդարձակ և պայծառ՝ բոլոր մարմարոտ պատած պատերը և յատակը. հարաւային կողմն է թագաւորին գահն աւանդատան կողմը. իսկ աւանդատունն է կամարաշէն գեղեցիկ հարաւային կողմը. որուն մօտն է Միհրասպ փառաւոր։ Աղերնատունն է քարաշէն մեծ. վերնայարկին չորս կողմը կամարներով սրահներ ձևացած են, և դրներով զատված են։ Եկեղեցնայ մէջ տեղն է բարձր գմբէթ զարմանալի. և բոլորտիքը վանդակաւոր վերնատուն ըլլալով՝ վերնայարկն ճամբայ ունի ելլելու. որ է մեծ կաթուղիկէ, և իբր երրորդ յարկ տաճարին. ուր վարպետութեամբ շինած լուսարանները կան շրջանակն, որ կը լուսաւորեն վերին վար։

Այս եկեղեցի իբր իրեք մասն կը բաժնըվի. առջի մասն է խորանին տեղը հանդերձ աւանդատնով և գահով. ուր կան լուսարաններ արևելեան կողմն. հիւսիսային կողմն է քարաշէն նեղ սանդուղքն երկրորդ յարկն ելլելու։ Անկեւտև կը յաջորդէ աւանդատան դրնէն բուն եկեղեցնայ մէջն լայն և ընդարձակ. որուն վրա է մեծ գմբէթը. և հիւսիսային կողմն է մեծ դուռն. ներսն երկու կողմը երկու մեծամեծ սիւներ կան հին մարմարոտ. կերևնայ թէ կառատանը սիւներէն են. այս դրնէն դուրսն է գեղեցիկ գաւիթը։ Իսկ վերջի մասն է՝ արևմտեան կողմն տաճարին, և վրան է վերնատուն. որ է նոյն շարունակութիւն տաճարին սալայատակ. ուր է արևմտեան դուռը, ուսկից լաւ կերևնայ բոլոր ընդարձակութիւն տաճարին. որուն երկայնութիւնը հարիւր յիսուն ոտնաչափ կայ, և լայնութիւնը յիսունէն աւելի է։

Վերնատունն է կանանց տեղ ընդարձակ և լայն. ունկից երկրորդ յարկը կերթայ. և երկու կողմն եկեղեցնայ մէջ կը նայի. և անկէ երրորդ յարկը կելլէ։ Այսպէս մակաբերեցինք, թէ այս երկրորդ յարկը մեծամեծ տիկիններու տեղ է թագաւորական զարմէ. ուր դրներով զատ են իրարմէ. իսկ բուն վերնատունը ամէն հասարակ կանանց տեղն էր։

Աւագ խորանին կոնակը բարձր պատին վրա տեսանք դրսէն աւետման պատկեր Աստուածածնայ մանր գունաւոր քարերով շինած ձախակողմն խորանին. աջակողմն ալ կար՝ խանգարեր է, բայց տեղը կերևնայ։ Եկեղեցնայ առջին է ընդարձակ հրապարակ քարայատակ. ուր կան բոլորտիքը խանութք, ուսումնարան, աղբիւր, շատրուան, և ջրհոր բարեջուր՝ հին ատենէն մնացած։ Աղբիւրն է արևելեան կողմն անձև շինած. որուն վրան է պղնձէ վիշապն, որ Աղեքսիոս կայսր դրեր է (110)։ Իսկ ջրհորն է հիւսիսային կողմն. որուն առաջը տեսանք միակտուր սուազան. որ էր գլուխ հին մեծ յոնիական սեան. որ հին շինքերէն մնացած է, և ետքէն մէջը փորեր հոն դրեր են։

Արևելեան կողմն հրապարակին՝ տեսանք քառակուսի հին շինք մէրմէռէ՝ սիւներու վրա շինած. նոյնպէս ձակատը մէրմէռ խաչազարդ. շինքին կէսը հոն տան մէջ մնացեր է. կերևնայ թէ առաջ բոլոր հրապարակ էր մինչև փողոցը, և ժամատունը միւս կողմն էր։ Իսկ արևմտեան մասը շինքին՝ հրապարակին վրա է. ուր գտան ետքի ատեններս մարմին նահատակի. թուի թէ հոն էր գերեզման մարտիրոսաց, և այն մարմին Այուդինեանցը պիտի ըլլայ (118)։ Ինչպէս կայ նաև արևելեան կողմն տաձարին՝ Օաղանոսի դրան մօտ կամարաշէն մատուռ, ուր կերևնայ դագաղ. կըսեն թէ մէջը կայ նահատակի մարմին. բայց այլազգը պատուով կը պահէ թէ՛ այս, և թէ սիւնազարդ շինքին մէջինը։ Ուր դրեր են դագաղ, և վրան այլազգերէն գիր. որ հրապարակին մէջէն կարդացինք այսպէս. ՍՈՒԼԹԱՆ ՂԱԶԻ ՄՈՒՀԱՄՄԷՏ ԽԱՆ ԲՊՆԻ ՄԻՐԱՏ ԽԱՆ ՀԻՃ. 865։ Ըմ է Սուլ. Մէհէմմ

մէտ. և այս դրվածը քաղաքն առած ատենը դրեր են 1461 ին։

Մէջնաբերդը ներքնաբերդէն շատ մեծ է. և ձևն է իբր քառակուսի. ուր մեծամեծ տներուն մէջ կան մատուռներ, և քարաշէն տեղեր։ Օրմանալի շինք է բաղնիքն, որուն մեծ մասը գետնին տակն է. կեր-ևնայ, թէ հին ատենի բան է. այլազգը զատեր երկու բաղնիք ըրեր է. անոր համար կըսվի Ընդ-քոք համամ։ Հոս մօտ է հիւսիսային դուռը միջնաբերդին, ուսկից կերթայ վարի բերդը։ Գրեթէ ամէն դրնեը բերդին՝ ջուխտ են և աշտարակներով պատսպարած են. նաև պարիսպները բարձր ըլլալով՝ աշտարակ ձևացած են։ Աղանոսի դրան մօտը բանտ ըլ-ալուն համար ըսվեցաւ Ընդ-քոք գաբուսի. կերևնայ թէ առաջ տաճարին հրապարակը մինչև հոս կը հասներ, որուն դուրսն է խոր խրամ։ Գ. հա այս դրնէն կըսկըսի մեծ կամուրջը և կը հասնի մինչև Իմարեթին դուռը, և Գ. ելքսիոսին աշտարակը։

Գ. յս արևելեան և արևմտեան երկու խրամները շատ ամրութիւն տվեր են բերդին. ուստի արևմտեան կամուրջն իբր պարիսպ եղած է վարի բերդին. ուր միայն վարը դրան պէս միջոց կայ, ուսկից կանցնի գետակը։ Թ. ուրի թէ քաղաքն այս կողմէն առնըված է. և մեծ պատերազմն Պասպագ Մշյանին մէջ եղած է. ուստի այս պարսպին դուրսը գերեզմանոց է այլազգաց։ Հոս կը պատերազմէր նաև երևելի փաշան Սուլ. Մէհմէտին՝ Ընդ-աղանոս անուամբ. որուն համար այս դուռը կոչվեցաւ Ընդ-աղանոս գաբուսի (118)։

115. Իսկ արևելեան դուռը միջնաբերդին նոյնպէս կրկին ըլլալով՝ դրսի դրանը վրան շինած է պահապանի տեղ. և նոյն դրանը շէմը դրած է հին շինքերէն ելած սիւն մի, որ մնացած է. Ճակատը կերևնայ յիշատակարանի տեղ. և այս երկու դրան միջոցը բարձր պարիսպներով ամրցած է։ Դերսի դրանը քովը է բարձր կամար՝ հանդերձ դրան վրայով. այս կամարներուն վրա շինած էր առաջ փառաւոր եկեղեցի յունայ, ուսկից ծով ցամաք կերևնայ։ Խորանին տեղը դեռ կեցած է արևելեան կողմն. և քարա-

չէն սանդուխով վեր կելլէն. ունի վարը բակ։

Ա.յս աքանչելի քարաշէն եկեղեցի՝ զանազան խուցեր բաժնելով՝ հիմա դատաստանարան ըլլալ է. ուր կը նստին այլազգ կարգացողներ։ Պապախանայի այս նեռսի դրանը Ճակատն է դրսի կողմանէ՝ յիշատակարանը Յուստինիանոսի կայսեր. որ Պուռնըֆոր վերջի տողը չի կրցաւ կարդալու. նաև տեղ տեղ ալ լաւ չի հանելով սխալ տպեց, անոր համար չի թարգմանեց։ Ա.րդ ահա ամբողջ յիշատակարանը հանդերձ թարգմանութեամբ. որ է հազար իրեքհարիւր երեսունըվեց տարեան գիր՝ Ճերմակ քարի վրա փորած։

ΕΝ ΟΝΟΜΑΤΙ ΤΟΥ ΔΕΣΠΟΤΟΥ ΗΜΩΝ
ΙΗΣΟΥ ΧΡΙΣΤΟΥ ΘΕΟΥ ΗΜΩΝ, ΑΥΤΟΚΡΑ
ΤΩΡ ΚΑΙΣΑΡ ΦΛΑΒΙΟΣ ΙΟΥΣΤΙΝΙΑΝΟΣ ΑΛΑ
ΜΑΝΙΚΟΣ ΓΟΤΘΙΚΟΣ ΦΡΑΓΚΙΚΟΣ ΓΕΡ
ΜΑΝΙΚΟΣ ΑΥΤΙΚΟΣ ΑΛΑΝΙΚΟΣ ΟΥΑΝ
ΔΑΛΙΚΟΣ ΑΦΡΙΚΟΣ ΕΥΣΕΒΗΣ ΕΥΤΥ
ΧΗΣ ΕΝΔΟΞΟΣ ΝΙΚΗΤΗΣ ΤΡΟΠΑΙ
ΟΥΧΟΣ ΑΕΙΣΕΒΑΣΤΟΣ ΑΥΓΟΥΣΤΟΣ
ΑΝΑΝΕΩΣΕΝ ΕΝ ΦΙΛΟΤΙΜΙΑ ΤΑ ΔΗ
ΜΟΣΙΑ ΚΤΙΣΜΑΤΑ ΤΗΣ ΠΟΛΕΩΣ
ΣΠΟΥΔΗ ΚΑΙ ΕΠΙΜΕΛΕΙΑ ΟΥΡΑΝΙΟΥ
ΤΟΥ ΘΕΟΦΙΛΕΣΤΑΤΟΥ ΕΠΙΣΚΟΠΟΥ
ΙΝΔ. Γ. ΕΤΟΥΣ ΥΠΓ.

ՅԱՆՈՒՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ, ԻՆՔՆԱԿԱԼ ԿԱՅՍՐ ՓԼԱՎԻՈՍ ՅՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ ԱԼԱՄԱՆԱԿԱՆ, ԳԹԱԿԱՆ, ՓՐԱՆԿԱԿԱՆ, ԳԵՐՄԱՆԱԿԱՆ, ԱՍՏԻԿԵԱՆ, ԱԼԱՆԱԿԱՆ, ՎԱՆԴԱԼԱԿԱՆ, ԱՖՐԻԿԵԱՆ, ԲԱՐԵՊԱՀՏ, ԲԱՐԵԲԱՂԴ, ՓԱՌԱՒՈՐ, ՅԱՂԹՈՂ, ՅԱՂԹԱՆԱԿՕՂ, ՄՇՏԱՍԵԲԱՍՏՈՍ, ՕԳՈՍՏՈՍ, ՆՈՐՈԳԵԱՑ ՊԱՏՈՒԱՍՏԻՐՈՒԹԵԱՄԲ ԶՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԱԾՍ ՔԱՂԱՔԻՍ ԶԱՆԻՒՔ ԵՒ ՎԱՐԱԿԱՑՈՒԹԵԱՄԲ ՈՒՐԱՆԻՈՍԻ ԱՍՏՈՒԱԾԱՍԻՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ. Ի Գ. ԸՆԴԻԿՏԻՈՆԻ. ՅԱՄԻ 483։

116. Վարի բերդը միջնաբերդէն զատված է հաստատ պարիսպներով, և կրկին երկաթ դրներով. նմանապէս միջնաբերդը ներքնաբերդէն զատված է երկաթ դրնով. դրանը մօտ կայ կամար քարաշէն, որ կըսվի Ղէնէր ալիէ։ Բ. Վարի բերդը միջնաբերդէն միանալու տեղը նեղցած է. իսկ Օ. աղանոսի դրնէն մինչև արևմտեան պարիսպն է լայնութիւն վարի բերդին. որով միջնաբերդը արևմտեան կողմէն վարի բերդին մէջ մտած է. և դրսի թաղը կըսվի Ցէրէ մահալլէսի, որ կը հասնի ծովը։

Ծովուն կողմէն վարի բերդին լայնութիւնը իրեք հարիւր քայլ չափեցինք. որ է հիւսիսային կողմը. պարսպին լայնութիւնը տասներկու քայլէն աւելի է տեղ տեղ. ուր կրկին քարաշէն սանդուխով վեր ելանք։ Բ. ևեռեան ծայրը տեսանք պարսպին մէջ փոքրիկ մնտուռ. ուր հիմա պատերազմական բաներ կը դնեն։ Բ. այս պարիսպը կը շարունակի բերդէն դուրս երկու կողմէն, և կը հասնի ծովը. և անկէ կը շարունակէ նաւահանգստին շէնքը ծովուն մէջ մղոնի չափ երկու կողմէն։ Բ. այս ահագին պարիսպը զատված ըլլալով բերդին պատէն նեղ ձամբայ բացված է, և կըսվի Պուրճ. որ պարսկերէն բուրգ կամ աշտարակ ըսել է. սակէց կանցնըվի Ա՝ոլոզէն արուարձանը։ Հոս առաջ կար մեծ աշտարակ, որ կործանած է. ինչպէս կերևնան աւերակները, և ահագին հիմն արևելեան դին։

Բ. այսպէս միւս ծայրի պարիսպն ալ զատված է բերդէն, և անանկ ծուռ հաստատ կեցած է. զի քարերն անանկ միացեր են իրարու հետ, որ իբր միակտուր եղած են։ Բ. այս ամբարտակ կերևցնէ, թէ ուրիշ շէնք ալ կայ եղեր պարսպին ծայրը. ուր դրան կամ պատուհանի կամար կերևնայ բարձրէն. որուն մօտ է Սօթղային դուռը։ Բ. այս միջոցն է սև աւազուտ ընդարձակ՝ բերդին առաջն. ուր ձմեռը նաւ կը քաշեն. ուսկից կանցնի Իշկիլէպոզ գետակը. և հոն է մոլոզին դուռը. և թնդանոթներ կան դրանն առաջը ծովուն դէմ հանդերձ պատնէշներով։

Վարի բերդը միջնաբերդէն շատ ընդարձակ է.

ուր կան շատ տներ, շուկաներ, խան, աղբիւրներ, Ճամի, ուսումնարան, բաղնիք. նաև տներուն մէջ մնտուռներ, և այլն։ Որ ունի չորս դուռ. մէկը ա-ռևելքէն, մէկը արևմուտքէն, մէկը հիւսիսէն, մէ-կալը հարաւէն. բայց հարաւայինն է դուռ միջնա-բերդն երթալու. իսկ արևմտեան դրան կողմն է ներկարանն հնաշէն կամնրակապ, և կրկնայարկ. վրան քարաշէն՝ իբր վանք է. տակն է կամարաշէն տեղ, երկու կողմէն հին մէրմէռ սիւներու վրա շի-նած հաստատուն. որ շատ բարձր պիտի ըլլայ. վասն զի մէջը հող լեցուցած է մինչև վերնախարիսխը սիւ-ներուն, ուստի և հաւասար է գետնին. զի խորը շինած էր շէնքը, որ շատ հին կերևնայ. կարելի է, թէ հին ժամանակը քուրմերու տեղ էր, յետոյ ուրիշ բան շիներ էն յունաց ժամանակը. զի որոշ բա-նի չի կրցանք նմանցնելու։ Դրսի պատին վրա տե-սանք հին գիր յունարէն, շատ տեղն աւրած. որ է 513 տարուան յիշատակարան յոյն կայսերաց։ Ա.յս շէնքին մօտ դէպ 'ի հիւսիս կայ քառանկիւնի աւե-բակ հանդերձ հրապարակաւ. որ կըսվի Պէշէդ աա-լոսի։

Ա.յս բերդին վերի ծայրն է հիմակուան գեղեցկա-դիր պալատը փաշային. որուն մէկ կողմէն կանցնի գետակը, մէկալ կողմն է արևմտեան պարիսպը բեր-դին. իսկ հարաւային կողմն է Թմարէթի դուռը. ուր կան մեծամեծ ամբարտակներ, և աշտարակ, որ ամրութեան համար շինած են յունաց ժամանակը. նաև վրան ելլելու Ճամբայ կայ։ Հոն մօտը տան մէջ տեսանք աւերակներ, և քաքայած տեղեր. որ է ներ-սի կողմն արևմտեան պարսպին. ուր բարձր ըլլալով բոլոր ծոցն առաջն է, և միջնաբերդին բարձրու-թեանը կը հաւասարի. ուսկից կըսկըսի մեծ կամուր-ջը Օ.աղանոսի դրան, և կը հասնի մինչև բերդին դուռը։

117. Ընդհանուր ձևը Տրապիզոնի բերդին կը նը-մանի սիրամարգի. զի վարի բերդն աւելի ընդարձակ ըլլալով պոչին նման բացված է, և կը հասնի միջնա-բերդը. որ արևմտեան կողմն քիչ մի ներս քաշվե-

լով՝ մարքինին կը նմանի. իսկ ներքնաբերդն է նման պարանոցին. որ շեղ կը վերջանայ աշտարակն, որ է իբր գլուխ։ Այս դիրքը բերդին կերևցնէ, թէ հին շէնք է, և տարածեալ ըլլալով մեծագործ կերևնայ՝ գոլով երկու կողմէն խրամներ և հրապարակներ։ Այլազգները Թուրքերէն բառը չգիտնալով Թապոր պօղան ստուգաբանեցին բերդին անունը՝ յունաց զօրքն աւերվելուն համար։

118. Բերդին ներսի դրներն իրեք են. իսկ դրբինները վեց, կամ վեց ջուխտ են. որ ծովէն սկըսեալ առաջին դուռն է Պոլոշ գաբուռ, որ է հիւսիսակողմն ծովահայեաց. երկրորդ՝ Սօնշա գաբուռ՝ արևմտեան կողմը. երրորդ՝ Օղանոս, կամ Օշպան գաբուռ՝ նոյնպէս արևմտեան կողմն. չորրորդ՝ Գոռլէ գաբուռ՝ հարաւային կողմը. ուր ներքնաբերդը մըտնելու ուրիշ երկաթ դուռ կայ. դուրսն ալ լեցված փոքր դուռ կայ. որ բերդն առնված ատենը անէծքով փակեր էն՝ կրսեն. հինգերորդ՝ Գոռպանոս գաբուռ՝ արևելեան կողմն. վեցերորդ՝ Փաղար կամ Պոմխանի գաբուռ՝ նոյնպէս արևելեան կողմն ծովուն մօտ. դրանն առաջը քարաշէն կամուրջ կայ, տակէն գետակը կանցնի, և վրան խանութներ կան։

Յօթներորդ դուռ կը համարի Իմաբէի գաբուռ հարաւային կողմը վարի բերդին. որ է երկրորդ դուռ Օղանոսին. քովը կայ մեծ քառակուսի աշտարակ, և բարձր են պարիսպները. այս աշտարակին դուռն հարաւային կողմը կայ յունարէն յիշատակարան. որ բարձր ըլլալով այսչափ կրցանք կարդալ. ՄՅՍ ԱՇՏԱՐԱԿ ԱԼԻՔՍԻՈՍ ԿՈՄՆԵՆՈՍ ՇԻՆԵՑ։ Սկսեց մինչև Օղանոսի դուռն է ընդարձակ և խոր խրամ. վրան բարձր և մեծ կամուրջ. որ երկու կողմէն մինչև կէսը քարաշէն է շատ հաստատ՝ իսկ մէջ տեղը փայտով շինած. որ պատերազմի ժամանակ կը վերցրնեն եղեր. ուստի այս կողմէն ապահով կը մնար բերդը. զի պարիսպը ոչ միայն է թանձր և հաստատ, այլև շատ բարձր է հոս՝ պատճառաւ խրամին։ Այս կամուրջին տակէն կանցնի փոքր գետ, որ տեղացիք Իշկիլեպօղ կը կոչեն։

Այս խրամին համեմատ լայն և խորունկ խրամ կայ Պապախանայի դրան առջին. վրան նոյնպէս մեծ և բարձր կամուրջ կայ հաստատ քարաշէն, մէջ տեղը փայտաշէն. վրայէն կանգնի ջուր Յուստինիանոսի ջրանցքէն (108), և տակէն գետակը Պուզղուն տէրէ. ուր կը բանին խաղախորդք (Պապալն)։ Հոս մօտ տեղը տան մէջ մատուռ ըլլալով՝ ժամանակով մէջը գտան մարմինք սրբոց կըսեն. և խմցվելով այլազգն առաւ այլևայլ տեղեր դրաւ կը պատուէ (114)։ Կը կարծվի, թէ են Ցրասիզոնի նահատակներուն մարմինը. Եւդինէոսի, Մակարիոսի, Աղերիոսի, Կանդիտոսի, և Գկիւղասայ։

Այս սնուանի բերդին հին ատենի նշանն է նաւի երկաթ. թուի թէ հին բնակիչները քարաշէն նաւահանգիստը շինելէն ետև այս նշանը դրին՝ շատ նաւեր հոն յաձախելուն համար (120). ուստի թէ բերդը և թէ բոլոր քաղաքը հին ատենէն 'ի վեր շատ փոփոխութիւններ տեսեր է. և շատ թագաւորներ շէնքեր շիներ և նորոգութիւններ ըրեր են. անոր համար մինչև ցայժմ հաստատուն է բերդը. և ատենին ամուր քարաշէն, թէպէտ շատ բարձր չէն, մանաւանդ քրիստոնէից. որոնք բերդին մէջ տուն չէն կրնար գնել և բնակիլ։

119. Իմարէթ, արևմտեան կողմն է բերդին՝ Պուլլէին դիմացը, և Օղանոսի երկրորդ դրանը մօտ. որ նոյն տեղին համար ըսվեցաւ Իմարէթ գաբուսի։ Ուր կայ բլուր և վրան շինած է Իմարէթն, որ կը նշանակէ վանատուն, աղքատանոց, և ուսումնարան։ Այս շինուած պարսպապատ՝ ունի երկու դուռ. մէջ տեղն է ձամին փառաւոր և մեծաշէն գմբէթաւոր. մէջը պայծառ և լուսաւոր. հիւսիսային կողմն է դուռը և գաւիթը գեղեցիկ մէրմէռաշէն՝ վրան գիր ալլազգերէն գրած հիձ. 952. որ նորոգութեան թուականը պիտի ըլլայ։

Առաջն է ընդարձակ հրապարակ մէջը շատրուան. իսկ չորս բոլորը խուցեր շինած են ուսանողաց համար. հարաւային կողմն է գերեզմանատուն. և արևելեան կողմն է մատուռն. որ է առանձին Ալիւր-

պէ. ուր կայ Լաւուզ Սուլ. Սելիմն մօրը գերեզ-
մանը. դրանը վրա կարդացինք այլազգերէն յիշատա-
կարանը գրեալ հիմ. 911։ Լսոր անուամբ այս ճամին
կըսվի Իսլեոնէ. ուր կար խոհարան և փուռն, ա-
ռաջ օրն երկու անգամ կերակուր և ապուր կելլեր
աղքատներուն, և մէարէսին կարդացող տղոցն հա-
մար, հիմա չի կայ. որուն Միւթէվելլին կը դնէ
Գ.ըղլար աղասին։ Մեզի երևցաւ թէ այս տեղս ա-
ռաջ էր վանք, թէպէտ յիշատակը չի գտանք. բայց
յոյնք պատմեցին, թէ առաջ էր եկեղեցի սրբոյն
Յոհաննու, յետոյ ճամի ըրին. և իրեք հարիւր քսա-
նըչորս տարի առաջ վանատուն եղաւ Սուլդանին
հոգոյն համար։ Պարսպէն դուրս հարաւային և ա-
րևմտեան կողմն է բոլոր պարտէզ, որ կը հասնի մին-
չև Գ.ասպագ մէյտան, և մինչև թազանոցն, որ կըսվի
Խանէրլի, և Գ.ապագիյան մահալլէսի։

120. Հին նաւահանգիստն է հիւսիսակողմն բերդին.
որ հիները շատ մեծագործ կը պատմեն, ինչպէս որ
կերևնայ. զի խոր ծովուն մէջ սարսափելի հիմ գրեր
են, և այնչափ տեղ ծովը ներս են առեր իրը լիմ. ո-
ւրուն լայնութիւնն ըստ լայնութեան բերդին իրեք
հարիւր քայլէն աւելի է. աւերակները պատի նման
իրեք կողմէն ծովուն մէջ կերևնան. բերանն է ա-
րևելեան կողմն՝ բաւական լայն նաւ մտնելու չափ.
երկայնութիւնը մղոն մի կայ. մէջը յիսունէն աւելի
նաւ կրնար կենալ ապահովապէս։ Հատ երևելի գործք
է. կերևնայ թէ հին բնակիչներն են շիներ ահագին
աշխատանքով և գանձով։ Գ.սէնոփոնէն շատ առաջ,
Գ.ըրիանոս կը պատմէ, թէ էս աղաչեցի Գ.դրիա-
նոս կայսեր, որ շինեց այս նաւահանգիստը մեծամեծ
ամբարտակներով. բայց կերևնայ թէ Գ.դրիանոս նո-
րոգեց. որով շատ ծաղկած էր վաճառականութիւնը
Տրապիզոնի. ինչպէս յայտ է հին ստակներէն (105)։
Գ.ևմտեան կողմն՝ ծովուն մէջ կայ փոքր կղզի ջրին
հաւասար. որուն վրա նշան կը դնեն նաւերու հա-
մար. իսկ արևելեան կողմն մինչև Ղէօմլէկճի նա-
ւահանգիստը տեղ տեղ բնական ապառաժներ կան
ծովեզերքը։

121. Սուրբ Լուսաւորչի եկեղեցին արևելեան կողմն է ներքնաբերդին դիմացը՝ և Պօղթէփէ լեռան արևմտեան ծայրը։ Այս եկեղեցին շիներ է Յուստինիանոս կայսրն Լուսաւորչի մարտիրոսին անուամբն, ինչպէս կը պատմեն հինները. որ է մեծաշէն և ընդարձակ՝ վրան բարձր կաթուղիկէով. ուր կար վկայարան, և վանատուն. ինչպէս տեսանք քակված տեղերը, և դրան տեղը. թէպէտ քովերը տներ շիներ են։ Ուր կար ուսումնարան Տիւքիկոս Փիլիսոփային, և հոն գտուս զինքը Անանիա շիրակացին. ինչպէս կը պատմէ (104)։ Ուստի առաջ երևելի տեղ էր հոս. բայց Սուլ. Մէհէմմէտ քաղաքն առնելէն ետև առջի ուրբաթն հոն վճարեց Նամազը, և անուանեց Էնէի ճիւմաղա ճամիսի. և նոյն թաղն ալ կոչվեցաւ Էնէի ճիւմաղա մահալլէսի։ Հոս մնաց է՝ իբր Պուղուն տէրէին վրա՝ հին փոքրիկ եկեղեցին յունաց սուրբ Գէորգայ, որ կըսվի Խարբէլէղ. ունի ինքնաբուղխ ջուր (Աւազան), ուխտատեղի քրիստոնէից և այլազգաց. օրն որ գայ՝ բոլոր քաղաքն հոն կը թափի։

122. Ներդին երկու կողմն ալ արուարձան (Պարիզ) կայ. և երկու հրապարակ։ Արևմտեանն՝ է Պապաք մէյդան մեծ (104). արևելեանն է Կէավուր մէյդան երկայն 278 քայլ, և լայն 180։ Հին ատենը ձիրնթացի տեղ էին. նաև հիմա Փաշաներն երբեմն կելլեն ձի կը խաղցընեն։ Այս գեղեցիկ հրապարակին չորս բոլորը տներ և խանութներ կան. արևելեան կողմն է մեծ ճամին և աղբիւր բարեջուր. իսկ հարաւային կողմն մէկ գծով են հայոց տները պարտղալից պարտէզներով. անկէ վերն է Թէքէլի թաղն, ուր առաջ Տերվիշի բնակարան կար. որ է ոտք Պօղթէփէին։

Այս հրապարակին կեդրոնը՝ շինեց հաճի Աղտուլլահ փաշան մեր օրը՝ գեղեցիկ շատրուան չորս հին մէրմէռ սեանց վրա. բայց վերջի պատերազմիս Մոսկովն որ եկաւ թնդանօթ նետեց քաղաքին վրա, այս շէնքն ընկաւ կործանեցաւ, տեղը մնաց անշուք։

Արևմտեան արուարձանը երկու թաղ կայ Սէնդ

և Ֆաբրոշ բնակութիւն տաՀկաց, և յունաց. իսկ աբևելեանը քաղաք կը կոչեն. որ է ընդարձակ և կարգաւորեալ քաղաք շուկաներով և խանութներով. ուր կան բաղնիքներ և երևելի ՀամինՀ. շուկային մէջն է Ղաբսի Ճամին մեծ, որ առաջ եկեղեցի էր. քովը կայ քառակուսի հին շէնք։ Արիստոնեայք բերդը չեն կրնար բնակիլ, հոս կը բնակին. նաև շատ այլազգիներ ալ կը բնակին հոս, որ կըսկըսի բերդէն և կը հասնի մինչև ՂէօմիկՀի թաղը, և մինչև Պօղթէփէ. իսկ միւս ծայրն է ծովեղերքը. ուր են բնակութիւնք յունաց և երբեք գլխաւոր թաղ կան շատ հին ժամերով Դանիէլա, Արէնը գայա, ուր կայ ապառաժ կամարաձև, Դոռշլի Էլէմ, ուր կայ աղի աղբիւր.

123. Հին ատենը ամէն օրան մէյմէկ եկեղեցի շիներ էին յունաց մեծամեծները. ուստի 365 եկեղեցի կար միայն Տրապիզոնի մէջ։ Բայց հիմա յունաց ձեռքը քսանըչորս եկեղեցի կայ. և գլխաւորներն են Եօթն։ Կան նաև վանքեր, հիւրանոցներ, և շատ աւրած փլած ժամեր։ Շատ տներու մէջ մնատուռներ կան. կըսեն թէ յոյն մեծամեծները իրարու վրա գժտութիւն ունենալով, իրենց տներուն մէջ մատուռ կը շինէին, որ ժամ չերթան. և մինչև հիմա նոյն գժտութիւն կայ մէջերնին։ Յունաց եպիսկոպոսը կը նստի Այ զօռզօռ եկեղեցին՝ Դուզլի Էշմէ թաղն. որ է հին շէնք. ուր անմիջապէս ծովուն ապառաժին վրա շինած է եպիսկոպոսարանը. և հոն է ԿիւռՀինէրուն վերջի թագաւորին գերեզմանը. և մեծ է իրենց մայր դպրատունը։ Յունաց եպիսկոպոսը Տրապիզոնի՝ է Լոսարիոս այսինքն վեհապետ որ միս չուտեր. նոյնպէս Կողքիսու եպիսկոպոսները։ Իրիկունն առաւօտ ժամին առաջ հայոց և յունաց ժամկոցները կոչնակ կը զարնեն, որ ժողովուրդը եկեղեցին երթան։ Այլազգն ալ ունի մարդ որ շուկային մէջէն կանչելով կիմացնէ Լամաղին մեծ ըլլալը, որ պատրաստվին։

Գլխաւոր եկեղեցիներուն անուամբ Եօթը թաղ բաժնըված է քաղաքը Ֆերմաններուն մէջ. ա Այ զօռզօռ մահալլէսի. բ Այ Նօրէի. գ Խրիստոս. դ Այ Տէ.

բեռէ. Ե Ս. վասիլ. Շ Ֆառօզ. Է Սօնխա։ Ութ Ղեօմ. Լեկձ և Ս. Քիլիպպօ թաղերն են արևելեան վերջի ծայրն քաղաքին (132)։

Ս. յվասիլի եկեղեցին է բարձր հաստատ չորս մեծամեծ մէրմէռ սեանց վրա կեցած. սիւներուն բարձրութիւնն ինը կանգուն կայ, և հաստութիւնը ինը թզաչափ. որ շինված է հազար իրեքհարիւր երսունընինը տարի առաջ՝ Յուստինիանոսի ժամանակը։ Կանանց դրան վրա կայ այս յիշատակարան.

ΑΥΤΟΚΡΑΤΩΡ ΚΑΙΣΑΡ ΦΛ. ΙΟΥΣΤΙΝΙΑΝΟΣ
ΕΥΣΕΒΗΣ ΝΙΚΗΤΗΣ ΤΡΟΠΑΙΟΥΧΟΣ
ΜΕΓΙΣΤΟΣ ΑΕΙΣΕΒΑΣΤΟΣ ΑΥΓΟΥΣΤΟΣ ΠΑΡΕΣΧΕΤΟ
ΙΝΔ. ΑΙΤΟΥΣ ΤΠ.

Ինքնակալ, կայսր Փլ. Յուստինիանոս բարեպաշտ յաղթող, յաղթանակող, ամենամեծ մշտասեբաստոս օգոստոս շնորհեաց. ընդդիկտիոն յամ. 480։

124. Լոյն թաղին մէջն է սուրբ Ս. Ննայի եկեղեցին հնաշէն բարձր, և խանգարած. դրանը վրա մեծ մէրմէռ քար կայ՝ վրան զանազան դէմք տեսանք աւրած։ Կերևնայ թէ այս քար կռատանց քարերէն է. վասն զի վրան որոշէցինք թևաւոր պատկեր կնիկ մարդու և զանազան ուրուական դէմքեր, որ հեթանոսական բան կերևնան։ Ս. յս տեղ է բարեդիր, որ ծովուն և բերդին դէմն ըլլալով կարելի է թէ հին ատենը կռատուն էր. եռքէն եկեղեցի շիներ են։

125. Կուսանաց վանքն է հարաւային ծայրը քաղաքին՝ անմիջապէս Պօզթէփէին տակը, և բարձր ըլլալով ամէն տեղէ կերևնայ իբր փոքրիկ բերդ. ուր մինչև ցայժմ կուսանք յունաց կը բնակին։ Եկեղեցին է Աստուածածնայ բոլոր ապառաժ քարէ փորած. մէջն ինքնաբուղխ անուշ ջուր, և դուրսը դաւիթ նոյն լեռնէն փորած. վրան լեռ ըլլալով եկեղեցին խոնաւ է։ Վանքին պատերը բերդի նման հաստատ են, և ապառաժին վրա պարիսպները հաստա-

տած էն. մէջը զանազան խուցեր և նեբբնատան պէս ճգնարաններ կան աղքատ կերպով շինած. հարաւային կողմը Պօղթէփէ լեռը բնական պարիսպ եղած է վանքին. իսկ հիւսիսային կողմը տեսանք Աղեքսիոս կայսեր գահին տեղը բարձր և պարսպապատ. որ ամուռը երբեմն հոն կը նստի եղեր. մայրն ալ վանքն էր մնած։ Լուկեղեցնայ գաւիթին մէջ Յիսուսի պատկերքին քով կայ այս յիշատակարան վատ գրով։

ΑΛΕΞΙΟΣ ΕΝ Χ῾Ω ΤΟ Θ῾ΟΠΙΣΤΟΣ ΒΑΣΙΛΕ῾Υ ΚΕ ΑΥΤΟΚΡΑΤΟΡ ΩΣ ΠΑΣΙΣ ΑΝΑΤΟΛΗΣ Ο ΜΕΓΑΣ ΚΟΜΝΗΝΟΣ ΘΕΟΔΩΡΑ ΧΥ ΧΑΡΙΤΙ ΕΥΣΕΒΕΣΤΑΤΗ ΔΕΣΠΗΤΑ ΚΕ ΑΥΤΟΚΡΑΤΟΡΗΣΑ ΠΑΣΙΣ ΑΝΑΤΟΛΗΣ ΗΡΙΝΗ Χ῾Υ ΧΑΡΙΤΙ ΜΗΤΗΡ ΔΕ῾ΤΟΥ ΕΥΣΕΒΕΣΤΑΤΟΥ ΒΑΣΙΛΕΟΣ ΚΥΡΙ῾ΟΥ ΑΛΕΞΙΟΥ ΤΟΥ ΜΕΓΑΛΟΥ ΚΟΜΝΗΝΟΥ.

ԱԼԵՔՍԻՈՍ ՔՐԻՍՏՈՍԻՒ ՀԱՒԱՏԱՐԻՄ ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱՒՈՐ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼ ԻԲՐՈՒ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՒԵԼԻՑ ՄԵԾՆ ԿՈՄՆԵՆՈՍ։
ԹԷՈԴՈՐԱ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՕՔՆ ԲԱՐԵՊԱՀՏՈՅՆ ԹԱԳՈՒՀԻ ԵՒ ԻՆՔՆԱԿԱԼՈՒՀԻ ԱՄԵՆԱՅՆ ԱՐԵՒԵԼԻՑ։
ԵՌԻՆԷ ՔՐԻՍՏՈՍԻ ՇՆՈՐՀՕՔՆ ԴՇԽՈՅ ՄԱՅՐ ԲԱՐԵՊԱՀՏ ԹԱԳԱՒՈՐԻՆ ՏԵԱՌՆ ԱԼԵՔՍԻՈՍԻ ՄԵԾԻ ԿՈՄՆԵՆՈՍԻ։

Այս վանքէն վարն է Պօղթէփէի թաղն բնակութիւն տանձկաց. ուր կան խանութներ և մեծ ճամի՝ որ կրսվի Խանանէ, ունի բարեհամ ջուր. որ է հարաւային կողմի վերջի թաղն. անկէ վարն է փոքր հրապարակն. որուն բոլորտիքն է թաղն Օնդրենէ մահալէսի. ուր կայ ճամի և ուսումնարան՝ յունաց ատենէն մնացած. ասկէց կերթայ Խէքքէի թաղն (122)։ Իսկ արևմտեան կողմն վանքին կան զուարճալի տեղեր դաշտեր և պարտէզներ, որ կրսվի Կէօլ չայիր։

126. Պէզէստէնն է շուկային մէջ՝ հնաշէն և բարձր քառակուսի, չորս երկաթ դրներով շինակ մէկմէկու դէմ. մէկը արևելք, մէկը արևմուտք, մէկը հիւսիս, մէկալը հարաւ. մէջ տեղն է հին ջուր-

հորը բարեջուր, և մէջի փողոցը չորս բաժնած է ճամբաներով։ Երևելեան դրան վրա հին գիր տեսանք խանգարած. ճինիվնի գիր է կրսեն. չի կըրցանք լաւ որոշելու։ Այս շինք բարձր է, և առաջ էր կրկնայարկ, չորս սեանց վրա հաստատած էր վերնայարկը. սիւները կան, բայց կրակէն ետև միայարկ շիներ են խանութները։

Հին շինք է մնքսատունը բարձր՝ ծովուն վրա շինած կրկնայարկ հանդերձ քարաշէն սանդուխով. ուր մնտը կայ նոյնպէս քարաշէն խան կրկնայարկ։ Հին մնտը խանութի մէջ կոթող մի կայ հին ատենէն մնացած. բայց վրան գիր չի կայ։ Երևելի է Դաշխանը շուկային մէջ, հին, կրկնայարկ, և կամարաշէն. ուր առաջ բոլոր հայ վաճառականներ էին հարուստ, որ ամէն մի առուտուր կընէին. հիմա այլազգ են։ Կան նաև զանազան խաներ և ճամիներ. ինչպէս է Միւֆտի խանի և ճամի, Նալի խանի, փաշա համամի, Դապախանա ճամիսի բարձր քարաշէն, և այլն։ Կան տեղ տեղ պորփիւր սիւներ ընկած, որ հին շինքերէն մնացած են։

127. Հայոց եկեղեցիներն են չորս. որ կիր Երեքսին ատենը շինված են. ա Աստուածամայր. բ Հարխափան. գ Սուրբ Օգսէնտ. դ Սուրբ Յոհաննէս։ Աստուածամայրն է հինգ խորանով. ունի գաւիթ և զանգակատուն. գաւիթն հաստ պատով զատված է. կերևնայ թէ այս պատին վրա էր եկեղեցնայ կամարը. իսկ զանգակատունը գաւիթին խորաններուն կամարին վրա շինած է հաստատ. նոյնպէս խորաններն են հաստատ կամարաշէն։ Եկեղեցնայ վրայի քարաշէն կամարը և ծածկը քաղաքն առնըված ատենը փլած է, ինչպէս տեղը կերևնայ. յետոյ գերանով շիներ են, թուի թէ Հաւուզ Սուլ. Սէլիմին օրը։ Գաւիթին մէջ սուրբ Յակոբայ խորանին վրա այսպէս գրած է. ՓԱՌԱՅ ՏԱՃԱՐՍ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻՆ ԻՀՏԿ ԱՂՐԻՊՇԻՆ ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՒՐՈՑ ԹՎ ՊԿԳ ԻՆ՝. 1414։

Իսկ գաւիթին մէկալ խորանին մէջ այսպէս գրած է. Շինեցաւ Լուսաւորդ խորանս ՅԱ-

ՆՈՒՆ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍՊԱՍԱՒՈՐԱՅՍ ԳՐԻԳՈՐ ՔՀ· ՅՈՎԱՆԷՍ ՔՀ· ՅՈՀԱՆ ՔՀ· ՍԱՐԳԻՍ ՔՀ· ԵՒ Ա՛Մ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ· ՈՐՔ ԱՍՏ ԱՇԽԱՏԵԱԼ ԵՆ Ի ԹԱԳԱ-ՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԻՐ ՄԱՆԱՒԼԻ ԵՒ ԿԻՐ ԱԼԻՔՍԻ ԵՒ ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՊԿԳ ԵՒ ՔԻ ՓԱՌՔ ՅԱՒ՝· 1414։

Ամն եկեղեցնայ յիշատակարանը չի կայ· միայն զանգակատանը ետին կայ յիշատակարան Խաչերեսին Մելիքին Յոհաննեսին և այլոց· որ խօձա Ստեփա-նին ցեղէն էին· Թվ· ՊՀԸ· 1429։

Եկեղեցնայ չորս դին ընդարձակ գերեզմնատուն է· բայց շատ տեղն առեր տուն շիներ են արևմտեան և հարաւային կողմը· ուստի ժամուն մեծ ջրհորը մնայ քովի տանը մէջ· ուր սովորութիւն էր, որ որ-չափ եկեղեցի պիտի շինվիր, նախ ջրհոր կը բանայ-ին, յետոյ կըսկըսէին շէնքը· անոր համար ամէն հին եկեղեցի ջրհոր ունի։ Արևմտեան կողմը գերեզման-նոցին մէջ քարաշէն խորան մի կայ· ուր պատարագ կընէին ժամը չի լմընցած· վրան խաչ և հայու Գիր կայ· բայց խանդարելով չի կարդացվիր։ Ժամուն մօտ տան մէջ գերեզման մի գտան քարաշէն, մէջը ամանով ածուխ· կերևնայ թէ մարդու երած մար-մին է· որ կռապաշտութեան ատենէն մնացած պիտի ըլլայ։

Այս եկեղեցի ունի երկու դուռ· մէկն հիւսիսայ-ին կողմը· ուր կայ քակ և նահատակի գերեզման երիտասարդի· որ հաւատքի համար շատ տանջանք քաշեր նահատակվեր է· բայց շատ հին չէ, իբր հա-րիւր տարեան գիր կայ· մէկալ դուռն է հարաւա-կողմը կանանց համար, ուր է վերնատունն կանանց· իսկ բուն մեծ դուռն եկեղեցնայ՝ է ճամբուն վրա։ Այս դրան դիմացն է Ժամատունը հանդերձ դպրա-տունով· որ շինեցինք 1818ին։

128· Ղարխափան, է եկեղեցի Յիսուսի անուան, ինչ-պէս ծերերն աւանդութեամբ կը պատմեն· բայց աւագ խորանն Աստուածածնայ պատկերը ըլլալուն հիմա Աստուածածնայ եկեղեցի կըսվի· իսկ շինված ժամանակը վրայէն մարդ է ընկեր, և անվնաս մնա-լուն համար Ղարխափան ըսվեցաւ· ունի չորս խորան,

փոքրիկ աւանդատուն հանդերձ խորանով, և զանգակատուն քարձր. բուն եկեղեցին պատով զատված է գաւիթեն և կանանց տեղին. ուստի և հաստատ քարաշէն է վրան։ Խորանին ետին կայ այս յիշատակարան. ԶՎԵՐԶԻՆ ՇԻՆՈՂ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐԻՍ ԶԽՃ ՇԱՄՀԱՏԻՆ ԵՒ ԶԻՒՐ ԿՈՂԱԿԻՑՆ ԵՒ ԶԱՒՈՆՈՅԻՆ ԶՊՐ ԽԱՉԱՏ ՅԻՇԵՑ Ի ՍՈՒՐԲ ՅՂԹՍ ԶԵՐ ԹՎ ՀՅ ՊԶ. 1431։

Այս եկեղեցին քիչ մի խորը շինած է, ուստի կանանց կողմը և վերնատունը շատ լուսաւոր չէ. և բակին հետ պատկից է յունաց հին քակված եկեղեցին. որուն պատերը և խորանին տեղը կան։

Զարխափանն ունի առաջն ընդարձակ գերեզմանատուն. որ առաջ Այաչբակին հետ մէկ էր. վերջը Խակենտեր փաշան Ձամբայ բանալով զատվեցաւ, և քարաշէն խորանը մնաց Այաչբակին մէջ. որ է հիւսիսային կողմը. բոլորտիքը տներ կան։ Այս խորանին վրա գիր չի տեսանք. այլ կան խաչեր քարէ փորած, և ձիաւոր սուրբի արձան խանդարած. եկեղեցին չշինած հոն պատարագ կընեն եղեր. իսկ ջրհորը ժամուն կռնակը դուրսն է մնացեր։ Առաջ ժամուն մեծ դուռը խաչբակին դիմացն էր, հիմա արևմտեան կողմն է։

129. Սուրբ Օգոստոս, ըստ տՃ. Սուրբ Մանասպը, շինած է անուամբ սուրբ Կոստանդիոս մարտիրոսին՝ որ է հիմա Առաջնորդարանի եկեղեցին. ուր կայ հրաշագործ հին պատկեր Աստուածածնայ յունաց ձևով՝ Յիսուս գիրկը՝ նման Պէնէտիկու հրաշագործ պատկերին, թէպէտ անկէ մեծ է, որ կըսեն թէ Պուկաս աւետարանիչ քաշեր է։ Այս եկեղեցին թէպէտ փոքր է, բայց ունի իրեք խորան և գերեզմանատուն. որուն մնան է Առաջնորդարանն ծովահայեաց ընդարձակ և բարեդիր, որ էր տուն Ռժըշկեանց։

Սուրբ Յոհաննէս, է փոքրիկ եկեղեցի շուկային մնտ, և ունի փոքր գերեզմանատուն, բակ, և զանգակատուն վրան փլած. դրանը վրա կայ հին գիր փորած հայերէն, նաև զարդեր. բակին մէջ կան յունաց

և հայոց տներ. անոր համար կըսեն թէ յունացմ առեր են։

Պ. Եղերն ալ կան փոքր եկեղեցիներ հայոց՝ որ Խաչքոյր կըսեն։ Բ. սոնք Համշէնէն եկած են (144). բայց քաղաքացիք Բ. նի քաղաքէն են. ուստի գեղաց ցիներուն լեզուն և հնչմունքը շատ տարբեր է քաղաքացիներէն. սակայն քաղաքին մէջն ալ կան Համշէնէն եկած հին տներ. որոնք տարէ տարի տուրք կուտան Համշէնցոց հետ հին ժամանակէն 'ի վեր. իբրզի՝ Թագաւորին առաջը վառած մեղրէմոմն ասոնք կուտան. ինչպէս գրված է Թագաւորական գիւանը։ Պ. աղաքացիք երկու հարիւր տուն հաշիւ կէլլեն, առաջ շատ էին. իսկ գեղացիք հինգ հարիւրէն աւելի են. որ իբր զօրք են ամէնը Տերէպէկնեռուն, որոնք խորամանկ և շատ պատերազմող մարդիկ են։

130. Բ. ենադրիէ, վանք պարսպապատ մէկ ժամ հեռուն արևելեան կողմն քաղաքին բլուրի վրա շինած է հաստատ՝ հանդերձ խուցերով և վերնատնով։ Եկեղեցին ընդարձակ քարաշէն է հանդերձ Պատարագ. և ունի իրեք մատուռ. ա Բ. ստուածածին քառակուսի քարաշէն և գեղեցիկ արևմտեան կողմը. ուր էր առաջ հրաշագործ պատկերը (129). բ Սուրբ Յոհաննէս փոքրիկ արևելեան կողմն հանդերձ պարտեզով. և գ Սուրբ Լրրորդութիւն, որ է զանգակատան մէջ արևմտեան դին ժամուն՝ բարձր։ Բ. յս զանգակատան վրայի մէկ մասը դեռ կեցած է։ Հին յիշատակարանին մէջ այսպէս կը գրէ. * Խաչա պաղպասարն երկին Նորոգեաց զանկապուռաձն. Պ. ողորմի ասա ուռաձապուռ աբեղին որ զանկապուռաձին ներգեալ խուցն Նորոգեաց ||։

Վանքին շինօղն է խաչա Պատեփանն, որ արևելեան կողմն եկած ըլլալով Շ. էմէբլի անուն գրվեցյաւ. վե զի Շ. էմ արև ըսել է։ կամ Թերևս պարոն Շ. ամշատին անուամբը կոչեցին։ Հրովարտակներուն մէջ այսպէս կարդացինք։ ,, Պրաղոն ՀԷ ԸՆԷՎՊԷ ԷՐՄԷՆԷ ՄԱՆԱՍԸԸՐ Շ. ԷՄՆԷԴԼԷՍԷ ,,։ Բ. ոջի ֆերմանն է բ Սուլ. Պայեզիտին. ասոր որդին Սուլ. Սելիմ գրեց

Հօրը Գէրման հանեց որ քակված տեղերը շինվին, Շէմշէտին որդուն խնդրելովը. զի անատեղը արքայորդիք Տրապիզոն կը նստէին։

131. *Լկեղեցնոյ դրան վրայի մեծ միակտուր մէջ մէջ վիմին վրա գրած է այս յիշատակագիրը.*

ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ
ՅԵՐԿՐԻ ԴՐԱԽՏ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ
ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ
Ի ՈՒԹՆ ՀԱՐԻՒՐ ԹՈՒԱԿԱՆԻՆ
ԵՕԹԱՆԱՍՈՒՆ ԵՒ ԵՐԵՔԻՆ
Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ
ՏԷՐ ՊՕՂՈՍԻ ՈՒՂՂԱՓԱՌԻ
Ի ԺԱՄԱՆԱԿՍ ԲԱՐԵՊԱՀՏԻ
ԿԻՐ ԱԼԻԲԷՍ ԹԱԳԱՒՈՐԻ
ԽՕՃԱՑ ՍՏԵՓԱՆՆՈՍԸՆ ՊԱՏՈՒԵԼԻ
ՇԻՆԵԱՑ ՏԱՃԱՐՍ ՀՐԱՀԱԼԻ
ՅԻՒՐ ՅԻՇԱՏԱԿ ԱՆՋՆՋԵԼԻ
ԵՒ ԾՆՈՂԱՑ ԻՒՐ ԿՐԿՆԱԿԻ
ԵՒ ԿԵՆԱԿՑԻՆ ԻՒՐՈՑ ՄԵԼԻՔԱՑ ԽԱԹՈՒՆԻՆ
ԵՒ ԶԱՒԱԿԱՑ ԻՒՐՈՑ ՄԵԾԻ ԵՒ ՓՈՔՐՈՒ։

* Բ.ԷՐԴ՝ ԵՒ ԽՕՃԱՅ ԱՊԵՓԱՆՈՍԱ ԱՊԱՅԱՅ Ի ԿԱԼԱԼ ԱՐՔԵԱՆՅ ԷՄՈՅ ՂԱԷՂԻ ՎԱՆԱՅԱ ԻՒՐ ԱՆԴԱՍԱՊԱՆԱՒՆ, ԵՒ ՇԻՆԵՑԻ ՊԼՈՒՍԱՂԱՐԴ ՊԱՃԱՐԱ ՅԻՇԱՊԱԿ ԿՈՓԱՒՈՅ ԷՄՈՅ, ԵՒ Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄԱՆԿԱՆՅ ԱԿՈՒՆԷ։

Լ.ՒՒ ԷՊՈՒ ԴԻՄԷՔԱՆԻՑ ԱՈՒՐԲ ՈՒԽՊԻՆ ԵՒ ԽՕՃԱՅ ԱՊԵՓԱՆՈՍԱ ԵՒ ԻՄ ՈՐԴԻՑԱ. ԶԻ ԿԱՍԱՐԱԿ ԱՄԵՆԱՅՆ ԿՐԻԱՊՈՆԷԷՅ Է ՎԱՆԱՅԱ, ԵՒ ԿԻՐՍԱՒՈՐԱՅ, ՈՐ ԲՆԱԿԵԱԼ ԷՆ Ի ԱՍ. ԵՒ ԱՍԱՊՈՒԾՈՅ ՊՈՒՆ. ԵՒ ՈՉ ՈՐ ՈՒՆԻ ԻՇԽԱՆԱՒԹԻՒՆ ՈՉ ՅԻՄՈՅ ԵՒ ՈՉ ՅՕԳՈՒԱՅԱ ԻԲՐԵ ՀՄԱՐՏՆԱՒՈՐ ԿԱՅՐԵՆԻՑ ԻՇԽԵԼ Ի ՎԵՐԱՅ ՎԱՆԱՅԱ։ Բ.ՅԼ ԱՂԱՊ Է ԱՊԱՊԻ, ԵՒ ԱՍԱՊՈՒԾՈՅ ՊՈՒՆ. ԱՅԼ ԴԻՆՆ ՀԻՆԱՄԱ ՊԱՆԵԼՈՎ, ԵՒ ՊԱՀԵՆԱՅՆ ՄԱՐՄՆԱՒՈՐ ԿԱՐԻՑ ԱՈՒՐԲ ՎԱՆԱՅԱ ԿԱՍԱՐԵԼՈՎ։

Ասուրբ նշանս ասպուածընկալ յիշապակ է խօճայ ապեփանոսին ԵՒ որդւոյ իւրոյ պարոն Դիրպշին, ԵՒ Մարգուս նորին ասուրբ կարապետին, ԵՒ շրջապատ իւր պարսպով յիշապակ ինչ ԵՒ ծնողաց էմոյ ԵՒ ամենայն աղգականաց ॥։

Ուրիշ յիշատակագիր կայ վանքին աղբիւրին, նաև

Լուսաղբիւրին վրա, որ դէպ 'ի հարաւ քիչ մի հեռուն անընդհատ կը վազէ պատւական ջուր. ուր քաղաքացիք ուստ կերթան։ Այս աղբիւրներն հին ժամանակը շինված են. վանքին մէջի աղբիւրին համար այսպէս կը գրէ հին գրով յիշատակարանը. * Որ՝ ողորմի ոսկերիչ կարապետին որ շինեց աղբիւրն. Որ՝ ած սարկնէ պարն խաչէին պատրին պնոռն, որ էրէին շինեց աղբիւրն յիշատակ իւր արեռուն ։։

Այս լուսաղբիւրին քով շինք կայ եղեր ուխտաւորներուն նստելու համար. ըստ որում վանքի յիշատակարանին մէջ կը յիշէ, թէ ուռիլը ին շինվեցաւ. * Այսուած ողորմի անդրէասին իւր ծնողացն ճանապարհ պաւլին հոգոյն. և իւր մօրն սաւկուլին. սապուած ողորմի իւրենցն հոգոյն. որ լուսաղբիւրն մէկ ԿՕՂ շինեց. սապուած պէնոն անգորչ պահէ ամէն ։։ Այնպէս կը յիշէ վանքին մէջի շինուածներն. որ հին գրով գրած է այսպէս. * Որ՝ ողորմի խաչ պարային հոգոյն որ շինեց պանէց ծամապուն յիշատակ իւր հոգոյն. Որ՝ սարկնէ պարային դուռապրն սուրբան խաչուն որ էէրեղեցոյն պարպին շինելն ՀՕ սպիտակ երեա իւր հաւր հոգոյն համար։ Որ՝ սարկնէ պարան խուռնէ-ին որ ղամամապան պէրեան էրէին ծածիրեց կրնարով ։։ Դարձեալ կը յիշէ թէ Մասիեայ խաթունն խուց շինեց. իսկ Մարտիսի առաքելն առաջ շիներ էր, յետոյ խօշնա Կարապետն շինեց կամ նորոգեց տնտեսատունը, դարպասը, վերնատունը. նաև պարիսպը նորոգեց։ Այսմ նապէս մեր օրը նորոգեցաւ այս վանք ձեռամբ Մահտեսի Բարսեղ աթոռակալին՝ ծախքով քաղաքացոց։ Այսուհետև առանձին խուց կար Աթոռակալ իշխանին. ինչպէս յիշատակը հին գրով գտանք, որ կըսէ. * Որ՝ սարկնէ պարն ՀՕ պրդապն. որ շինեց պնդրեսուն խուցն էր հոգոյն համար ։։

Այս վանքին երկիրներն առաջ այնչափ շատ էին, որ մինչև քաղաքին ծայրը Այ Ֆիլիպպոս կը հասներ. հիմա շատ տեղն յափշտակեր են։ Ֆերմաններուն մէջ բոլորը կը նշանակէ և շատ ազատութիւն կուտայ Այքեզանեարուն, որ միշտ վանքին մէջ կը քնակէին. ինչպէս կը յիշէ յիշատակարանը. * Ամէն ՀՕՂ ՀՕՂ ՀՕՂ պարանեցաս ամէնս պարոն տրն և աղորդեաց պրեցին ասա-

ուածապոռ աբէղան ։ Որ մինչև ցայժմ կան աբեղա-
ներուն խուցերն եկեղեցոյ քովերն առանձին պար-
տէզով. իսկ ուխտաւորաց վերնատունն և տնտես-
տունն զատ են պատով։ Այսպէս զատ է Յարու-
թեան պարտէզն, որ եկեղեցոյ հիւսիսային կողմն
է։ Առաջ շատ շէն ըլլալով լեցուն էր վանքն յիշա-
տակներով. ամէն տեսակ բան կուտային բարեպաշտ-
ներն, հիմա գրեթէ բան չի կայ։ Յիշատակարանին
մէջ անհուն բան կը յիշէ տվողներուն անուններովը.
զոր օրինակ. * Ռ՝ ողորմի կարապետ չէլէպոռ, որ ղրէց ՝ի
սարէն (կամ ղաշէ) խալէ մի էր հօրն հոգոռն եղպէկ չէլէ-
պոռն. Այլ՝ ողորմի Մօրն հոգոռն որ ղրէց կանանչ չիմայ
ղուրջառ մի և զարնէշան մոմկալ։ Ռ՝ ած ահնէ ղնձ՝ յա-
ղուպշին գրուսարն շահպաղայ խաչառն. որ էրէս ա ըսէց մ
պէտ էրէմասն չէշապակ էր հոգոյն ՝է սուրբ վանքս։ Հին
գրով սկիզբը գրած է. * Ռ՝ ողորմի մղրէսի յեսապի հո-
գոյն. որ պամենայն ինչս էր էս ՝է սուրբ վանքս. և պինչ
ինդրէց ՝է սուրբ գրիչէն գրաս. և էրէս պէտ արծաթի խաչն
չէշապակ։ Ռ՝ ած ողորմի էսարեղ պապրէսրգի հաբն հոգոյն,
որ էրէս ա. Քլէ. ՝է սուրբ գրիչէ դռուռն. և Ե. Քլէ ՝է
մալէն ինձոյ։ Ռ՝ ա՝ սրհնէ ղնձ՝ պապաջանն. որ էրէս ծա-
ռամէն էր որդուռն արեռուն ասպուռածապրէն ՝է սուրբ գրիչէն
դռուռն։

Այսոմամ. ՝ի սուրբ Ամաս, էր Թաղ հայոց՝ վան-
քէն վար քաղաքին կողմն. ուր կը բնակէին հայք, և
ունէր եկեղեցի սուրբ Ամասայ. մինչև հիմա աւե-
րակները կան բլուրին վրա։ Հին ատենը ասկէց ՀամՀ
բայ կայ եղեր գետնին տակէն, որ կելլէր վանքին
խորանին տակն։

Այս եկեղեցի առաջ կապված էր վանքին. ինչպէս
կիմացվի հին յիշատակարանէն, որ կրսէ. * Ռ՝ ած ահնէ
ղնձ՝ գրիչանն այս տաճն համար ա Քլորմ ՝է սուրբ գրիչէս
... ղնձ՝ շահարէն որ գյարուռնէան պպաջանն ղրնապապ էրէն
ղինէց. ած ահնէ ղէր որդին որ էրէս ՀՀ ապէրսակ այս տաճն
համար յեշապակ ՝է սուրբ վանքս։

Այս յիշատակարաններուն հին անուններէն կի-
մացվի թէ Տրապիզոնի հայերը չէ միայն Այնի քա-
ղաքէն, այլև Աղեմիստանէն ալ եկած են. ինչպէս

յայտնի է Սատանեբուն անունէն, և ուրիշ բառերէն. զոր օրինակ. * Վա՜ ՝ն ողբրդ պբրդաբրն մօրն քաղա խա-ԼՈՒՆԻՆ, որ էրէբ ՝ն քաբբ ոսկէ ա՜ռն ՝է սուրբ էրէնէր ||։

132. Ղէօմլէկճի թաղն է արևելեան ծայրը Ցրա-պիզոնի. հոռոմ բրուտներ են բնակիչներն. ուր առաջ հայեր ալ կային։ Լեռան կողմն է միւս առանձին թաղն Ս. Քէլէպոյ. ուր էր առաջ յունաց եպիս-կոպոսանիստ եկեղեցին մեծ քարաշէն, հիմա ձամի է. որուն հին պարիսպը կը յայտնէ հնութիւնն ու ընդարձակութիւնը տեղին. ուրիշ հին բան չի տեսանք. ունի գաւիթ և առաջն հրապարակ։ Մօտ է աղբիւրը բարեջուր նոյն անուամբ. ունի յիշատակարան հին, 1500 տարեան. որ անատէնի եպիսկոպոսին աղջիկն է շինել տվեր։ Ս. այս աղբիւրին վերակացութեան ֆէրմանը հայոց տրված էր, ուր բնակութիւն ևս ունէին. որ արտ մի տվին վանքին. ինչպէս գտանք յիշատակարանը հին գրով. * Վա՜ ողբրդ ղամայ խաՒՈ-ՆԻՆ հոգոյն որ էրէբ կոբմ պէղ այ Քէլէպէն վէրԼ յիշապակ է սուրբ վանաբ։

Ս. այս թաղէն վեր կըսվի Հաճի օսման ազգաղէ. ուր կայ նոյն անուամբ հոր բարեջուր. հոս առաջ բնակութիւն կար մինչև Լէուսա. և երկու կողմը խանութներ կային. ինչպէս աւերակները կերևնան. մեծը արտին մէջ կայ նաև քառակուսի աւերակ, որ կըսեն թէ բաղնիք էր։ Կարելի է թէ քաղաքին ծայրը մինչև գետը կը հասներ առաջ. ուր կար կռատուն Դիոսի և Հերակլէսի չաստուածներուն անուամբն (112)։ Ղէօմլէկճի թաղին առաջն է այժմեան նաւահանգիստն ամառուան, որ ծանծաղ ըլլալով անյարմար է ձմեռուան. բայց ընդարձակ և բաց է։ Ս. Բևմնեան կողմն է ապառաժ սարն, որուն վրա Լուսինճողլի Ս. Հմէտ փաշան երևելի պալատ շինել տրվաւ պարսպապատ բարձր գեղեցիկ և զուարճալի 1740ին. առաջն ունի ընդարձակ հրապարակ և պարտեզի տեղ. բոլոր շէնքն է երկու մասն բաժնած, հիւսիսային և հարաւային. բովանդակ քարաշէն կրկնայարկ՝ ապառաժին վրա հաստատած զարմանալի ամրութեամբ վարէն մինչև վեր։ Շէնքին բուն ձա-

կատն արևելք նայելով Լազիստան կը դիտէ. արևմուտեան կողմէն Լաոռոզ կը տեսնէ. իսկ հիւսիսային կողմէն ծովը կը նայի։ Դուռն է արևելեան կողմն, ուր կան քարաշէն տեղեր դմբեթաւոր, և դուրսն աւերակներ։ Շատ տեղն աւրած է. որ վերջի պատերազմիս ատենը Մոսկովն եկաւ նաւով քակեց թընդանօթով պատերը հիւսիսային կողմանն։

Ռ.ոջևի ծովը քարոտ ըլլալով՝ ուզեց փաշան որ ծովը լեցընէ արևմտեան հովը կտրելու համար. որով ապահով կըլլար նաւահանգիստը, բայց ժամանակ չունեցաւ. նաև արևելեան կողմն ալ կայ քիթ գետէն անդին, որ կըսվի Խոռոխ պոռոնի. ուր տեսանք քակված հին եկեղեցի սուրբ Ռ.թանասայ։

Ռ.այս թաղ առաջ կըսվեր Ֆոռէնկաբ. ուր ֆռէնկներ կը բնակին եղեր ժամանակով, հիմա կըսվի Կիոչէլ ագրայ պալատին անուամբ։ Կերևնայ թէ հոս բնակող ֆռէնկները ժամանակ անցնելէն ետև հայաց եր են. բայց անունին կը պահէին. ինչպէս կիմացվի վանքին յիշատակարանէն, որ կըսէ. * Ռ.ՈՒ ՋԾ ՌՀՆԷ ՀՕՌԱՆԷՆ ՈՐԴԻՆ ՎԻՆԻՈՒՐԱՊԱՆ, որ երէք բեռն գինի յեղաբակ 'ի սուրբ ֆրէնէս ||։

153. ՊօղՌէքէ, երևելի լեռն է Տրապիզոնի քարձր՝ անմիջապէս հարաւային կողմն, որ հարաւային հովը և գետին օդը կը կտրէ, թէ չէ աղէկ չեր ըլլար օդը. վրան ընդարձակ խոտաւէտ և զուարճալի է. ուր կայ մատուռ հին Ռ.հրէէն պէպէ անուամբ. և ուրիշ մատուռ, որ ունի խոռոչ. ուսկից քարափոր ճամբայ կայ եղեր զարմանալի դէպ 'ի Պռպաթալ վար իջնելու։ Ռ.այս լեռան վրա կատուի նման փոքր կենդանի կայ շատ, որ Ճաֆալ կըսվի. ձմեռ գիշերն երբոր պիտի օդը պարզի հետևեալ օրը՝ իրիկունէն միաբերան կըսկըսին ոռնալով ձայն հանել։ Ռ.ևելեան ծայրն լեռան վարը Լուսայի դիմացն է վիմափոր մատուռն հանդերձ խորանով, որ կըսվի Պռպաթալ. մէջը կան պատկերք և Ռ.այամա. բայց դժուար է վեր ելլել։ Վարը կայ ուրիշ մատուռ վիմափոր՝ քարէ փորած խորանով. ուր առաջ կար եկեղեցի սուրբ Սավայի։ Կերևնայ թէ այս ընդարձակ և զուարճալի դաշտին մէջ

պիտի ըլլար երևելի վանք յունաց, ինչպէս մատուռներէն և աւերակներէն յայտնի է։

Լէռ-սա. այսինքն ողջոյնած, է քիթ և ապառաժ. բլուրին վրա կայ քայքայած եկեղեցի սուրբ Աստուածածնայ. խորանին տեղը դեռ կեցած է, ուր տեսանք մնացորդ պատկերաց։ Հիւսիսային կողմը դուռ կար. որուն կէս կամարը դեռ կերևնայ, որ սանդուխով մինչև ծովը կիջնեը, ուր մնար նաւեր կուգան եղեր։ Հէքիմ օղլու ալի փաշան գեղացոց համար վարին Ճամբայ բանալով՝ եկեղեցնայ Ճամբան աւրեցաւ։ Ուր գտան մեր օրը քարաշէն գերեզման մեծամեծ ոսկորներով. մեռը կան բարեջուր աղբիւրներ։ Աստկից կըսկըսի ընդարձակ սև աւազուտը և կը հասնի գետը։

134. Տէղէրմէն պէրէսի. ըստ յն. Ռէֆէրէս, այսինքն տօսախ (Շ խմշիր), չափաւոր մեծ գետ է. որ կուգայ Կիւմիշխանայու մեռտէն. ուր տեղ առաջ տօսախ շատ կայ եղեր. որուն վրա կայ մեծաշէն կամուրջ հինգ կամարներով ահագին բարձր։ Այս գետ երբեմն առատանալով մեծ քանդմունք կընէ. որուն ջուրը ինսասակար է՝ լաւ է. կը բերէ Աղապալըղի, Սազան, և այլն. գետին վերը թումբեր շինած են, որ ջրաղացներուն ջուր կը բերեն դարձընելու համար. որով գետին անունը փոխվեցաւ Տէղէրմէն պէրէսի։

Հոս առաջ շէնք և կռատուններ կային. ինչպէս տեսաւ Աբրիանոս։ Այս գետ բուռն գալով անդադար ծովեզերքը քարով և աւազով կը լեցընէ. ուր "Աբր". Խոսս գետ կը յիշէ։ Արքել Ջուր ինքնաբուղխ՝ աւելի վերն է. որ պղպջալով գետանէն կելլէ, ուր առաջ ռամիկներն հրաշք կարծելով ուխտ կերթային։ Այսոր վերն է Տէլիէլի դաշ. ուր լեռը ծակած է գիմացէ գիմաց գետին ջուրը քաղաք վազցընելու համար։ Շատ զարմանալի հին գործք է չափաւոր մեծութեամբ աղեղնաձև ծակած միակերպ. որ Յուստինիանոսէն շատ առաջ պիտի ըլլայ. զի այս թագաւոր գուլլէին կողմէն ջուր բերել տվաւ քաղաքը (108)։

Յամի տեառն 1022 Պետրոս կաթողիկոսն՝ Յոհաննէս Ռաշիտունի հայոց թագաւորին հրաման

նաւ Տրապիզոն եկաւ. բայց ջրօրհնեաց օրը Վասիլ կայսր ուզեց, որ հայոց ծիսով օրհնել տայ ջուրը։ Այրբոր Պետրոս հայրապետ այս գետին քով ջուրը կօրհներ, գետը մնաց անշարժ, և հրաշալի լոյս երևցաւ. անոր համար Պետրոս գեպարքէ կոչվեցաւ ըստ պատմութեան Արիստակէսի։ Գետը ձգած ոսկի խաչը տեսանք, որ աւանդութեամբ կը պահեն։ Մանք կը սեն թէ այս հայրապետ վանքը նստաւ. ուստի անաւտենը վանքին տեղը պիտի եղած ըլլար փոքր վանք մի. որ չորս հարիւր տարիէն ետև եկաւ խօձա Ստեփաննոսն յունացմէ գնեց տվաւ հայ կրօնաւոր աբեղայից, ուր առաջ կը ձգնէին. ինչպէս կը մակաբերվի եկեղեցնայ դրան վրայի յիշատակարանէն (131)։

Իսկ հին ատենը Արենոփոն ամիս մի կեցաւ այս գետին քով տասն հազար զօրքով, և Դիոսի կռատան մէջ ուխտը կատարեց գնաց։ Ուր տեսանք հողէն ելած փոքրիկ կուռք մի զուտ ոսկիէ թափած. որ էր գեղցիկ պատանի մերկ թևաւոր՝ ոտքի վրա կայնած. ոտքին տակը կար պատուանդանի տեղ. որ կամ Լաքոսի, կամ Ապողոնի, և կամ Կուպիդոնի կուռքը պիտի ըլլար։ Տես ՁԵՄ. 643, 661, և 662։

Տրապիզոնի հիմակուան մեծ նաւահանգիստն է Ղեօմիլկէնն (132). իսկ փոքր նաւահանգիստներն են՝ Գանիտա, Դուզլի ջէշմէ, Դաշ տիրէկ, Արէմէր գայա, Մուխանէ էօնիւ. ուր է քաղաքին բուն վաճառատեղին նաւակաց. նաև Մոլոզ՝ որ է բերդին առաջն։ Ուր շատ երթևեկութիւն կըլլայ նաւերու, և ամէն տեսակ ապրանքի առուտուր կըլլայ. իսկ ցամաքային գլխաւոր առուտուրն է քթանի. որ կը գործէն ընտիր կանեփէ, և կը ղրկեն Հալէպ, Շամ, Պաղտատ, և մինչև Հինտ։ Այլև գինին, թիւթիւնը և կաղինը կերթայ Ստամպօլ, և Մոսկով։

135. Խօլոշլան, կամ Աղաճպաղչ, է երբ վերջի ծայը և սահմանագլուխ քաղաքին հարաւակողմն Պոզթեփէի. որ է բարձր գօտի լերանց, կապան, և անցք ցամաքի ճամբային. ուսկից պիտի անցնին ամէն ճամբորդք. ուր կան քննիչք փաշային, որ կը նային ճամ

բորդներուն թուղթը. ունի գետ Խոշոշան անուամբ։ Դոս չէնք շիներ էր ժամանակով գեղեցիկ երիտասարդ մի. որ վրիպմամբ գլխատեց Սուլ. Մեհեմմետ. և յետոյ լսելով անմեղութիւն երիտասարդին՝ ըսեր է Ա՜խ խոշ օղլան. ասկէց կըսեն այս տեղս կոչվեցաւ Խոշոշան։

Մէրչէմանա, է հռչակաւոր վանք յունաց խոշոշանէն վեր Տրապիզոնի և Կիւմիշխանայի մէջ. որ է հին շէնք սուր լեռան ծայրը շինած ապառաժին մէջ, նեղ սոսկալի սանդուխով միայն վեր կելլըվի. և այն միշտ վեր առած է աւազակներուն վախէն։ Երբոր ուխտաւոր կերթայ կը դնեն վեր կառնուն։ Եկեղեցնայ մէջն է Աստուածածնայ հրաշագործ պատկերը սեւագոյն և հին. ուր ամէն ազգէ ուխտ կերթան. և շատ հրաշք կըլլայ։ Այլազգը եւս տարուէ տարի մոմ կը զրկէ, ինչպէս իրենք պատմեցին. ուր կան երկու մեծամեծ կերոններ գերանի նման. որ Սուլ. Միւրատին ընծան են. զի անկէ անցած ժամանակը կըսեն առաջադրեր է, թէ որ յաղթութեամբ դառնայ Պաղտատէն, ոսկիով վրան պատէ. իսկ երբոր դարձեր է մէջի կրօնաւորներն աղաչեր են, որ կապարով գոցէ. և անատենը կերոններն ալ զրկեր է։ Ապառաժէն պատեական ջուր կը կաթէ բաւական բոլոր վանքին։ Թօտը կան երկու մեծ վանքեր յունաց. բայց գլխաւորն է Մեղրէմանան. ուր հեռաւոր տեղերէն ուխտաւոր կերթայ։

Կիւմիշխանէ, մասն է Պոնտոսի և օրան Ճամբայ հեռու Տրապիզոնէն հարաւակողմն. որ թէպէտ լեռնային տեղ է. բայց լեցուն է հանքով. և անոր համար ըսվեցաւ Կիւմիշխանէ։ Աղաքին մօտ մեծամեծ փապարներ կան հանքի. փոքր գետին քով առատ հանք գտան. բայց գետին ջուրը մէջը լեցվելով անգործ մնաց։ Աղաքը շինած է լեռան կողը. ուր հաղար վեց հարիւր տուն կայ. հայերն երկու հարիւր տնէն աւելի են. Եկեղեցին է մեծ և վայելուչ սուրբ Աստուածածնայ անուամբ։ Մէկ ժամ հեռուն է վանքը սուրբ Սարգսի. ուր կը նստի Աղաջնորդն։ Յոյներն աւելի են. մանաւանդ գեղերը. որ են

վաթսուն. որոնց մէջ ցեղ մի կայ, որ Կրոմէ կըսվին, բոլորը կէսկէս են. զի ներսէն ամէն քրիստոնէութեան պարտքը կը կատարեն. դրսէն այլազգ են, և երբեմն այլազգութիւն ալ կընեն երբոր հարկադրին. և որդւոց որդի այսպէս կերթան. իրենց Իմամն ալ այսպէս է, և ոչ երբէք կը փոխվին։

Լեռան տակէն կանցնի Կիւմիշխանայի գետն. որ փոքր գետին հետ խառնըվելով կերթայ Պարտէզ կը թափի։ Այս գետին երկու կողմն ալ գեղեցիկ պարտէզներ են, մինչև չորս ժամ կերթան. հարաւային կողմը կը հասնի Յօռտա պաղչէսին. իսկ հիւսիսայինը մինչև Խյոռօշ։ Գետին կելլէ Սարի պալըգ։ Իւր շատ զանազան տեսակ տանձի կայ գլխաւորն է Հաճի համզա արմուտի. խնձորն ալ շատ ազնիւ է. որ հեռաւոր տեղեր կը տանին, և մեծ առուտուր կըլլայ։

Հին ատենը շատ երևելի և բազմամարդ քաղաք էր Տրապիզոն, փառաւոր մարդիկ և փառաւոր շինքեր ալ շատ կային. Սուլ. Մհմէտին ժամանակը տասնըութ հազար տուն կար, առաջ շատ աւելի էր. բայց հիմա հազիւ կէսը կելլէ։ Տիւքիկոս փիլիսոփային օրը շատ երևելի մարդիկ ելեր են՝ ըստ պատմութեան Շ իրակացւոյն (104). Այա տասնըհինգերորդ դարուն ծաղկեցան Հռոմ Գէորգ տրապիզնցին և Կարգինալ Բէսարիոն։ Գէորգ եղաւ ատենադպիր Ե Լիկողայոսի քահանայապետին, որ առաջ դասատու էր Ճարտասանութեան և փիլիսոփայութեան։ Այնպէս Բէսարիոն էր գիտական կարգինալ. և շատ իմաստուն գրվածք ունի. որ իւր երևելի գրքատունը կտակաւ Թողուց Վենետիկի տէրութեան։

Այս իմաստուն Կարգինալ առաջ էր արքեպիսկոպոս Նիկիոյ. բայց Յոհաննէս Բալէոլոկ կայսրն յունաց զինքը Հռոմ զրկեց եկեղեցական կարգադրութեան համար. որ գնաց Ֆիորէնցայի ժողովը. և իւր խելացի գործքերուն համար Դ Եւգինէոս հայրապետը զինքն անուանեց Պատրիարգ Կոստանդնուպոլսոյ. և կարգինալութիւն տվաւ 1439ին. նաև պիտի Հը-

ռոմայու Հայրապետ նստեցնելին. Թէ որ չի մեռնիր 1472 ին։ Լսերոպացիք կըսեն, Թէ այնչափ ուսումնասէր, և փառասէր մարդ էր, որ իր պալատը լեցուն էր գիտուններով, և արժանի է յաւիտենական գովեստի։

Սակայն ինչպէս որ այն հին վայելչութիւնն անցեր է Տրապիզոնի. այսպէս բնակաց բարեկարգութիւնն ալ նուազեր է. Թէպէտ բնական յարմարութիւն ունենալով ուսման, և ամէն բանի՝ երբ օտար տեղ կը կրթըվին, երևելի ուշիմ մարդիկ կելլեն ամէն ազգէ. որպէս էր Շագիր փաշան բարակամիտ. Մուռիզ պէկերը. նաև մեր Հայր Յոհաննէս վարդապետը Սարգիսեան. և այլք։

Հաւանական կերևնայ, Թէ Պետրոս առաքեալ Անտիոք ամթոռը հաստատելէն ետև՝ եկաւ Պոնտոս և մինչև Տրապիզոն քարոզելով լուսաւորեց. ինչպէս կը մակաբերվի Կաթուղիկեաց Թղթէն. որ սկիզբը կը գտնէ, * Ի սփիւռս պոնտացւոց ... և կապադովկեցւոց ||։ Տրապիզոնի աշխարհագրական լայնութիւնն է . . . 37°. 2′. 5″.
Երկայնութիւնն է 41°. 24′. 5″։

136. ԳՕՎԱԹԱ, վեց մղոն հեռու է Ղէօմիլգիշիէն. ուր է նաւահանգիստ ամառուան. ունի գեղեր, գետ, և տեղ տեղ հին եկեղեցիներ։ Ամառը հոս կուգան Տրապիզոնի նաւերը, և կաղին կը բարձրվին. հոն մատ է Շանա գեղը, և կաղինը անուանի է. ուր կայ չափաւոր գետ։

137. ՍԻՐՄԻՆԷ, տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ է պատուական նաւահանգիստ. շատ նաւ կրնար ձմերել հոն ապահով Թէ որ մանր որդ չըլլար, որ նաւը կապականէ (150)։ Վերը տեսանք հին եկեղեցի Աստվասիլ. նաև քակված բերդ։ Դրսնպէս սարին վրան ալ կայ հին բերդ և եկեղեցի։ Ուր կան գետեր, և Մահոնա գետ. որ է սահման Օֆին։ Այս կողմն տասներկու հին եկեղեցի կայ յունաց, և քառասուն տուն հռոմ. նաև շատ քայքայած հին տեղեր տեսանք։ Սիրմինէի բնակիչներն են աւազակաբարոյ. ամէնքը հայէ և հռոմէ դարձած են. հայ-

երը համիկնու եկած են. մինչև հիմա հայերին է իրենց մականունը և լեզուն. կան ծերեր որ գիտեն քրիստոնեութիւն, կը պատուեն խաչը, և ծածուկ ողորմութիւն կուտան ժամերուն։ Պերը քանի մի տուն հայ քրիստոնեայ կայ։ Հասարակօրէն վաթսունը վեց դեղ կայ կրսեն հոս։ Առջի աւանը Բրագլի է. մնան է Յամպօլի գետը։ Միւրմնեի եղը շատ անուանի է. որ ընծայ կերթայ մինչև Պատմպօլ. ուր ամէն շաբաթ օր վաճառ (Բազար) կըլլայ. շատ ցորեն կը բերեն Բաբերդէն, որ մօտ է. իսկ ասկէ կելլէ մնացած, քթան, և դլբին ձկան եղ. որ բոլոր այս կողմերս և լաղիստան այս եղը կը գործածեն Ճրագի, և մեծ առուտուր կըլլայ։

158. Ֆ, ըստ Բրբ". Ֆէ. այսինքն օձ, զի օձի նման պատոյտ են Ճամբանները. որ տասնբութ մղոն հեռու է վերինէն. միակարգ և անմատչելի լեռներ են մինչև Բաբերդ, որ կըսվի Ղենեկոպան։ Գաւառ հանգիստն է անյաջող, նաև կենալու տեղերն են Պօլաքլի, Օրթա փազար, Լոսկի փազար, Բսպէթ։ Գրեալելի է Ֆ տերէսի, կամ Գալաքօթամա. այսինքն լաւ գետ։ ըստ Բրբ". Գալաս, և Գարա տերէ. ունի քիթ քարոտ ֆիշչի պուռնի կամ դաշի։ Պօլաքլիին առջին տեսանք հին բերդ աշտարակաւոր ծովուն մօտ։ Բնչափ դժուար և պատոյտ է Ֆին Ճամբաներն որ անհնարին է առանց առաջնորդի ներս մտնել, թէև հազարաւոր մարդիկ ըլլան կը մնան անելանելի Ճամբաներուն մէջ. ինչպէս եղաւ Հաճի ալի փաշային. որ տասը հազար մարդով գնաց բան չի կրցաւ ընելու։ Մէջը կան գեղեցիկ դաշտեր և շէնքեր, նաև հին եկեղեցիներ։

Ինակիչներն են հին Խաղտիք խորամանկ. առաջուութսուն հազար տուն կը գնեին. բայց այնչափ չի կան. քսան հազար տուն հաղիւ կելլէ. որոնք քրիստոնէից դարձած են, յունարէն կը խօսին. կան հռոմներ ալ։ Բլաղգաց մէջ շատ բարակամիտ կարդացող մարդիկ կան. կախարդական բաներու շատ վարպետ են. հնարագէտ են նաև ստակ կտրելու և ամէն բանի։ Բրբիանոս ասկէց անդին Կոդէա կը-

սէ. ասդին �անիէ։ Այրբոր այլազգը հոս հասեր է, իրենց իրեք բան առաջարկեր է. կամ սուր, կամ հաւատք, և կամ տուրք։ Ֆցիկ հաւատքն ընդուներ են, այս մտքով որ երեսանց միայն այլազգութիւն ընեն. բայց հիմա շատ հաստատ կարդացող են։ Անոր համար քիչ տուրք կուտան Իմպարի հէպարէ անուամբ։ Այնչափ ատելութիւն սիրող մարդիկ են, որ որդոց որդի կը տան իրենց թշնամութիւնը. շատ մարդ կայ որ կը ծերանայ՝ գրնէն դուրս չելլեր. ելածին պէս՝ իրար պիտի զարնեն. միայն իրենց կնիկները կերթան կաշխատին։

Սակայն դրսէն թշնամի եկածին պէս ամէնը մէկ կըլլան կը ծեծկըվին եղբօր պէս. ետքը կուգան տներնին կը փակվին գիշեր ցորեկ կըսպասեն որ իրար զարնեն։ Ա՛օտ է երիկ լսմանի։

139. Իրիզէ, ըստ հն. Իրէզս, փոքր քաղաք՝ քսան ւերկու մղոն անդին է Ֆիէն. որ է խաղտիք կամ լաղիստան։ Անի նաւահանգիստ և հին բերդ լեռան վրա՝ տուն և խանութ։ Աւռաջ աշէմ հայեր շատ կային, որ Իոչի թաղը կը նստէին. ունէին փառաւոր եկեղեցի, ուր ճաշոց մի գրեր են. որ մայրաքաղաք կանուանէ այս քաղաքը։

Գետը Իրէզէոս կը կոչէ Աբրիանոս. կերևնայ թէ առաջ հոն բրինձ կը ցանէին, որ Իրիզի ըսվեցաւ։ Իրեք մղոն անդին է Աւկարօզ երևելի գետն, ուր փոքր նաւեր կը մտնեն։ Հինեռն Աւպարօս գետ կըսեն, և Աղիպա քաղաք կը յիշեն հոս։ Գեղեցիկ են հոն բուրաստանք լեմնի և նարնջի։ Լաև քթանը շատ ազնիւ և քարակ է, որ ամէն աշխարհ կերթայ, և ամէն տեղ անուանի է։ Ցեղացի այլազգներն աւելորդապաշտ ըլլալով այնչափ կը վախնան դիւէն, կամ Ֆէրիէն. որ ամենևին գիշերը դուրս չեն ելլեր. երիկուն եղածին պէս ամէն մարդ սասսնելով ներս կը քաշվի։ Երևելի էր մեծաշէն պալատը Գուզձի օղլուին. որ էր կուսակալ լազիստանու այնչափ զօրաւոր, որ իբր թագաւոր կը տիրեր. մեր օրը գլխատվեցաւ։ Իրիզ ունի շատ դեղեր և պատուական երկիր։

Այրկու ժամ վերը Աւտա քէոյին լեռանը վրան ծակ

քար կայ. տեղացիք պատմեցին թէ առաջ նաւերը հոն կը կապեն եղեր։ Ալերը հին եկեղեցի կայ, որ Ճնամի ըրած են։ ԳալէՃիք մօտ է Իրիզէի. իսկ Մաբաւրի աւանն անդին է. ուր կայ բնակութիւն լազերու, նաև գետ և հին եկեղեցի։ Ծովուն մօտերը հին ատենէն մնացած բարձր աշտարակներ կան քառակուսի՝ հաստատ դրներով։ Ալպազաներն առաջ խածապա նաւակներով կուգան կը կոխեն եղեր այս կողմերս մինչև Տրապիզոն. անոնց դէմ շիներ են Օսմանցուն ատենը։

140. ՐԷՄԻԷ, ինը մղոն հեռու է վերինէն, որ է ծակ ապառաժ ծովուն մէջ. որուն մէջէն փոքր նաւեր կանցնին. ուր կայ փոքր քիթ։ Հոս է Տրապիզոն նահանգին սահմանագլուխն, որ կը հասնի Պաթլամա բերդն (91). և հիմա հոս կը դնեն բուն լազիստանու սահմանը։

Ալյս կողմի բնակիչներուն համար այսպէս կըսէ Ռէաթիպ էֆէնտի, թէ ըստ մեծի մասին Լազիկք են. որ հասարակօրէն Լաչ կըսվին. և կուգան հին Կողքիսացոցմէ. այս պատՃառաւ բոլոր աշխարհը Կողքիսէ կըսվեր և գաւառը՝ Խաղտիք. սակայն բուն Լազիկք կովկասու լեռներն են. իսկ լազերը ծովեզերքն են. որոնց լեզուն և սովորութիւնը շատ տարբեր է. թէպէտ կը ջանան, որ այլազգ երևնան։

Լազիստան է լեռնային. Տրապիզոնէ սկսեալ մինչև վրաստան են բարձր մեծամեծ լեռներ. ուսկից կելլէ թեղ, մեղրէմամ, մեղր, կոզի, պանիր, լէմոն, նարինջ, և ձէթ ձկան։ Բայց այս կողմն տեսակ մի մեղր կայ, որ կըսեն Տէվ պալ. զի ուտողը կը գիտնոՃայ և կը ցնորի խելքը, ինչպէս կը պատմէ նաև Ռէնոփոն. որուն զօրքն անգիտութեամբ կերան Տրապիզոն նոյն մեղրէն գինովցան, քսանըչորս ժամէն ետև խելքերնին գլուխնին եկաւ։

141. ՍՕՎՈՒԳՍՈՒ. յն. Փոխրօս. այսինքն պաղջուր, երսուն մղոն հեռու է իրիզէէն. և ունի լաւ նաւահանգիստ. գետ և բերդ։ Սովուգսուի սարին գիմացը ծովուն մէջ կայ կղզի վրան քառակուսի աշտարակ Ճինիվիզէն մնացած. որ կըսվի Ռէզ գոռէզ.

զի աղնուական աղջիկ մի շինել տվեր է կրսեն։

142. Ա.ԹԻՆԱ, վեց մղոն հեռուէ. ունի փոքր նաւահանգիստ և բնակութիւն. ուր կայ սղոնձէ դուռ մի հին ժամանակէն մնացած. Թուի թէ կռատան դուռն է. զի հոս էր հին ատենը Ա.Թենաս քաստուածուհւոյն կռատունը։ Ա.ըդհանուորդք երբոր հոս հասան՝ չուզեցին Ա.Թէնք քաղաքին անուամբը կոչելու, Ա.Նուանա կամ ըստ ոմանց Ա.դիէնոս ըսին այս աւանին։ Ինակիչներն են լաղ, կամ կողքիսացի. որ ստուստուրի Ճարպիկ մարդիկ են, և գերիի առատուր կընեն։ Ա.յս կողմն կան նաև քրիստոնէութենէ մնացած քաներ, մնատուռներ և փլած տեղեր։

143. Լ.ՍԿԻ ՏՐԱՊԻԶՈՆ, մեծ է վերինին. որ է պատուական տեղ դուր, և բոլոր սեղանի նման քարայատակ. որ հեռուէն բերդի կընմանի կլոր ձևով։ Կը պատմեն թէ նախ հոս են որոշեր շինելու Տրապիզոնի բերդը, բայց տեսնելով թէ օդը լաւ չէ՝ ձգեր են։ Ա.յլապէսք աւանդութիւն ունին, թէ վարպետները քանած ատենին զիրենք Տրապիզոն գտան, և հոն դրին հիմը։

Յուռթունա տերէսին քովէն կանցնի, որ մեծ ձայնով և բռնութեամբ ծովը կը թափի, ուր Ա.Բրիանոս երկու գետ կը դնէ Պ աղատիա և Ռուիտանիա։

144. ՀԱՄՇԷՆ, կամ Համամաշէն, օրան Ճամբայ վերն է Պարիսալ լեռան քով, զանազան գեղեր են. ուր կայ հին վանք. որուն մէջ գտան չափազանց մեծ խալ կին, և զարմանալի Ճնճապարհ, որ լեռնէն փորած մինչև Յուռթունա գետը կը հասնի։ Ուր կայ Ի.ղովիտի գետ, և Խյաչէվանայ գետ. ունի մեծամեծ անտառներ հայոց թագաւորներուն ժամանակէն մնացած՝ շատ տեսակ ծառերով և բոյսերով լեցուն հնդերձ հայու անուններով. ուր կըլլայ հաստ տօսախ. բնակիչները տարէ տարի երկուհազար հօխա մեղրեմամ կուտան թագաւորին. ուր շատ մամ կըլլայ։ Գ.ելիսաւոր աւանը կըսվի Պաշ Համշէն. որուն մէջէն գետ կանցնի, և լեռան գլուխը փոքր բերդ կայ։ Ա.յս լեռան վրա սաստիկ ձիւն կուգայ. երբեմն Ճամբորդները չէն կրնար անցնիլ, կը թաղէն զիրենք

ձեանը մէջ և օրերով ողջ կը մնան, զի տաք է ձիւնին տակը. որոնք յետոյ անմնաս կելլեն։

Խաչիքեար վանքը մեծ ուխտատեղի է հայոց և այլազգաց. այս վանքին քով գտան մեծ զանգակ մի. ուր կայ մեծ գերեզման արջու, վրան գրած է թէ այս արջ հաւատարիմ ծառայութիւն ըրեր է վանքին տասներկու տարի. հայ և տաճիկ վրան ուխտ կերթան մինչև հիմա անմոռութեամբ, և սատկած օրը վրան կերթան աղօթք կընեն։ Համշէնցիք կեսկեսն են. շատը դարձած են. բայց քրիստոնէութեան սովորութիւնը կը պահեն ժամոց և ողորմութիւնը պակաս չեն ըներ. գրեթէ ամէնքը վարդավառին և վերափոխման կերթան եկեղեցին մոմ կը վառեն և մատաղ կընեն իրենց պապերուն հոգուն համար. քոլորը հայերէն կը խօսին։ Անոնց մէկ մասը Խուրշունլի և Այուրմէնէ գնացին. խուրշունլի գնացողները քրիստոնեայ մնացին (82)։ Գեանին տակէն գտան հին ատենի զէնքեր, և շատ մոմ։ Այս տեղս հայոց Համամ իշխանն է շիներ, որ շատ երևելի գաւառ էր հին ատենը. ինչպէս շէնքերէն յայտնի է. և կըսվեր Տամբոռ։

Ունի հին բերդ ապառաժի վրա շինած, որ կըսվի Օրլգաղէ. մէջը կայ զարմանալի կամարաւոր շէնքեր հին ատենէն մնացած, և մեծ աշտարակ. վարի ծայրը կը հասնի մինչև Ֆուռթունա գետը. ուր կան ուրիշ բերդեր, հին եկեղեցիներ, և մատուռներ լեռնեբուն վրա. նաև փլած տեղեր։

145. ԼԱՐՕՋ, կամ Աղուռ, վեց մղոն անդին է Աթինայէն. ունի փոքր նաւահանգիստ և քիթ։ Անտ է հոն Շէնլէ, որ ունի գետ. նաև Գուլէպ կամ Գուլէպ, և Կափիսրա, որ պզտի տեղեր են փոքր նաւեր կենալու։ Աբրիանոս հոս կը դնէ Արիդանիս գետն. որուն մօտ էր Անգիալոսի պալատը (148)։

146. ԱՐԽԱԻԱ, անշուք տեղ է փոքր նաւեր կենալու. ուր կայ խանութ և գետ։ Անտ են հոս փոքրիկ տեղերը Ռէբոմիտ, Վիսկ, նաև Պիզէ. որ երսունը վեց մղոն հեռու է լարօզէն։ Այս տեղերս շատ երթևեկութիւն է նաւակներու. բոլորը լաղ

են, և վրացի վաճառականներն ալ պակաս չեն։

Ըստ պատմելոյ Արեաթիպ չելեպուն՝ այս կողմերս զանազան աղանդաւոր ազգեր կային առաջ. գրեթէ հիմա հաստատ այլազգ են ամէնքը։ Ներերը պատմեցին, թէ առաջ կային անկրօնները, որ անմահութիւն հոգւոյն ուրանալով կըսէին, թէ՝ Ինսան օր էլ պէրէբ, օր էլ էրէբ. այսինքն մարդս խոտի նըման կը բուսնի, խոտի նման կանցնի. ուստի ոչ աղօթք և ոչ օրէնք ունէին։

147. Խօփն, քառասունըվեց մղոն հեռու է Արօզէն. որ է փոքր աւան և նաւատեղի. ուր շատ երթևեկութիւն կըլլայ մանր նաւերու. ունի գետ, և բնակութիւն։ Այդ մղոն անդին է Բոլու իսլահ գետ, որ շատ պատուական ջուր ըլլալով կըսեն թագաւորը խմեր հաներ է. և Բոլու իսլահ, այսինքն լաւ ջուր կուզեր է. ուր կան հին անշուք տեղեր։

Մարբաղալ իրեք մղոն անդին է, որ ունի նաւահանգիստ և գետ. առաջ անուանի տեղ է եղեր, հիմա լաղերու տեղ է՝ ուրիշ բան չի կայ. ուր մնաէ փոքրիկ նաւահանգիստն Ղէրէ։

148. ԱլէՕՆԵԷ աւան, քսանըմէկ մղոն հեռու է Խօփայէն, ունի լաւ բերդ, և բնակութիւն. ուր շատ նաւեր կերթան. բնակիչներն են լազ. շատը քրիստոնէից դարձած են։ Հոս երբ Պուլ. Բ. հմէտին ստակը հատաւ՝ կաշիէ ստակ կտրեց զօրքին տվաւ, որ մինչև հիմա պահած կայ Օսմանցոց գանձարանը. անոր համար ԱլէՕՆԵԷ ըսվեցաւ այս բերդն, որ կաշի բառէն եկած է։

Հին ատենը այս կողմն էր Երևելի քաղաքն Անգիալոս. ուր տեսաւ Բրիանոս թագաւորական պալատ. որ կը պատմէ, թէ այս կողմի բնակիչներն խռովարար ըլլալով միշտ կը պատերազմին պոնտացոց հետ. նաև Արէնոփոնին հետ ալ կռվեցան։ Բայց գաւառ ընդհանրապէս կըսվի Թաղիէա. և ըստ հնոց՝ ԼաՒելա։ Բուռաջ այնչափ երևելի գաւառ էր, որ կաւատ թագաւորը պարսից շատ ստիպեց Յուստինոս կայսրն որ լազիստան իրեն տայ. բայց այն՝ զօրք ղրկեց պաշտպանեց պարսից դէմ։ Լազիստանու հնիկ-

մարդիկ, մանաւանդ մեծամեծներուն խաթուններն նման Ը.մաղունեաց այնչափ զօրաւոր են՝ որ իրենց երկանը կը հրամայեն. մինչ զի խօսքերնին կատարելով պէտք է որ կամքերնին ընեն, զի անոնցմէ կը վախնան. որ արևելեան քնութեան դէմ է։ Վախաւվեր շատ հեռու չէ ասկեց։

149. ՇՈՐՈԽ, կամ Փաստ, գետ երևելի, և ըստ հնութեանցն, որ Լրզրումայ լեռներէն կամ Ծորթումայ կելլէ. և աղբիւրնաձև պատելով խաղտիք, կամ ըստ սուրբ գրոց Եփիլատայ աշխարհը, կուգայ Ը.րդվինու քով շատ կը մեծնայ, մինչև մանր նաւեր կը քաշեն մէջը. մանաւանդ գարնան ժամանակը, և մեծաւ բռնութեամբ կը վազէ լաղիստանու ծովը Պաթումին մօտ. կէս մղոն կայ բերանը՝ ծովուն մէջ աւազակոյտ ըրեր է, և ծանծաղ է բերանը։ Ը.յս գետին աւազին մէջ տեղ տեղ ոսկեգոյն կը փայլի. կերևնայ թէ լեռներէն ոսկիի մանրուք կը բերէ. թէպէտ չի կրցանք փորձելու։

Ը.յս գետին վրա կրսէ սուրբ գիրը, թէ՝ *Ուր ոսկին է, և ոսկի երկրին այնորիկ ազնիւ է*. վասն զի այս կողմի լեռներուն մէջ հանք շատ կայ մինչև Կիւմիշխանա. ուր զարմանալի առատ հանքեր կան լեռներուն մէջ, մանաւանդ գետին տակը (135)։ Կէս նեղի քթին վրա ծովուն մէջ քար մի կայ վրան զանազան տեսակ ձկանց ձևը գրած է մեծ պզտիկ. տարին անգամ մի անկէ կանցնին ձկներն իբր ուխտ երթալով. այսպէս պատմեցին մեզ լազերը։

Ը.յս նշանները չի կրցանք քննելու. բայց կերևնայ թէ կամ ալիքներուն զարնելովը զանազան ձևեր նկարվեր են. և կամ ապառաժէն քարացուցիչ ջուր վազելով ձկանց ձևի պէս բաներ ձևացեր են. ինչպէս տեսանք Ծորեստի ահագին խոր և մեծ փապարին մէջ այս կերպ շատ զարմանալի բաներ մարդու և կենդանեաց ձևով. սակայն ռամիկներն իբր հրաշալի բան համարելով դրեր են, թէ տարին անգամ մի ձկները Հերմակ ծովէն ուխտ կուգան, և նոյն քարին քովին ու կերթան. փոխանակ ըսելու թէ սև ծովու ձկներուն շատը կառունկի նման կը փոխեն տե-

զերնին ամառ և ձմեռ, ու խմբովին կանցնին ծոցերուն մէջէն. ինչպէս է Իւսկիւմէին, Թիրսին, խամսին, և այլն։

150. ՊԱԹՈՒՄ, ինը մղոն հեռու է Կէօնեէէն. ունի մեծ և պատուական նաւահանգիստ։ Այս նաւահանգստին մէջ մնար Ձերմակ բարակ որդեր գոյացեր են ասէղի նման. որ շուտով կապականեն նաւերը ծակելով։ Այրիանոս այս կողմն կը յիշէ Պաթիս գետ, այսինքն խոր. կարելի է թէ այս անւամբ Պաթումի կոչվեցաւ այս քաղաք։ Ուր կան հին եկեղեցիներ քայքայած. քնակիչները քրիստոնէից դարձած են։ Մ՝օտէն կանցնի Կենտրիսքի գետ. և ծոնին առատանալով կը լեցվի միշտ աւազով։

Այս կողմի բարձր լեռները հեռուէն ձիւնապատ տեսանք գարնան։ Պաթումէն շատ գերի կուգար առաջ, հիմա այնչափ չէ. ուսկից կելլէ մամ, զերտէվա, և շատ լազուտ, կամ մարացորեն. զի շրջակայ սահմանն է դաշտ, և ունի մեծ անտառ. ուր կան զանազան կենդանիք, որոնց մարթը կրծախսեն։

151. ՁԱԲՈՒ, ինը մղոն անգին է. ուր կայ բնակուութիւն և խանութ լազերու. անկէ Զաբծէր գալէ, է հինգ մղոն. որ է հին քերդ։ Շատ անգամ այս կողմի բնակիչները միաբանեալ կերթան Կիւռձիներուն գեղերը կը կոխեն գերի կընեն։ Զուրուխ սառ, տասնը հինգ մղոն հեռու է. ուր կայ խանութ և Այձուղա գետ. վերը կայ հին եկեղեցի. որ Կիւռձիները կըսեն Սամպա, այսինքն Դրրորդութիւն։

Շ՝էկիրիէլ, վեց մղոն անգին է. որ Մ՝ոսկոյին առաւ քերդ շինեց։ Կէօրկէ-էլի, վեց մղոն անգին է. առաջը կայ աւազուտ ծովուն մէջ։ Անկէ անգին Անալպարի, և Ա՝ճէ սառ, չորս մղոն է. ուր փոքր նաւ կը մտներ առաջ. Այրիանոս Խսիս գետ կը յիշէ նաւագնաց։ Մինչև հոս մոսկով է. որ քերդեր շինեց կը տիրէ ծովեզերաց. ասկէց մինչև Ֆարշ հինգ մղոն է։ Այհա մինչև հոս է Կուռեէլի տերութիւնը վրաց. և այս կողմն ընդհանրապէս կըսվի Կողէս։

152. ԿՈՂՔԻՍ, է ընդարձակ աշխարհ Պոնտոսի, որ Լազիստանէն կամ Ճորոխէն սկսեալ կը հասնի մինչև

Կովկաս, և մինչև Պարսկաստան ցամաքով։ Հին պատմիչները կըսեն թէ ասիացիք Եւրոպա անցած ատենները հոս բնակիչ կար. որ էին Հայկայ եղբօրը Լգբեսայ ցեղէն, և անոր համար ըսվեցան Լգեբոյտ (155)։ Ըստ Հերոդոտոսի Սեսոստրոս եկաւ իւր զօրքով մինչև Կողքիս, և հոն հատուած մի թողուց. ուր եօթը թագաւոր նստան. առաջինը կըսվեր Հեղիոս. որուն յաջորդեց որդին Լյեգաս. ասոր օրը Փրիքսոս գընաց Կողքիս Հերմոսի կռատունը զոհ ընելու (35). նաև Լրգոնաւորդք հոն գնացին, և Հերմոսի կռատունն ոսկեգեղծն գողցան (36)։ Լյեգաս մեռնելէն ետև Կողքիս զանազան մնան բաժնըվեցաւ. մինչև Մինոսդատ տիրեց. անկէ ետև Պոմպէոս իրենց մէկ իշխանը թագաւոր դրաւ Լրիստարքոս անուամբ. յետոյ փարնաս տիրեց, և հայոց թագաւորներն ալ կը տիրեին. իսկ Տրայիանոսէն ետև պոնտոսի Պրէտորները կիշխեին։

Լռաջ երևելի քաղաքներ կային այս աշխարհ. զոր օրինակ Ինիգիոս, Դանդար, Դիոսկուրիա, որ կըսվեր Լյա կամ Սեաստոլիս, և Ֆարշ. իսկ յամանքի քաղաքներն էին Մեկլէսոս, Մատիա, Սարաք, Սուրիս, Ծաղթրիս, և Գալինձեա. ուր կը թագէին թագաւորները։ Լեռները շատ հանք կայ կըսեն։ Կողքիսի հիմնական գլխաւոր բնակիչներն են Սիրք. այսինքն Կիւռձի և Մնկռէլ. թէպէտ երկուքն ալ մէկ ազգ կը սեպվին, մէկ լեզու, մէկ բարք, և մէկ կրօն ունին. բայց Կիւռձիները կըսվին Լչոխպաշ, և իրենց երկիրը Կոռէլ. որ Ղորոխէն մինչև Ֆարշ կը հասնի, և հարաւային կողմէն մինչև Պարսկաստան. գլխաւոր մայրաքաղաքներն էին՝ Թիֆլիզ և Մծխիթա. ուր էր կաթողիկոսարանը։ Իսկ Մնկռէլին երկիրն է Իմրէթ, որ Ֆարշէն մինչև կովկաս կը հասնի. կերևնայ թէ Սոխուումի ապազաներն ալ ասոնց ցեղէն են. յետոյ ծառապաշտ ըլլալով քուն ապազաներուն հետ միացեր են։

Մնկռէլները կը պարծին թէ իրենց թագաւորը Դաւթի ցեղէն էր. նոյնպէս կիւռձիները կըսեն, թէ իրենց թագաւորը Սողոմոնին ցեղէն կուգար։

Տատիան Թագաւորն Մեկուէլի՝ Պ.օԹաԹիս կը նը-
տեր. ասոր ցեղէն էին վերջի Թագաւորները. որոնք
ամէնը Տատիան կըսվէին. որ իշխան արդարուԹեան
ըսել է. զի ՏաՋ արդարուԹիւն կը նշանակէ պարս-
կերէն։ ԿիւռՃիներն աւելի բարակ են. Թագաւո-
րին պալատական իշխաններն էին երկու հարիւր.
նաև երկու հարիւր ևս իշխանաւոր՝ ազնուականնե-
րէն 'ի զատ. իսկ Թագուհիին պալատականներն էին
վաԹսուն տիկին զարդարած, որոնք միշտ հետն էին.
և երբ Թագուհին դուրս կելլեր, ասոնք ալ միատեղ
ձի հեծած երիկմարդու պէս հետը կերԹային իբր
Ա.մազոնք (83)։ Թագաւորը մինչև երսուն հազար
զօրք կը հաներ։ Ա.սոնք մեր օրն ինքնակամ՝ իրենց
տերուԹիւնը Ա՝ոսկովին տվին. և վերջին Թագա-
ւորն եղաւ Սոլոմոն այր փառաւոր, որ փախաւ առ
Օսմանցին, և մեռաւ Տրապիզոն. որուն գերեզ-
մանն է Ա.յդօռդօռ եկեղեցին յունաց՝ բակին մէջ գե-
ղեցիկ շինած սիւներով և գմբեԹով (123)։

153. Ա.յս երկիր լեցուն է անտառներով. ուր
անձրևը շատ ըլլալով աւելի Թաց է. նաև արեգա-
կին տաքը զարնելով կապականէ օդը, մինչև մահ կը
պատՃառի կըսեն. զի վերջի ատենս Ղերքեղին կող-
մէն տարածեցաւ ժանտամահը։ Ուսկից կելլէ տեսակ
մի ցորեն, որ Կոմ կըսեն, և բրինձի պէս կը ցանեն.
հացը Ճերմակ կելլայ, և շատ սնուցիչ է։ Ա.նտառ-
ները կըսեն կայ Ա.ռիւծ, Ա՝ագր, Ա՝նձառիւծ, Ա.ըջ
սև Ճերմակ. նաև Ա.ղուէս, Ղ՝ագալ, և այլն։ Ա.-
պաղանդերէն պաշտպանվելու համար լայն պատ շիներ
էին վաԹսուն մղոն, և կովկասու մէջ տեղի Ճամբան
կտրեր էին։ Պատմեցին ԹԷ Մեկուէլիստան շատ տեղ
երբոր ձիով կերԹան՝ երկիրը ձայն կը հանէ. ասկից
մակաբերեցին ԹԷ տակը Ճամբայ կայ. որով Կասպից
ծովը սև ծովուն հետ կը հաղորդի։ Հիմա Մեկուէ-
լիստան երևելի քաղաք չի կայ շատը գեղեր են. ծո-
վուն մօտ տներն ասդին անդին շինած են. ինը
կամ տասը բերդ կայ, աւելի զօրաւոր բերդը կըսվի
Ուէ-ոս, ուր կը բնակէր իշխանը։

Կողքիսացիք ԹԷպէտ են ուժով աղուր և պատե-

բազմական մարդիկ. բայց են անգութ խաբեբայ, և աւազակաբարոյ. մեծ քաջութիւն կը սեպեն աւազակութիւնը. ուստի շատ անգամ կը միանան կերթան լեզկիներուն, և լազերուն երկիրը կը զարնեն. մարդիկը գերի կընեն կը ծախեն. հայրը զաւակը կը ծախէ անինայ. և ոմանք գործք ողորմութեան կը սեպեն անարդողջանալի հիւանդը մեռցընել։ Մեր կուէլներն իրեք ցեղ կը բաժնուին. Ճենապա կամ Ճենապի, այսինքն ազնուական. Սաչոռա, այսինքն հարուստ. և Պօանալի, այսինքն ժողովուրդ։ Բոնոց հարստութիւնն է ծառայ և ձի շատ ունենալ. որ տէր ըլլալով անոնց կենացը վրա միշտ կը ծախեն։ Բնչափ որսորդութիւն կը սիրեն, որ առակ է իրենց մէջ թէ՝ Յրջանկութիւն մարդոյ կը կայանայ ունենալ՝ լաւ ձի՝ շուն, և բազէ։ Բրբեցութիւն և անառակութիւնն իրենց մէջ հասարակ է. մեծ օրերն ամբողջ կովը կը խորվեն միատեղ կուտեն կուրախանան։

Իրենց թագաւորը, թագուհին, իշխանները, և ծառաները մէկտեղ կուտեին։ Սոսկալի է իրենց սուգը, քառասուն օր կը տևէ. լաթերնին կը պատռեն, մազերնին կը փեթտեն, և կուրծքերնուն կը զարնեն զարհուրելի ձայներ հանելով. ինչպես ըրին Տրապիզոն. երբ մեռաւ մեր օրն իրենց վերջի թագաւորը Սօլօմոն։ Թագաւորն որ մեռնի, եպիսկոպոսը պատարագ կընէ, և բոլոր քաղաքը կը պտըտցընեն մեռելը. յետոյ դրօշակ (Պայրախ) կը բանան. մէկին տակը կը նստեցնեն մեռելին շները. մէկին տակը ձին. և մէկալին տակը սուրը կը դնեն. մեծ իշխանը կը հրաւիրի սուգի, որ ոտքը բաց և մինչև կէս մէջքը մերկ կը չոգի աղօթք կընէ ամէն մէկ դրօշակին տակը մեռելին հոգուն համար. յետոյ իրեն հարկիք կընեն։ Բմէն մարդ զատկին երկրորդ օրը կերակուր կը տանի ժամուն դուռն իրենց մեռելներուն համար. ծաղիկներով և վառած կերոններով գերեզմանին վրա կերթան. յետոյ ժամուն առաջը ծառին տակը նստին կուտեն։ Այս տեղ որ գերեզմաններուն վրա անասուն և թռչուն կը մորթեն ապ-

գականաց հոգուն համար. նաև գինի և ձէթ կը թափեն. որ ոմանք կռապաշտական գործք կը համարին. սակայն թանձրամիտ ազգն իբր բարեպաշտական գործ՝ մեծ ջերմեռանդութեամբ կը պահեն իրենց սովորութիւնները։ Շատ աւելորդապաշտութիւն ունին, և կախարդական բաներու շատ կը հաւատան. իրենց քահանայն ևս ասանկ բաներով ժողովուրդը կը խաբէ. ոմանք լուսինին վախնալով երկուշաբթի օրը միս չեն ուտեր, և ուրբաթը շատ կը պատուեն։ Այն թանձրամիտներ, որ ժամերուն ընծայ կուտան եղնիկի եղջիւր, խոզի ակռա, և ֆազան թռչունի թև. որպէս զի յաջողութիւն ունենան պատերազմի և որսորդութեան մէջ։

Անկուէլները ծովուն մօտ մեծ եկեղեցի ունին. կըսեն թէ Անդրէաս առաքեալը հոն քարոզեր է. սակայն իրենց լուսաւորիչն եղաւ Այունէ կոյսն, որ էր ընկեր սուրբ Հռիփսիմէի. և անոնցմէ զատվեցաւ գնաց վրաստան Մծխիթա քաղաքը նստաւ, և սկսաւ քրիստոսի անուամբն հրաշք ընել. մինչև Միհրան թագաւորին տղան և թագուհին ժշկեց. ուստի թագաւորը և բոլոր ազգը դարձան քրիստոնեայ եղան. իսկ սրբուհին Այունէ հրամանաւ սուրբ Լուսաւորչին փայտէ խաչ մի կանգնեց, որուն վրա ելոյս ծագեց խաչանման. յետոյ յունաստանէն քահանաներ եկան հաստատեցին անոնց եկեղեցին յունաց ծիսով. ուր կան երկու պատրիարգ, մէկը վրաց, մէկալը ճնկուէլներուն. որ մինչև Լպազա կը հրամայեն տասը գաւառի. բայց եկեղեցականները շատ տգէտ են. շատը կան, որ միայն պատարագ ընել սորված են, այլ բան չէյտեն. քահանայք երբեմն պատերազմ կերթային. որոնք աւելի քաջ պատերազմող են, քան թէ քահանայ։ Այն վանքեր և կրօնաւորներ սուրբ Բարսեղի կարգէն, որ կըսվին Պէրրէս. կան նաև մնրասլեմներ. շատ եկեղեցի զանգակատուն չունի. միայն կոչնակ կը զարնեն։ Մեծ եկեղեցիներն ոսկեզօծ զարդարած են պատկերներով։ Շատ կը պատուեն սուրբ Գէորգ. կըսեն թէ Սատանայէլ առնրված ատենը շատ մասունք այս կողմն փախու-

ցին. ուր կայ կրսեն մեծ կտոր խաչափայտի, և Աստուածածնայ շապիկն, որ թագաւորը կը պահէր։ Ի՞նչ սուրբ Ի՞սրոյ գնաց վրաստան իրենց գիրը հնարեց։

Ինկուիզիսիոնն այնչափ կամակոր ոխակալ և անգութ են, որ մեռնելը և մարդ մեռցընելն ամենեին բան չեն սեպեր. նաև իրենց սովորութիւնն այնչափ աղէկ կը պահեն, որ մեռնին բան չեն փոխեր, և սովորական գործքեն ետ չեն կենար. ուրախանալ երգել շատ կը սիրեն. որչափ որ արտաքուստ հոգևոր բաներու և պատկերքի ջերմեռանդ կերևնան, այնչափ ալ տգիտական աւելորդապաշտութեան հակեալ են՝ թէ հասարակ ժողովուրդը, և թէ իրենց քահանայքը։ Այս որովհետև աստոց վարքը և հագուստն ապաշաներուն շատ նման է, ոմանք մէկ աղգ համարելով ընդհանուր անուամբ Պողքիսացի կանուանեն զամենքը կիւռձիներուն հետ միատեղ. սակայն կիւռձին և ինկուէլն՝ են վրացի քրիստոնեայք. որոնք թէպէտ զանազան ցեղ են, սակայն մէկ աղգ կը համարին. կիւռձին աւելի կարգաւորեալ քաղաքական է. որոնց մէջէն քարակամիտ և գեղեցիկ մարդիկ շատ կելլեն. ունին դպրատուններ, մինչ զի աղջիկներն ալ կարդալ գրել գիտեն, և այլազգն իրենց վրա մեծ համարում ունի. ինկուէլն աւելի վայրենաբարոյ և զօրաւոր է. իսկ ապազան սկիւթացի թաթարներէն է. որ կերևնայ, թէ մեծ թաթարստանէն եկեր այս կողմն բնակեր են, և ինկուէլներուն մեծ ըլլալով՝ ժամանակով քրիստոնէութիւն սորվեր և իրարու հետ խառնրվեր են ծովեզերաց կողմը. և յետոյ քրիստոնէութիւնը թողուցեր՝ ծառապաշտ եղեր են (162)։

Ինկուէլէն կելլէ մոմ, մեղր, շիմշիր, ապրշում, կտաւ, բուրդ, կաշի, մորթ, գունտուզ, ղերտէվա, ոսղուէս, ջագալ, և այլ այսպիսի ապրանք, որ կուգայ կովկասու կողմէն։ Ինոր համար ամէն տարի նաւեր կերթան մինչև Ֆարշ և կը բարձրվին. որ առաջ էր մայրաքաղաք Իմէրէթին։

Բէրդ՝ Տրապիզոնէն մինչև Ֆարշ է 238 մղոն. իսկ Ստամպօլէն 1147 մղոն հեռաւորութիւն։

Դ. ՄԷՍԵՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ

154. ՖԱՐՇ, յիսուն մղոն հեռու է Պաթումէն. որ է երևելի սահմանագլուխ և զօրաւոր բերդ Օսմանեանց՝ Սուլ Մուրատէն շինած 1578 ին. հին ատենը կըսվեր Ֆասէս և Բօղէ։ Ամրևէն Ուֆէն մեծ գետը կանցնի, որ Լազուռուս լեռնէն կելլէ, վրաստանու մէջէն կանցնի՝ ու բերդին առաջը շանալով պատ. ական նաւահանգիստ կըլլայ, և ապա սև ծով կը թափի. ուր յորձանքը դեպ 'ի հիւսիս կը վազէ։

Այս որովհետև արևելեան ծայրն է սև ծովուն՝ շարունակ գետերը դեպ 'ի այս կողմն վազելով ծովը կը բարձրանայ, և գետին բերանը վեր կերթայ. քաղաքն ալ հետզհետէ վեր կը շինեն։ Այս նաւահանգիստը մեծամեծ նաւեր կը մտնէին առաջ. հիմա փոքր նաւերը մինչև վրաստան կերթան. զի բերանը շատ ծանծաղ ըլլալուն՝ նաւերը գետին բերանը կը կենան, որ ապահով չէ։ Այբիանոս շատ կը գովէ այս գետին ջուրը. մինչև տասը տարի ամայ բան չըլլար կըսէ. կապարագոյն է, և շատ թեթև. բայց պէտք է քիչ մի ժամանակ ամանին մէջ կենայ՝ որ զտի։ Հին ատենը նաւերով կը տանէին այս ջրէն իբր սրբազան ջուր։ Այս կողմն ծովուն երեսն անուշ է, տակը աղի. վասն զի աւելի թեթև ըլլալուն՝ ծովուն ջրին հետ շուտով չի խառնվիր։ Հոս ամառը շատ ջեռսակար է օդը, մանաւանդ օգոստոսին. ուր անձրև գալէն ետև մանր թռչող կենդանիներ կերևնան ջրին վրա. անատենը երբոր գիշերուան օդը կը գպչի մարդուս մարմնին՝ փթթեցընէ կը թափէ մարմինը. երբեմն թռչունները վրայէն անցնելով կիյնին կը մեռնին։

Պոմպէոս կողքիսի յաղթելէն ետև հոս հասաւ, և պատահեցաւ իր նաւահանգիստին։ Հիներն Լյա կղզի կոր կըսեն Ֆարշին բերանն, որուն վրա բերդ շինեցին. հիմա տեղը չի կայ. նաև գետին մէջ կըղ-

զիներ կայ կըսեն։ Աբրահամոսի ատենը երևելի տաճար մի կար գեղին աջակողմը. որ կըսվեր ΦΑΣΙΑΝΟΣ ΘΕΟΣ, այսինքն ՖԱՐՃԻ ԱՍՏՈՒԱԾՈՒՀԻ. որ Ուխտ ալիտի ըլլայ կըսէ, ձեռքը թմբուկ ոտքին տակը օձ։ Տես ՃԵՄ. 620։ Այս տաճարին մէջ տեսաւ Աբգոնաւորդաց նաւին խարիսխը, կամ երկաթն. որ կուռքին ընծայեր էին ողջամբ հոն հանելուն համար. և ուրիշ աւելի հին խարիսխ մի տեսաւ հոն քարէ շինած. վասն զի հին ատենը քարէ կը շինէին խարիսխը Լնկիւրի քաղաքին մէջ. անոր համար կըսէ Աբրիանոս Անգիրա կամ Անգիւրա կոչվեցաւ այն քաղաքն, որ խարիսխ ըսել է։ Այս տաճարին տեղն հիմա չի կայ. որ Օենոն կայսեր ատենը եկեղեցի շիներ փրկչին ընծայեր էին։ Շատ մեծ և գեր կըլլայ հոս ֆազան վայրի հաւը. պատմիչները կըսեն թէ Աբգոնաւորդք ասկէ տարին յունաստան առնցուցին. որ ֆարշին քով բռնելուն համար՝ ֆազան ըսվեցաւ այն թռչունը։ Ֆարշի աշխարհագրական լայնութիւնն է . . . 42°. 10′։
Երկայնութիւնն է 39°. 50′։

155. ՎԻՄՏԷԼ, ինը մղոն անդին է. որ վերջի առտեսս Սուլ. Սելիմն առաւ Մոսկովը բերդ շինեց, և մինչև Յանուամ իսկելէսին տիրեց (159)։ Աբրիանոս հոս կը յիշէ Խօվոս գետ նաւադնաց. ուսկից տեսան Կովկասու լեռներն, կամ Լտլուռուս ահագին մեծ լեռն ապազայի. ուր կապեցին ատենով Պրոմիդէոս։ Տես ՃԵՄ. 694։

Անկռելի տերութիւնը Ֆարշէն կըսկըսի, և կը հասնի Ապազա. որ ինչպէս ըսինք հին ատենը Լազերացիք կըսվէին, և Հայկայ եղբօրը Լազրեսայ ցեղէն եկած են. ուստի առաջ հայոց տերութեան տակն էր այս մասն պոնտոսի. ինչպէս կը պատմէ Խորենացին, թէ Աբրտաւազդ թագաւորն հայոց՝ հրաման հանեց որ Կովկասու բնակիչներն պատերազմ ելլեն։ Իսկ Կովկաս. և ըստ տՃ. Պ.աՃ. գաղի մեծ սարսափելի լեռը՝ կըսկըսի մինկռելէն՝ կը պատէ Կողքիս, Ապազա և Աղուանք, կը հասնի մինչև Հնդստան. որուն գլխաւոր քարձր լեռն է Լտլուռ-

առաս մեծ Արմենիոն. որ Մեկուելեն կը սկսի մինչև Անապա կը հասնի. վրան միշտ ձիւնապատ է. ամառը տեղ տեղ ձիւնը հալելով հորիպես խոր բերան կը բացվի. Ճամբորդները փայտեր կերկընցնեն ու վրայեն կանցնին. շատ առողջարար ջրեր կան վրան։

156. Արոփի, է նաւատեղի. ուր կայ գետ նոյն անուամբ, և առաջ բերդ ուներ. նոյնպես Մնքելե ա. ւան է, և ունի գետ. ուր առաջ նաւ կը քաշեր կը. սեն հիները։

157. Անագրիա, կամ Լաֆրիա, ինը մղոն հեռու է Արմենիոն, ուր կայ հին բերդ. որ առաջ երևելի տեղ էր, հիմա քիչ բնակութիւն կայ։ Այս բերդին տակեն կանցնի մեծկակ գետ։ Ուր մեծ է Այրես կամ Պաճեթ գետ։

158. Կոտաեա, քսանրչորս մղոն անդին է. ուր հին ատեանը կար Լիտիկա նահանգ. որ ըստ Բրը". էին ոչլակեր սկուտայիք. ունի գետ։ Ամանք կը սիշեն այս կողմն Կիտա քաղաք հին. կարելի է թէ նոյն ըլլայ ընդ կուտայայի։ Ելօռի բերդը մեծ է հոն։ Այս կողմի բնակիչներուն, նաև վրացոց՝ հին ատենեն մինչև հիմա ոչլակեր կրսեն։

159. Իսկոնիրիա, կամ Իսքուրիէ, տասուերկու մղոն անդին է. ուր կայ հին բերդ և նաւահանգիստ։ Իսկուրիա համառօտած է Պիոսկուրիային, որ հին ատենը շատ անուանի էր. որ շինեցին Կաստոր և Պոլոքս երկու եղբայր. մէկ կողմեն կը վազէ Հիբ. բոս գետ, և մէկալ կողմեն Պիանե, որ առաջ կրսվեր Սեսաստրիս և Լյա. ղի ըստ Ստեփաննոսի՝ Բրեդաս թագաւորը Պողքիսայ շինեց այս քաղաքը։

Խանամ Էսկէլեսի, մեծն է հոն. և մինչև հոս են մուկոշները. ասկեց անդին ապազա է։ Բրրիանոս մեծ կը դնէ Տարսուրաս և Սինկամէս գետերը։

160. Կոսոր, է երևելի քիթ ապազայի, որ կը ձևացնէ սօխումի նաւահանգիստը։ Բրրիանոս հոս կը դնէ Հերակլեան սարը. մեծ է և Կէօրկիւ բերդը հին. ուսկեց կրսկրսի լայն պատ մի իրեք կանգուն, և Ցեվրէնտին քովեն կերթայ կը հասնի մինչև լեռն, որ հին ատենեն մնացած է։ Բասանկ հին պատմ՝ ալ

կայ Կասպից ծովուն Տէրպէնտին մօտ, որ մինչև սև ծով կը հասնի եղեր. կարելի է թէ անոր կտորն է։ Հին աշխարհագիրներն այս կողմերս կը դնեն Երևելի հին քաղաք և բերդ Ռիտիոս. քովէն կերթար Հրօրաք գետը։

161. Յոհան բերդ, քսանրուբի մղոն հեռու է Խաքուրէէն, և ունի պատուական նաւահանգիստ, և երկու գետ Մաքէթի և Կաքէթի. բերդն է աղէկ ֆարշի բերդին նման, որ Սուլ. Ամէտն է շիներ. բայց ետքի ատեններս մոսկովին անցաւ։ Ուր կայ քնակութիւն և խանութ. հոս շատ վաճառականութիւն կըլլայ մոսկովներուն և ապազանեերուն հետ։

162. Ապազան է ասկէց անդին, որ են սկիւթացի թաթար, և տեղ տեղ մոսկովներուն և տաճկին հետ խառն ըլլալով քրիստոնեայ Ապազանեերէն շատ զանազանութիւն ունին։ Թէպէտ կռապաշտ և ծառապաշտ են, բայց խաչէն շատ կը վախնան և կը պատուեն. քրիստոնեութիւնը կը սիրեն և շուտ կը հաւանին. նշան է թէ առաջ քրիստոնեայ էին մընկուեներուն նման, ետքը տգիտութեամբ և աւելորդապաշտութեամբ ծառապաշտ եղան։

Ունին կախարդ և վհուկ, որ բակլա քաշելով և կենդանեայ թիւն կամ ոսկորին վրա նայելով սուտ դուշակութիւններ կընեն ծիծաղական բաներով։ Խաչին վրա երդում կընեն, և ոմանք կը պաշտեն. երբոր գողէ վախ ունենան՝ պահած բանին քով խաչ կը դնեն, որ վախնալով մարդ չի մօտենար. ունին անհամար աւելորդապաշտութիւններ և թանձր տգիտական բաներ. ինչոր սորված են և ինչ սովորութիւն որ ունին՝ իրենց բաւական կը համարին. ամենևին փոյթ չունին նոր բան սորվելու, և նոր բանի տեղեկութիւն ունենալու։

Դատաստան ընելու որ ըլլան, ծերերը կուգան կը շարվին դատաստանին տեղն, որ Սամալդա կըսեն։ Երկու կողմին դատն ալ աղէկ մը լսելէն ետև՝ կերթան առանձին իրենց մէջ կորոշեն արդարապէս բընական կանոնով. ով որ չի հաւանի անոնց դատաստանին՝ կը պատուհասեն։ Կաշառ ուտել, և իրարու

զրկում ընել չէյտեն. իրենց օրինաց և կանոնին դէմ ընողը չէն խնայեր կը պատուհասեն չարաչար։

163. Ունին ցեղապետներ և ազգապետներ, որ դատաւոր են ազգին։ Գլխաւորին կըսեն Ղաչպա, այսինքն շահ. Ա.ղպա, պէկ. Նալբէպ, տերբէպէկի. Պաան, պէօլիւկ պաշի. Ղերէկ, զապիթ. Ն.ոմպա, փոքր զապիդ. Տապ, ցեղապետ. Լ.ակբոպա, ազնուական. որոնց տղաքն ալ ազնուական կը սեպվին։ Ա.սոնք կընտրեն իրենց Ղաչպան մեծ պէկը։ Ել գիրք ունին և ոչ օրէնք. բնական օրէնքով կերթան, բայց առուտուրի յարմար են, և գողութեան վարպետ. իրենց կեանքն է պարզ և վայրենի, նաև մեծութիւնին է անասուն. կերակուրնին չափաւոր է, բայց խմել կը սիրեն. իրենց երկիրը լեռնային ըլլալով ցորեն և բանջարեղէն շատ չունին. հասարակ ուտելիքնին է միս, պանիր, և լաղուտի ալուրը խաչեն փաստա կընեն կուտեն։ Հագուստնին սև մուզեղէն է, որ իրենք կը գործեն. ամառ ձմեռ միակերպ է ամենունը։ Ա.յսպէս է իրենց համբանքը. Ա.ղա մէկ. Լոպա երկու. Լիպա իրեք. Շէպա չորս. Խըպա հինգ. Ցիոպա վեց. Պէճպա եօթը. Սաոպա ութը. Օ.ջպա ինը. Ղէյպա տասը. Լ.ոզէօ քսան. Ը.ջլոնա երսուն. Կոռոռղէ քառասուն։

164. Օտարականը խիստ շատ կը պատուեն. եթէ գերի ընեն՝ անխնայ կը ծախեն։ Եթէ մարդ այն կողմն իյնի՝ մէկէն ծնկան վրա գալով մէկ ապաղայի մի ձեռք բռնելու՝ Խծնախ ըսելու է մէկ ուրիշնն ներկայութեամբն. որ երդմամբ կընդունի հիւրն, և նոյն կէտին բոլոր ազգին հիւր կըլլայ, անկիտև մարդ կարող չէ իրեն դպչելու. և այն Խծնախպան ապաղան՝ որչափ անգամ ուրիշ ապաղայի Խծնախ տայ, մարդ չի կրնայ դպչիլ. բայց եթէ մինակ դուրս տեղ գտնեն՝ գերի կընեն կը ծախեն։

Ա.յս երդումն իրենց մէջ այնչափ սրբազան և մեծ է, որ ինչ և իցէ ծանր պարագայ կարող չէ քակելու. ուստի թէև Խծնախպանին կեանքը վտանգի մէջ իյնի, և բիւրաւոր մարդկանց դէմ ելլէ, չիտար. որոնց դէմ դնելով կը համոզէ, ու հիւրը չի մատներ

անոնց։ Այնչափ մարդավար և մարդասէր են, որ տարիներով կը պատուէն օտարականը սիրով, իրենց առատ աղջիկ տղաք իրեն ծառայեցնելով։ Ինչպէս որ պէտք է զարմանալի պարկեշտ են. թէ որ անպարկեշտ բան տեսնեն, չեն խնայեր մէկէն կը ծախեն, և չարաչար կը կորսնցնեն։

165. Մեծամեծ ծառեր կը պաշտեն, որ Թոփչէ կըսեն (181)։ Այց պատկեր խաչ և գիրք ալ կը պատուէն, տեղ տեղ աղօթքի նման բաներ կընեն հին եկեղեցիներու մէջ. ամէն բանի կը հաւանին շուտով։ Առաջ քրիստոնեայ ըլլալով՝ մինչև հիմա ոմանք պաք կը պահէն. զատիկը գիտեն, որ կըսեն Թէնէգէ. հանդէս և հոգուհայ կընեն կուրախանան։

166. Վրանի որ չեն կարգըված՝ երեսանին ածիլի չեն զարներ. կարգըված ատեններն կածիլվին, և մինչև 'ի մահ անմօրուք են։ Յեղ ցեղ աղջիկ չառներ. երբոր պիտի նշանվին մեծ հարկիք կընեն. ամէն տնէ բան կը բերեն կը լեցնեն ծառին տակը. յետոյ կուգան միաբան աղօթք կընեն, Թոփչէ Գէրէմ կանչելով՝ ձեռքերնին համայիլի նման բան ունին. ոմանք ալ բան չունին։

167. Անկէտև կուտեն կը խմեն՝ ամէնքը միատեղ պար կը խաղան. իսկ նշանվող տղան որ աղջիկանն որ հաւնի՝ կը հանէ թաշկինակը ձակատին կը քսէ ու աղջիկանը ուսը կը դնէ։ Թէ որ աղջիկն ալ հաւնի՝ իր ձակատին կը քսէ ու ծոցը կը դնէ. և այսպէս կը լմննայ նշանը։ Թէ որ չի հաւնի՝ խաղալով թաշկինակը կը դնէ նոյն մանչուն ուսը. ան ալ կառնէ ուրիշ հաւնած աղջիկանն ուսը կը դնէ. թէ որ ընդունի՝ կը լմննայ նշանը. թէ չէ՝ մէկ ուրիշին վրա կը դնէ. մինչև որ մէկը հաւնի, և թաշկինակն ընդունի։

Երբոր կարգըվելու կըլլան՝ այսպէս ուրախութիւն ընելէն ետև՝ իրենց ծերերուն առջին հաւանութիւն տալով կը կատարեն հարսնիքը։ Թէ որ մէջերնին պարկեշտութեան դէմ գիշութիւն պատահի, կը տանին ծովը կը նետեն, մարդ տեսութիւն չի կընար ընել։ Ունին երդեր, որ կը վերջանայ իրենց քաջ

անուանի հիներուն անուամբը։ Ա.յս ծերերն իրենց քահանան կը սեպվին, և անոնք կը կատարեն ամէն բաները թէ հոգևոր և թէ մարմնաւոր։

168. Մեռելին լվանան անանկ կը թաղեն, և ամէնքը միաբերան լալով կը ծեծկըվին, և քառասուն օր սուգ պահելով չեն ածիլվիր՝ սևեր կը հագնին. նաև գերեզմանին քով կերակուր և գինի կը դնեն, որ անցնողներն ուտեն հոգուն համար, և նոյն քառասուն օրը գերեզմանին քով մոմպատ կը վառեն։

Անկէետև ազգական և բարեկամ նորէն կուգան գերեզմանին քով՝ կը ծեծեն իրենք զիրենք ողբալով. ետքը ոչխար կը մորթեն կուտեն կը խմեն, և կըսկսին պար խաղալ։ Որչափ սուգ և մեծ նեղութիւն ունենան՝ չեն ածիլվիր, մինչև որ այն ձախորդութիւնը չանցնի. որ է հին սովորութիւն ասիացւոց. ինչպէս հայոց մէջն ալ կայ մինչև հիմա։

169. Հին ատենը այս կողմիս հայոց թագաւորնեբը կը տիրէին. ետքը յունաց և հռոմայեցոց անցաւ։ Որոնք ինքնագլուխ թագաւոր ալ ունեցան. մայրաքաղաքը կրսվեր Ռիկավաթա. իսկ Ցանտար բերդն առաւ Միհրդատ և իրենց թագաւորը վերցուց։ Ա.յս աշխարհ սկսեալ Ցրասիզնսկ եօթն ազգ կը բնակին. Լազ կամ Լեզկի, Վիրք կամ Մոկռէլ, Տրիսթի, Օսի, Թուանար, Ճերքէզ, Ալպազա։

Ա.պազայի տերութիւնն երկուս կը բաժնըվի, ուներն պէկ. մէկը Ա.նապայի կողմն է, մէկալը Սոխում է, որ կը տիրէ այս կողմի ցեղերուն մինչև Ա.նապա (180)։

170. Սովորդ սոր, յիսուն մղոն հեռու է Սոխումէն. ունի հին բերդ և գեղեր. ուր կը նստի Սէֆեր պէկ ապազա, որ մեր օրը մոսկով քրիստոնեայ եղաւ։ Մօտ է Ղանտիլի բերդ և Ա.ղաձա գեղ։ Ուր ցեղ մի կայ, որ մեռելին գլուխը կածիլեն, ասանանկ կը թաղեն։

171. Պուճուտցա, տասնրուբ մղոն հեռու է. ունի լաւ նաւահանգիստ և Կապիտի գետ, այլև հին բերդ։ Ուր կայ մեծ եկեղեցի աղիւսակերտ, վրան երկու գմբեթով. երկայնութիւնը հարիւր յիսուն

ոտք կայ, և լայնութիւնն 60թ անասուն. իրեք դուռ ունի, մէջն է պատկերազարդ. ուր խաչելութիւն և աւետարան կայ կիւռձիի. որ շատ կը պատուեն ապա զանները, և երկրպագութիւն ընելով երեսնին խաչ կը հանեն. երդումը այս եկեղեցնայ վրա կընեն։

Այս եկեղեցին պարսպի մէջ է. բակին մէջ սիւներ տնկած կան վրան խաչերով. նաև իրեք մատուռ կայ զատ զատ։ Շուրջառի կտորվանք պահեր են որ հոգևոր բաներու համար կը գործածեն իրենց ծերերն, որ եկեղեցնայ մօտը կը բնակին, և իբր քահանայ՝ անունք կը մնանեն կելլեն, ու հոգևոր բանները, աղօթքը, և հոգու հացը անունք առաջ անցնելով կընեն. որոնք ամէնը ծառապաշտ են։ Անունք առաջ մնկուելի նման քրիստոնեայ էին, ունէին ամէն բան. հիմա թանձրամտութեամբ ըրածնին ալ չէյտեն. բայց ամէն բանի շուտով կը հաւատան։ Այս կողմն է Իրաքլիա քիթը, և Ծալունքա գեղը։

172. Տիվրիէնտ, կամ Տերպէնտ, տանրութի մէջն հեռու է. ունի նաւահանգիստ և ջրանցք, որ շատ հին է։ Կէօրկիւ բերդն ոմանք հոս կը դնեն. և հաստ պատն այս կողմն կէյնի. որ մէկալ ծայրը կապլից ծովուն Տերպէնտը կը հասնի եղեր (160)։ Առաջ մեծ քաղաք էր հոս. բնակիչները կըսեն թէ Աղէքսանդրին շինածն է։ Իբր զի՝ կասպից ծովուն Տերպէնտին քովն ալ շիներ էր Աղէքսանդր ամուր քաղաք. ուր կը հասնի Կովկասու թեւն, որ կըսվի Տէդր գաբոռ. և նոյն տեղն երկրթէ դուռ շիներ էր. և ասկեց ստոյգ կերևնայ տեղացոց աւանդութիւնն, թէ Աղէքսանդր երևելի տեղ շիներ էր հոս։ Արիստոնէութեան ատենն ալ այս տեղերս ծաղկած էին. ինչպէս հին եկեղեցիներէն յայտնի է. ունէին շատ քահանաներ, և եպիսկոպոսներ։ Այս քաղաք Սուլ. Միւրատ պաշարեց առաւ։ Տիվրէնտի և Պուռնուտայի մէջն է Խոյա ցեղն ապազայի. որ ապստամբ ըլլալով աւազակ էն ամէնքը։

173. Ռուտիլէր, առաջ աւան էր հիմա գեղեր են. ունի գետ. մօտն է Վէչիլեր գեղը, ուր նաև կը կենայ. և հոն կայ մեծ եկեղեցի՝ մէջը չափազանց մեծ

խալկին կայ. ապաղաններն ամէն տարի ուխտ կերթան, և ամբողջ կովը կը խաչէն հոգուհայ կընեն կուտեն։ Մ՝օտ էն Սօչա, և Ը՝նաքոբիա տեղերը։ Ը՝ռաջ այս կողմն եպիսկոպոսարաններ կային. ուր կը յիշեն՝ Օկնանթիա քաղաք. Սօչային անդին էր Տանտար քաղաք հին. ուր կը յիշեն Սապենթեր նահանգիստ։

174. Մ՝ԱՄԱՅ ԳԱԼԻՍՍԻ, իբր հարիւր մղոն հեռու է Պուճունտայէն. բոլոր ապառաժ լեռներ են. կայ հին բերդ։ Լեռան վրա հին գերեզմաննոց մի գտան և մեռելներուն վրայէն ոսկեղէն հին զարդեր ելան՝ գօտի, ոսկի շղթայ, և այլն։ Ը՝ստիանոս այս կողմն տեսաւ Մ՝աքերոնացի ազգն, որ թագաւոր ուներ. նաև չորս զանազան ազգեր կը յիշէ. Ա՝ երն է Խիզէ, ուր ամէն գեղ մէյմէկ մեծ կը նստի իբր գատաւոր, որ կը սվին Լ՝օպէն։ Ը՝ստանք կը գատեն ժողովուրդը գիւրին կերպով, և շուտով կը վճարեն գատը. գրեթէ ամէն ցեղ ինքնագլուխ են իրենց գատաւորով. ամէն բան իրենք կը կարեն. թէ որ մեծ կռիւ ունենան իրարու հետ՝ անատեսը Պ՝էկը կը խառնըվի, կուգայ կորոշէ։

175. Ա՝ԱՊՏԱՆ, կամ Լ՝ՎԷՊՊԷ, և Պ՝ոպպէ, անշուք տեղեր և գեղեր են. ուր կայ գետ. մօտ էն Պ՝ոպպան, Ն՝ոպպէ, և Կօթօշ գեղերն, ուր գետ կը վազէ։ Ը՝ռաջ այս կոտոշի գետն էր սահման Ը՝պազային և Մ՝ենկռելին. որ հին ատենը կըսվեր Պ՝ՕՐՊՊ։

Հին է կըսեն սոսկալի մեծ ծառը Կոթոշ անուամբ. որուն աստուածական պատիւ տալով ամէն տարի ուխտ կերթան. այն ծառին տակը փախչող գերին և մահապարտը կազատի։ Ը՝յսպիսի ծառ ամէն տեղ կայ, որ պատուելով ընծայ կուտան լաթեր, պղնձեղէն ամաններ, և այլն. ուստի բիւրաւոր բաներով զարդարած կերևնայ։ Շատ քննեցինք որ հասկընանք թէ ինչ խորհրդով այս ազգն այսչափ ջերմեռանդութեամբ ծառ կը պաշտէ. ուրիշ բան չի գտանք, բայց եթէ բնական նախապաշարումն. որովհետև բնական է մարդուս, մանաւանդ տգիտաց, որ մեծ բաներու վրա զարմանայ, և որչափ աւելի զար-

մանայ, այնչափ աւելի ափշելով աստուածական պա-
տիւ կուտայ. ինչպէս հին Եգիպտացիք նեղոս գե-
տին մեծութիւնն զարհուրելով կը պաշտէին։ Այս-
պէս այս ազգերը մեծամեծ ծառերուն բարձրու-
թեանը և անբաւ Ճիւղերուն վրա հիանալով սկսան
պաշտել, և աստուածական պատիւ տալ. մինչ զի՝
անհնարին է որ ծառ կամ կանանչ տունկ մի կտրեն.
որ մարդասպանութենէ շատ աւելի մեծ մեղք կը
համարին. ուստի միայն չոր փայտը կը կտրեն։

Այս պատճառաւ հին ազգերն՝ հիանալով գետե-
րուն և մեծամեծ լեռներուն վրա կը պաշտէին.
գրեթէ պտնտացիք ամէն մեծ լեռներուն վրա տաճար
շիներ էին սրբազան կոչելով. ինչպէս է Լ.օռոզ (99)։
Այս ասկէց քրիստոնեայք ևս ամէն մեծ լերներու-
վրա եկեղեցի շինեցին, նոյնպէս և այլազգն ուխտա-
տեղիք շինեց. ինչպէս տեսանք։

Մ.ՈՒՂԼԻ, յիսուն մղոն հեռու է Պամայէն, վե-
րը կան զանազան գեղեր և զանազան ցեղ ապազա-
ներ, որ աւելի թանձրամիտ ըլլալով կերպ կերպ սո-
վորութիւններ ունին, բայց են ծառապաշտ. ունի
գետ. մանր նաւեր կրնան մտնել այս գետին մէջ,
որ Մ.ՈՒՂ սոյէ կըսվի։

176. ՀՕՓՍՈՒՆ, տասնըութ մղոն հեռու է Մ.ՈՒՂ-
ԼԻԷՆ. ուր կան գեղեր, և ունի մեծ գետ Հօփսուն
ըսուած. որ կուգայ ապազայի լեռներէն. բերանը
քիչ մի ծանծաղ է աւազով, բայց նաւ կը մտնէ. գե-
տէն ներս գոգ է, նաւեր կրնան կենալ։ Այս կողմն
բոլոր անտառ է. տեղատեղ պարտէզներ ալ կան. ո-
րոնք կը հանեն գարի, մնացորդն, և ուրիշ հնդե-
ղէն. որ ուրիշ բանի հետ կը փոխեն։ Այս կողմի ա-
պազանեներուն շատը բորոտ են իրենց ուտելիքն անլի
ըլլալուն համար. որ ամենևին ձուկ չեն ուտեր, միս
և կաթնեղէն շատ կուտեն, ունին շատ ոչխար և այծ.
վայրենաբարոյ ըլլալով որսորդութիւն շատ կը սիրեն,
և աւազակութիւնն իրենց մէջ քաջութիւն կը սեպվի.
վասն զի իրենց տղոցն աւազակութիւն և գողութիւն
կը սորվեցնեն, որ մեծցածնուն պէս կը սորվին նետ
նետել, որսորդութիւն ընել, և մարդ գողնալ. անոր

համար իրենց բերդերը կամ հին քաղաքներն երեսի վրա մնայեր են քանդած. անպէտ կերևնայ իրենց քաղաքը, նաև քաղաքական բաներն. վասն զի քաղաքը քաղաքավար մարդու տեղ է, և ոչ վայրենեաց։

Այս տեղերս երբեմն նաւեր կերթան առուտուր կրնեն ապազաներուն հետ. որոնք ոչ կշիռ գիտեն, և ոչ ստակ կը ճանչնան. միայն իրենց պէտք եղած քանը կառնուն, պէտք չեղածը կուտան՝ փոխանակութիւն կրնեն. ուստի հաճար, մսրացորեն, մորթ, և կաշի կուտան, աղ կառնուն։ Կայ ցեղ, որ ծառի սաստիկ ջերմեռանդ ըլլալով կը պատուեն ճիւղերը. ուստի այլազգն երբոր գողէ վախ կունենայ, ապրանքին վրա ծառի ճիւղեր կը դնէ, որ ապազաները վախնալով չեն մօտենար։ Թէ որ տեսնեն մէկն որ դալար ճիւղը կը կոտրէ, դող ելլելով կաղաղակեն, թէ մեղք է, և կաղաչեն որ այն սպանութիւնը չընէ ու չի պատուհասի։ Որոնք որ այլազգաց մօտ են, այսպիսի բաներէն հիմա թուլցած են։

177. ԿԻԼԻՆՃԻՔ, երսունըվեց մղոն հեռու է. ունի լաւ նաւահանգիստ, և կամ մեծ ծոց. մէջը գետ կը վազէ. նաև հողէ բերդ կայ, ուր կան դեղեր, մանաւանդ լեռները։ Այս կողմն երկու ապազայի զատ դեղեր կան՝ Ալոէա և Պղպոէա. ուր բոլորը հայ են, և ունին ժամ և քահանայ, որ Արիրման բերդին բնակիչներն են Աշէմիստանէն եկած ժամանակով, յետոյ հոս են փախեր. որոնք ապազայի վարքը ունին. հոգուհայ ընելու աւելի ջերմեռանդ են. ուրիշ բաներ շատ չեն նայիր. նաև քահանան կը պատուեն, ինչպէս որ պէտք է, թէպէտ տգիտութեամբ լեցված են. առուտուրի որսորդութեան քաջ են, ուրիշ բան չիյտեն. հասարակ լեզուներն ապազայի է, գիտեն հայերէն. ունին ժամ, ուր առաջ վարդապետ կար. որ զիրենք կը հոգար, յետոյ վախճանեցաւ, ինչպէս տեսան գերեզմանը. իրենց աղջիկներն ալ ապազայի նման են հագուստով և ամէն վարքով. գլուխնին կլոր խալաթա կը դնեն, որ իրենք կը շինեն։

178. ՍՕՂՈՒՃԱՔ, տասնըութ մղոն անդին է. ունի մեծ ծոց, նաւահանգիստ և հին բերդ։ Ուր կայ

փոքր կղզի Սուրա ապատ ծովուն մէջ. և Արիթ գետ։ Աօտ են Իպիք լիման, և Պէշաձիք։ Հինգերը կը յիշեն Սինտա քաղաք. նաև Աբրիանոս այս կողմն երկու երևելի նաւահանգիստ և չորս գետ կը յիշէ։ Տես տախ. Ը։

179. Ալնաբա, կամ ըստ հն. Սուռնէյ, երսունը-վեց մղոն հեռու է Սօղուձաքէն. նաւահանգիստն ապահով չէ, բայց բերդը ամուր շինեցին ետքի ատենս. բնակիչներն են այլազգ և ապաղա։ Այս բերդ իբր սահմանագլուխ համարելով Օսմանեան տերութիւն լաւ ամրցուցած է թնդանօթներով և զօրքով. ուր փաշա կը նստի, և շատ նաւեր կերթան կուգան. շատ վաճառականութիւն կը լլայ ապաղաներուն և չերքէզներուն հետ. մեր ազգէն ալ վաճառականներ կերթան. նոյնպէս ասկէց նաւեր կերթան ապրանք և գերի կը տանին ամէն տեղ, և մինչև Ստամբօլ և Եգիպտոս։

Ալեհոն, կամ Շանուռայ, են անկէ անդին, որ փոքր տեղեր ըլլալով երբեմն նաւ կերթայ։ Անապիյի լեռները զանազան ազգեր կը բնակին, մանաւանդ կուսպանին քովերը. գլխաւորն է Ապազա, Չերքէզ. և Արիսթի։ Այս երկիրներէն և բոլոր ապազայէն զանազան տեսակ ապրանք կելլէ. զորօրինակ մեղր, կաշի, զերտեվա, մոմ, մեղը, եղ, պանիր, աղած միս, գերի, և այլն։

180. Ապազա, որ կը բնակին Անապիյի կողմը՝ տարբեր են մէկալներէն։ Անոնց գլխաւոր տեղն է Կուսպան գետին քովերը, և իրենց Պէկը Սօվուգսու կը նստի. երկիրն ալ կըսվի Ապազա, կամ Ապասի, և կամ Աբգաս. գրեթէ ամէնքը ծառապաշտ են և մեծամեծ ծառեր կը պաշտեն. երբեմն երբեմն շատ բաներով և ծաղիկներով կը զարդարեն. նաև սուրերնին և զէնքերնին ալ վրան կը կախեն. ամէն հոգևոր բաներնին նոյն ծառերուն քով պիտի կատարեն. և երբեմն առտուներն ալ ծառին քոլորը աղօթք ընելով կը պտտին, ու անանկ կըսկըսին գործքը. զարմանալի է իրենց ջերմեռանդութիւնը. բայց այնչափ թանձրամիտ են, որ կուրօրէն, և առանց գիա-

նալու անասունի նման կընեն իրենց սովորութիւնը, ոչ պատճառը գիտեն, և ոչ սկիզբը. ինչ որ հարցընես ապուշ կը կենան, և ինչ որ զուրցես կը հաւանին. բայց իրենց գիտցածէն ետ չեն կենար։

181. Տեղ տեղ ծառերու մօտ վարդապետական գաւազանի ձևով փայտ կը տնկեն, որ Ֆոֆէլէ կըսեն. քովէն անցած ատեններին գլուխնին կը բանան աղօթք ընելով երկրպագութիւն կընեն. որչափ մեծ հարկաւորութեան մէջ ըլլան՝ անհնարին է որ առանց ձիէն վար իջնելու, և առանց երկրպագութիւն ընելու անցնին այն թափչին քովէն. ուր աղօթքի նման բաներ ալ կրսեն. կերևնայ թէ միշտ յաջողութիւն կը խնդրեն իրենց գործքին, և շատ երկիւղած են հոգևոր բաներու մէջ։ Իրենց հասարակ աղօթքին մէջ Աստուածածնայ անունը կը յիշեն. և Յիսուս կը պատուեն մեծապէս առանց գիտնալու պատճառը՝ Ամբրեմոֆ կոչելով. այսինքն որդի մարիամու։ Ամէն հարկաւորութեան մէջ այսպէս կաղօթեն ,, Ֆոանբզ ու ղէմոնիս աշնէմբը ծՔբը ղէմոս ռիմնբզ ,,. այսինքն ,, Ամէն ղամէթը դուն չի տաս, ուրիշ մարդ մեր ղամէթը կարօղ չէ տալու ,,։ Շատ հոգեսէր կերևնան դրսէն, խաչը շատ կը պատուեն, և մինչև հիմա հին ժամերուն մէջ կը պահեն երկիւղածութեամբ. երբոր գողէ ահ ունենան՝ խաչը կը դնեն հոն. մարդ չի կրնայ մօտենալ (162)։

Այս ապազաներուն Յովնանն աւելի հաստատութիւն պէտք է ունենայ, քանթէ մկալոնց, թէ չէ՝ վտանգաւոր է. վասն զի հարկաւոր է որ Ֆսմանցուն սահմանին մէջ խօնախ բռնեն իբր երաշխաւոր. որ կը պարտաւորի երթալու սահմանագլուխին. ուր կը գտնէ խօնախպան ապազան, և երդումով անոր կը յանձնէ հիւրը. ինչ ազգէ ըլլայ՝ իրենց առջին միաբերպ է։ Այս խօնախպանը կըլլայ իբր տէր հիւրին, կառնէ կը տանի տունը կը պահէ որչափ որ ուզէ հիւրը. գործքը կատարելու կրջանայ, և ամենայն կերպով կը հոգայ, և կրզգուշանայ որ հնաս չի գայ հիւրին. միշտ քովը կը պտրտի, թող չի տար՝ որ իրմէ հեռանայ, և անկարգութիւն ընելով վտանգի

մէջ իյնի, կամ մինակ գանըվելով ուրիշն սահմանը՝ ապազանները զինքը բռնեն ծախեն. ինչպէս որ շատ անգամ կը պատահի. Թէպէտ խանախպանը ահ մի չունի, բայց մեծ մեղք կը սեպէ իրեն, և պարտական է ամէն քանին աւելի հիւրը հոգայ. նաև բոլոր ընտանիքը, և աղջիկները պարտաւորեալ են հոգ տանելու և պատուելու։ Իսկ հիւրը թէ որ ուրախութեամբ և շնորհակալութեամբ ելլէ իրենց մնէն՝ շատ մեծ պարծանք կը համարին. և ասաւել՝ թէ որ ուրիշ անգամ ալ նոյն խանախպանին երթայ. իսկ թէ որ ուրիշ խանախպան բռնէ ու անոր տունը չերթայ, շատ մեծ նախատինք կը համարին, և ոխակալութեամբ կը չարանան։

Ասանք ունին սովորութիւն, որ երբ շատ քալելով կը հոգնին, իրիկունը կրակ կը վառեն, ու կրակին բոցին վրա կայնած կը կենան. և այն բոցին ծուխը մերկ մարմնին դպչելով ուժ կառնուն, և ջղերնին կը զօրանայ կըսեն. ուստի շատ ուշադրութեամբ այս գործքը կընեն։ Ամենապէս իրենց ամենայն բնական սովորութիւնն անվրէպ պիտի կատարեն. ամենևին զանցառութիւն չեն ըներ, և անանկ հեղգ և թոյլ մարդիկ չեն։ Սակայն ուրախութիւն և պար խաղալ շատ կը սիրեն. մէկ քանի աղջիկ, կամ երիտասարդ մէկ տեղ եկածնուն պէս կըսկըսին երգել միաբերան, և բոլոր օրն երգեն խաղան՝ չեն ձանձրանար։ Տեսանք ատենցմէ, որ գերի բռնըված կերթային. սակայն իրենց սովորական երգերն ընելով կուրախանային։ Ունին հին երգեր իրենց նախնեացը վրան շինած, որ շարունակ կերգեն գեղջկօրէն. չունին երաժշտութիւն, և ոչ գործիք չալելու. միայն բերնով երգել կը սիրեն միաբան ուրախանալով։

Որչափ հոգևոր բան լսեն որևիցէ ազգի՝ ջերմեռանդութիւն կը շարժին, չգիտեն թէ ինչպէս լսեն. թէ որ Ճշմարիտն Աստուած վարդապետես, և Յիսուսին հրաշագործութիւնները պատմես, մեկին կըսեն, թէ մենք ալ անոր կը հաւատանք և անոր երկրպագութիւն կընենք. բայց ծառայաշտութենէ ետ չեն կենար։

Կայծակէ զարնըվողը մարտիրոս սեպելով եօթն օր և եօթն գիշեր ուրախութիւն կընեն. մարմինը իրեք օր իրեք գիշեր զարնըված տեղը ծառին վրա կը դնեն, ու տակը կը պարեն. իրեք օր ալ տունը կուրախանան, յետոյ կը թաղեն ,, Ֆաշնօր Եօվաղ,, ասելով. այսինքն Աստուծոյ որդին զարկաւ։ Հին հռոմայեցոց մէջն ալ կար այս սովորութիւն, որ կայծակէն զարնըվողն ու ջմեռնողը սրբազան կը համարէին Աբամազդայ սիրելի, և անոր աղգն ազնուական կը լլլար։ Այս ցեղ որ մեռելը չի թաղեր. ծառերուն խոռոչին մէջ կը դնէ ճիւղերով կը կապէ. և իրեն զէնքն ու լաթերը ծառին վրա կը կախէ։ Այս ևս ցեղ, որ կենդանի և շուն կը պաշտէ. բայց ասանք ներսը լեռնաբնակ և վայրենի են բոլորովին, թէպետ հիւրը կը պատուեն։ Պատմեցին մեզ թէ իրենց գեղին մէկ կողմը տեսան առանձին տեղ կապած մեծ սոսկալի շուն մի. ուսկից այնչափ կը դողային աւելորդապաշտութեամբ, մինչ զի ամէն անգամ նախ շանն առջին կը դնէին կերակուրը, և անկէ աւելցածն իրենք կուտէին։

Հարանիքնին և հիւրասիրութիւնին նման են մէկալ ապազաներուն. բայց լեզունին տարբեր է. զորօրինակ Անդնահա աստուած. Օրակ հայր. Անսհանդէ մայր. Սէաս մանչ. Լաֆա աղջիկ. Աստէյ եղբայր. Աստէնէյ քոյր. Կոս սիրտ. Լաֆկա գլուխ. Լա աչք. Լոսմպա ականջ. Լանշա բերան. Մառահ արև. Մոյշ լուսին. Աբնա ամպ. Մէրնէնէհ օր. Պահահ գիշեր. Կոսլէնէ իրիկուն. Հաբնէհ դարուն. Բէնէնէհ ամառ. Պիտակա աշուն. Կէնէն ձմեռն. Սէնէկոս տարի. Տէնահէնէ մահ։ Կուպանին ապազաներուն խօսքն ալ ուրիշ կերպ է, և ամէն ցեղ ունի փոփոխութիւն։

Ոչ գիրք ունին, ոչ գիր, և ոչ օրէնք. բնական օրէնքով լաւ դատաստան կը կտրեն։ Բրեանարքու գէշ մարդիկ չեն, ազէկ սիրտ ունին, չարութիւն չեն սիրեր. բայց գողութեան վարպետ են։ Ծոովուն մեծ եղջիւրներուն շատ այլազգութիւն դարձած են, և օրէ օր կը դառնան. զի այլազգը փոյթ շատ ունի զանոնք շահելու։ Սակայն իրենց կուապաշտա-

կան սովորութիւնն ալ չեն թողուր։ Որչափ որ Լ-
րենց օտարական հիւրը կը պատուեն, անչափ ալ ան-
խնայ բռնեն կը ծախեն երբոր հիւր չէ եղած իրենց.
ուստի հեռուէն օտարական մի տեսածնուն պէս՝ մէ-
կէն ձիով կը հասնին, և կամացմը իրենց կաշիէ որո-
գայթը կը նետեն վրան անասունի նման կը բռնեն
մէկէն ձին կը վազցնեն. որ խեղճ բռնըվածը պիտի
վազէ ետևէն. կը տանին շուտով կը ծախեն իրա-
րու։ Պղպանեբն անուանի են ճարտարութեամբ,
և շատ երևելի բարակ մարդիկ եղած են կրթու-
թեամբ. նաև կան օսմանցուն մէջ կարդացող խե-
լացի Փաշաներ այս ազգէն։ Հասարակօրէն լեռան
բնակօղներն աւելի վայրենի և թանձրամիտ են. իսկ
ծովեզերքը բնակօղներն են այլազգի մօտ։

182. ԶԻՐՔԻԶ, Կովկասու լեռան բնակիչներն
են Կապարդայի կողմն, որ Կուպանին և Ցօն գետին
մէջ վեց հարիւր մղոն երկայն կայ իրենց երկիրը.
քաջ և զօրաւոր ազգ են՝ միայն անմիաբանութիւնը
զիրենք կաւրէ։ Իրեք կարգ բաժնըված են՝ Իշխան,
Ազնուական, և Ժողովուրդ։

Կապարդայի ժողովուրդն իրեք իշխանի տակն են,
աւելի հին ցեղին իշխանը գլուխ և գատաւոր է ազ-
գին։ Իշխանները շատ մեծ յարգութիւն ունին և իբր
սրբազան կը համարին, թէպէտ զգեստնին, տներ-
նին, և կերակուրնին հասարակ ժողովրդէն աւելի
է, ամէնքը միակերպ են։ Ձունին գրած օրէնք,
այլ հին սովորութեամբ կերթան։ Մեծ հարկաւ-
որութեան ատենը ամէնքը կը հաւաքին՝ մեծ իշխա-
նը կառաջարկէ գործքը, և ծերերը կորոշեն ժողո-
վուրդին կողմանէ. որ դիւրահաւանութեամբ շու-
տով կը հնազանդի ժողովուրդն իրենց ծերերուն.
զի բնական օրինօք շատ կը պատուեն մեծերը, և
կուրօրէն կը հնազանդին։

Երբոր իշխանին տղայ կըլլայ՝ երևելի մարդ մի
կընտրէ, որ յետոյ տղին վարպետ ըլլայ. երբ տարե-
կան կըլլայ տղան՝ կը դնեն առջին զէնք և խաղա-
լիք. թէ որ տղան զէնքին երկնցնէ ձեռքը, մեծ
բան սեպելով շատ ուրախութիւն կընեն բոլոր ազ-

գականներով. Եօթը տարեան որ կըլլայ՝ կը ձգէ հօ-
րը տունը կերթայ վարպետին. որ իրեն կը սորվեց-
նէ ձի հեծնիլ, զէնք գործածել, աւազակութիւն և
գողութիւն ընել. որ մինչև յաջող չըլլայ՝ ու մեծ
աւազակութիւն չընէ, չի կրնար դառնալ հօրը տու-
նը։ Ասմիկ ժողովուրդը շատ կը ջանայ որ իշխանին
տղան գողնայ մեծցընէ. զի ասով կրնայ մեծնալ և
ազնուականաց կարգը մտնել։ Առաջ խրիմի Խա-
ներն իրենց տղաքն ասոնց կը ղրկէին, որ կրթը-
վին, և ձի հեծնիլ սորվին (218)։

Այրերը կը մեծցընեն աղջիկնին, և իրենց բան
բանել կը սորվեցնեն. բայց ծնածնուն պէս լայն
կաշիէ գօտի կը կապեն մէջքերնին, այնչափ կը թռ-
ղուն որ մարմինը մեծնալով կաշին կը ճաթի, նորին
կը շինեն. երբոր կը մեծնան գեղեցիկ բարձրահա-
սակ կըլլան, և աղէկ կրթութիւն կառնեն. իրենց
մէջէն կելլեն խոհեմ բարակամիտներ, որ ամէն բան
ձեռքերնուն կուգայ. և անուանի են այլազգայ մէջ։

Երբ պիտի նշանվին՝ ամէնքը միատեղ պար կը
խաղան. մանչը զանազան շարժմունքներով կը խա-
ղայ հաւնած աղջիկանը հետ, և այնպէս կորոշեն
նշանը։ Արգելած է որ յայտնի կենակցութիւն չընէ
երիկը կնկանը հետ։ Թէ որ երիկը մեռնի, կնիկը
մազերը կը փեթատ և երեսը ճղքռտելով սուգ
կը մտնէ, և շատ ժամանակ սգաւոր կը մնայ։

Այս կնիկները լաւ ձի հեծնելով շատ քաջութիւն
կընեն. անոր համար ոմանք զասոնք կը համարին
Ամազունիք։ Պլուտարքոս կը պատմէ թէ Ազուան-
ներուն կռվին մէջ կային Ամազունի կանայք. ինչ-
պէս որ գտան անոնց մարը վահանն ու կոշիկները
ուրիշ զարդարած զէնքերը. որոնք կըսէ կովկասու
կողմերը կը բնակէին (83)։ Ղերքէզները հաստատ
կրօն չունին, թէպէտ այլազգայ մօտ են. և շատը
այլազգ եղած են, այլ ուզածնուն պէս կերթան։
Ունին կերպ կերպ աւելորդապաշտութիւններ, և
զարմանալի սովորութիւններ ամէն ցեղ մէյմէկ կերպ։
Երբոր պատերազմ պիտի սկըսին՝ ոմանք մոսկովի
գերի կառնեն կը մորթեն իրենց աղջին հոգիներ-

բուն զոհ կընեն, որ պիտի մեռնին նոյն պատերազ-
մին մէջ. և երկնից ընծայ կընեն թափած արիւնին։
Ասոնք գիր չունին, ոմանք այլազգի գիր կը սոր-
վին. լեռները գերեզմանի քարերուն վրա գիր կայ
որ չի կարդացվիր. իշխանները կըսեն թէ հին գրը-
քեր ունինք։ Ղերքեզին սկիզն ինչպէս ըլլալը չգի-
տեն։ Կերևայ թէ են Յոնք կամ Վրացիք բնա-
կիչք կովկասու ըստ պատմութեան Պլինիոսի։
Կոստանդին պատմիչը զասոնք Կապարի կանուանէ,
որ արևելեան կողմէն եկած են. որով երկիրը Կա-
պարդա կոչվեցաւ։ Որոնց լեզուն տարբեր է մէկ ան-
ելն. զորօրինակ՝ Ծոհա աստուած. Լապա հայր. Լա-
նա մայր. Սաձ որդի. Փասոէ աղջիկ. Լահալ եղբայր.
Շոդի քոյր. Ոնքէ մարդ. Լայ աչք. Ձայ բերան.
Վրա սիրտ. Ամ ձեռք, և այլն։
Ընտիպի ապազաներն ալ հասարակօրէն այս լե-
զուն կը խօսին։ Խորենացին կը յիշէ Ամիսաղ և
Ամիշեղ, որ են Ամազապի ցեղք, և կը բնակին Կով-
կաս, և ոմանք ծովեզերքը կը բնակին. սակայն լեռ-
նաբնակներն աւելի վայրենաբարոյ ըլլալով ունին
արատաբոյ սովորութիւններ, կռապաշտական ջեր-
մեռանդութիւններ, և զարմանալի արարողութիւն-
ներ ամէն ցեղ մէյմէկ կերպ. շատ խնամք և սէր ունին
կանանչ ծառերուն վրա, միայն չոր ծառը կը վառեն,
և մեծապէս կը սարսափին մեծամեծ ծառերէն. այն-
պէս կը համարին թէ իբր հոգի ունին և տերունի սրբա-
զան եկեղեր են. նաև մեծ ջերմեռանդութիւն և
յարգութիւն ունին գերեզմաններուն վրա, միշտ
հոգուհացը պակաս չեն ըներ, յիշելով իրենց մե-
ռելներն և շատ հոգալով։
183. Վրիսթի, թաթարի ցեղ են, որ բարձր լեռ-
ներու վրա կը բնակին, օտարականը շատ կը սիրեն.
ուր աղջիկները կը հոգան և կը պատուեն օտարա-
կանը ամենայն պարկեշտութեամբ։ Այս ևս ուրիշ
ցեղ որ կըսվի Լեկիսոի. ասոնք ունին քրիստոնէական
նշաններ. մէկ աստուած կը ճանչնան, որ Տէրէ կը-
սեն, ուրիշ բան չեն յիշեր. կիրակին կը պահեն, գա-
րունն ու ամառը ծոմ կը պահեն. միայն մէկ ան-

գամ զոհ կընեն։ Ընդին քահանայի պէս ծեր, որ լեռը կը բնակի քարէ տաճարին մէջ։ որուն մէջ զարդերը արձաններ և գրեանք կան, ինչպէս տեսան։ Ամենք հիմա մնոկովի տակն են։

Օսսի ազգն է ինքնագլուխ, որոնք Յուստինիանոսի քովերը կը բնակին. բոլորը ծառայաշատ են. և շատ բանէրն ապազայի նման են. թէպէտ շատ թանձրամիտ են, համբանք չկրտեն. և ինչ որ ուտեն նախ իրենք կտոր կտրեն կը նետեն՝ ետքը կուտեն. բայց գիտեն անմնո

Ա. ՄԱՍՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ

186. Մադիթ պողազի, երսունըչորս մղոն հեռու է գըզըլդաշէն, որ հին ատենը կըսվեր Պօսբորոս Էուդրիծ, և Փանդիգաբէծ։ Այս նեղուցին երկայնութիւնն է տասնըուութ մղոն. բերանն է Մադիթ պուռնի և Մամանու ցամաքը։ Լէնի գալէին առջին նեղնալով իրեք մղոն կըլլայ. ուր աւազէ բարակ լեզու մի կայ նեղուցին մէջ խոզ քթի նման՝ որ կըսվի Շ՝ օղլա. որ թաթարերէն խոզ ըսել է։ Այս նեղուցն՝ երբեմն կը սառի։ Մադիթի աշխարհագրական լայնութիւնն է 45°. 10′։
Երկայնութիւնն է 34°. 55′։

187. Մաման, է իբր ցամաքակղզի արևելեան կողմն նեղուցին. մէկ կողմն է կուպանին ջուրը. մէկալ կողմն է կերձին նեղուցն. որ ներս մտած ըլլալով բարակ պարանոց մի կայ՝ Փոէնիկ կըսվի, այսինքն լեցված. երբոր գետը կառատանայ՝ այս ցամաքը շատ կը նեղնայ. որով Մէմիրուք Մամանին կը զատվի. որ է հիւսիսային մասը Մամանին Զալսու ծովուն վրա. ուր կայ հին բերդ. նոյնպէս Մաման ալ կան հին բերդեր։ Հոս տասներկու բերդ կայ եղեր Հինվիզին ժամանակը։

188. Զաղ, կամ Պէոէս փոքր ծով՝ սկսեալ Մամանու բերնէն կը վերջանայ Ցօնաւիս գետը։ Այս նէէն մինչև Փէթրիքլիփս հարիւր յիսուն մղոն է երկայնութիւնը. անկէ ալ մինչև Մայղան հարիւր յիսուն. իսկ լայնութիւնն է իբր երկուհարիւր մղոն։ Այս ծովուն շատ տեղը ծանծաղ ըլլալով արևելեան կողմէն նաւ չանցնիր. մէջը լայն անցք կայ, ուսկից կանցնին նաւերը (213)։

Այս ծովուն ջուրը երբեմն ներս, և երբեմն դուրս կը վազէ. երբոր հովը ներս կը փչէ, ծովը ներս վազելով կը լեցվի. երբոր դուրս կը փչէ, ծովն ի՛ջնելով նաւը կը նստի։ Մեծ ալէկոծութեան ատենը՝ ցամաք տեղէ

բուն տակը կերևնայ. ջուրը կիսով չափ աղի է, և կիսով չափ անուշ. իսկ Յօն գետին մեծ բոլորովին անուշ է, ուր կը վերջանայ այս ծովը. խորունկ տեղն է ինը գիրկ. անոր համար կը կոչվի նաև Մէօրթ լէճ։

Հին ատենը այս ծովուն տիրեց Մէյ անուանմամբ Պէկը, որ կը նշանակէ գազագ. ետքը Միհրդատ տիրեց, ապա Հռոմայեցիք և Ղինիվիզները, յետոյ Թաթարները և հիմա Մոսկովները։ Ասստի Մէյ ա նունէն Մէօրթ ծով ըսվեցաւ. որ ոմանք Մէէ-դրէա յունական բառէն կը հանեն, որ կը նշանակէ գայեակ, մէջը շատ ձուկ ըլլալուն համար։ Այս նշանակութեամբ Ակիւթացի թաթարները կըսեն Գ-ոբբաղ, այսինքն մայը կամ գայեակ ձկանց. վասն զի զարմանալի շատ՝ պարարտ՝ և խոշոր ձկներ կելլեն այս ծովէն, որ մեծամեծ ծովերուն մէջ չի կայ. ուրուն ջուրը տղմոտ պարարտ և քիչ աղի ըլլալուն համար՝ սև ծովու և Ճերմակ ծովու ձկներն ալ հոն կերթան կը խոշորնան։ Ուր յաձախ է երկայն ձուկն Մուրինա. երբեմն կելլէ մինչև քսանրվեց ոտնաչափ երկայն, և ինը հարիւր լիսլրէ ծանր կուգայ. ուսկից կելլէ շատ հաւկիթ, որ խաւեար կը շինեն։

189. ԹԻՄՐՈՒՔ բերդ՝ Թամանին մասը կը սեպվի՝ ազախու ծովուն կողմը. քառասուն մղոն անդին է Վրօցա ձկնարանը. ուր կան ձկնորսի տներ, նաև փոքր գետեր։ Ոմանք այս տեղերս կը կոչեն Ազոուէվ. ուր կը վազէ կուպան գետին Ազու թեը։

190. Ազխդար, և Պաղդար, նաւահանգստի նմանն ծոցեր են. ուր կը վազեն գետեր. և խազախի գեղերը կան այս կողմն։ Ասկէ անդին տեղ տեղ մանր լճեր կան, և ջրոտ տեղեր, որ անշուք և անքնակ են։

191. Պիսսակա, կամ Պէչէնան, է ընդարձակ գոգ կամ նաւահանգիստ, բայց մէջը քարուտ է. ուր կը վազէ գետ։ Հիները կը դնեն հոս Թիրամպ քաղաք, և Ռազդիս գետ։

192. Մուհանտիզ Պուրնի, իբր հարիւր յիսուն մղոն հեռու է Վրօցայէն. քովէն կանցնի Պէլլիսքա կամ Ալէղէնի գետ. ուր կայ մեծ ցամաք աւազուտ, որ կըսվի Մանխաք, Յօնաւիս գետէն պատճառած, որ

Ազախու բերանը կէսէն աւելի կը փակէ. հոս կըս-
կըսի շատ նեղնալ ծովը։

193. ՊԷՐՊԷՐ ԶԷՄԻՆ, Յօնաւիս գետին բերանն
ըլլալով գետին ջուրը հոս կը խառնըվի ծովուն հետ։
Անկէեւ կուգայ Պարա գումէ Ղալալաշ ծոց. ուս-
կից կը վազէ գետ։

194. ԳՈՒՇ ՊՈՒՌՆԻ, կամ Յօլէէա քիթ՝ Թայղա-
նու բերդին դիմացն ըլլալով տանըրութ մլոն լայն է
ջուրը։ Կաւ քառասունը հինգ մլոն անդին է Խաոէ-
ուր կայ բերդ, և Լյա գետ. մնա էն նաև Ղուրուր և
Գուպլի գետերը։ Հին աշխարհագիրներն այս կողմն
կը դնեն Կարգաւ Ազարա, Բադարու, Բամնլտիս,
և Դամէս քաղաքներն. նաև Ռոմնիթ, և Մառու-
պիոս գետերը։

195. ԱԶԱԳ, կամ Ազոֆ բերդ՝ հին քաղաք երևե-
լի և ամուր Յօնաւիս գետին բերանը Թայղանու դի-
մաց. որուն տիրեցին Հինեվիզները վեց հարիւր տա-
րի առաջ. ետքը անցաւ Թաթարներուն, և օսման-
ցոց. բայց 1642 ին խազարներն երեցին. օսմանցին
նորէն առաւ լաւ շինեց. հարիւր տարի ետև մոս-
կովն առաւ քանդեց, նորէն շինեցին. շատ վաճառա-
կանութեան տեղ էր։ Որուն անուամբն Ազաֆ կոչ-
վեցաւ միօտիս ծովը ետքի ժամանակս։

Հոս գետին բերանը երկու ցամաք կղզի ըլլալով
իրեք կը բաժնըվի. առջի թեւը Ռաստով հին բերդը
կերթայ, և վեր երթալով Արբեքս բերդին քով կը
միանան գետին բերաններն, ինչպէս կերևնայ աշ-
խարհացուցին վրա։

196. ԱՐԻՐՄԱՆ ԳԱԼԻ, կամ Ղերքէղ քիրման՝ աւե-
լի վերն է. տես վարը (198)։ Հիւսիսային կողմն ալ
կայ դիմացը Արիրման կամ Արբեքս, որ բերդ ըսել
է, Թաթարներուն ժամանակէն շինված են, և խա-
զախներ կը բնակին հանդերձ ուրիշ ազգերով։

197. ՅՕՆ, կամ Յօնաւիս, ըստ տձ. Թէն սոյէ, երևե-
լի մեծ գետ՝ կը բաժնէ Ասիա Եւրոպայէն. զի աս-
կեց մինչև Լեղոս գետն եգիպտոսի՝ է Ասիա։ Այս
գետ կելլէ Իվան օզերս ըՀէն ռուսաստանու, և հիւ-
սիսէն հարաւ, նաև արևելք երթալով վեց գետի հետ

կը միանայ, և շատ պտոյտ ընելով իրեք բերան կը բաժնըվի և կը վազէ Աղախու ծովը. ջուրն է պըզտոր և անշահ. բայց շատ ձուկ կը բերէ, մանաւանդ մեծամեծ մուռինաներ, որ կըբռնեն խազախները։ Յօնաւիս գետին աշխարհագրական լայնութիւն է 47°. 5'.
Երկայնութիւնն է . . . . . 39°. 40'։

198. ՉԻՐԲԻՋ ՔԻՐՄԱՆ. այսինքն ՀԷրքեղի բերդ, է գլխաւոր քաղաք խազախաց, Յօն գետին վրա շինած է վերը. որ երբ կը բարձրանայ ամէն դին ջուր կը կոխէ. ուր շատ վաճառականութիւն կըլլայ, ուր հազար տնէն աւելի կայ։ Աստկէ Էլան Թաթարք ու շինեցին նոր Քիրման, և շատ տեղ տարածվեցան։

Այս քաղաք է աթոռ խազախներուն Աղամանին. ուր կը պահեն իրենց զէնքը, և ամէն պատերազմական բաները. ուր կայ վեց եկեղեցի։ Բայց Յօնաւիս գետին քովի բնակիչները կըսվին Յօնաւիսեան խազախ. որ են Մոսկովի ազգէն, ինչպէս իրենց բարքը Լեզուն և կրօնը կերևցնէ. վասն զի առաջ ինքնագլուխ ըլլալով զատվեր են Մոսկովստանէն, և եկեր են այս կողմերս՝ խազախ Թաթարներուն երկիրներն առեր տիրեր են ասպատակութեամբ. և անոնց հետ խառնըվելով Խազախ ըսվեցան իբր զատ ազգ. և որովհետև խազախ Թաթարներէն յափշտակելով աղջիկ կառնէին՝ իրենց դէմքն ալ Թաթարի նման է, և շատ դիմացկուն և պինդ լուս մարդիկ են. երբոր մտքերնին բան մի դնեն՝ կտոր կտոր ըլլան իրենց խօսքը պիտի ընեն. գողութիւն ու աւազակութիւնն իրենց մէջ քաջութիւն կը սեպվի. և շատ վարպետ են, ինչպէս տեսանք։ Գրեթէ ամէնքը մօրուքաւոր են։ Իրենց երկիրն է ընդարձակ. մէկ ծայրը կերթայ Յնեքեր. առաջ խիստ շատ էր. ուր նին իբր հարիւր յիսուն փոքր քաղաք, որ Ալշոյ կըսեն. և իրենց իշխանը կըսվի Աղաման, իսկ սպարապետը կամ կոմսը Հէնման կըսվի։ Որոնք հիմա Մոսկովի տակն են, և զանազան ցեղ կը բաժնըվին. զորօրինակ Սեպերեան խազախ, Թէրքեան խազախ, Կրէպէնեան խազախ, և այլն։

199. ՀԱԽԻԶԵԻԱՆ, ինը մղոն վարն է Քիրման.

նէն, որ ՎԼԷՖԷԼ կամ խրիմու հայերը շինեցին լեռան վրա 1780 ին. ուր կան 2300 տուն հայոց, և վեց եկեղեցի. գլխաւորն է հրապարակին մէջ անուամբ սուրբ Լուսաւորչին. ունի վանք անուամբ սուրբ Խաչի, նաև դպրատուններ։ Մեռաջ այս տեղս կըսվի ՎՐԷԷՈՍԱՊԷ ՈՍՍԼՎ. որ բերդ ըսել է։ Ունի զանազան գեղեր. և շատ երկիր տվաւ Մոսկովը սահման այս քաղաքին։ Որովհետև խրիմ առնըվելին ետև մոսկովստանի մէջ նախ հոս եղաւ իրենց թնակութիւնը՝ Լեխէնէան անուանեցին հին նախիջևանին յիշատակ ըլլալու համար։ Սակայն օդը ծանր ըլլալով շատ մարդ մեռաւ. հիմա աղէկ ծաղկած է։ Պարն է Աքլօպօտա, այսինքն՝ Լոր գեղ. և ինը մղոն վերն է Մեգսայ աւանը, ուր կը բնակին զանազան ազգեր։

200. ԼՈՒԴԻԿ, ամուր բերդ է Տօն գետին առջի թևին վրա հիւսիսի կողմը. բայց մոսկովիները 1696 ին քակեցին. նոյնպէս Թականրօք բերդն ալ քանդեցին, որ Պետրոս Թագաւորն էր շիներ. բայց յետոյ նորէն շինեցին, և հիմա լաւ զարդարած է։

201. Թայղան, կամ Թանանրօգ քաղաք, ազախու ծովուն երևելի նաւահանդիստ և վաճառատեղին է. երկու հազար տուն կայ յոյն մոսկով խառն. ուր կայ գործարան մոսկովի նաւերուն, և է նաւատեղի Լախիջևանու, և այլ ցամաքի քաղաքներուն։ Ուսկից կելլէ երկաթ, ձուկ, խաւեար, և այլն։

202. ՊԷԿԼԷՉԿԱ, կամ Պրէօյա քիթ՝ Թայղանէն վար է. առաջն ծանծաղ և աւազէ քիթ ըլլալով՝ նըշանի լաթ բայերէ են հոն. և գետ կը վազէ մեծը, որ կըսվի Փէթրուշքա։

203. ՄԱՐԻՕՊՕԼ, կամ Մարիամոպոլէս, է փոքր քաղաք յունաց և մոսկովաց. ուր շատ վաճառականութիւն կըլլայ. ունի քիթ, որ ոմանք Սերէս գայա կանուանեն։ Այս տեղս վաթսունրուն մղոն հեռու է Թայղանէն և գեղեցիկ քաղաք է։

204. ՊԱԼԷՍՏՐԱ, հարիւր յիսուն մղոն հեռու է Թայղանէն, որ է իբր ծոց. բերանը Ֆինէռա դրաւ մոսկովը նաւերու համար։ Այս կողմն արևմտեան դին ցամաք լեզու կայ ծովուն մէջ, որ կըսվի Պէս-

սար գայլ, կամ ՓԷՐԲԷՆԼԷՖ։ Ուր կան աւազուտ տեղեր իբր կղզի կամ քիթ, որ կըսվին Պերպինա գայլ և Պէսաբէնաւ. ուսկից կը վազէ Ռէլիկէ գետ, այսինքն Ջէնկէլ։

205. ՊԷՕՐԲԼԷՐ, Եօթանասուն մղոն հեռու է փէթրէքլիփսէն. ուր է քիթ Պէօռէ պոյոն, այսինքն գայլի վիզ. որ է իբր ցամաքակղզի. և երկու կողմէն գետ կը վազէ։

206. ԹԱՌԼԻ ՊՍԻՌՈՒՆ, կամ Խայալի, աւելի վարն է և շատ քարոտ ծանծաղ է. որ աւելի ծովը մտած ըլլալով խրիմի կղզիին մօտեցեր է Ռրապատին դիմացը. և ունի գոգ որ ներս կերթայ, նաև լիմ. ուր կը վազեն Ռէրթէչէ և Պէօրթէչէ գետերը։ Մէկ մղոն վերն է Խայալի գեղ նոռայի թաթարներուն։

207. ԽԱԶԻ ՔԻՐՄԱՆ, առջի քաղաքն է Ջուէն անդին տասնրուբ մղոն հեռուն։ Ռնկէ կերթայ Ռէնէյի բերդ. ուր խրիմի կողմէն Ռրապատի ցամաք լեզուն այնչափ կերկընայ, մինչև այս բերդին մօտենալով նեղ բերան ձևացուցած է, որ թաթարը այս լեզուին Ղինէյէ կըսէ, այսինքն բարակ. որուն լայնութիւնն է կէս մղոն. այնչափ կը մօտենայ դիմացի ցամաքին, որ լաստով կանցնին դիմաց։

208. ԱԱՍԲԽ ՏԷՆԻԶԻ, ըստ հն. Պէչէ կամ Ռոդրէս, այսինքն Հոտած ծով. նաև կըսվի ՍիէլՁէմաէ. հարիւր մղոն հեռու է Պէօրքէրէն. որ է երկայն պտուտաւոր ծովակ լեցուն փոքր ցամաքներով. բերանն է նեղ Ռէնիցի բերդին և Ճինիչկէ լեզուին միջոցն. ուսկից կը հաղորդի Ռզախու ծովուն հետ, և ջուրն համարձակ շրջան չի կրնար ընել, նաև մէջը պտոյտ ըլլալով ջուրն անշարժ կը մնայ. անոր համար թաթարը Սասըխ, այսինքն հոտած անուանեց. նաև մէջն է ծանծաղ. մէկ ծայրը կը մօտենայ Ռէֆիէ հիւսիսային կողմի Ռրապատին, և մէկալ ծայրը Ջուէն բերդին, կամ Ռօլիւ տէնիզին (228)։ Մէջը կը վազէ Սուպաչ, Պօլկանաք և Դարասու գետերը։

209. Ջուն Գաբուն, կամ Պօղազի կը թարգմանի բերդ և դուռն. ըստ յն Դարբոս կամ Ռէրէկոբ. այսինքն խիստ նեղ, կամ խրամ բացված. ըստ տՀ. Ջոս պо-

ղաչէ. բերդն է քարաշէն և զօրաւոր՝ պարանոցին բերանը շինած. որ Մոսկովը չորս անգամ առաւ. իրեք անգամ ետ տվաւ, վերջի անգամ մնաց ձեռքը. պարանոցին մէջն է նեղ, որ կըսկըսի մեռեալ ծովուն վերի ականջէն, և կը հասնի մինչև միւս կողմը բերդին. և այս պարանոցով խրիմ կըլլայ ցամաքակղզի. պարանոցին երկայնութիւնն մեռեալ ծովուն վերի ականջէն դնելով կըլլայ իբր տասներկու մղոն. բայց բերդին քով իրեք մղոն կըլլայ հողին լայնութիւնը։

Ասկ բերդին առաջը խոր և լայն խրամ բացած է, որ կը հասնի մէկ կողմէն Սասըխ ծովը. մէկալ կողմէն Մեռեալ ծովը, և պարսպով ամրցած է։ Մինչոց տեղն է կամուրջ քարաշէն խրամին վրա, մէջ տեղը փայտաշէն, որ կը վերցընէին. քովը հին բերդ, նաև աշտարակներ կան պատաւարին ամրութեանը համար. մէջը կայ քառակուսի աշտարակ մեծ, որուն մէջէն գետնի ձամբայ կայ, որ քաղաքը կելլէ։

210. Բ.դ՝ ազախու ծովուն արևմտեան կողմն է Սասըխ ծովը և Օռ գափուն. վասն զի Սասըխին մէկ ծայրն է օռին քով, մէկալ ծայրը Բ.բապատ, որ ծուռ ձևովն դառնալով՝ հարաւային կողմն Վ.էֆէկին կը մնտենայ իբր երսունըվեց մղոն հեռու ցամաքի ձամբայով։ Տէս աշխարհացուցին վրա։

211. Բ.ԲԱՊԱՏ բերդ՝ Ղնիչկի երկայն լեզուին միւս ծայրը շինած է. ուսկից կըսկըսի նոյն ցամաք լեզուն և կը հասնի դիմացի ցամաքը, որ բոլոր աւազ է. տեղ տեղ լեռ կայ, որ ամառը աղ կըլլայ։

212. Գ.ԱԶԱՆ ՏԻՊԻ, երևելի քիթ է Բ.բապատէն ասդին, և ունի բերան կամ գոգ՝ իբր նաւահանգիստ, ուր նաւ կը կենայ. առաջ քաղաք կար հոս։

213. Բ.ՅԱՆԷ, կամ Բ.Գէնոթ պոռոնդ, լիսուն մղոն ասդին է Բ.բապատէն. անկէ կուգայ արևմտեան կողմէն Նորէն Ղ.օսբօրոս կամ Թ.ադլեթի բերանն. որով կը լմննայ ազախու ծովուն շրջանը. որ Տ.օնաւիս գետէն սկսեալ մինչև հոս իբր 532 մղոն է. իսկ նաւու ընթացքով առանց եղերքը մնտենալու պակաս կըլլայ։ Բ.ըրիանոս 9000 ստատի կը դնէ բոլորը շրջապատը Բ.զախու՝ թերևս ամէն ծոցերը համրելով։ Բ.Շ-

խարհագիրները կը դնեն երկայն 100 փարսախ. լայն 25. և շրջապատն 700 մղոն. որ է Ճիշդ։

214. ԼԻՆԻ ԳԱԼԻ, կամ Ալենիոլ, է զօրաւոր բերդ Լ.զախու բերդին արևմտեան կողմն օսմանցիին շինած 'ի հիմ. 1114ին։ Լ.ռաջին է նաւահանգիստ. բայց շատ ծանծաղ ըլլալուն համար բեռնաւոր նաւ ներս չի կրնայ մտնել, մինչև որ չի թեթևնայ։ Հօրոսկոպ իրեք մղոն նեղուցին ներսն է. ուր կայ հին բերդ և եկեղեցի. առաջ շէն տեղեր էին։

215. ԿԻՐԾ, կամ Կէրշ. ըստ յն. Պոֆէծ, կամ Պոմպոֆիգոֆէծ քաղաք, ինը մղոն հեռու է վերինէն բարձր պարսպով լեռան կողը շինած է. բնակիչներն էն ամէն ազգէ և իրեք հարիւր տուն կելլեն։ Շատ զօրաւոր և հաստատ է բերդն արևելեան կողմն եօթն աշտարակով. ուսկից կանցնին Լ.զագ գացող եկող նաւերը (186)։ Լ.այս բառ հայու կիրծ անունէն ելած է. որ կը նշանակէ նեղ անցք. զի հոն ցամաք լեզուն նեղցուցեր է անցքը։ Իսկ տասը մղոն ասդին է Պամիշ պուռնի. որ երևելի տեղ չէ, բայց կան անչուք տներ։ Կարելի թէ պոնտոսի հին թագաւոր ասոնիստ քաղաքն այս կողմն էր, որ յիշեցինք (29)։

216. ԹԱԳԼԻԹ ՊՈՒՌՆԻ, բերանն է նեղուցին, և է երկայնութիւն նեղուցին. որ ոմանք տասնրութ ժամաւ հեռու կը դնեն Լ.յանէէն. բայց Ճիշտ չափած չէ. այս քիթ Թամանին դիմացն ըլլալով բուն Թագլիթին բերանն է Խրիմու կողմէն. ունի նաւահանգիստ, բայց ծովուն մէջ քար կայ։ Ինը մղոն ասդին է Հաճիլար լիմանի, որ է սև ծովուն վրա։ Լ.ուելի ասդին է Լ.էլչէն գայա. որ է ապառաժ կղզի իրեք մղոն ներս ծովուն մէջ։ Լ.ոնդին ուրիշ քար կայ Լիման գալէ. ուր կայ Լ.ենդէկա, այսինքն աղէհան Խրիմու ցամաքին մէջ, որ Գոստոսին կը քարանայ։

217. ՆԵԱՎԻԹԱ ՊՈՒՌՆԻ, կամ Թառսիա, քառասունուերկու մղոն դէպ 'ի արևմուտք է. ասոր գոգին մէջն է Վրէֆէ։ Լ.ըրիանոս այս տեղերս աւրած գտաւ. ուր առաջ երևելի քաղաք կար, որ Լէնոս. ները շիներ էին կըսէ։ Հոս կը դնէ Պազէքաս քաղաքը։

Լ.ոդ՝ ազախու ծովուն, և տանաւիս գետին բոլոր-

տիքն եղած աշխարհներն սկսեալ ապազայեն մինչև դունեա՝ կըսվին ընդհանուր անուամբ Սարմատիա, որ է Թաթարստան. զի յունական բառս Սարմատ՝ մողեսակն ըսել է, որ է փոքրիկն. զի Թաթարներուն աչքը մանր է, երեսը բոլոր, և քիթը տափակ. նաև այնչափ ընդարձակ աղդ է, որ մեծ Թաթարին ծայրը մինչև Չինուսմանչին կը հասնի։

Վոչ թե՝ կըսվին անոնք, որ կը բնակին Խրիմու կողմերը. ոմանք վրանաբնակ ըլլալով տեղ տեղ կը շրջին դաշտերուն կամ անապատին մէջ. և ոմանք գեղերը և քաղաքները կը բնակին. որ շրջս ցեղ կը բաժնըվին. Պուճագ Թաթար. Ոզու Թաթար. Գրըմ Թաթար, կամ Գազան Թաթար. Նողայի Թաթար. ինչպես իւրաքանչիւրն իր տեղը կը պատմենք. որոնք ամենը շատ աշխատաւոր և առողջ մարդիկ են. բոլորը խաշնարած և երկրագործ են։

218. ԽՐԻՄ, ըստ տաճ. Գրըմ, և ըստ յն. Գրէմոս. հին ժամանակը կըսվեր Տաւրիկեան ցամաքակղզի. և ծովը կըսվեր Սկիւթացոց ծով. ուր արևմտեան և հարաւային կողմն Սև ծով պատած է Խրիմու կղզին, արևելեան կողմն Ազախու ծովն է պատած. իսկ հիւսիսային կողմն մեռեալ և հոտած ծովերն են պատած. ուստի Խրիմ միայն Ոռին պարանոցով փակած է մոսկովստանու ցամաքին. ինչպես կերևնայ աշխարհացուցին վրա։ Ուր կան քանի մի միջակ գետեր. զորօրինակ Գարասու, Խալէ սու, Նէլմա, և այլն. նմանապես կան և լեռներ. ինչպես են՝ Այ պաղէ, Այու պաղէ, Զաբբ պաղէ, Գարա պաղ, Աղարմեշ պաղ. այս վերջի լեռան ծայրը խոր և մեծ վիհ կայ։ Խրիմու սարերն և նաւահանգիստներն իրենց տեղը կը պատմենք համառօտ. զի հիմա շատ տեղը քանդած է, քիչ քիչ կը շինենայ։

Խրիմու կը տիրեին առաջ սկիւթացի Թաթարները. իսկ Տօնաւիս գետեն մինչև Կովկասու լեռը վասբորոսեան յունաց ձեռքն էր. որոնք շատ նեղութիւն քաշելով Թաթարներէն մնան Միհրդատեն տակը. յետոյ յոյն թագաւորները տիրեցին. վերջը Չինիվիզներուն անցաւ։ Այս յամի 1471. առին Օսման-

ցիք և գրին Մահաթար խան կառավարիչ։ Յամի 1698. մոսկովիները կոխեցին Ազին բերդն առին նորէն տվին. անկէետև շատ անգամ ելան խրիմու վրան։ Վերջապէս Շահին կիրա խանն հանդէսով տվաւ Խրիմու կղզին Մոսկովի Թագուհիին 1779ին. ապր. 21. մինչ զի՝ Միրզաները և գլխաւորներն երդում բրին, որ հնազանդ և հաւատարիմ մնան Մոսկովի Թագաւորին. և ուրախ ամիսն ետև Օսմանեան տէրութիւնն ալ ստիպեցաւ ընդունելու. և այսպէս մինչև ցայսօր մնաց Մոսկովիներուն ձեռքը։

Մահաթար խանը կըսվեր Ղէրէյան խան. այսինքն գերագոյն տէր, և կը նստեր Պաղչէ սէրայ գլխաւոր քաղաքը. բայց 'ի զանազան իշխաններէն իրեք իշխանապետ ուներ. որ խանին արու ցեղէն ըլալով կըսվեին Սուլթան. առջի գլխաւորը կը նստեր ՂէմՋիգ, և կըսվեր Պաղչա սուլթան, որ երկրորդն էր խանին. երկրորդը կը նստեր Պարասու, որ կըսվեր Գորբատին սուլթան. երրորդը կը նստեր Օռ, և կըսվեր Օռէնի սուլթան. և այս կարգերն անցնելէն ետև կըլլային խան։

Միրզաներն էին իգական ցեղէն խանին. որոնք թէպէտ իշխանաւոր էին, բայց խան չէին կրնար ըլլալ։ Իսկ խանզատէները տղայութեան ժամանակը Ղերբեզ կը ղրկէին որ կրթըվին. և երբ չափահաս կըլլային կուգային խանին (182)։

Օսմանեան Թագաւորը շատ պատիւ կուտար խաներուն՝ Թագաւոր անուանելով զանոնք. երբոր պատերազմ կունենար ուրիշին հետ՝ կը ղրկէր խանին քառասուն հազար ոսկի և զարդարած Թուր. իսկ խանը կը պարտաւորէր օգնութիւն երթալու Թագաւորին, մինչև երբեմն հարիւր հազար զօրքով։

Խրիմու կղզին չորս երևելի քաղաք կար ծովին ներս. առաջինն էր Պաղչէսէրայ. ըստ հն. Նեապոլիս. ուր իբր մայրաքաղաք կը նստեր խանը. և շատ երևելի շինքեր Ճամիներ և պալատներ կային. որ ըստ ոմանց Միհրդատ շիներ էր։ Երկրորդն էր ՂէմՋիդ. այսինքն Սպիտակ Ճամի. ուր կը բնակէր անդրանիկ որդին խանին։ Երրորդը Պարասու, կամ

Դաբաղաղաբ. որ էր մեծ քաղաք բազմամարդ. քովէն գետը կանցնի, և հիմա է քաղաք և բնակութիւն ամէն ազգաց։ Ուր շատ տուն կայ մեր ազգէն և ունին եկեղեցիներ։

Զորրորդն էր Լանէ գրբմ, առաջ երևելի էր. հիմա անշուք է։ Լանկ ծովեզերեայ մայրաքաղաքն էր Վրէթէ, Սուտաղ, և այլն. որ կարդաւ իրենց տեղը կը պատմենք, թէպէտ առջի շինութիւնը չի կայ։

Դրդ՝ խրիմու կղզիին մէջ ամէն քաղաք մեր ազգէն կան և վաճառականութիւն կընեն Պոնտոսի և Մոսկովստանու հետ. բոլորն ալ առուտուրի շատ ճարպիկ են, և ամէն տեղ բնակութիւն ունին։ Յաթաբրին ժամանակը շատ երևելի վաճառականներ, և փարթամ մարդիկ կային. հիմա ցրված են Լեհաստանու կողմը և Մոսկովի մէջ, ուր քանի մի քաղաքներ շինեցին. ինչպէս է Լախիջևան, Գրիգորիուպոլիս, և այլն։ Տես իրենց տեղը։

Ջ. ՄԱՍ ՍԵՒ ԾՈՎԼՈՒ

219. Վէֆէ, կամ Վաֆֆա, Եօթանասուն մղոն հեռու է Թագլիթէն, տասնրուբ Ղեավէդայէն. և է մայրաքաղաք խրիմու կղզիին, երկայնաձև շինած ծովուն քով։ Առաջ շատ երևելի բերդաքաղաք էր բազմամարդ. երկու ծայրը նաւահանգստին երկու բերդ ունէր կրկնապարիսպ, որ կըսվէր Թէոդոսիա Թէոդոս կայսեր անուամբ. որոնք հինգերորդ դարուն տիրեցին։ Իսկ Թաթարները Վաֆֆա ըսին, քրիստոնէից Ֆեաֆէր անուն տալով. որ արապերէն անհաւատ ըսել է։ Այս հին քաղաք շինած էր արևելեան կողմն խրիմու, նաւահանգիստն է մեծ, բայց շատ խոր չէ. և ոչ հարաւային հովէն ապահով։

Հին ատենը հոն էր Արտեմիայ կռատունը. շատ զոհեր կընէին. ուր օրէնք կար թէ՝ ով որ օտարականն հոն երթայ նաւով, այս կուռքին զոհ կընէին. նշան է թէ բազմամարդ ըլլալով ամէն բան կար, դուրսէն բանի կարօտութիւն չունէին։ Թաթարներուն ժամանակը միայն երսուն հազար գերի կար, որ կը ծառայէին գեղերը. նաև հազար երկու հարիւր հայու տուն կար. ունէին ժամ և ժամատուն. ինչպէս տեսանք հոն գրված յիշատակարաններն. քանը ընչորս եկեղեցի ունէին քարաշէն. գլխաւորներն էին Սուրբ սարգիս մայր եկեղեցի, Սուրբ յարութիւն, Աստուածածին, Լուսաւորիչ, Հրեշտակապետ, և այլն։ Ուր նահատակեցաւ իբր երկուհարիւր յիսուն տարի առաջ Պարոն լոյս իշխանն մեր. ինչպէս կը պատմէ Սրթանէս վարդապետ. * Այս ձեռօքս գրեցուեցի, ե՛ի գերեզման հանգուցի։

Յոյնք ունէին տասնրուբ եկեղեցի. նոյնպէս Ճինեվիզներն երկու հարիւր տարի տիրելով շատ երևելի շէնքեր, և ութ քարաշէն եկեղեցիներ շիներ էին ժամանակով. հիմա բոլորը քանդած են. քաղաքին մէջն է խորունկ գուբը. ուր կը հաւաքի անձ-

բևի ջուրն, որ կը խմեն բնակիչները։ Ամառ ամէն բան առատ էր, մինչև կրսվէր շտեմարան յունաց. հիմա կելլէ ցորեն, եղ, երկաթ, ձուկ, կաշի, խաւ. եար, և այլն. որ կուգայ Ազախն։

Ըստ Հերոդոտոսի նախ յոյնք կը բնակէին այս կողմն, որ վաճառականութիւն կընէին տրապիզոնցոց հետ, և ինքնագլուխ էին. յետոյ Ակիւթացի թաթարներն շատ նեղութիւն քաշելով Միհրդատին ընկան, որ նաւախումբ մի ղրկեց Վրէֆէի կողմն, ու տիրեց մինչև Գազան տիպի. ուսկից ամէն տարի կը հանէր եօթը հարիւր քսան հազար քոռ ցորեն և երկու հարիւր հազար ունկի արծաթ, և անով շինեց Դէպատորիա քաղաքը. նաև մինչև կովկասու լեռները միացուց իր տերութեան հետ։

Միհրդատէն ետև անցաւ Հռոմայեցոց, և յոյն կայսերաց. որոնք անհոգ ըլլալով թաթարներն էկան կոխեցին քանդեցին։ Յետոյ Ճինիվիզներն առին Վրէֆէ և այնչափ վաճառականութեամբ ծաղկեցուցին, որ նման էր Սատամպոլու։ Անոնցմէ ալ առին վենետիկցիք 1297ին. յետոյ նորէն տվին։

Իսկ 1474ին առաւ Սուլ. Մէհէմմէտ թաթար զօրքով. որ հպատակ էին Պաթու խանին Ճինկիզխանին սղտի որդուն։ Ուստի այս տերութիւն միացաւ Գազան թաթարին հետ մինչև Տեվլեթկիրա խանն. իսկ 1779ին անցաւ Մոսկովիներուն, որ քանդեցին Վրէֆէի բերդը և աւրեցին այն երևելի մայրաքաղաքին վայելչութիւնը, ուր այնչափ փառաւոր շէնքեր կային։ հիմա քիչ քիչ կը շինեն միակարգ ծովեզերաց վրան. բայց բնակիչ քիչ կայ, մանաւանդ մեր ազգէն. որ բոլորը վաճառական են պոնտոսի, և ուրիշ տեղաց։

Վրէֆէի աշխարհագրական լայնութիւնն է 44°. 43′։
Երկայնութիւնն է . . . . . 33°. 41′։

220. Կիւկաթլամասի, կամ Լանկալամա, է արևմտեան քիթ Վրէֆէի նաւահանգստին. որ թէպէտ արևմտեան և հիւսիսային հովին ապահով է. բայց հարաւային և արևելեան հովին ապահով չէ շատ։ Լթենքոյ քարը շատ հեռու չէ. ուր երկու գետ կը

վաղէ. անդին է Արկկնոթ քիթը։

221. Սուսաղ, երսունըվեց մղոն անդին է Վէֆիէն. ունի նաւահանգիստ, և բարեբեր տեղ է. առաջ շատ շէն էր, հիմա այնչափ չէ։ Անի քաղաքն աւերվելէն ետև հայերը նախ հոս բնակեցան։ Կայ այսպիսի յիշատակարան Ճաշոցի մի մէջ. * Կոպարեցաւ 'է Նուռականիս հայոց ուռն հարեւբ և հինգերորդի ամսեանն օգոստոսի, որ օր եէ ամսոյն, 'է հայրապետութեան պեռան Անիւնարայ. յեպիսկոպոսութեանն աբէիականէն որ Պոեֆանոսի և 'է նագաւորութեանն Լոսպանդիանոսի 'է ջաղաս Սորքաղն ընդ հովանեաւ սուրբ Պոեֆանոսի նախավկային մեծի։

Այս միջոցի ծովեզերքը լեռներ են. տեղ տեղ քիթ ըլլալով նաւահանգիստներ կան. ինչպէս են՝ Աղուշդա, Լանպադ, Այու տաղն, Գալիթա, Կուրզուֆ քիթ և նաւահանգիստ, Այա սաբ, Արերտիվէն այաղն, և Գայթի պուռնի։ Այս տեղերս ամառը միայն նաւ կը կենայ։

222. Պալըգլաւա, ըստ Հն. Բալագէան, երկու հարիւր մղոն հեռու է Վէֆիէն, և ունի լաւ նաւահանգիստ ընդարձակ և ապահով քաւական մեծամեծ նաւերու. նաև բերդ Այա սարին տակը։ Այս նաւահանգստին բերանը կղզի մի կայ Պոնեօղ գայա. նաւն զգուշութեամբ ապառաժներէն ներս կը մտնէ. յետոյ արևելք դառնալով կերթայ բուն նաւահանգիստը։ Բնակիչներն իբր իրեքհարիւր տուն կելլեն։ Աբրիանոս Տաւրոսայ և Սիմբոլի նաւահանգիստներ կը յիշէ հոս։ Տես տակ. Գ։ Անոնցմէ պուռնի, է քիթ, կամ է մէկ ծայրն Այային՝ վեց մղոն անդին. ուր կայ վանք սուրբ Գէորգայ։

223. Ֆիլիպոս Գուրնի, երևելի սար է խրիմին՝ քսանըչորս մղոն անդին Պալըգլաւային. առաջը ծանծաղ ըլլալուն շատ դժուարաւ կանցնին նաւերը. իսկ նաւահանգիստն է սարին ներսն, որ կըսվի Համամ լիմանի, և բերանը կըսվի Լվլիթա պողազի։

224. Սեուաստաբոլ, և Հ՝ Օրդունա, տանըրութ մղոն հեռուն պատեան և՝ ընդարձակ նաւահանգիստներ են մեծ գոգին մէջ. ուր մոսկովի նաւախուռմբը կը կենայ, և կայ բերդ, նաև բնակիչ. որ

կըսվի Ա.գեաա Ճերմակ լեռներուն համար։ Հոս է մսսկովին մեծ գործարանը նաւուց։ Ա.նկէ անդին է Պաղպուռուն, և Լվլեթա նաւահանգիստ փոքր։ Ա.ըրիանոս կը դնէ Պալոսի նաւահանգիստ։ Ա.յս ծոցերուն մէջ կը վազեն Լաչիսու և Լվմա գետերը։ Ա.յս տեղերն հիմա փոքր աւաններ են. գրեթէ ամենայն ազգ կը գտնի, և առուտուր կընեն։

225. ԿԻՕԶԼԷՎԻ, կամ Լսօսլօվ, եօթանասուն մղոն հեռու է Ֆիլէնկէն. ունի նաւահանգիստ արևմտեան կողմն խրիմու. ուր կայ հին բերդ. և է քաղաք վաճառականութեան ցամաք լեզուի վրա շինած ծովեզերքը. առաջ իրեք հարիւր տուն հայ կար, հիմա քիչ են, Պարայի հրեայ շատ կայ։ Ա.սոր քիթն է Օէյրուան պուռունէ, որ Պօյնաթ կըսվի։ Ա.ըրիանոս այս տեղը Ա.մֆիթիոս կը կոչէ, այսինքն աղէհան. որովհետև տեղ տեղ լճեր կան մինչև եօթն մղոն մեծ. ուր օգոստոսի սկիզբն ջրին մէջ որդ կը գոյանայ, նշան է թէ պիտի աղ ըլլայ. յետոյ ջարդըվելով որդը քիչ մի կը կարմրի ջուրը. ապա քարանալով աղ կըլլայ։ Այրբոր որդը կը տեսնեն տեղացիք՝ մեծ ուրախութիւն կընեն առհասարակ։

226. ՖՕՌՕԶ ՊՈՒՌՆԻ, կամ Լսէի պօպպուռուն. ըստ հն. Պօփէնօֆանուռէ. որ է երկայն քիթ դէպ'ի Օզու ծռած Մեռեալ ծովուն բերանը. և հեռու է քառասունեւերկու մղոն կէօզլէվէյէն։

227. ԼՍԿԻ կամ Ֆնարիսան ափէնէդ, ութսուն մղոն հեռու է կէօզլէվէյէն. ունի լաւ նաւահանգիստ արևմտեան կողմն, ուսկից կըսկըսի Մեռեալ ծովը։ Ա.սկէ անդին է Լսկի եալիթա. և մինչև Օզու երևելի քաղաք չի կայ. դիմացն է Պրզրլ գամիշ։

228. ԼՕԼԻՒ ՏԻՆԻԶԻ. ըստ յն. Լեէրօբէնա, է ընդարձակ գոգ սև ծովուն. լայն իբր յիսուն մղոն, երկայն իբր հարիւր մղոն. որ կը վերջանայ երկու ծայր կամ ականջ. վարի ծայրը կըսվի Պալէյ խրիմու կողմը. վերինը կերթայ Օռա գաբուն. ուսկից կըսկըսի Օռին մեծ խրամը. այս է բուն ծայր Մեռեալ ծովուն, ուր կը վազէ Կալանծա գետ։

Այս այս հիւսիսային ականջը բոլորովին աւազ լե-

ցուն է ընդարձակ տեղ։ Ուստի շատ վտանգաւոր ըլ-
լալով բացին կանցնին նաւերը. թէ որ այս Մեռեալ
ծովը նաւ մտնէ, շատ դժուար կաղատի։

Այս ծով առաջ կըսվեր Կարբինիկան ծոց. ուր կար
Կարկինէ քաղաք թաթարաց. որուն անուամբն այս-
պէս կոչեցին այս խորշ և ծոց պոնտոսի. որպէս կը
բերէ և Խորենացին։

229. Մէնկուէնթ, է քիթ, և ունի ծոց մեռեալ
ծովուն ներսը. ուր կայ հին բերդ և գեղ. որուն դի-
մացն է Լալենաձ փոքր կղզի անպէտ։ Հիւսիսային
դին երկու փոքր գետ կը վազեն, և Ղեթերլեկ մեծ-
կակ գետ։ Անկէ անդին է Պալջիք, և անդին Ոռ։
Այս հոս կը վերջանայ խրիմու կղզին, որ եռանկիւ-
նաձև ըլլալով միայն Ոռին նեղ ցամաքովը փակած է
Մոսկովստանու. անոր համար կըսվի Պերեսոն խրիմ.
այսինքն ցամաքակղզի խրիմու. բոլոր շրջապատն է
իբր եօթնհարիւր մղոն։

230. Մեռեալ ծովուն հիւսիսային կողմն է դաշ-
տավայր Ոզուի. ուր է թաթէնթրէկ պուռնի, որ Աղամ-
ջիդին դիմացը կիյնի. որուն դիմացն է թաթէնրէք ապա-
ռ, կամ Մանրաբլաբ. որ երկայն բարակ լեզուներ են
ծովուն մէջ, մինչև կը մօտենան Դրլպուռուռնին իբր
հարիւրերսուն մղոն երկայն. ուր գետերուն տիղմը
աւազէ կղզիներ շիներ է. միջոցը նեղուցի նման գո-
լով՝ մանր նաւեր կանցնին։ Այս նեղուցը Էպոուխ
կըսվի, և հինգ բերան ունի. թէնթրէին քիթին
վրա լաթ բացած է նշանի համար. ուր շատ ծան-
ծաղ է ջուրը։ Տես աշխարհացուցին վրա։

231. Դրլպուռուռուն, ըստ յն. Դաֆնոգաղոր, է բա-
րակ սուր քիթ արևելքէն արևմուտք երկնցած օզուի
նաւահանգստին բերանը. հեռուէն մտզի նման բա-
րակ կերևնայ. անոր համար ըսվեցաւ Դրլպուռուռուն.
մէկ կողմն է սև ծովը, մէկալ կողմն է Ոզուին լիմը.
ծայրն ունի լաւ բերդ տաճկէն մնացած. որ մոսկովն
առաւ 1774 ին։ Այս քիթն ինը մղոն դառնալով
Ոզուին նաւահանգիստը կը մտնէ։ Այս տեղ հին
ատենը կըսվեր Տրօմաս ակրէնոս, այսինքն ընթացք
Աքիլլեայ. զի Աքիլլես հոն կրթուելիւն կընկը կը-

սեն։ Բրեմտեան կողմն քթին՝ Սուրբ ասր կը կոչէ Պաղոմէոս։ Պլինիոս այս քիթն ուռթսուն մղոն երկայն կը դնէ. որ հեռու է Ֆօռօզէն իբր հարիւրվաթսուն մղոն։

232. Գրըպուռունէն կամ օղուի բերանէն ներս շատ ընդարձակ և պատուական նաւահանգիստ է, որ կը վերջանայ մինչև Տնէբէր գետ երկայն իբր քսանը-հինգ մղոն, և լայն չորս մղոն. որ կրսվի Յէման կամ Ոչս սուրյ։ Բրրիանոս այս կողմն կը դնէ Տամիրա-կա քաղաք. որ Տամիրիս թագուհին գթաց շիներ էր։

233. Տնէբէր, կամ Դնէբէր. ըստ հն. Տանաբրիս կամ Բորիսթենէ. ըստ տձ. Դրէրսօն սուրյ, է երևելի մեծ գետ, որ կելլէ Վօլքանք անտառէն Սաքսոնիայի, և անցեալ Ռուսիստան, և անապատն նողայեան թաթարաց կուգայ օղուի հիւսիսային կողմէն Յէման լիճը կը ձևացնէ, և Գրըպուռունին բերանէն սև ծով կը վազէ։ Ջուրը քաղցր է և ձկները մեծամեծ և զանազան տեսակ. մէջը շատ կղզիներ կան. կամուրջ մի ունի 1638 քայլ։ Այս գետին արևմտեան կողմն է Դրէրսօն բերդն. որուն քովէն կը վազէ Ինկուլ գետը. նաև ուրիշ բերդ ալ կար շինեալ հիմ. 1090։ Հինները կը յիշեն Բորիսթենիս քաղաք. ուր կար հին ժողովուրդ նոյն անուամբ. նաև այն քաղաք կրսվեր Ոլբիա։ Տնէբէր գետին վերը Գ օյ սուրին վրա է Սատուրինեսալա քաղաքը. ուր 1779ին Խրիմու հայերէն հարիւր վաթսուն տուն գնացին շինեցին Մոսկովի թագուհիին անուամբն. ունին երկու եկեղեցի, և օրէօր կը ծաղկին. երկիրն է բարեբեր, և ունին ամէն հարկաւոր բան. որմէց նաւատեղին (Խսկելէն) է Դրէրսոն. այս նահանգը շատ խազախ կայ։

234. Պօկ, ըստ տձ. Գգոս, ըստ հն. Իբանին երևելի գետ, կելլէ Լեհաստանէն և օղուի մօտ երկու ճիւղ կը բաժնվի ու հիւսիսային կողմն կը վազէ լիման լճին մէջ. ասոր մէկ փոքր ճիւղը կերթայ Փերէզլէն. որով իբր ցամաքակղզի կրլլայ Ոչզու։

235. Ոչզու, է երևելի ցամաքակղզի հիւսիսային ծայրը լիման լճին և գիմացը գրըպուռունին։ Ըստ Գրը՞. Դրէրսօնիսոս Ռուբէնի կրսվի, այսինքն ցամա-

քակղզի. ունէր անառիկ և զօրաւոր բերդ լեռան գլուխը շինած. քսանը հինգ ոտնաչափ բարձր էր պարիսպը. քաղաքը բերդէն վարն էր. որ 1788 ին Մոսկովն առաւ քանդեց. ուր առաջ քսանը հինգ հազար բնակիչ կային ամէն ազգէ. հայերն էին քառասուն տուն, ունէին նաև եկեղեցի։

Բ. այս երկիր առաջ կըսուէր Մէսոպա, և կը հասնէր մինչև Գ. Ս. Գ. քիլիսէ՝ հարիւր քսան մղոն երկայն, և հարիւր լայն. այս կողմի թաթարներն իրենք կը բաժնըվին՝ Օզու թաթարի, Պուճաղ թաթարի, Տօպրուճա կամ՝ Նոգայ թաթարի. և երկիրը կը հասնի մինչև Տօնաւիս գետ, որ կըսվի Բոսպոր Խոբոս։ Շատ բարելից և առատ երկիրներ են. մանաւանդ օգուն չառնըված ամէն կերպ առատութեամբ լեցուն էր։

236. ՓԷՐԷԶԷՆ, կղզի է օզուի ընդ ինն բերանը. ուր նաև կրնայ կենալ, և քովը կը վազէ Փերեզէնն գետը։ Հոն է Ռաձէ նաւահանգիստը փերեզէնին՝ լայն երկու մղոն. ուր նաև կը կենայ ապահով։ Ընկէ անդին է Լիձը Տէր Էօլ. և արևմտեան կողմն է Հասան քալա հին բերդը։ Տասնըութ մղոն անդին է Պապա հասան Եասլբի. ուր կայ ծոց և գեղ։

237. Օտէսա, ըստ հն. Օդէսոս, և ըստ տձ. Խօճապէյ, յիսունըչորս մղոն հեռու է Օզուէն։ Բ. առաջ անոնցմէ տեղ էր. մնսկոմն առաւ շատ զօրացուց. նաւահանգիստը ապահով և լաւ շինեց. բերդը ամրացուց, և այնչափ երևելի շէնքերով և քաղաքականութեամբ զարդարեց, որ հիմա եղաւ երևելի վաճառականութեան քաղաք Եւրոպական. նաւահանգիստը լեցուն է նաւերով, շատ ցորենի առուտուր կըլլայ։ Բ. ձէլիք լիձը մօտ է հոս։

238. Լանրգ փալանկա, շատ հեռուն չէ. որ է հին բերդ քանդած. որ կըսվի նաև Լէնի քալանկա, այսինքն Նոր գղեակ։ Բ. այս աւան բլուրի վրա շինած է. ասկէց մինչև Բ. գքիրման ընդարձակ դաշտ է Պուճաղ թաթարաց. և իրենց երկիրը կը հասնի մինչև Դունա գետ հարիւր քսան մղոն երկայն։ Լրկու չափաւոր գետ կը վազէ Պ. ահիրձէ, և Բ. ձիտերէ։

239. Ա.ԳԲԻՐՄԱՆ, Է երևելի և զօրաւոր բերդ թաթարաց՝ վաթսուն մղոն հեռու Օտէսայէն, և իրեք մղոն հեռու սև ծովէն. մէկ կողմը կայ ահագին խոր խրամ. մէկալ կողմն է Դուռլա գետը, որ առաւ Սուլ. Պայէզիտ 1484 ին. ուր ամէն ազգ կը բնակին. հայերն ունին եկեղեցի։ Ա.գբիրման սովտակ բերդ ըսել է. ոմանք Պէլգօրօտ կըսեն. իսկ Մոլտովանցիք Ձէրտաբ ալտա կըսեն, որ նոյն ըսել է։ Ա.յս քաղաք ունի պատուական նաւահանգիստ կամ գոգ, որ կըսվի Ա.գէրման պոլշէ. ուր մեծ նաւեր կը մտնեն, թէպէտ բերանը քար կայ. որ կը վերջանայ Տնեստրը գետ։ Ըստ Պտղ. հին ատենն երկու քաղաք կար հոս։ Դիրաս էր հիւսիսակողմն Ա.գբիրմանու, և Լիմնասոս հարաւակողմն։

Տնէստրէր կամ Դնիստրա երևելի մեծ գետ սև ծովուն՝ ընդարձակ միջոցով կուգայ Լեհաստանի կողմէն. և կանցնի Կամէնից քաղաքին քովէն Ա.գբիրմանու ծոցը կը վազէ. որ հին ատենը կըսվէր Տիրաս կամ Նէսթր. որուն վրա շինած է Ներսը 1792 ին Դորիգորիպոլիս քաղաքն հայոց. որոնք ունին շատ ազատութիւն, և ինքնագլուխի պէս կը կառավարվին։ Ա.յս գետէն կելլէ Ձուկա ձուկը պարարտ նման մէրսինի։

Պէնտէր, կամ ըստ հն. Դէրէն և Դէճինէ երևելի բերդ՝ շինած է աջակողմն Դուռլա գետին. ուր փախաւ Կարոլոս թագաւորը շվետաց մոսկովի Պետրոս թագաւորին ձեռքէն 1709 ին։ Դաև դուռլայի մօտ է Դավշան քաղաք՝ Պօթնա վտակին վրա շինած. ուր հայեր կան և ունին եկեղեցի։ Հոն մօտ է հռչակաւոր խրամը Տրայիանոսի. որուն մէկ ծայրն է Թէդրօվարատին, և մէկալ ծայրը կը հասնի Տօնաւէս գետ։ Թաթար բուռնար Լամայիլի կողմը կէյնի. ուր առաջ քաղաք էր Ժայռի վրա շինած. տակէն պատուական ջուր կելլէ։ Դրէնան փաշային շինած բերդը հոն է անշուք մնացած։

Ալեսարավէա, կամ Պէսսարաբիա կըսվին այս տեղերն, որ Ա.գբիրմանէն կըսկըսին և կը հասնին մինչև Դունա. ուր ոչ անտառ կայ, և ոչ լեռ. բնակիչներն

էն Ղողայ թաթարք վրանաքնակ. որոնք շատ կը սիրեն ձիու միս և ձիու կաթ. անով կը մեծարեն իրենց բարեկամը. թէպէտ ամէն բարիք ունին, միս, լաւ եղ, պանիր, և շատ ցորեն կը հանեն։ Դիլխաւորները կըսվին Մէրէք, որ է աղնուական. ով որ ասոնց ձեռք վերցընէ, ձեռքը կը կտրեն. երսուն հազար կան. ամէնն ալ յաջող թէ պատերազմի, և թէ աւազակութեան. ամէն աշխատանքի կը դիմանան. ոչ ցրտէ կը վախնան և ոչ տաքէ. մեծ գետերէն կանցնին մերկ ձիու վրա նստած. և շատ զարմանալի բաներ ունին. թէ կերակուրնին և թէ հագուստնին պարզ է Լ.պազաներուն պէս. բայց ասոնք աւելի քաղաքավար են, և բոլորն պլազդ են։

Լ.գքիրմանու մօտ կը դնեն Ովիդիոպոլ քաղաքը. բայց հինները Վ.Լեստենձէի մօտ կը դնեն Դօմիս քաղաքն. ուր աքսորեցաւ Ովիդիոս (250)։

240. ՊԱԼԱՊԱՆ ԻՍԿԷԼԷՍԻ, Լ.գքիրմանին և Դունային մէջ տեղն է. ուրի քիթ և նաւահանգիստ։ Լ.ուԼեՂեան կողմն է ջափաւոր լիճն աղի. իսկ արևմուտեան կողմն է ծոց ընդարձակ, որ կըվի Սասլա, կամ Ղիհան պուճաղի (241)։ Պալապանէն ժամանակով երկու թնդանօթ բերին Լ.գքիրման այնչափ մեծ, որ երկու մարդ կրնայ վրան պառկիլ. մէկ անգամ նետեր են մէկը՝ կրակ տվօղն ընկեր մեռեր է։

241. ՂԻՀԱՆ ՊՈՒՃԱՂԻ, կամ Մուրբէկա կէօլի, է դոգ Պալապանին մօտ. առջևն կայ բարակ լեզու աւազէ։ Լ.յս կողմերս Դունայի մօտ ըլլալով երբեմն լճեր և ծոցեր կըլլան ջրին շատութենէն. անոր համար Լ.բրիանոս Դունայի մօտ նաւահանգիստներ կը յիշէ։ Լ.ըդ՝ թագլութէն մինչև Դունա 720 մղոն է. որ նաւի ընթացքով պակաս կը համրեն։

55

Լ. ՄԱՍՆ ՍԵՒ ԾՈՎՈՒ

44

242. ԴՈՒՆԱ, կամ Դանուբ գետ երևելի մեծութեամբ, Եւ ծովուն ամէն գետէն աւելի մեծ և անուանի է. որ կելլէ Օվկեանոսի լեռներէն, և շատ պտտելով Սավա մեծ գետին հետ կը խառնըվի, և մեծնալով կը ծովանայ, ինչպէս տեսանք ներքը։

Դպա շատ զանազան գետեր ընդունելով եօթն աշխարհէ կանցնի. այսինքն Պավիերայէ, Ղեմիցետանէ, Մահառատանէ, Սքոֆէ, Պուլղարիայէ, Մոլտավիայէ, և Պուճագ թաթարէ՝ կուգայ Եւ ծով կը վազէ հինգ բերանով. հինգերը եօթը կը դնէին։ Դոջին տեղ տեղ աւազուտ ծանծաղ է. նոյնպէս մէջը. բայց ջուրը լաւ է խմելու. որպէս փորձեցինք։

Հիւսիսային կողմէն ա՝ բերանն է Արիէ. բ՝ Սեանէ. գ՝ Լոբեէշ. դ՝ Բոտրեյա. ե՝ Հասբալէ, կամ Արոտնա։

Այս անուանի գետին վրա հինգերը զանազան բաներ խօսեցան։ Հին ժողովուրդը հիանալով մեծութեանը վրա տաճար շիներ էին Արիի բերնէն վեր. և այնպէս սրբազան կը համարէին, որ կըսէին թէ նոյն կատան ջուրը թռչունները գետէն կը բերեն։

Ըստ նախնեաց՝ այս գետ Եւ ծովուն մօտենալով անունը կը փոխէ Լոդէռ կը կոչվի։ Ովիդիոս ասոր մեծութիւնն խմացնելու համար՝ կը բաղդատէ Ղեղոս գետին հետ այսպէս։

* Դանուբ մեծապանծ գետ ակնածելի,
Ղունի խոնարհիլ մեծին Նեղոսի։

Այս գետին մէջէն շատ ձուկ կելլէ, և մեծամեծ մուռինաներ կելլեն. ծովուն մօտ փոքրիկ ձուկ մի կելլէ զարմանալի. վրան գոյնզգոյն, նոյնպէս պոչը նաշխուն. երկու ականջ ունի նման մկան։ Այս ձուկն օդաչափ պէտք է անուանել. զի ամէն փոփոխութիւն օդին կը յայտնէ օդաչափ գործիքէն շատ

աղէկ. որ կը դնէն ասպակէ ամանի մէջ ջրով լեցուն, ջրին տակն աւազ լեցընելու է։ Բ.ԴԴ՝ որչափ որ օդն է հանգարտ և չպիտի փոփոխի՝ ձուկն անշարժ և հանգիստ կը կենայ աւազին վրա. և երբ օդը պիտի փոխվի, կամ անձրև, կամ հով, և կամ կարկուտ պիտի գայ՝ ձուկը կըսկըսի շարժիլ շարունակ՝ ամանին մէջ վեր վար կերթայ, և աւազը խառնելով ամենևին հանդարտութիւն չունենար։ Պէտք է ամ սէ ամիս ջուրը փոխել, որպէս զի մնունդ առնելով շատ ապրի կենդանին։

243. ԹՐԻԼԻ ՊՕՂԱԶԻ, վաթսուն մղոն հեռու է Բ.գքիրմանէն։ Հիւսիսային կողմէն առաջին բերանն է Դունայի. որ կէս մղոն լայն ըլլալով նաւ կը մտնէ, և ունի նաւահանգիստ։ Բերդը ծովէն վերն է, և զանազան ազգեր կը բնակին գիւղաքաղաքը։ Բերդին քով երկու լեռ կայ, վրան երկրթէ օղակներ հաստատած. կըսեն թէ ծովն առաջ հոն ըլլալով՝ նաւ կը կապեն եղեր անոնց (5)։

Բ.ըրիանոս այս բերանը Բ.ոլլն, այսինքն փոքր՝ կանուանէ. քիչ վերն էր Բ.քիլլեոս կղզին. ուր ծնաւ կըսեն քաջն Բ.քիլլէս. ուսկից ելած է Թրիլի անունը։ Բ.սոր փառաւոր արձանը հոն մեծագործ տաճարին մէջն էր, որ շատ գանձով և գոհարով լեցուն էր, և երևելի ուխտատեղի ըլլալով հեթանոսաց՝ ով որ ընծայ կը տանէր՝ քարերուն վրա գրած կար զանազան ազգաց գրերով, ինչպէս կը պատմեն հնախօսները։ Բ.ըրիանոս շատ այծեր տեսաւ հոն որ Բ.քիլլէսի ընծայած էին։ Բայց հիմա չի կայ այս կղզին։ Բ.ըրիանոս զարմանալի բաներ լսեր էր հոն այս տաճարին վրա, որ մեծ ջերմեռանդութեան տեղ էր կուապաշտներուն. մինչ զի՝ ընծայ եղած այծերը սրբազան համարելով մարդ կարող չէր դպչելու, այլ ազատ կարածէին հոն։

244. ԻՍՄԱՅԻԼ, աւելի վերն է Դունայի վրան երևելի բերդ. ուր զանազան ազգեր կը բնակին. հայերն իրեքհարիւր տուն կան. եկեղեցին կիսով չափ գետինը թաղված է։ Մեծամեծ ցորենի ամբարանոցներ կան այս քաղաքը. և շատ բարիք կերթայ ստամպօլ։

Հոս դունա երկուս կը բաժնըվի. և վարը զանազան ձիւղ կըլլայ։ Դիմացն հարաւային կողմն է վերը Լոպոյէլ, ըստ յն. Բռօյէլաոէ բերդ հինգ աշտարակով. շատ վաճառականութեան տեղ է. ունի նաւահանգիստ. բնակիչներն են յն. տճ. մուլտ. և հյ։

245. ՍԻՍՆԷ ՊՕՂԱԶԻ, տասնըութ մղոն հեռու է Վիլիէն. որ է քուն բերան Դունայի մեծ և խոր. ուսկից մեծամեծ նաւեր կանցնին, և է նաւահանգիստ մեծ։ Աւսոր և Վիլիէն մէջ տեղն է ընդարձակ եղէգնոց. ուր սոսկալի մեծ պիծակ կըլլայ, մինչև մարդ կրնան մեռցընել։

Նըլան ադասէ, տասնըութ մղոն քացն է փոքր կըղզի. որ Սիսնէի դիմացը կկնի ծովուն մէջ. ուր նաև կրնայ կենալ։ Մէր յայսմաւուրքին մէջ կը յիշէ Աւ. Նըլան կղզի Դունային բերանն. ուր վանքնեցյաւ սուրբ Եպիսկոպոսն Աթերիոս։

Սիսնէին աշխարհագրական լայնութիւնն է 45°. 11′։
Երկայնութիւնն է . . . . . 27°. 40′։

246. ԽՍՐԻԼԷԶ ՊՕՂԱԶԻ, տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ է երրորդ բերան Դունայի։ Աւրիաս Դալն կրսէ, այսինքն լաւ բերան. կարելի է թէ անատեսը աւելի խոր և ազէկ էր. հիմա մեծ նաւ չի կրնայ մտնել, թէպէտ չափաւոր լայն է։

247. ՐՕՌԹԻՁԱՆ, ըստ Աւրի՝. Դ,ռաֆօ, է չորրորդ բերան Դունայի. տասնըութ մղոն հեռու է վերինէն։ Այս բերնէն վերն է Դուլջէ բերդը նոյն թեւին վրա։ Հաստալի կամ Բռոնա պօղազի, է հինգերորդ բերան Դունայի։ Այս բերնէն ներս նաւ չի կրնայ մտնել շատ ծանծաղ ըլլալուն համար. ուստի աշխարհացուցներուն վրա չէն գտներ. ոմանք Դարախարման կանուանեն, որ մօտ է։

248. ՏՕՊՐՈՒՃԷ գաւառ թաթարաց՝ ասկէց կըսկըսի և կը հասնի մինչև երկայն պարիսպը քակված. որ հին կայսերք շինեցին Սիլիստրէէն մինչև Վէսա տէնՃէ. ծովեզերքը կըսվի Պոնտոս. ուսկից կըսկըսի Պուլգարիա, և կը հասնի մինչև Բոսպոռ. որուն առջևէն կանցնի Դունա. ուր տեսանք հին շինքեր և քաքաքած տեղեր. նաև ինքնաբուխ տաք ջրեր

որ ծծումբ կը հոտէին։ Երկիրը շատ բարեբեր է, պարարտ և խոտաւէտ դաշտեր, այգիներ, և անտառներ ունի. նաև հանքեր ոսկիի արծաթի երկաթի և կապարի. ուսկից կելլէ Յէշիմ քար կանանչ՝ կարմիր՝ երկնագոյն, և բազմատպայլ քար։

Պուլղարներուն մէջ տեսանք հիւրասէր և անուշ մարդիկ. աղքատներն են արտաւոր, իսկ հարուստներն են վաճառական. և ամէնը քաջ պատերազմական մարդիկ են. որ հին ատենը շատ հոգնեցուցեր են յոյն թագաւորները։ Կը պատմեն թէ ասիայի կողմէն եկած էն, և նախ Յոնաւիս գետին քովերն են բնակեր. յետոյ եկեր այս կողմերս զարկեր տիրեր են. լեզուներն շաւոնեներուն լեզուին շատ մօտ է. ունին զանազան սովորութիւններ. գտակներն կլոր է, և շալիկներն նաշխաուն. կնիկներուն գտակին վրա բոլոր ոսկի և արծաթ դրամ կարած է։ Իրենց գլխաւորը Պոչպակ կըսվէր, որ յունաց դէմ շատ քաջութիւններ ըրաւ. մինչի Լէոն կայսրը թագաւոր անուանեց զինքը. իսկ Ա օկօրիս թագաւորը յամի 866. քրիստոնեայ եղաւ Միքայէլ կոչվեցաւ, և բոլոր ազգը քրիստոնեայ եղաւ. հիմա շատ այլազգ եղած կան իրենցմէ։ Հայոց ազգէն ալ ասոնց թագաւոր եղան, ինչպէս էր Սամուէլ թագաւորը. իսկ վերջի թագաւորը կըսվէր Հէշման. մինչև յիսուն թագաւոր նստան Դրնովի և Անկիպոլիս մայրաքաղաքներն, որ առաւ Սուլ. Մուրատ. և բոլոր պուլղարիայի տիրեց Երլերբրմ Սուլ. Պայեզիտ։ Առաջ ասոնցմէ Օսմանցին տասը մարդէն մէկ զինուոր կառնէր, և վրանին իրենցմէ տասնապետ կը դնէր. որ կըսվէին Ա օյնուկ պէյ. հիմա վերցած է այս բանը։ Սուլ. Մուրատն օրէնք դրաւ, որ թագաւորական ձիերը Պուլղարներն հանեն դաշտը. որ մինչև հիմա տաւէ տարի կերթան Ստամպօլ, որ կըսվէին Ա օյնիկ. և Խտրելեզին հանդէսով կը տանին ձիերը Քեաղիտխանէ։ Բայց կողմն Պունայէն սկսեալ մինչև Լեմնս լեռը, նաև մինչև Ստամպօլու բերանը հին ատենը կըսվեր Թրաքիա. որ մեծ տերութիւն էր։

249. ԳԱՐԱ ԽԱՐՄԱՆ, տամնրութ մղոն հեռու է

Բոռթիձայէն. որ է փոքր քաղաք։ Հոս է Պարթ-
սոռ, որ է նոյն Բուռթա պօղաղին. որուն բերանը
կըսվի Պարթաբման պօղաղ. և նաւահանգստին քով
ունի բերդ Հասան փաշայէն շինած. ուր նաւ կընայ
կենալ։ Պարասու ջուրն առաջ կըսվեր Օտավարսն.
մօտ է հոն Սէրբիէօլէ ծոցը։ Հին աշխարհագիրներն
հոս կը դնեն հին երևելի քաղաքը Ֆօրնի. անկէ ան-
դին ուրիշ քաղաք կար Պալաթիս։ Պունայէն տաս-
նրուն մղոն հեռու կը դնեն հինները Անքիտա քա-
ղաքն. ուր կատարեցան սուրբ Եղիմոզայոս և Ատրա-
տոն. ըստ որում կը բերէ մեր յայսմաւուրքը։

250. ԲէՕՍՏԷՆՃԷ, երբսունըվեց մղոն հեռու է
վերինէն. բերդն և Սիւթկէօլի ծոցին հիւսիսային
կողմն. ունի քիթ Հոպճէճ պոռունէ։ Այս քաղաք ա-
ռաջ Բոսդանձա կըսվեր Կոստանդին Թագաւորին
քեռուն անուամբը։ Ուր մօտ է Պարասու լիճը. նաև
Պապա տաղին. որ է մեծ սար, ուր կան մեծամեծ
արծիւներ։ ԲէՕստէնՃէի մօտ է Իֆագօր գեղն, որ
հնազանդութիւն կը նշանակէ. զի Կոստանդիանոս
Թագաւորն հոն տեսնելով խաչին հրաշքը՝ հնազան-
դութեամբ հաւատաց։

Պօփս երևելի հին մայրաքաղաքը հոս կը դնեն.
որ ըստ տձ. Բարիալ կըսվի։ Այս քաղաք Պունայի
բերանէն շատ հեռու չէր. գտան դրամը, որ մայրա-
քաղաք պոնտոսի կանուանէ այսպէս. ΜΕΤΡΟΠ ΠΟΝΤΟΥ
ΤΟΜΕΟΣ. այսինքն ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ՊՈՆՏՈՍԻ ԴՕՄԷՈՍ։
Բայց Ատրաբոնի ատենը այնչափ մեծ չէր։ Այսկէց
էր սուրբ Բրէտանիոս եպիսկոպոսն չորրորդ դարուն.
որուն յաջորդեց սուրբ Ցիոդիմոս, որ էր Փիլիսո-
փայ։ Կիմնասիոս Ովիդիոս բանաստեղծին ատենը
չունէր առջի մեծութիւնը. ուր սքսորեցաւ Օգոս-
տոս կայսերէն. որ կը պատմէ, թէ Միլեզիացի հատ-
ուած եկեր շիներ է այս քաղաքը. և անոր համար
ըսվեցաւ Պօմիս, այսինքն կտրտած. զի հոն Մե-
դիա կտրտեց իր եղբայրը, ինչպէս կըսէ։

* Պատն այն Պօմիս անուն դնի.
Կտրատեալ զի է տեղի.

Գ.ոյրրն Եղբօր մանրէ զմարմին,
Գ.ասլեսալ 'ի մասն որպէս ասի։

Ովիդիոս շատ կը տրտնջայ այս տեղին համար, և չարաչար վար կը զարնէ իր բանաստեղծութեան մէջ՝ անշուք և անշահ տեղ ըլլալուն համար. զորօրինակ.

* Գ.ստիմ մենացեալ 'ի ծագս աշխարհի,
'Ի ձիւնախաղաղ երկիր ամեհի.
Ուր ոչ քաղցր միրգ ոչ խաղող ծնանի,
Ոչ ուռիք գետոց ոչ լերանց կաղնի։
Մի ջրով քան զցամաք 'ի գոլեստ առցես,
Գ.նդունդք անարև 'ի հողմոց պէսպէս.
Գ.նդուլ մոլեգնեալ ուռնուն դիզադէզ.
Շուրջ 'ի ծիր աչաց անհուն ասպարէզ,
Գ.աշտ լայնածաւալ անոպայ երէզ.
Գ.նգործ անտերունչ տեսցես արտօրէս॥։

ՈՎԻԴ. պոնտ. Ա. 4։

251. Մ.ԱՆԿԱԼԻԱ, ըստ յն. Գ.ամնկալլիս, երսունը. վեց մղոն հեռու է Գ.էօստէնձէն. ունի քերդ և նաև կենալու տեղ. քթին առաջը կայ հին ամբարտակին աւերակն, որ նաւահանգստին համար շինած էր։ Գ.ալանդրա կը կոչէ այս տեղս Գ.ըրիանոս, որուն բնակիչքը Հերակլացիք էին ըստ Մտրաբոնի. անունը կայ Գ.որգիանոս կայսեր դրամին վրա։ Պտղոմէոս այս կողմն կը դնէ Տէտրիսաս հին քերդը. որուն մէջ Լ.ուսիմաքոս իր գանձը պահեց ժամանակ մի։

252. Շ.ԱՊԱ ՊՈՒՌՆՈՒ, երսունըվեց մղոն հեռու է վերինէն. որ է երկայն սար, և ծովուն մէջ ցամաք. ուր վտանգաւոր ըլլալուն ֆէնէռ կը վառի գիշերը։

253. ԿԻԼԻԴՐԻ ՊՈՒՌՆՈՒ, ըստ յն. Գ.ելի ագրա, այսինքն բարի քիթ, տասնըութ մղոն հեռու է վերինէն. որ է մեծ սար դէպ 'ի հարաւ ծովը մտած. ուր կայ քերդ և վանք, նաև ուխտատեղի տաճկաց. որ կըսվի Սուրբ սալիբգ։ Թուրի թէ հոս հին ատենը կռատուն կար, որուն տեղն ուխտատեղի շինվեցաւ. զի առաջ ամէն մեծ սար սրբազան կը համարէին. ուստի և բարի քիթ կոչեցին այս սարը։ Ինոր համար

որչափ Երևելի սարերու առջևէն անցանք, նաւավարներն հայ նետեցին ծովը. որ է կռապաշտութենէ մնացած սովորութիւն. որոնք անկէ անցնելով հայը ընծայ կընէին կուռքին՝ ծովը նետելով. որ մինչև հիմա աւանդութեամբ կը պահեն։

254. Դ.ԱՎԱՌՆԱ, ինը մղոն ներսն է սարէն. ունի պատուական նաւահանգիստ և բերդ։ Այս մեծ ծոցին մէջ իրեք նաւահանգիստ կայ։ Հին աշխարհագիրներն այս կողմն կը դնեն Տիբերիոպոլիս հին քաղաք. ոմանք կը համարին Թէ Վառնա է։

255. ՊԱԼԱՏԳ բերդաքաղաք՝ է ինը մղոն անդին, և նոյն ծոցին մէջ Երևելի նաւահանգիստ է. քովէն մեծկակ գետ կը վազէ. ուր մօտ է Պաթվա և Սողանլըգ։ Այս ծոցին մէջ յորձանքն ընդհակառակն ըլլալով դուրսի յորձանքին բռնութենէն դէպ՝ի հիւսիս կը վազէ։

256. Վ.ԱՌՆԱ քաղաք՝ քսանւերկու մղոն հեռու է վերինէն. որ հիւսիսային կողմն է ծոցին. ունի լաւ նաւահանգիստ. որուն մէկ կողմն է Պալնա պուռնի, և միւս կողմն է Կօրկօթ քիթ. քովէն կանցնի չափաւոր գետ, և մօտն է Տէվն լիճը։ Այս գետին վրա՝ վերը շինած էր Մարկիանուպոլիս Երևելի հին քաղաք՝ 'ի պատիւ Մարկիանէ քրոջը Տրայիանոսի կայսեր, և անունը կայ հին դրամներուն վրա Փրէշա անուամբ, ինչպէս տեսան։

Վառնա վաճառականութեան տեղ ըլլալով շատ երթևեկութիւն կըլլայ նաւերու, և շատ բարիք կերթայ Ստամբոլ. ուր ամէն ազգ կը բնակին. երսուն տուն հայ կայ, և ունին եկեղեցի. բայց Պուլղարի քաղաք ըլլալով բնակիչներուն շատը Պուլղար են։ Հին բնակիչներն էին Միլէզիացիք, որ շինեցին Վառնայի բերդը, և անատեղը շատ անուանի էր, ինչպէս կերևնայ հին դրամներէն. ուր շատ պատերազմ եղած է։ Սուլ. Մուրատ մեծ կոտորած ըրաւ քրիստոնէից դէմ. ուր մեռաւ Լատիսաս մաճառի թագաւորն 1444 ին։

Հին պատմիչներն վառնա կը համարին Դիոնիսիոպոլիս, քովէն գետ կանցնէր. Թերևս էր Դամչի տերե-

սին, որ կանցնի այս կողմէն. որուն եպիսկոպոսն էր Դարիտոն, որ գնաց Վաղկեդոնի ժողովքը։ Եւ անոր համար կոչվեցաւ Դիոնիսիոպոլիս, զի Դաքոսի կուռքը հոս ծովուն քով գտան, որ Դիոնիսոս կըսվէր. (Ճեմ. 643)։ Ովիդիոս այսպէս կը բերէ.

* Լաւ զամրոցս որ կոչէին,
Դիոնիսոս յանուն քոյին ॥։

ՈՎԻԴ. ԷՊԷՐ. Ա։

257. ԼՍԻՆԷ ՊՈՒՌՆԻ, ըստ հն. Լմօս, քառասուն մղոն հեռու է Ս առնայէն. որ է երևելի սար. որուն գագը և նաւատեղին է Մէսէվրէ աւան՝ տասնրուեթ մղոն ներսը. որ է փոքր քաղաք, և ունի քիթ. որ Սիւզէպոլիի քթին դէմն ըլլալով՝ Պուռազու ծոցին բերանն է եղած։ Բառաջ կըսվէր Մէսէմվրիա, կամ Մէնէվրիա. որ շինողին անունն է. զի Ս րիա թրակացոց լեզուով քաղաք ըսել է. ուստի կը նշանակէ Մինէի քաղաք։ Բսկէց կըսկըսի մեծ լեռը Լմօս, կամ ըստ տՃ. Պալգան, և կը հասնի մինչև Ֆալմացիա. շատ տանջըվեցանք օրերով մինչև որ անկէ անցանք։

258. ՀԵՕԼՈՒ աւան՝ ինը մղոն ներսն է հիւսիսային կողմը ծոցին. նաւահանգիստը լաւ է։ Ծովուն մէջ դէպ 'ի հիւսիս տեսանք երկան քարուտ կամ աւերակ. բնակիչները պատմեցին թէ առաջ հոն շէնք կայ եղեր իբր Ճամբայ շինած։ Ս երն է անուանի բաղնիքը բնական. ուր կը բղխի առողջարար ջուր սաստիկ տաք. ջուրը ծծմբային հոտ ունէր։ Բհեօլուի ներսը կայ աղէհան. որ երբ արևը Յուլը կը մտնէ, ծովուն ջուրը հոն կը կապէն առանձին տեղ. որ կըսկըսի աղանալ։ Պտղոմէոս կը կոչէ այս տեղս Բնիֆէլօս, որուն եպիսկոպոսը Սեբաստիանոս՝ Կոստանդինուպոլսի Ա ժողովին մէջն էր. բայց հիմա Մեսրապոլիտ կը նստի։

259. ՊՈՒՌԼԱՋ, տասնրուեթ մղոն հեռու է վերինէն. ունի լաւ նաւահանգիստ, բերդ, և է վաճառականութեան տեղ. ամէն տարի մեծ վաճառ կըլլայ, և հեռու տեղերէ ապրանք կը տանին. ուսկից շատ Բսպա կելլէ. ուր կան ամէն ազգ. և հայերն

ունին եկեղեցի, և վաճառականութեան յարմար են։

260. ՖՕՌՕԶ, հինգ մղոն ներսն ըլլալով ծայրն է Պուռղազու ծոցին. ունի լաւ նաւահանգիստ. ուր կը վազէ Գանձիդ գետը։ Բայց երևելի ծոց սև ծովուն՝ քսանութիրք մղոն երկայն է. ոմանք քսանը մէկ մղոն կը դնեն։

261. ՅԻՆԿԵԱՆԷ ԻՍԿԻԼԻՍԻ, ինը մղոն անդին արևմտեան կողմն է. ունի լաւ նաւահանգիստ և գետ։ Բայսոր գիմացն է Վրէշիշ ոստան, որ է փոքրիկ կղզի. երկու մղոն է շրջապատը, և ունի վանք, և եկեղեցի սուրբ Յոհաննու։ Բայս կղզի ըստ Պլինիոսի կըսվի Աղչէ Բոդոնի. ուր կար տաճար և կուռք Բոդոնի. անոր համար քաղաքն ալ կոչվեցաւ Բոդոնիա։ Բայս կուռքը Ղուկուղոս վերուց Հռոմ տարաւ Կապիտոլին դրաւ։

262. ՍԻՍԷՊՕԼԻ, կամ Սիսոէբօլի, ինը մղոն անդին ըլլալով Պուռղազու ծոցին բերանն է, և Բոսֆորուին գիմացը կիյնի. չունի նաւահանգիստ. բնակիչները յոյն են. ուր երևելի բան չտեսանք։ Բայս քաղաք Միլէզիացիք շինեցին, որ Բոդոնիա կոչվեցաւ վերի կռատանը համար (261)։

Սայնան, կամ Օէյնուն պոռուն, ինը մղոն անդին է։ Բայս քթին առաջն աւազուտ կայ. որուն մէկ կողմն է Բոսոսմա փոքր նաւահանգիստը, մէկալ կողմն է Բզլիման. ուր կը վազէ Պուզտէ գետը։

Բրիանոս Սիւզէպոլիէն անդին կը դնէ Վրէբրոնէս նաւահանգիստ Թրակիոյ։ Իսկ Սարաբոն քաղաք կը դնէ սև ծովուն վրա. ուր գնաց հատուած Հէրակլացոց, և կար տաճար կուսի. որ կը համարին Բրոմիս աստուածուհին. նաև սարին գագն իրեք նաւահանգիստ կը դնէն։

263. Բոսֆորոյի, կամ Բոսպորէօլի, երսունվեց մղոն հեռու է Սիւզէպոլիէն. չունի նաւահանգիստ. ուր կը վազէ Թոնծա գետն, որ կուգայ Լարիսէի կողմէն. բնակիչներն են յոյն. հին բան չտեսանք հոն։

264. Իսնատ Պուրնի, կամ Սիլիպա, քառասունչորս մղոն հեռու է վերինէն. ունի լաւ նաւահանգիստ. որուն միւս կողմն է Տիալոս պոռուն. որ է փոքր քիթ։

265. ԱԻՐՎԻՋ, տասնրուրդ մղոն հեռու է վերի-նէն. չունի լաւ նաւահանգիստ. ուր կը վազէ գետ։ Հինեբն այս կողմն կը յիշեն Ֆինոբոլիս հին քա-ղաք. բայց մենք չի կրցանք տեղը գտնել որոշակի։

266. ՄԻՏԻԱ, տասնրուրդ մղոն հեռու է վերի-նէն. ունի փոքր նաւահանգիստ, և բերանն աւազ ըլլ-լով դժուար է մուտը. ուր կը վազէ գետ։ Այս քա-ղաքն սև ծովուն վերջի աւանը կը սեպուի. բայց սո-ղուք քաղաք տեսանք սարին վրա շինած. քարոտ տեղ է, բնակիչներն են յն. և տՀ։ Արևելեան կողմն է Մալաբիա պոռոնին։ Մօտն է Օղլամոբ և Թէբոռոս ծոցը, ուր կը վազէ գետ. և կերևնայ հոն հին պա-ահի մնացորդ դէպ 'ի Մառմարա ծովն երկնցած։

267. ԳԱՐԱՊՈՒՌՈՒՆ, տասնրուրդ մղոն հեռու է Միսիայէն. որ ըստ ոմանց կըսուէր առաջ Լոկէ Քէ-նէռ. կարելի է թէ հին ատենը հոն Հրաշ կը վա-ռէին նաւերու համար։ Աբրիանոս կը յիշէ հոս Թէ-նէռս սարը. կարելի է թէ Գարապուռունն է։

Ռուխոմբի գեղ յունաց, Գարապուռունն ասդին է. իսկ Ցոմաղ գերբէ, աւելի ասդին է. ուր է ընդար-ձակ աւազուտը դեղնագոյն, որ կրսուի Լէպիդոմար։ Կերևնայ թէ առաջ ծով է եղեր հոս, և երկրաթի հանք ըլլալով գունաւորած է աւազը. ծովը քաշուե-լէն ետև մնացեր է աւազ, ինչպէս որ դիտեցինք։

Այս կողմերս տեսանք հանքային տեղանք. և այս աւազուտ հին ատենէն 'ի վեր կայ. որ կերևնայ թէ Սամսիսլու բերանը բացուած ատենը երևցաւ (7)։ Ինչպէս տեսանք նոյնչափ հեռաւորութեամբ ասիայի կողմն նոյն գունով դեղին աւազուտ (42)։ Աբրիանոս կը պատմէ թէ Քսենոփոն գնաց Իտի-սիս քաղաքն, ուսկից կրսկրսի ընդարձակ աւազուտը. հին ատենը կրսէ բնակիչները կրակ կը վառէին գի-շերանց. որ նաւերը գան իյնին հոն, որ կողոպտեն. որոնք մինչև հիմա այս չարութիւնը կրնեն։ Ասիայէն գալով երբեմն կը կարծրվի թէ հոս է նեղուցին բե-բանը. ուստի շատ անգամ նաւերը հոս կիյնին կը խոր-տակին։ Լուսեբիոս կը պատմէ թէ 2474 տարի առաջ Իստրիս քաղաքը շինվեցաւ Պոնտոս, որ ոմանք

Ասիայի կողմը կը դնեն, և թուի թէ մեծ քաղաք էր։

268. ՎԻԼԵՕԶ հին բերդ հաստատուն՝ տասնը-ութ մղոն հեռու է Գարապուռունէն. և կը համա-ըի վերջին բերդ նեղուցին Մուսկիոյ. որ Ոիվա բեր-դին դիմացը կիյնի (41)։ Հին ատենը հոս էր Ֆռիա քաղաքը։ Լաւ ասդին գետ կը վազէ Սպահա ռէրէսի։

269. ԳԻԱՆԵԱՆ ԺԱՅՌՔ, ըստ յն. Գէանեաս, որ կապոյտ գոյն կը նշանակէ, են կղզիի նման ժայռեր ֆէնէռին առաջը. մեծը կըսվի Մոէ դաղէ. ոմանք Բաղճաքէ կը կոչեն. որուն վրա տեսանք մասն սեան, որ տնկեր է Պոմպէոս հռոմայեցին, կամ Աղրիանոս կայսր՝ վրան լատին գրով. ոմանք Գոստոս կայսեր կուտան։ Հին ժամանակը հոս ահագին երկրաշար-ժութիւն ըլլալով Սատմիոլու բերանը բացվեցաւ կըսեն, ինչպէս ըսինք առաջ (7)։

270. ՖԷՆԷՌ բուռմէլի՝ է հաստատ բերդ տասնըութ մղոն հեռու Վիլեօզէն. որ է եւրոպական ծայր սև ծովուն կամ Պոնտոսի, և բերան նեղուցին Սատմիոլու։ Այս տեղս հին ատենը յունարէն կը-վեր Լիմէն ԴԻՕՍ ՈՒՌՈՒ. այսինքն Մեհեան դիոսի յաջողութեան. զի նոյն սարին վրա դիոսի կռատունն ըլլալով ուխտատեղի էր նաւողաց. որպէս զի՝ Դիոս բարի յաջողութիւն տայ իրենց. ինչպէս կըսեին՝ ըստ Աղրիանոսի։ Լիմ հոս և թէ դիմաց ասիական ֆէնէռն՝ սշտարակ շինած է բարձր. որոնց մէջ ամէն գիշեր ճրագ կը վառեն, որ ներս մտնող նաւերն որոշեն նեղուցը։

271. ՖԷՆԷՌԷՆ ներսը՝ երրորդ բերդն է Գաբէ-ճէ՝ Սուլ. Մուստաֆայէն շինած. չորրորդ Բերդն է Պէօյէ-էմեն, կամ ՄէնՕՂԼԷ։ Ուր հին ժամանա-կը երևելի դաքնի ծառ կար, և կըսվէր Գաբենայ նա-ռահանգէսպ։ Տես տախ. Գ։ Լսկ հինգերորդ Բերդն է Բուռմէլի գաւառի, որ Աղնատոլ գաւաղէն կամ Լօ-ռուս բերդին դիմացն է (37)։

272. Աբդ՝Գունայէն կամ՝Բիլի պօղազէն մինչև ֆէնէռ 516 մղոն է. որ նաւավարները 500 մղոն կը դնեն։ Այս անատոլ գաւաղէն սկսանք ֆէնէ-ռէն դուրս ելլել՝ սև ծովուն չորս բոլորը պտտե-

լով հասանք Բումելի ֆէնէռին. և անկէց եկանք Բումելի գաւառը, կամ Գաւառագ հիսար։

273. Ուստի Դունայէն մինչև Բումելի ֆէնէռ, կամ Սատամպօլու բերանը 516 մղոն ըլլալով Թագ-լիթէն կըլլայ 1236. Ֆարշէն 1714. Տրապիզոնէն 1952. իսկ Ս. Նատօլ ֆէնէռէն 2861 մղոն. որ է բոլոր շրջապատ սև ծովուն՝ բաց 'ի ծովակներէն։

Ս. Նորէն հասնելով նեղուցին բերանը՝ ուսկից ելանք, վախճան եղաւ պատմական ճանապարհորդութեան մերոյ. որ 1817 ին սկսանք և 1819 ին աւարտեցինք թէ՛ մեր ճամբորդութիւնը, և թէ այս գործքս շրջագրութեան Պոնտոսի 'ի պոնտոսեան Վիքարութեան մերոյ։

ՑԱՆԿ

Բ

Բդեառ. 224
Բաղեշաբ. 47
Բգբերման. 239
Բաղադ, կամ Միոտիս. 188
Բաղադ, կամ Բաղոֆ. 195
Բաթենա. 142
Բաթուխա, և Պղատուխ. 177
Բաղապլի. 48
Բաղուշդա. 221
Բախդաբօլի. 263
Բախդար, Պախդար. 190
Բահեղու. 258
Բաղեհան. 225
Բաղլիման. 72
Բաղեդալէ. 100
Բաճիսու. 153
Բամազոնք. 83
Բամսիա. 81
Բամասրա. 53
Բանենափրկիչ վանք. 130
Բաիսոս. 78
Բայ. 221
Բայանէ. 213
Բայանճրդ. 69
Բայանսոն. 67
Բայասոֆիա. 103
Բնափա. 179
Բնաքրեա. 157
Բպազա. 162. 180
Բպանա. 65
Բռտիլէր. 173
Բրապատ. 211
Բրգոնաւորդք. 36
Բրիսաւ. 146

Գ

Գաժանուն. 32
Գէրշէնպէ. 88
Գօռթիձա. 247

Դ

Դազանտիպի. 212
Դայթի պուռնի. 221
Դավառնա. 254
Դարաբաբման. 249
Դարաղաճ. 59
Դարապուռուն. 42. 267
Դարիպճէ. 271
Դաւագ հիսար. 37. 271
Դեսք. 21
Դըզդուլէսի. 141
Դըզըլ ըրմագ, Ալիս. 78
Դըզըլգաշ. 184
Դրբպուռուն. 231
Դիանեան ժայռք. 269
Դումճուղազ. 79
Դուշպուռնի. 194
Դօվաթա. 136

Ղ

Ղերք. 12
Ղունա. 242
Ղօմիս. 250

Լ

Լալիդա. 221
Լալինաճ. 229
Լանդդ փալանկա. 238
Լասօն. 86
Լեգերացիք. 155
Լէնիգալէ. 214
Լէնիցի. 207
Լէսի գումլար. 42. 267
Լերան ասասի. 245
Լօռօղ. 99
Լօռուս. 38

Օ

Օառպանա. 61
Օկիթուն պուռնի. 225
Օէֆրէ. 94

Ղ

Ղէղու. 96
Ղէպուռուս, կամ Կովկաս. 155
Ղամենէ պուռնի. 257
Ղնկիւսի. 183
Ղակի ագամէջիդ. 227
Ղակի տրապիզոն. 143
Ղապիէ. 94
Ղվրէնեէ. 64
Ղրէկլի, կամ Ղէղրի. 49
Ղօշիւ տէնիզի. 228

Ընթացք ջրոց . 16

Մագլեթ . 189
Մագլեթի պուռնի . 216
Մահմար . 217. 239
Մահմար խան . 218
Մամոն . 186
Մայլան . 201
Մաշլի պուռուն . 206
Մէմրուք . 189
Մէնթրէ . 230
Մէռամ . 83
Մէքքէ էօնիւ . 57
Մուղար . 175
Մրակիա . 235
Մրիպոլի . 95

Նբագօի . 250
Նատա . 264
Նէպօլու . 62
ՆէՃէպուռուն . 71
Նոզրայիլ . 244
Նոթէֆան . 68
Նակէֆիկ . 98
Նակուրիա . 159
Նամայիլ . 244
Նրիզէ . 139
Նէնեէ . 84

Շազ . 140
Շանպադ . 221
Շարօղ . 145
Շուդիկ . 200

Սազաֆ . 198
Սազի քիրման . 207
Սանուամ խակէլէսի . 159
Սաչլիբեար . 144
ՍորուԹիւն . 8
Սուռուշունլի . 82
Սարբէլէղ պօղազի . 246
Սրիմ . 218
Սօչօղլան . 135
Սօփա . 147

Վէրկաթլամասի . 220
Վէլէղրէ . 253
ՎէլինՃիք . 177
Վէպէլիդ . 70
ՎէռՃ . 115
Վէրզէ . 76
Վէօզլէվէ . 228

Կէօլաղզի . 77
ԿէՃնեէ . 148
Կէօրէլէ . 97
Կէօրկիւլէթ . 153
Կինօլի . 66
Կիւմիշխանէ . 135
Կողքիս . 152
Կուպան . 185
Կուռիէլ, Աբգպաշ . 150
Կուռոյա . 158
Կուրզուֆ . 221
Կօտոչ . 175
Կօտոր . 160

Յալքալավա . 96
ՅաՃիլար լիմանի . 216
Յամէն . 144
Յամնա լիմանի . 223
Յասրալի, կամ ՔուռԹա . 247
ՅատՃԷ պուռնի . 250
Յերլեապտնատա . 34
Յորմունք . 25

Չև . 12

Պալաթա պուռնի . 256

Ռեավէդա պուռնի . 217

Ջէնիկ . 79
Ջիհան պուռՃաղի . 241
Ջինիչէ . 207
Ջոլոխ . 149

Մալադրիա . 266
Մամայ գալէ . 174
Մանկալիա . 251
Մաջգա . 101
Մարիբօլ . 203
Մէնկուլէթ . 229
Մէրիէմանա . 135
Մէրտիվէն այազի . 221
Միհրդատ . 28
Միսէվրէ . 257
Միտիա . 266
Մնկռէլ . 153. 155

Յասոն . 36
ՅորՃանք . 17

Ղախիջէան . 199
Ղաւահանգիստ . 24
ՂէրքնայորՃանք . 19
Ղան . 30

Տապլա պուռնի . 255
Էնկլեթիլ . 151
Էրլէ . 43
Էրջապատ . 15. 272
Էօրշունա . 224

Ոակեդեղին . 35
Ոլպիսուլթիւն սև Ծովու . 2

Ղաթալ զէյթուն . 66
Ղայալզի . 77
Ղարչանպա . 81. 82
Ղափ . 14
Ղաքու . 151
Ղէրբէզ . 182
Ղէրբէզ քիրման . 198
Ղուրուք սու . 151
Ղօփսուն . 176

Պաթլամա . 91
Պաթուտ . 150
Պալապան . 240
Պալըգլաւա . 222
Պալիսարա . 209
Պալջըգ . 255
Պառլին . 52.
Պաֆուա . 79
Պէկլիչկա . 202
Պէնտէր . 239
Պէրպէր զէմին . 193
Պէջիւք լիման . 98. 271
Պէօրբէր . 205
Պոնտոս . 1
Պուլղարիա . 248
Պուճուտա . 171
Պուռղաղ . 259
Պօղթէփէ . 89
Պօլանճըգ . 90
Պողանճըգ . 93
Պոկ, Աղսու . 234

Ռ Վինկեանէ իսկէլէսի . 261

Ռասատով . 196
Ռիվա . 41

Սամսոն . 80
Սայթան պուռնի . 262
Սասըն Ծով . 208
Սաբ, կամ Քիթ . 22
Սարմատիա . 217
Սագառիա գետ . 46
Սև Ծով, Էվքսինոս . 1
Սեւատաքօլ . 224
Սէրվէզ . 265
Սինոբ . 73
Սիւղէպօլի . 262
Սիւթկէօլի . 249
Սիւնէնէ . 243
Սիւրմէնէ . 137
Սուտաղ . 221
Սօխսում . 161
Սօղուճաք . 178
Սօվուգսու . 141. 170

Վառնա . 256
Վաուտան . 175
Վիզա . 39
Վրաստան . 152
Վօնա . 87
Վօսքօրոս . 40. 187

Տէլիբլի չիլէ . 56
Տէնիզ քէյլի . 46
Տէվքէնա . 102. 172
Տնէբէր . 233
Տնէսդէր, կամ Դուռլա գետ . 239
Տրապիզոն . 105
Տօն, կամ Տօնաւիա . 197
Տօպրուճէ . 248

Ռաքէ թաշի . 269
Ռումէլի դաւաղի . 271

Փլադանա . 101
Փէթրէբլիսա . 204
Փէրէզէն . 236
Փէյրաղ լիմանի . 40
Փրիքսոս . 35

Քէմէր . 140
Քէմհէլ . 155
Քէշալ . 93
Քէրէմիթ . 60
Քէրպէ . 44
Քէօսէնճէ . 250
Քէֆէ . 219
Քէֆիկէն . 45
Քիթրոզ . 58
Քիլեօղ . 268
Քիլիմլի . 51
Քիլի պողազի . 243
Քիսթի . 183
Քիրէսուն . 91
Քիրման գալէ . 196

Քոփրի . 156

Օզու . 235
Օզու Լիման . 232
Օռ գաբուռ . 209
Օսմ . 183
Օտէսա . 237
Օրտու . 90
Օֆ . 138

Փաձա . 35
Փարշ . 154
Փէլէնկ պուռնի . 223
Փէնէռ . 40. 270
Փիլ պուռնի . 40
Փոռոզ . 260
Փոռոզ պուռնի . 226

ՀՍՍՌ ԳԱ
ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՈԿՈՂՍՅՏՇԳԿ

Tip. ed Edit. li Monaci Armeni di S. Lazzaro in Venezia.